Հեքիաթ, Վիպակ, Արձակ, Հայ գրականություն

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարավից հյուսիս, արևելքից արևմուտք, որքան որ կտրեր մարդկային աչքը, փռված էր Սպիտակ թագավորությունը: Անսահման հարթավայրը ծածկված էր ձյունով՝ թե ձմեռ և ամառ, թե գարուն և աշուն: Իրապես չկար այդտեղ ո՛չ ամառ, ո՛չ գարուն, ո՛չ աշուն, այլ կար միայն ձմեռ, որը տևում էր ամբողջ տարին:

Երկինքը, հորիզոնից հորիզոն, համահավասար կերպով գորշ էր: Նա մութ գմբեթի նման կանգնած էր գետնի աչք կուրացնող սպիտակության վերևում: Պոկվելով այդ գորշ երկնքից, համարյա ամեն օր, յոթ-ութ ամիս շարունակ, վար էին իջնում սպիտակ խոշոր փաթիլներ՝ անթիվ, անհամար, որոնք, ընկնելով ձյան սպիտակության վրա, ձուլվում էին դրա հետ, անհետանում. անընդհատ ու անվերջ իջնում էին փաթիլները, իջնում էին խիտ, առատ: Այդ ժամանակ չքանում էին աչքից հարավն ու հյուսիսը, արևելքն ու արևմուտքը, չքանում էր տարածությունը, ոչինչ չէր երևում նույնիսկ կես քայլի վրա:

Շատ հաճախ, ձյան հետ միասին, փչում էր նաև քամին: Նա շեղում էր փաթիլների ճանապարհը, դրանք կարծես իջնում էին երկնքի ինչ-որ անկյունից: Եվ ոչ թե իջնում էին, այլ սլանում: Ձյան փաթիլներն այդ ժամանակ տափակ ու փափուկ չէին լինում, այլ բաղկացած էին սառցի մանր, կոշտ հատիկներից: Քամին շպրտում էր դրանք ներքև՝ ինչպես սպիտակ ավազի հորձանքներ:

Երկար ամիսներ երկինքը պատած էր լինում գորշ ամպերով: Բայց ահա, մի օր, հայտնվում էր արևը: Երկինքը դառնում էր մուգ կապույտ՝ ինչպես ծովի ջուր: Այնտեղ, առանց ճառագայթների, փայլում էր խոշոր, մուգ դեղին արևը: Իսկ ներքևում, ձյան վրա, պսպղում էին անհաշիվ ձնհատիկներ: Օդը, ինչպես և միշտ, ցուրտ էր լինում, բայց ձյունը գետնի վրա ըստ երևույթին հալչում էր արևի ճառագայթներից: Սակայն ոչ մի կերպ չէր կարելի տեսնել այդ հալչելը, որովհետև ոչ ջուր էր երևում և ոչ էլ ձյան տակից հայտնվում էր որևէ առարկա: Միայն այն էր նկատվում, որ ձյունը դառնում էր թաց, իջնում էր մի քիչ և պնդանում: Գիշերը քամին ու սառնամանիքը դա դարձնում էին սառույց, որը սակայն, հետևյալ օրը նորից էր խարխլվում ու թրջվում:

Դա էր Սպիտակ թագավորության կարճատև գարունն ու ամառը: Տեղ-տեղ, անսահման սպիտակության վրա, երևում էին մուգ բծեր, որոնք իրար ետևից ձգվում էին մի որևէ ուղղությամբ: Հետո դրանք միանում էին և կազմում անընդհատ շղթա: Պարզվում էր, որ այդտեղ գոյություն ուներ գետ կամ գետակ: Սառույցը կոտրատվում էր դրա վրա և դանդաղ շարժվում առաջ: Մի օր, երկու օր, երեք օր, տասն օր, հոսում էր սառույցը, մինչև որ գետը բոլորովին ազատվում էր դրանից: Սառցապատ ափերի միջև հոսող ջուրը շրջապատի սպիտակության մեջ թվում էր համարյա սև:

Ոչ մի բույս չէր խախտում այդ թագավորության սպիտակությունն իր կանաչով, ոչ մի թռչուն չէր խռովում դրա բացարձակ լռությունն իր կանչերով: Միայն ձկներն էին խայտում ջրի մեջ, և սպիտակ արջերն էին մտնում այնտեղ՝ նրանց որսալու համար: Բայց դա տևում էր շատ կարճ: Շուտով սառույցը նորից կաշկանդում էր գետը: Սկզբում, գիշերները, ջրի վրա սկսում էր գոյանալ սառցի գորշագույն, անփայլ թաղանթ, որը ցերեկով նորից հալչում էր: Ապա գալիս էր մի առավոտ, երբ գորշագույն թաղանթի փոխարեն գետը ծածկված էր լինում սպիտակ, փայլուն շերտով: Դա այլևս չէր հալչում, այլ ընդհակառակը, հետզհետե հաստանալով, դառնում էր ավելի և ավելի

սպիտակ: Ապա գալիս էր ձյունը, հավասարապես ծածկում թե՛ հարթավայրը, թե՛ գետը, և այլևս անկարելի էր ասել՝ եղե՞լ էր արդյոք գետ և որտե՞ղ էր նա: Ձկները ծածկվում էին սառույցի տակ, իսկ արջերը որջեր էին փորում ձյան մեջ, մտնում այնտեղ և քնում նորից տարվա մեծ մասը: Հարթավայրի ամայությունը նորից դառնում էր համատարած, և նորից դրա վերևում, հորիզոնից հորիզոն, կանգնում էր երկնքի գորշագույն գմբեթը:

Այդ Սպիտակ Թագավորության մեջ, իրարից շատ հեռու-հեռու, առանց իրար հետ որևէ հաղորդակցություն ունենալու, կային մարդկային բնակավայրեր:

Դրանցից մեկն էր Կատպիսը:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՎԵՐՋԻՆ ՁԿՆԱԳԼԽԻ ՕՐԸ

Կը՛թ... կը՛թ... կը՛թ...— երկար ժամանակ լսում էր Իլեն քնի մեջ: Նրան թվում էր, թե ինքը կանգնած է ինչ որ բարձր տեղում, պայծառ փայլում է արեգակը, իսկ արեգակից, մեկը մյուսի ետևից, նրա ոտքերի մոտ ընկնում են սառած ձկներ՝ մեկ... երկու... երեք... Այնքա՛ն շատ են դրանք և դեռ շարունակում են ընկնել՝ կը՛թ... կը՛թ... կը՛թ... Ամբողջ ձմեռը հերիք կանի նրանց ընտանիքին, այսինքն՝ նրան և նրա հորը...

Իլեն արթնացավ, բայց առանց աչքերը բաց անելու շարունակեց ականջ դնել: Ձկների ընկնելու ձայնը շարունակվում էր: Նա ուրախացած բաց արեց աչքերը և նույն րոպեին դառը հիասթափությունը պաշարեց նրան: Նա պառկած էր իրենց սառցե տան հատակի վրա, և դա ջուրն էր կաթում գմբեթավոր առաստաղից: Ճիշտ է, առաստաղը, պատերն ու հատակը ծածկված էին արջի մորթիներով, որոնք պաշտպանում էին սառույցը հալչելուց, բայց մորթիները հին էին, պատառոտված: Սենյակի տաքությունը, չնայած, որ չնչին էր, սակայն հավաքվելով առաստաղի տակ, երբեմն մի քիչ հալեցնում էր այն: Առաստաղից փոկերով կախված, աղոտ վառվում էր արջի գանգից սարքված ճրագ-վառարանը: Դժվար օրեր էին, ճարպ չկար և ճրագի մեջ այնքան էին ճարպ լցրել, որ բոցը հազիվ էր պլպլում ու շուտով հանգչելու էր՝ բնակարանը թողնելով լիակատար մթության և ցրտի մեջ: Իլեն պառկած էր մորթիներով ծածկված հատակի վրա, մորթե տոպրակի մեջ: Մի այլ տոպրակ նրա կողքին՝ դատարկ էր: Ինչպես ամեն օր, նրա հայրը վաղ առավոտյան գնացել էր որսի:

Արթնանալուն պես Իլեն զգաց, որ սոված է: Հայր ու որդի, խնայողության համար, երեկոյան ոչինչ չէին կերել: Իլեն մտածեց իսկույն վեր կենալ, գնալ միջանցք և սառած ձուկ բերել այնտեղից: Բայց նույն րոպեին նա ինչ-որ բան հիշեց, և նրա կլոր դեմքը փայլեց ուրախությունից:

Շտապ վեր ցատկելով, նա դուրս ելավ տոպրակից: Ուշադրություն չդարձնելով ցրտին, նա մերկ մոտեցավ իրենց կլոր բնակարանի պատին և ծունկ չոքեց դրա առջև: Զգուշության համար նա մի պահ ետ նայեց դեպի բնակարանի մուտքը՝ տեսնելու, թե արդյոք ոչ ոք չի՞ մտնում ներս: Ապա նայեց դեպի հոր տոպրակը՝ կարծես համոզվելու համար, որ իրոք դատարկ է: Միայն այդ բոլորից հետո նա ետ տարավ պատը ծածկած մորթու ծայրը, որի ետևում, խնամքով քողարկված, գտնվում էր մի փոս:

Իլեն ձեռքը կոխեց փոսի մեջ և հանեց այնտեղից մի ձկան գլուխ: Ու թեև դա ոչ ուտելու համար էր պետք, ոչ հետը խաղալու, բայց Իլեն չշպրտեց դա, այլ մի ուրիշ տեղում բարձրացնելով մորթու ծայրը, թաքցրեց մի ուրիշ փոսի մեջ: Դրանից հետո ձեռքը նորից կոխելով առաջին փոսի մեջ, նա սկսեց փնտրել: Համոզվելով, որ այդ փոսն այլևս դատարկ է, նա ժպտաց չափազանց ուրախ և շշնջաց կամացուկ.

— Վերջին Ձկնագլխի Օրը...

Վերջապես, վերջապես եկավ Վերջին Ձկնագլխի Օրը, որին այնքա՛ն երկար սպասում էր Իլեն...

Սկզբում առաջին փոսը լիքը լցված էր ձկան գլուխներով: Այնքա՛ն շատ էին դրանք... Իլեն ամեն օր մյուս փոսն էր փոխադրում դրանցից մեկը, բայց փոսը կարծես մնում էր դարձյալ նույնքան լիքը: Երբեմն Իլեն ցանկություն էր զգում միանգամից տեղափոխել մի քանի ձկան գլուխ, բայց դրանից, իհարկե, ոչինչ չէր ստացվի՝ բացի հաշիվը խառնելուց: Հարկավոր էր զսպել անհամբերությունը, յուրաքանչյուր օր փոխադրել միայն մի ձկան գլուխ և սպասել...

Եվ ահա, վերջապես, եկավ Վերջին Ձկնագլխի Օրը...

Իլեն ուրախությունից մոռացել էր քաղցը, ցուրտը: Նա սթափվեց միայն այն ժամանակ, երբ արջի գանգից սարքված ճրագ-վառարանի մեջ փոքրիկ բոցը թարթեց մի վերջին անգամ և մարեց: Մթությունը կարծես մռայլություն բերեց Իլեի մտքերին: Նա տխուր հառաչեց: Ի՞նչ օգուտ, որ նորից եկավ Վերջին Ձկնագլխի Օրը... Միևնույնն է, մեծերը նորից են հսկելու՝ ինչպես մի տարի առաջ, երկու տարի առաջ, որպեսզի երեխաներն այսօր չգնան Կատպիսից ոչ մի քայլ այն կողմ...

Իլեն խարխափելով գտավ, վերցրեց իր մորթե հագուստը, որին միացված էին թե՛ մորթե ոտնամանները, թե՛ ձեռնոցները և թե՛ գլխարկը, մտավ դրա մեջ և ձգեց-ամրացրեց փոկերը: Դրանից հետո պառկելով փորի վրա, նա դուրս սողաց դեպի խիստ ցածրիկ և խողովակի պես երկար միջանցքը: Այնտեղ հատակից բարձրացնելով սառույցի մի մեծ կտոր, նա հանեց դրա տակ պահվող իրենց փոքրիկ պաշարից մի ձուկ և ետ սողաց դեպի բնակարան: Շոշափելով մթության մեջ, նա գտավ պատի տակ դրված մի տափակ, սուր ոսկոր, սկսեց տաշել ձուկը դրանով և ուտել:

Քաղցը հագեցնելուց հետո նորից բարձրացավ Իլեի տրամադրությունը: Ինչ կերպ ուզում է՝ լինի, այսօր հարկավոր է, գնալ այնտեղ, ուր չհաջողվեց գնալ ո՛չ անցյալ, ո՛չ նախանցյալ տարի: Հո չի՞ կարելի ամբողջ կյանքում երազել և ամեն անգամ հանդիպել անհաջողության: Անպայման, անպայման հարկավոր է այսօր խուսափել մեծերից և գնալ…

Իլեն անհամբերությունից այլևս չտաշեց ձկան մնացորդը, այլ կուլ տվեց այդպես: Նորից պառկելով փորի վրա, նա դուրս սողաց բնակարանից: Ոտքերի ճարպիկ շարժումով նա իր ետևում ծածկեց բնակարանի մուտքը մորթու կտորով, որպեսզի բնակարանն ավելի չցրտի: Սողալով ևս մի քիչ, նա դուրս ելավ միջանցքից, կանգնեց ոտքի: Անարև, մռայլ օր էր: Երկինքը ծայրեծայր, համահավասար կերպով, գորշ էր: Ձյունածածկ հարթավայրը բոլորովին ամայի էր և բոլոր կողմերում, հեռվում, միանում էր երկնքին: Միայն դեպի արևմուտք այդ հարթությունն աննկատելիորեն բարձրանում էր, իսկ դեպի արևելք, նույնքան աննկատելիորեն, իջնում:

Իլեի շուրջը կանգնած էին Կատպիս բնակավայրի մի քանի տասնյակ տները, որոնք բոլորը գմբեթաձև էին, բոլորը սառույցից սարքված: Գիշերվա քամին ձյան ահագին կույտեր էր դիզել տների հյուսիսային կողմում՝ թողնելով տներն իրենց զանգվածի մեջ: Իսկ երկար միջանցքներով մուտքերը տների հարավային կողմում կարծես ավլած-մաքրած էին ձյունից: Այնտեղ փայլում էր ողորկ սառույցը:

Տեղ-տեղ ձյան վրա նկատվում էին որսի գնացած մարդկանց ոտնահետքերը: Դրանք բոլորը ձգվում էին դեպի արևելք, ուր աստիճանաբար իջնում էր հարթավայրը:

«Տեսնես մեծերից քանի՞ մարդ է մնացել մեզ հսկելու համար»,— մտածեց Իլեն: Բայց, ինչ էլ որ լիներ, հարկավոր էր անպայման, անպայման հաջողեցնել, հավաքել երեխաներին և գնալ: Իսկ եթե դա անհնար լիներ, այդ դեպքում, ի՞նչ արած, պետք էր գնալ թեկուզև մեն-մենակ: Իսկ եթե դա էլ անհնար լինե՞ր...

— Իլե,— հանկարծ լսեց տղան իր անունը,— բարի լույս քեզ, Իլե Տրապնա:

Տղան նայեց: Երկու տնից այն կողմ, իրենց տան մուտքի մոտ, կիսամերկ կանգնել էր նրա մտերիմ ընկերուհի Նուրիսը և ձյունով շփում էր իր երեսն ու թևերը: Նրա գեր, կլոր դեմքը փայլում էր բավականությունից, ուռուցիկ այտերը կարմրել էին ցրտից, փոքրիկ սև աչքերը համարյա փակվել էին կկոցելուց, մնացել էին երկու շեղ գծիկներ: Ուսերի վրա իջել էին նրա խիստ սև ու առատ մազերը, որոնք հարթ էին և ուղիղ, և նույնպես փայլում էին: Իլեն մոտեցավ նրան:

— Դու էլի լվացվո՞ւմ ես,— հարցրեց նա:

— Ինչպես ամեն օր,— պատասխանեց Նուրիսը՝ գործը շարունակելով:

— Կսառչես մի օր, կհիվանդանաս,— ասաց Իլե Տրապնան՝ գլուխը ցավակցաբար օրորելով:

— Ես այսպես ավելի եմ տաքանում ու միշտ առողջ եմ, Իլե,— ժպտաց աղջիկը:— Իսկ դու մի՞թե չես լվացվում...

— Ե՞ս,— արհամարհանքով փնչացրեց Իլեն:

Նուրիսը գործն ընդհատեց զարմանքից:

— Չէ՞ որ խոստացել էիր ինձ,— հանդիմանեց նա:— Հարկավոր է խոսքը պահել:

— Ես, իհարկե, լվացվում եմ,— կմկմաց Իլեն,— դու ինքդ ես տեսնում: Բայց լվացվում եմ ոչ ամեն օր...

— Տեսնում եմ, որ ոչ ամեն օր,— նորից հանդիմանությամբ ասաց Նուրիսը, ապա, համոզվելով, որ Իլեն արդեն պատժված է և անհարմար է զգում իրեն, այլևս չշարունակեց նախատել: Նայելով շփելուց կարմրած իր թևերին, նա գոհ մնաց և հագավ հագուստը:— Իսկ հիմի ո՞ւր գնանք, Իլե,— հարցրեց նա,— ձնագնդի խաղալո՞ւ, թե՞ Խարունա տատի մոտ:

— Իսկ դու գիտե՞ս ինչ օր է այսօր,— առանց պատասխանելու ընկերուհուն, հարցրեց Իլեն:

Նուրիսը հարցականորեն նայեց նրան:

— Վերջին Ձկնագլխի Օրը...— շշնջաց տղան:

— Ա՜...— բացականչեց աղջիկը, բայց ընկերն իսկույն սաստեց նրան:

— Իսկ դու լա՞վ գիտես, որ այսօր է...

— Իհարկե: Ես պահում էի հաշիվը,— խոստովանեց Իլեն:

— Պահո՞ւմ էիր...— ապշեց Նուրիսը:— Իսկ ինչո՞ւ ինձ չես ասել մինչև հիմա...

— Որովհետև...— Իլեն կմկմաց,— որովհետև աղջիկները գաղտնիք պահել չգիտեն:

— Ամոթ չէ՞ քեզ, որ իմ մասին այդպես ես մտածում,— վիրավորվեց աղջիկը:

— Ես կատակ եմ անում,— շփոթված ուղղեց Իլեն:— Բայց կարգն այնպես է, որ մինչև վերջին օրը գաղտնիքը չպետք է հայտնել ոչ ոքի: Թե չէ, մեկ էլ տեսար, ինքդ էլ չիմացար, թե ինչպես, ասացիր մի ուրիշին:

— Բայց ի՞նչ գաղտնիք, ի՞նչ,— բորբոքված հետաքրքրությամբ հարցրեց Նուրիսը:— Ոչ ես, ոչ մյուս, երեխաները, ոչինչ չգիտենք Վերջին Զկնագլխի Օրվա մասին: Միայն այնքանը գիտենք, որ այդ օրը մեծերը խիստ հսկում են մեզ, որպեսզի ոչ մի տեղ չգնանք Կատպիսից: Բայց, սպասիր, ինչպե՞ս է այսօր Վերջին Զկնագլխի Օրը, երբ մեծերից ոչ ոք չի մնացել տանը՝ մեզ հսկելու…

— Չի կարող պատահել, որ մնացած չլինեն,— բացականչեց Իլեն,— դու պարզապես չգիտես:

— Գիտեմ,— պնդեց Նուրիսը:— Ես այսօր էլ էի շուտ վեր կացել և լվացվում էի, երբ բոլորը հավաքվեցին և գնացին որսի: Չկար միայն Ակիրսը, իսկ նա, ինչպես գիտես, հինգ օր է, որ հիվանդ է և մնում է տանը, կամ, ինչպես բոլորն են ասում, ձևանում է, թե հիվանդ է: Չէ՞ որ նա աշխատել չի սիրում:

Իլեն մտահոգվեց:

— Բայց չէ՞ որ ոչ մի ձկան գլուխ չի մնացել փոսի մեջ,— խոսեց նա ինքնիրեն:

— Ի՞նչ ձկան գլուխ, ի՞նչ փոս,— չհասկացավ Նուրիսը:

Առանց նրան պատասխանելու Իլեն քայլերն ուղղեց դեպի տուն: Նուրիսը հետևեց նրան:

Բնակարանում Իլեն մթության մեջ շոշափելով գտավ փոսը, ձեռքը կոխեց այնտեղ, ուշադիր փնտրեց:

— Ոչ,— ասաց նա,— այլևս չի մնացել ոչ մի ձկան գլուխ: Իսկ սխալվել, մի օրում երկու հատ տեղափոխել կամ ոչ մի հատ չտեղափոխել ես չէի կարող, դա հաստատ գիտեմ: Առաջին տարին հո չէ՞, որ պահում եմ հաշիվը...

Նուրիսն այրվում էր հետաքրքրությունից, ուզում էր հարցեր տալ ընկերոջը, իմանալ, բայց լռում էր՝ չխանգարելու համար նրան: Իսկ Իլեն կարծես մոռացել էր նրա ներկայությունը և լուռ մտածում էր:

— Գտա,— քիչ հետո բացականչեց նա և թեթևացած ծիծաղեց:— Մեծերն արդեն համոզվել են, թե իբր մենք կորցրել ենք հաշիվը, դրա համար էլ այլևս չեն հսկում մեզ:

— Դե իհարկե այդպես է,— նույնպես բացականչեց Նուրիսը.— Ինչո՞ւ հսկեն և դրանով մատնեն, որ այսօր հենց այդ օրն է:

— Լսիր, Նուրիս,— ասաց Իլեն, բայց այս անգամ նրա ձայնն այնքան փոխված էր, այնքան լուրջ էր և հանդիսավոր, որ աղջիկը նույնիսկ վախեցավ:— Լսիր... Այսօր ես պարտավոր եմ հաշիվը պահելու գաղտնիքը հայտնել մի ուրիշին, որ չկորչի: Ո՞վ գիտե, գուցե այսօր ես էլ եմ մեռնելու, ինչպես երեք տարի առաջ՝ իմ մեծ եղբայրը...

Նուրիսը ցնցվեց:

— Ես չունեմ ավելի մոտիկ ընկեր, քան դու,— շարունակեց տղան։— Ուրեմն քեզ եմ ասելու ամեն ինչ: Լսիր։

Նա լռեց՝ երևի մտածելով, թե ինչպես սկսի, ապա ասաց.

— Շատ վաղուց են պահել երեխաները Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվը: Մեր ծնողներն էլ են պահել իրենց երեխա ժամանակ, նրանց ծնողներն էլ, նրանց ծնողների ծնողներն էլ... Եվ միշտ էլ մեծերն աշխատել են գտնել հաշիվը, խլել երեխաներից, ոչնչացնել, որովհետև վերջին Ձկնագլխի Օրը երեխաներից շատերի համար բերում է մահ...

— Ինչի՞ համար,— սարսափով հարցրեց աղջիկը։ Բայց Իլեն կարծես չլսեց նրան։

— Շատ անգամ,— շարունակեց նա,— մեծերին հաջողվել է գտնել հաշիվը։ Գտնելուց հետո նրանք կամ խլել են դա և ոչնչացրել, կամ թե չէ խորամանկություն են բանեցրել, չեն ոչնչացրել, այլ վրան ավելացրել են կամ վրայից վերցրել են մի քանի ձկան գլուխ, խառնել են հաշիվը։ Վերջապես նրանց հաջողվել է ոչնչացնել դա։ Հաշիվը կորած է եղել համարյա քսան տարի…

— Դու որտեղի՞ց գիտես այդ բոլորը,— հարցրեց Նուրիսը։

— Եղբայրս է պատմել ինձ, իսկ նրան պատմել է մի ուրիշը, բայց թե ով՝ չգիտեմ: Դու հիշո՞ւմ ես եղբորս, Նուրիս...

— Հիշում եմ,— ասաց աղջիկը կամացուկ։

— Նա շատ խելոք և ճարպիկ տղա էր,— հառաչեց Իլեն։— Այդ պատմությունը լսելուց հետո նա գիշեր-ցերեկ մտածել է Վերջին Ձկնագլխի Օրվա մասին։ Մի՞թե, իսկապես, հաշիվը կորել է,— մտածել է նա։— Գուցե միայն երեխաներն են կորցրել, իսկ մեծերը դեռ պահո՞ւմ են…

— Իսկ ինչի՞ համար պիտի պահեն մեծերը։

— Հենց թեկուզ նրա համար, որ եթե մենք նորից գտնեինք հաշիվը, նրանք վրահասու լինեին և նորից խանգարեին մեզ... Եղբայրս սկսել է հերթով մտնել բոլորի տները՝ դրանց տերերի բացակայության ժամանակ, և փնտրել, խուզարկել: Եվ մի օր նա հաշիվը գտել է Ակիրսի տանը…

— Ակիրսի՞ տանը...— կրկնեց Նուրիսը վախեցած։

— Այո։ Փոսի մեջ մնացած է եղել ընդամենը ութ ձկան գլուխ։ Դե, ութն այնպիսի թիվ է, որ ամեն մարդ կարող է միտքը պահել: Այդպիսով եղբայրս իմացել է, որ ութ օր հետո լինելու է Վերջին Ձկնագլխի Օրը…

Լսվում էր Նուրիսի արագ-արագ շնչառությունը։ Նա լարված ականջ էր դնում։

— Բայց եղբայրս,— շարունակեց Իլեն,— ուզել է պահել հաշիվը նաև հաջորդ տարիների համար։ Դրա համար էլ նա հաշվել է նաև մյուս փոսի մեջ եղած ձկան գլուխները։ Ինչպե՞ս է հաշվել։ Դու հո գիտե՞ս, որ նույնիսկ մեծերը հաշվում են միայն մինչև քսանը։ Իսկ թե ինչ կա քսանից այն կողմ՝ ոչ ոքի հայտնի չէ։ Իսկ փոսում եղել են շատ անգամ քսան ձկան գլուխներ։ Բայց եղբայրս իր հետ տարել է նույնպես շատ անգամ քսան ձկան գլուխներ։ Նա Ակիրսի ամեն մի ձկան գլխի դիմաց դրել է մի ձկան գլուխ, դրանով կրկնել է հաշիվը և բերել։ Տեսնո՞ւմ ես ինչքան խելոքն է եղել իմ եղբայրը։

— Եվ քաջը,— ավելացրեց Նուրիսը։— Համարձակվել է խուզարկել Ակիրսի տունը։ Չէ՞ որ Ակիրսն ամենասարսափելի մարդն է Կատպիսում։

— Ոչ թե ամենասարսափելի,— ուղղեց Իլեն,— այլ միակ սարսափելի մարդը: Եղբայրս դեռ նոր է վերջացրել հաշիվը, երբ հանկարծ Ակիրսը մտել է ներս:

Նուրիսը վախից ճչաց:

— «Դու ի՞նչ ես անում իմ տանը»,— գոռացել է Ակիրսը և հարձակվել է եղբորս վրա:— «Չինտամին եմ ուզում, տղայիդ, որ գնանք միասին խաղ անելու»,— հնարել է եղբայրս: «Կորիր այստեղից, չե՞ս տեսնում, որ Չինտամը տանը չէ: Բացի դրանից, նա քեզանից փոքր է, ինչո՞ւ պիտի խաղա քեզ հետ: Բայց, սպասիր, գուցե դու ուրի՞շ նպատակով ես մտել իմ տունը»… Եղբորս հազիվ է հաջողվել հանգստացնել Ակիրսին և ելնել դուրս...

Նուրիսը շունչ քաշեց թեթևացած:

— Ութ օր հետո,— շարունակեց Իլեն, և նրա ձայնը դողաց,— եղբայրս ինձ հետ մենակ մնաց տանը և պատմեց այս բոլորը: Քիչ հետո նա հավաքեց բոլոր մեծ երեխաներին և տարավ իր հետ... Որքան խնդրեցի, աղաչեցի, նա ինձ չտարավ, որովհետև ես փոքր էի: Ասաց, որ երբ մեծանամ, ինքս կգնամ և կտանեմ ուրիշներին: Եղբայրս ու մյուս մեծ երեխաները գնացին և այլևս չվերադարձան...

Իլեի ձայնը խզվեց: Մթության մեջ Նուրիսը գտավ նրա ձեռքը՝ ձեռնոցի մեջ, և սկսեց շոյել իր ձեռքով, որը նույնպես ձեռնոցի մեջ էր:

Իլեն մի փոքր հանգստացավ և շարունակեց.

— Երեկոյան մեր ծնողները վերադարձան որսից և տեսնելով, որ երեխաները չկան, իսկույն վազ տվեցին նրանց փրկելու: Ամբողջ գիշերը փնտրում էին, իսկ առավոտյան վերադարձան՝ բերելով բոլորին... սառած... Ոչ մեկը կենդանի չէր մնացել, որ պատմեր, թե ուր էին գնացել նրանք և ինչ էին տեսել: Բայց ես գիտեի, որովհետև նա պատմել էր…

— Ո՞ւր էին գնացել նրանք, ի՞նչ էին տեսել,— հետաքրքրությունից բորբոքված շշուկով հարցրեց աղջիկը:

Իլեն չպատասխանեց: Նա տարված էր իր մտքերով ու հիշողություններով: Նա շարունակեց.

— Թեև եղբայրս չէր տարել իր հետ Չինտամին, որովհետև նա էլ ինձ նման դեռ փոքր էր, բայց Չինտամի հայրը՝ Ակիրսը, ավելի էր կատաղել մեր դեմ, քան թե այն ծնողները, որոնց երեխաները սառել էին: «Պետք է կոտորել Տրապնաների ամբողջ ընտանիքը»,— գոռում էր նա՝ հասկանալով, որ իմ եղբայրն էր նրա տնից գողացել հաշիվը և առաջնորդել երեխաներին: Նա եկավ մեր տուն, խուզարկեց, բայց ոչինչ չգտավ, և դա ավելի կատաղեցրեց նրան:

— Ոչինչ չգտա՞վ,— զարմացավ Նուրիսը,— իսկ որտե՞ղ էր եղբայրդ պահել հաշիվը…

— Դրսում, մեր տան պատի տակ: Հետևյալ օրը ես ներս բերեցի դա, պատի մեջ երկու փոս փորեցի և շարունակեցի պահել... Նայիր…

— Ինչպե՞ս նայեմ, մութն է,— զարմացած հարցրեց Նուրիսը: Ուզում եմ ասել՝ շոշափիր: Տուր ձեռքդ: Տեսնո՞ւմ ես: Սա փոս է՝ ձկան գլուխներով լիքը լցված: Իսկ սա դատարկ փոս է: Վաղվանից հարկավոր է օրական մի ձկան գլուխ փոխադրել այստեղ: Երբ լիքը փոսը դատարկվի, իսկ դատարկը լցվի՝ նորից կգա Վերջին Ձկնագլխի Օրը: Ոչ ոքի չասես այս գաղտնիքը: Խոսք տուր:

— Խոսք եմ տալիս,— շշնջաց աղջիկը:

— Զգույշ կլինես, որ պատահաբար ոչ ոք չնկատի: Խոսք տուր:

— Խոսք եմ տալիս,— կրկնեց աղջիկը:— Բայց սպասիր, իսկ ինչո՞ւ դու ինքդ չես ուզում շարունակել հաշիվը...

— Ես... Գուցե ես սառչեմ ճանապարհին և վաղն այլևս կենդանի չլինեմ...

— Ուրեմն հարկավոր չէ գնալ,— սարսափած առարկեց աղջիկը:

— Ոչ, Նուրիս, հարկավոր է: Դու չգիտես: Պետք է գնալ՝ թեկուզ դա լինի սառչելու գնով:

— Իսկ ո՞ւր, ո՞ւր,— այրվելով հետաքրքրությունից, նորից հարցրեց աղջիկը:

— Կասեմ: Այ, երբ հավաքենք բոլոր երեխաներին՝ կասեմ և բոլորդ կլսեք:

— Էլի մի բան հարցնեմ,— ասաց Նուրիսը:— Իսկ եթե ես էլ սառչեմ, ո՞վ է պահելու հաշիվը…

— Դու չես սառչի, Նուրիս:

— Չլինի՞ կարծում ես, թե ես չեմ գալու քեզ հետ,— հասկացավ Նուրիսը:— Չէ՞ որ ես ընդամենը մի տարով եմ քեզանից փոքր:

— Բայց դու չգիտես, թե որքան հեռու ենք գնալու և որքան դժվար է ճանապարհը:

— Դա միևնույնն է,— ասաց աղջիկը վճռական տոնով:— Ուր որ դու՝ այնտեղ էլ ես:

Իլեն ոչինչ չասաց: Նա մտածում էր: Ապա հանկարծ բացականչեց.

— Դու կգաս մեզ հետ: Դու չես սառչի, ոչ: Դու ամեն առավոտ լվացվում ես ձյունով և ամենադիմացկունն ես մեզանից: Իսկ եթե սառչես էլ, եթե բոլորս էլ սառչենք՝ դարձյալ ոչինչ: Ավելի լավ է գոնե մի անգամ լինել կյանքում երջանիկ ու սառչել, քան թե ապրել ամբողջ ժամանակ և չիմանալ, թե ինչ է երջանկությունը:

— Ուրեմն դու համաձա՞յն ես, որ ես էլ գամ,— ուրախացավ աղջիկը:

— Այո, բայց դու չպետք է սառչես, որպեսզի հաշիվը չկորչի: Բացի դրանից, դու իմ ամենամտերիմ ընկերուհին ես և ես չեմ ուզում, որ դու սառչես: Չեմ ուզում, որ ոչ ոք սառչի: Ես էլ, իհարկե, բայց հակառակ դեպքում՝ ես ոչինչ...

— Եվ ոչ էլ դու,— վրա բերեց աղջիկը:— Մենք միասին կլինենք ամբողջ ճանապարհին և հենց որ սկսեցիր սառչել՝ ես քեզ կտաքացնեմ իմ շնչով: Այնպես որ, վաղվանից դու ինքդ կշարունակես պահել հաշիվը:

— Ոչ, դա անհնար է,— ձեռքը թափ տվեց Իլեն, թեև մթության մեջ Նուրիսն այդ չէր կարող տեսնել:— Այսօր երեկոյան որսից կվերադառնան մեր ծնողները և կտեսնեն, որ մենք չկանք: Ակիրսը կհասկանա, որ նորից Տրապնաներն են մեղավոր դրանում, վաղը կգա և կխուզարկի մեր տունը:

— Դա ճիշտ է,— համաձայնեց Նուրիսը և ապա վախեցած ավելացրեց:— Ուրեմն հարկավոր է հենց հիմա հաշիվը փոխադրել ուրիշ տեղ:

— Ոչ, թող գտնի,— ժպտաց տղան մթության մեջ։— Թող գտնի ու հանգստանա՝ կարծելով, թե նորից զրկել է մեզ հաշվից։ Իսկ ես նույն քանակությամբ ձկան գլուխներ պահել եմ դրսում, մեր պատի տակ։ Ցույց կտամ քեզ տեղը։ Վաղը կտանես ձեր տուն, կփորես երկու փոս ու կշարունակես պահել։ Իսկ ես, եթե նույնիսկ կենդանի մնամ, միևնույնն է, այլևս չեմ կարողանա. մեր տունը սրանից հետո միշտ կասկածի տակ է լինելու... Իսկ այժմ գնանք։

— Գնանք,— ասաց աղջիկը՝ առանց տեղից շարժվելու։

Ըստ երևույթին նա էլի բան ուներ հարցնելու։ Եվ իրոք, հարցրեց.

— Քո եղբայրը, Իլե, մեռավ սրանից երեք տարի առաջ։ Դրանից հետո եկել է էլի երկու Վերջին Ձկնագլխի Օր։ Մի՞թե դու այս տարի առաջին անգամն ես...

— Այո,— ասաց Իլեն։— Նախանցյալ տարի մեծերից տասը մարդ չգնացին որսի ու մնացին տանը՝ մեզ հսկելու։ Նույնիսկ թույլ չտվեցին ձնագնդի խաղալ տներից հեռու, ինչպես ամեն օր։ Իսկ ով որ մի քիչ հեռանում էր բնակարաններից՝ ծեծում էին և վերադարձնում։

— Ինձ էլ են ծեծել, դու դա գիտես,— հիշեցրեց Նուրիսը։

— Անցյալ տարի նույնպես, տասը մարդ մնացին մեզ հսկելու, իսկ ես որոշել էի ծլկվել՝ թեկուզ մենակ։ Բայց Ակիրսը նկատեց ինձ, հասավ ետևիցս ու գոռաց. «Ո՞ւր»։ «Գնում եմ կորչեմ, սառչեմ,— ասացի ես խռովկան ձայնով։— Այսօր ես արջի գանգից ճարպը թափեցի և հայրս ծեծեց ինձ։ Չեմ ուզում ապրել...»։ Դա ճիշտ էր, ես թափել էի ճարպը, բայց դիտմամբ, որ եթե բռնվեմ՝ պատրվակ ունենամ։ Ակիրսը չհավատաց, բռնեց օձիքիցս ու քարշ տվեց ինձ, բերեց հորս մոտ, որին նույնպես թողել էին Կատպիսում՝ մեզ հսկելու համար։ «Կնանտ, դու ծեծե՞լ ես այս լակոտին»,— հարցրեց նա։ «Ծեծել եմ»,— խոստովանեց հայրս։ Միայն դրանից հետո փարատվեցին Ակիրսի կասկածները։ Իսկ ես սարսափելի վախենում էի, թե նա կխուզարկի մեր տունը և կգտնի հաշիվը...

Իլեն պառկեց փորի վրա։

— Իսկ հիմա՝ գնանք, Նուրիս,— շտապեցրեց նա։— Կմտնենք Խարունա տատի մոտ, բոլոր երեխաներն այնտեղ են, իհարկե։ Կնստենք մի քիչ, որպեսզի նա ոչինչ չկասկածի, հետո կամացուկ իմաց կտանք երեխաներին, որ մեկ առ մեկ դուրս գան և հավաքվեն Կատպիսի այն կողմում, որտեղ մայր է մտնում արևը։ Տես, Նուրիս, իմաց կտաս միայն մեծ երեխաներին։ Փոքրերը չեն կարող գալ, ճանապարհը հեռու է, շատ հեռու... Եվ շատ դժվար...

Նրանք ելան դուրս։

ՊԱՌԱՎ ԽԱՐՈՒՆԱՅԻ ՄՈՏ

Պառավ Խարունան վաղուց արդեն որսի չէր գնում։ Նա աշխատում էր տանը՝ արջի մորթու հին կտորներից փոկեր էր պատրաստում, այդ փոկերով Կատպիսի բնակիչների պատռված կամ մաշված հագուստներն էր կարկատում՝ որպես բիզ գործածելով ձկան մի մեծ փուշ։ Դրա դիմաց նրան տալիս էին ձուկ և արջի միս, որպեսզի նա չմեռնի սովից։

Իր բնակարանի մթության մեջ նստած, նա շոշափելով էր կատարում ամեն աշխատանք։ Բայց նրան լույս հարկավոր էլ չէր, որովհետև նա կույր էր։

Իրենց ցուրտ և մութ բնակարաններում չսառչելու համար երեխաներն ամեն առավոտ, մանավանդ շատ ցուրտ օրերին, հավաքվում էին նրա բնակարանը: Ճիշտ է, այնտեղ էլ էր ցուրտ և մութ, բայց երեխաներն իրենց շնչառությամբ շուտով տաքացնում էին այն: Բնակարաններում մնում էին միայն ծծկեր երեխաներն իրենց մայրերի հետ և հիվանդները:

Երբ Իլե Տրապնան և Նուրիսը մտան Խարունայի մոտ, պառավն արդեն սկսել էր իր անվերջանալի պատմությունները: Որտեղի՞ց գիտեր նա այդքան բան... Պառավ Խարունան չէր տեսնում իր փոքրիկ ունկնդիրներին, բայց ճանաչում էր նրանցից յուրաքանչյուրի շնչառությունը, հազը, քիթը վեր քաշելու ձայնը...

— Ովքե՞ր եկան,— հարցրեց նա՝ երբ Իլեն և Նուրիսը կամացուկ սողացին ներս:

— Ես և Իլե Տրապնան,— պատասխանեց Նուրիսը:

— Նստեցեք: Զախ կողմում դեռ ազատ տեղ կա, ես այնտեղից քիչ եմ լսում շնչառության ձայնը,— ասաց Խարունան:— Ախ, երեխաներ, երեխաներ, ինչո՞ւ եք ուշանում, ինչո՞ւ եք բաց թողնում իմ պատմությունները: Ես կմեռնեմ և այլևս ոչ ոք չի պատմի ձեզ դրանք: Չէ՞ որ ես Սպիտակ Թագավորության ամենածեր մարդն եմ: Ես գիտեմ այնպիսի բաներ, որոնք չգիտե այլևս ոչ ոք:

— Ուրեմն, Խարունա տատի,— հարցրեց Իլեն հարգանքով,— դու գիտե՞ս, թե ինչպիսին է եղել մեր երկիրն առաջներում...

— Ես մեր երկիրը միշտ այսպես եմ հիշում, Իլե:

— Ուրեմն նա միշտ այսպե՞ս է եղել:

— Այդ դո՞ւ ես հարցնում, Վինզա: Ոչ, եղել է ուրիշ կերպ: Բայց դա եղել է շատ և շատ առաջ: Այն ժամանակ ես էլ չեմ ծնված, իմ մայրն էլ, նրա մայրն ու տատն էլ, նրա տատի տատն էլ...

— Իսկ դու որտեղի՞ց գիտես, թե մեր երկիրն առաջ եղել է ուրիշ կերպ,— հարցրին երեխաները բոլոր կողմերից:

— Ինձ պատմել է իմ պապը, որին պատմել է նրա տատը, որին պատմել է նրա տատի պապը... Իսկ հիմա ես ինքս կպատմեմ ձեզ, որպեսզի դուք էլ, երբ մեծանաք, պատմեք փոքրերին և պատվիրեք, որ նրանք էլ, իրենց հերթին, պատմեն իրենց փոքրերին...

— Իսկ ինչո՞ւ պատմել:

— Այդ դո՞ւ ես հարցնում, Չինտամ: Երբ դու ունես մի լավ բան, մի՞թե ուզում ես կորցնել...

— Իսկ ի՞նչ է նշանակում լավ բան: Ես երբեք չեմ ունեցել լավ բան:

— Գիտեմ, Չինտամ, գիտեմ: Դուք դժբախտ երեխաներ եք, դուք երբեք չեք ունեցել լավ բան: Չեն ունեցել նաև ձեր ծնողները, ոչ էլ նրանց ծնողներն ու ծնողների ծնողները... Բայց եթե ունենայիր, մի՞թե կուզենայիր կորցնել այն: Ահա իմ պատմություններն էլ իմ ունեցած միակ լավ բաներն են, և ես չեմ ուզում կորցնել դրանք: Ես կմեռնեմ, կգնամ, իսկ իմ պատմությունները կմնան: Այ, ես ձեզ հիմա պատմեմ, թե ինչպես են ապրել մարդիկ մեզանից առաջ, որպեսզի իմանաք:

— Իսկ ինչո՞ւ իմանանք,— նորից հարցրեց Չինտամը:

— Որպեսզի...— պառավ Խարունան մի պահ լռեց, մտածեց.— որպեսզի իմանաք, թե ինչպես են ապրել մարդիկ մեզանից առաջ…

— Իսկ ինչո՞ւ իմանանք,— նորից պնդեց Չինտամը:

— Դե լռիր,— բարկացավ նրա վրա Իլեն:— Եթե չես ուզում լսել՝ գլխարկդ քաշիր ականջներիդ կամ գնա դուրս:

— Ես չգիտեմ, թե ինչի՞ համար է դա մեզ պետք,— շարունակեց համառել Չինտամը:

— Պարզապես հետաքրքիր է,— ասաց Նուրիսը բարկությամբ,— գուցե մարդիկ առաջ ապրել են մեզանից ավելի լավ: Պե՞տք է իմանալ:

— Իսկ ինչո՞ւ իմանալ,— նորից, նույն համառությամբ, հարցրեց Չինտամը:— Որպեսզի մեր կյանքը վա՞տ երևա մեր աչքին: Իսկ ինչո՞ւ վատ երևա, երբ որ մենք միշտ ապրելու ենք այսպես: Ճի՞շտ է, Խարունա տատի, որ մենք միշտ ապրելու ենք այսպես:

— Դա ճիշտ է, Չինտամ,— հառաչելով համաձայնեց Խարունան:— Մենք միշտ ապրելու ենք այսպես: Բայց երբ դու սոված պառկած ես քո մութ բնակարանում ու չես կարողանում քնել ցրտից, իսկ դրսում ոռնում է բուքը, մի՞թե չես ուզենա պատկերացնել, թե ինչպես մի ժամանակ եղել է բոլորովին ուրիշ կերպ, եղել է ավելի լավ կյանք…

— Իհարկե, իհարկե,— համաձայնեցին երեխաները բոլոր կողմերից:

— Այնպես որ, ես կպատմեմ:

— Իսկ ես կգնամ, որպեսզի չլսեմ,— ասաց Չինտամը, և նրա ձայնից զգացվեց, որ նա վեր կացավ:— Հայրիկս ասում է, որ եթե ես լսեմ ավելի լավ կյանքի մասին, իմ կյանքն անտանելի կդառնա ինձ համար, ես կդժբախտանամ: Ես չեմ ուզում դժբախտանալ: Իսկ ավելի լավ կյանքն այն է, որ մեր ծնողներն ավելի շատ ձուկ բռնեն, և դա բավականացնի մեզ ամբողջ ձմեռը: Եվ այնքան սպիտակ արջ սպանեն, որ մեր բոլորի հագուստներն ու տոպրակները միշտ լինեն նոր ու տաք: Ուրիշ ավելի լավ կյանք չի կարող լինել, էլ ուրեմն ինչո՞ւ լսել զանազան հեքիաթներ դրա մասին: Ճանապարհ տվեք ինձ...

Այս խոսքերով նա դուրս ելավ բնակարանից:

— Իսկ մենք լսում ենք,— ասաց Նուրիսը բոլորի կողմից:— Պատմիր, խնդրում ենք, Խարունա տատի...

— Շատ հին ժամանակներում,— սկսեց իր պատմությունը Խարունան,— մեր երկրում Սպիտակ Թագավորություն չի եղել: Ձյունն ու սառույցը հավիտենական չեն ծածկել գետինը: Տարվա մի մասում եկել է ձյունը, իսկ մյուս մասում՝ հալչել:

— Հիմա էլ է այդպես,— լսվեց մի աղջկա անվստահ ձայնը:

— Ոչ, թոռնիկս, հիմա այդպես չէ: Ճիշտ է, հիմա էլ տարվա մի մասում գալիս է ձյունը, իսկ մյուս մասում հալչում, բայց հալչում է շատ քիչ: Իսկ հին ժամանակներում հալչելիս է եղել ամբողջ ձյունը...

— Ամբո՞ղջը,— զարմացած բացականչեցին բոլորը միասին:— Իսկ ի՞նչ էր մնում տակը:

— Իսկ ինչի՞ վրա էին ապրում մարդիկ։

— Մարդիկ ապրում էին այն բանի վրա, որը գտնվում է ձյան ու սառցի տակ և կոչվում է հող։

— Հո՞ղ...

— Իսկ ի՞նչ բան է հողը։

— Ես ինքս էլ չգիտեմ,— հառաչեց Խարունան։— Ասում են՝ հողը եղել է սև գույնի՝ ինչպես իմ մազերը։

— Քո մազերը, Խարունա տատի, սպիտակ են՝ ինչպես ձյունը,— տխուր ասաց Նուրիսը։

Խարունան մի պահ լռեց և հիշեց, թե ինչպես մի ժամանակ նա երիտասարդ աղջիկ էր՝ ուրախ, եռանդոտ։ Բոլորի հետ միասին նա էլ էր գնում ձկնորսության, կամ սպիտակ արջ սպանելու, նա էլ էր ժպտում արևին նայելիս։ Եվ այն ժամանակ նրա մազերը սև էին...

— Ուրեմն ինչպես ձեր մազերը,— ասաց նա։

— Ա՞յդ գույնի է եղել մեր երկիրը,— հիասթափված հարցրեց մի տղա։— Մի՞թե դա լավ է։

— Այո, ասում են, որ դա լավ է եղել, թոռնիկներ։ Ես ինքս, իհարկե, չեմ տեսել։ Եվ լավ է եղել նրա համար, որ հողի վրա բուսել են բույսեր։

— Ի՞նչ, ի՞նչ,— աղմկեցին երեխաները,— չենք հասկանում։

— Բուսել են բույսեր...— անօգնական կերպով կրկնեց Խարունան։

Ոչ, այդ արդեն անհնար էր բացատրել։

— Եկեք ձեզ ուրիշ բան պատմեմ,— առաջարկեց նա։

— Ոչ, ոչ,— ասաց իսկույն Իլեն։

— Ոչ, ոչ,— աղմկեցին երեխաները,— բացատրիր, Խարունա տատի, թե ի՞նչ է նշանակում՝ բուսել են բույսեր։

— Չեք հասկանա,— հառաչեց պառավը։

— Իսկ դու, տատի,— շշնջաց Նուրիսը,— մի շտապիր, այլ հիշիր, հիշիր…

Պառավը մի պահ թողեց աշխատանքը և շոյեց նրա գլուխը։

— Ես ոչինչ չեմ տեսել, որպեսզի հիշեմ,— ասաց նա։— Ինձ միայն պատմել են։ Եվ պատմել են այսպես... Դուք բոլորդ, իհարկե, գիտեք, թե ինչ բան է ռումամը։

— Այո,— թնդաց հավաքվածների խումբը։

— Ռումամը մենք ուտում ենք նրա համար, որ մեր լնդերը չցավեն, չարյունոտվեն, որ մենք չհիվանդանանք և չմեռնենք։ Իսկ գիտե՞ք ինչպես է կոչվում ռումամի գույնը։

— Ոչ,— թնդաց հավաքվածների խումբը։

— Կոչվում է կանաչ: Ահա այդպիսի կանաչ է սև հողի վրա: Իսկ բուսել՝ դա նշանակում է՝ տնկված է եղել փունջ-փունջ և սկսել է մեծանալ, բարձրանալ: Ասում են՝ եղել է այնպիսի կանաչ, որը հասել է…

— Մատի երկարության,— լսվեց տղայի մի ձայն:

— Ոչ, մատի երկարության լինում է ռումամը, իսկ դա…

— Ձեռքի չափ,— ենթադրեց մի ուրիշը:

— Ոչ, ոչ, ձեր հասակին, դեռ ավելի բարձր:

— Է՛, դա հեքիաթ է,— հիասթափված բացականչեցին չորս կողմից։— Այդպիսի ռումամ չի կարող լինել:

— Եվ դա չի էլ եղել ռումամ, թոռնիկներ: Դա կոչվելիս է եղել՝ խոտ, թուփ, ծառ… Երբեք չմոռանաք այդ լավ բառերը…

Երեխաները շշուկով կրկնեցին՝ հող, խոտ, թուփ, ծառ…

— Դրանց վրա,— շարունակեց պառավը,— գարնանը բացվել են… սպասեցեք, սպասեցեք… ուզում եմ հիշել… Այո, բացվել են տերևներ և ծաղիկներ: Տերևները եղել են կանաչ, իսկ ծաղիկները՝ տարբեր գույնի.— կարմիր՝ ինչպես արյունն է, կապույտ՝ ինչպես երկինքն է լինում երբեմն, դեղին՝ ինչպես արևը, և էլի ուրիշ գույների, որոնց նույնիսկ անուններն անհայտ են մեզ: Չմոռանաք այդ բառերը նույնպես, երեխաներ…

Բոլորը նորից շշուկով կրկնեցին անծանոթ և կախարդական բառերը՝ տերև, ծաղիկ, կանաչ, կարմիր, կապույտ, դեղին…

— Իսկ հետո բոլոր այդ գեղեցիկ ծաղիկները թափվել են…— ասաց Խարունան, բայց չկարողացավ խոսքը շարունակել: Բոլորի կրծքից թռավ ափսոսանքի բացականչություն: Պառավն սպասեց մի քիչ, ապա ասաց.— Բայց դա ոչինչ, որ ծաղիկները թափվել են: Դրանց փոխարեն թփերի և ծառերի վրա գոյացել են պտուղներ և մրգեր: Իսկ թե ինչ են պտուղներն ու մրգերը՝ ես դարձյալ չգիտեմ: Մարդիկ կերել են դրանք, կերել են նաև շատ տեսակի խոտեր: Պատմում են, որ դրանք ունեցել են բազմաթիվ չքնաղ համեր, որոնք կոչվել են՝ կծու, թթու, քաղցր… Չմոռանաք, երեխաներ, չմոռանաք այդ բառերը…

— Պտուղ, միրգ, կծու, թթու, քաղցր,— լսվեցին խառնիխուռն շշուկներ:

— Այդ հին ժամանակներում,— շարունակեց պառավ Խարունան,— եղել են նաև հսկայական ծառեր, որոնք հասել են երկնքին: Այո՛, այո՛, մի՛ զարմանաք, սիրելի թոռնիկներ, հասել են երկնքին: Դրանք կանգնած են եղել իրար մոտիկ-մոտիկ և չեն թողել, որ մեզ մոտ գան ցուրտ քամիներն ու բուքը: Բայց վատ մարդիկ ոչնչացրել են ծառերը, բացել են ճանապարհը սառնամանիքի առաջ: Մի տարի այնքան շատ է եկել ձյունը, որ այլևս չի հալվել: Մյուս տարի դրա վրա ավելացել է նորը և այդպես շարունակ: Այդպիսով, սիրելի երեխաներ, վատ մարդիկ խլել են մեր գարունն ու ամառը մեզանից, մեզ մոտ տիրապետել է Սպիտակ Թագավորությունը և տիրապետում է մինչև հիմա…

Լսվեց ափսոսանքի միահամուռ բացականչություն:

— Այո, թոռնիկներ, քսան անգամ ափսոս։ Չքնաղ աշխարհ է եղել հողի աշխարհը։ Բացի բույսերից այնտեղ ապրել են նաև կենդանիներ։ Այ, օրինակ, ինչպես սպիտակ արջն է։ Բայց դրանք եղել են բարի կենդանիներ, վնաս չեն հասցրել մարդկանց, այլ օգնել են։ Կաթ են տվել, միս, մորթի, մարդկանց փոխադրել են տեղից տեղ։ Դրանք կոչվել են՝ եղջերու, շուն... Չմոռանաք նաև այդ լավ բառերը...

Երեխաները կիսաձայն կրկնեցին՝ եղջերու, շուն։

— Ես իմ փոքր հասակում տեսել եմ շուն,— հայտնեց պառավը։

Բոլորն ապշած հոգոց արձակեցին։

— Քո իսկական աչքերո՞վ,— չհավատաց Նուրիսը։

— Այո, իմ իսկական աչքերով. այն ժամանակ մենք բոլորս ունեինք շներ։ Բայց եղավ մի տարի, երբ ոչ ձուկ ճարվեց, ոչ արջի միս, և մարդիկ կերան դրանց բոլորին…

— Իլեն ու Նուրիսը, կողք կողքի նստած, առանց մթության մեջ իրար տեսնելու, կլանված լսում էին պառավ Խարունային։ Բայց հանկարծ Նուրիսը սթափվեց, փսփսաց ընկերոջ ականջին։

— Չսկսե՞նք, Իլե…

— Դեռ ոչ, սպասիր,— կամացուկ պատասխանեց տղան։— Մինչև Խարունա տատը չավարտի իր պատմությունը՝ ոչ ոք չի հեռանա այստեղից։

— Իսկ ինչքա՞ն ժամանակ է լինելու Սպիտակ Թագավորությունը,— անհամբեր հարցրեց մի տղա։

— Ընդմիշտ,— հառաչեց պառավը։— Ձյունն արդեն այնքան շատ է դիզվել, որ արևն անզոր է դա հալեցնելու։ Այժմ, թոռնիկներ, հողն այնքան է հեռու մեզանից, որքան երկինքը։

— Ես կփորեմ ձյունը, ես կտեսնեմ հողը,— հանկարծ բացականչեց Իլեն՝ հուզված ձայնով։

— Չես տեսնի, Իլե Տրապնա,— տխուր ձայնով ասաց Խարունան։— Դու ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինը։ Շատերն են փորել իրենց հասակի խորությամբ, իրենց հասակի քսանապատիկ խորությամբ, և միայն սառույցի են հանդիպել։ Դու էլ չես տեսնի, Իլե։ Եվ դրանի՞ց ինչ, եթե նույնիսկ տեսնես։ Պիտի փորես շատ խոր մի փոս և դրա հատակին բաց անես մի փոքրիկ կտոր հող։ Բայց մի՞թե դրանով կվերադառնա Գույնզգույն Թագավորությունը։ Ինչպե՞ս։ Այո, դա կոչվելիս է եղել Գույնզգույն Թագավորություն։ Չէ՞ որ ամեն ինչ այնտեղ եղել է տարբեր գույնի և ոչ թե միայն սպիտակ՝ ինչպես մեզ մոտ... Ոչ, թոռնիկներս, այլևս չի վերադառնա Գույնզգույն Թագավորությունը։ Ո՞վ պիտի բերի դա մեզ։ Արևը՞։ Բայց արևը չունի այդքան ուժ։ Նա ձյունը հալեցնում է մի քիչ, իսկ ձյունը նորից գալիս է երկու քիչ։ Նա հալեցնում է երկու քիչ, իսկ ձյունը գալիս է հինգ քիչ։ Արևը հալեցնում է ձյունը քիչ-քիչ, իսկ ձյունը գալիս է շատ քիչ...

Շատ քիչ՝ նշանակում էր՝ շատ։

Պառավ Խարունան լռեց, շոշափելով ստուգեց իր կարկատած հագուստը, դրեց մի կողմ, վերցրեց մի ուրիշը և շարունակեց.

— Ճիշտ է, լինում են տարիներ, երբ ձյունը հալչում է հինգ քիչ, տասը քիչ, քսան քիչ, բայց դա էլ չի օգնում։ Մի տարի նույնիսկ այնքան հալչեց, որ իմ ամբողջ կյանքը հալչեց։ Իսկ իմ կյանքը փոքր չէ, թոռնիկներ։ Ես ապրել եմ այնքան, որքան դուք բոլորդ միասին։

— Իսկ որտեղի՞ց գիտես, Խարունա տատի,— հարցրեց մեկը,— թե քո ամբողջ կյանքը հալչեց։

— Հաշվել էին, թոռնիկ։ Ինչպե՞ս էին հաշվել։ Ասեմ։ Շատ հին ժամանակներից ի վեր, ամեն տարի, ձյունը գալուց առաջ, մարդիկ մի անպետք մորթու կտոր են դնում ձյան վրա։ Ձյունը գալիս և ծածկում է դա։ Հետևյալ տարի մարդիկ նույն տեղում դնում են մորթու մի ուրիշ կտոր և այդպես շարունակ։ Եվ ահա, լինում են տարիներ, երբ ձյունն այնքան շատ է հալչում, որ դրա տակից դուրս է գալիս ոչ միայն նախորդ տարվա մորթին, այլև երկու տարվա, երեք տարվա... Մարդիկ հաշվում են այդ մորթիները և իմանում, թե քանի տարվա ձյուն է հալչել։

— Իսկ դու քանի՞ մորթի ես ապրել, տատի,— հարցրեց մի փոքրիկ աղջկա ձայն։

— Չորս մեծ դաստա,— հառաչեց պառավը։

— Իսկ եթե հալչի քսան այդպիսի դաստա, կվերադառնա՞ Գույնզգույն Թագավորությունը։

— Ո՛չ։

Բոլոր երեխաները հուզվել էին, բոլորն ուզում էին, որ վերադառնար Գույնզգույն Թագավորությունը։

— Իսկ եթե,— հարցրեց Իլեն,— հալչի քսան անգամ քսան այդպիսի դաստա, դարձյա՞լ չի վերջանա Սպիտակ Թագավորությունը։

— Ոչ, Իլե,— հառաչեց պառավը,— Գույնզգույն Թագավորությունը չի վերադառնա նույնիսկ այն ժամանակ, երբ հալչի այդքան տարվա ձյունը։ Այդքանը կհալչի, իսկ տակը կմնա այդքան անգամ այդքան... Այնպես որ, ավելի լավ կլինի, եթե չհալչի բոլորովին, այլ ընդհակառակը, գա ավելի և ավելի շատ...

— Ինչո՞ւ, Խարունա տատի,— ապշեցին բոլորը։

— Որքան շատ դիզվի ձյունը՝ այնքան ավելի կբարձրանանք մենք, կմոտենանք երկնքին։ Քանի որ անհնար է հասնել հողին, գոնե հասնենք երկնքին։ Այնտեղ նույնպես լավ է։ Այն կապույտը, որ դուք տեսնում եք երբեմն ամպերի ետևում, դա երկնքի պատն է։ Աստղերը՝ երկնքի լուսամուտներն են։ Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի առատ լույս է ցոլում այդ լուսամուտներից։ Դա նրանից է, որ երկնքի պատի ետևում ապրում է արևը։ Այնտեղ այնքան տաք է, որ մարդիկ շրջում են համարյա բոլորովին մերկ։ Նրանք քնում են կրակե մորթիների վրա և նրանց երեսին, քամու փոխարեն, բոց է փչում…

Երեխաները հառաչեցին հիացմունքից։

— Բայց,— շարունակեց Խարունան տխուր,— Արևի Թագավորությունը նույնպես հեռու է մեզանից, և մենք երբեք չենք հասնի նաև դրան։ Հենց որ մի քանի տարի ձյունը շատ է գալիս և մենք բարձրանում ենք, մոտենում երկնքին, արևն սկսում է ավելի տաքացնել ձյունը, դա ավելի շատ է հալչում և մենք նորից իջնում ենք ցած։ Իջնելով, մեր երկիրը հեռանում է արևից, ցրտում, ձյունը նորից սկսում է գալ շատ և հալչել քիչ, և մենք նորից ենք բարձրանում դեպի երկինք։ Եվ արևը նորից է ցած իջեցնում մեզ։ Եվ այդպես մենք շարունակ ճոճվում ենք Գույնզգույն Թագավորության և Արևի Թագավորության միջև, չենք հասնում և երբեք էլ չենք հասնի ոչ մեկին, ոչ մյուսին…

Տիրեց ծանր, երկարատև լռություն։ Եվ այդ լռության մեջ, որպես դատավճիռ, նորից հնչեց պառավ Խարունայի ձայնը.

— Սպիտակ Թագավորությունը, դժբախտ երեխաներ, լինելու է հավիտյան: Բայց նույնիսկ այդ Սպիտակ Թագավորության մեջ մենք ազատ չենք և չենք լինի երբեք: Այն օրվանից, երբ մեզ մոտ ոչնչացան ծառերն ու մյուս բույսերը և ամեն տեղ փռվեց ձյունը, հեռվից եկավ և մեր երկրին տիրեց Տավա Նեման: Դուք հո գիտե՞ք Չհալչող Սառցե Տունը:

— Գիտենք,— ասացին բոլորը կամացուկ, ընկճված:

— Այո, գիտեք, բայց ոչ ոք ձեզանից դեռ չի տեսել այն: Դա մեզանից հեռու է և կես օր է հարկավոր՝ այնտեղ հասնելու համար, նույնիսկ ավելի: Տասը-տասնհինգ օրը մի անգամ այնտեղ են գնում ձեր ծնողները՝ տանելու համար Տավա Նեմային իրենց որսած համարյա ամբողջ ձուկը, իրենց սպանած արջերի համարյա բոլոր մորթիները: Իսկ ի՞նչ են ստանում նրանք դրա դիմաց Տավա Նեմայից: Ընդամենը մի քանի փոքրիկ փունջ ռումամ, որպեսզի մենք չկոտորվենք սարսափելի լնդախտ հիվանդությունից: Երբ որ մեծանաք, դուք էլ պիտի առավոտից երեկո ձուկ որսաք՝ երբ գետն ազատ է սառույցից, և ձեր կյանքը վտանգի ենթարկելով սպանեք քնած արջերին՝ երբ գետը սառույցով է պատած: Դուք էլ պիտի սոված ու մերկ մնաք և ձեր ամբողջ վաստակը տանեք Տավա Նեմային…

— Մենք նրան կսպանենք,— մթության մեջ բռունցքները սեղմելով, ասաց Իլեն:

— Այլևս չկրկնես այդ խոսքերը, Իլե Տրապնա,— մեղմ ձայնով խորհուրդ տվեց պառավ Խարունան:— Դու ոչ առաջինն ես, որը ցանկացել է այդպիսի բան անել, ոչ էլ վերջինը կլինես: Տավա Նեման ապրում է Չհալչող Սառցե Տանը, որը դուռ չունի: Ոչ նա կարող է դուրս գալ այնտեղից, ոչ էլ մենք կարող ենք մտնել նրա մոտ: Տունն ունի միայն մի փոքրիկ անցք, որտեղից մեր մարդիկ իրենց վաստակն են թափում ներս և որտեղից ստանում են ռումամը: Ձեր ձեռքը չի հասնի Տավա Նեմային: Իսկ կոտրել Չհալչող Սառցե Տունը դուք չեք կարող, որովհետև դա քսան սառույցից ավելի ամուր է: Դրա նյութը, լսել եմ և հիշում եմ, կոչվում է ապակի: Ուրիշ բան, սիրելի թոռնիկներ, եթե դուք ունենայիք ամուր զենքեր, պատրաստված... սպասեցեք... պատրաստված երկաթից, քարից, պողպատից... Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչ բաներ են դրանք, բայց մեր նախնիներն ունեցել են դրանցից: Բայց Տավա Նեման վախեցել է մեզանից և պահանջել է, որ հանձնեն նրան բոլոր երկաթները, քարերը, պողպատները: Մարդիկ չեն հանձնել, իսկ նա, զայրացած, դադարել է նրանց ռումամ տալուց և միայն դրանից հետո մարդիկ ստիպված են եղել հանձնել ամբողջ զենքը: Եվ հիմա, ինչպես գիտեք, ձեր ծնողները ձուկը որսում են արջի մորթուց կարած տոպրակներով, իսկ արջերին սպանում են նրանց ոսկորներից պատրաստված անպետք զենքերով: Ահա, թե որքան վատ մարդ է Տավա Նեման…

— Նա որտեղի՞ց է եկել, Խարունա տատի,— հարցրեց Նուրիսը:

— Ոչ ոք չգիտե, Նուրիս: Նա եկել է գետնի տակով: Չհալչող Սառցե Տունը գետնի տակով կապված է նրա աշխարհի հետ: Տավա Նեման ինքն էլ ապրում է գետնի տակ, իսկ գետնի երես դուրս է գալիս միայն արև տեսնելու, մեր վաստակը խլելու և մեզ ռումամի փոքրիկ փնջեր շպրտելու համար: Եվ դուք չկարծեք, սիրելի երեխաներ, թե միայն Կատպիսի բնակիչներին է նա ստրկացրել: Սպիտակ Թագավորության մեջ կան ուրիշ շատ բնակավայրեր, որոնց մասին մենք միայն լսել ենք, բայց չենք տեսել, որովհետև դրանք հեռու են մեզանից: Եվ ամեն տեղ բոլորն աշխատում են Տավա Նեմայի համար…

— Մի՞թե նա այդքան շատ է ձուկ ուտում,— զարմացած հարցրեց մի տղա:

— Նա ձուկ բոլորովին չի ուտում, Վինզա: Նա և նրա ընտանիքն ուտում են ուրիշ, ավելի համեղ բաներ՝ կծու, թթու, քաղցր... Իսկ ձուկը նա գետնի տակով ուղարկում է ուրիշ տեղեր՝ տալու մեզ

նման դժբախտ ուրիշ մարդկանց՝ նրանցից ստանալու համար ավելի լավ բարիքներ: Ահա թե ինչպիսի մարդ է Տավա Նեման: Եթե նա չլիներ, մեր մարդիկ առավոտից երեկո չէին զբաղվի ձուկ որսալով կամ արջ սպանելով: Նրանք դրանով կզբաղվեին միայն կես օր, նույնիսկ ավելի քիչ, և մենք բոլորս կլինեինք կուշտ և հագնված: Իսկ օրվա մյուս մասում նրանք կաշխատեին ուրիշ գործերի վրա, կաշխատեին վերադարձնել մեզ մեր գարունն ու ամառը:

— Ինչպե՞ս,— զարմացած և թերահավատ բացականչեցին բոլորը:

— Չգիտեմ,— խոստովանեց պառավ Խարունան,— երևի նրանք միահամուռ ուժերով մի կողմ կնետեին ձյունը, բաց կանեին գոնե մի նեղ շերտ հող, որի վրա նորից կաճեին ծառեր, և դրանք մեզ նորից կպաշտպանեին բուքից ու սառնամանիքից: Ձմեռները կկարճանային, ձյունը կքչանար, արևը կհալեցներ ամբողջ ձյունը... Կամ գուցե ուրիշ կերպ կանեին դա նրանք, ես չգիտեմ: Գլխավորն այն է, որ չլիներ Տավա Նեման: Դրանից հետո, եթե նույնիսկ չվերադառնային մեզ մեր գարունն ու ամառը, դարձյալ լավ կլիներ մեզ համար: Կաշխատեին ձեր ծնողները կես օր, բոլորս կլինեինք կուշտ ու հագնված, իսկ օրվա մյուս կեսը բոլորն ազատ կպառկեին և կերազեին Գույնզգույն Թագավորության մասին: Միայն թե չլիներ Տավա Նեման և մենք ունենայինք մեր ռումամը... Բայց այդ բոլորը չի լինի, երեխաներ, չի լինի երբեք: Դուք դժբախտ եք և դժբախտ էլ կմնաք, սիրելի թոռնիկներ…

Պառավ Խարունան ավարտեց իր պատմությունը: Տիրեց ծանր, տխուր լռություն:

— Նուրիս,— փսփսաց Իլեն,— սկսիր: Ուրեմն, կտեղեկացնես միայն մեծ երեխաներին: Չմոռանաս հավաքվելու վայրը՝ Կատպիսի այն կողմում, որտեղ մայր է մտնում արևը: Իսկ ես գնում եմ Ակիրսի տունը՝ կանչելու նաև Չինտամին:

— Մի՛ գնա,— խնդրեց Նուրիսը,— նա վատ տղա է, նրան ոչ ոք չի սիրում:

— Ես նույնպես չեմ սիրում նրան,— խոստովանեց Իլեն:— Բայց դա հայրն է սովորեցրել նրան՝ լինել վատ տղա: Իսկ եթե մենք միշտ մեզ մոտ բերենք նրան, խաղանք ընկերություն անենք նրա հետ, գուցե նա լավանա, ո՞վ գիտե: Այնպես որ, գնում եմ կանչելու նրան:

— Դու այդ իզուր ես անում,— հառաչեց Նուրիսը:

— Դա իմ գործն է,— բարկացավ Իլեն:— Իսկ դու արա այն, ինչ որ քեզ ասացի: Հա, չմոռանաս պատվիրել, որ հավաքվելուց առաջ ամեն մեկը մտնի իր տունը և ծածուկ վերցնի իր հետ մի ձուկ՝ որպես ճանապարհի պաշար…

Այս ասելով, նա մոտեցավ բնակարանի միջանցքին:

Չինտամը, որ բոլորովին էլ տուն չէր գնացել, այլ միջանցքում պառկած, գլուխը ներս էր կոխել սենյակ և լսել էր Խարունայի ամբողջ պատմությունը, ինչպես նաև Իլեի և Նուրիսի խոսակցությունը, տեսնելով, որ Իլեն մոտենում է միջանցքին, արագ դուրս սողաց այնտեղից և թաքնվեց Խարունայի բնակարանի պատի ետևը:

Իլեն անցավ նրա մոտով՝ առանց նրան տեսնելու:

ԱԿԻՐՍԻ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Դուրս գալով Խարունայի մոտից, Իլեն, նախքան Ակիրսի մոտ գնալը, մտավ իրենց տուն՝ ձուկ վերցնելու: Ուստի և Չինտամը նրանից ավելի շուտ հասավ իրենց տուն:

— Որտե՞ղ էիր,— հարցրեց հայրը:

— Խարունա տատի մոտ, հայրիկ:

— Ի՞նչ կար այնտեղ, ի՞նչ էր պատմում այդ քավթառը:

Չինտամը համառոտ, կցկտուր խոսքերով, հաղորդեց հորը Խարունայի պատմությունը:

— Եվ դու լսո՞ւմ էիր այդ բոլոր հիմարությունները,— գոռաց նրա վրա Ակիրսը,— մի՞թե ես չեմ արգելել քեզ:

— Արգելել ես, հայրիկ, բայց ասել ես նաև, որ ես լինեմ ամեն տեղ, լսեմ, թե ինչ են խոսում մարդիկ և հայտնեմ քեզ:

— Այո, մարդիկ, բայց ոչ թե այդ քավթառ Խարունան, որը մարդ չէ, այլ քսան տարվա սառած ձուկ, որը, չգիտես ինչու, դեռ ապրում է և բլբլում: Ես մի օր կլոեցնեմ նրան ընդմիշտ, որպեսզի չպղտորի մարդկանց մտքերը... Իսկ ի՞նչ էին խոսում երեխաները:

Չինտամն ուզեց պատասխանել, բայց նույն րոպեին միջանցքից ներս սողաց Իլեն:

— Ո՞վ է, ինչ ես ուզում, որոտաց Ակիրսի ձայնը:

Ճրագ-վառարանի բավական ուժեղ լույսի տակ ճանաչելով Իլեին, Ակիրսը հարձակվեց նրա վրա:

— Ի՞նչ ես ուզում, Իլե Տրապնա:

— Ես...— կմկմաց Իլեն,— ես Չինտամին եմ ուզում: Չե՞ս գալիս, Չինտամ, գնանք մի քիչ խաղ անենք:

Չինտամը նայեց հորը:

— Ոչ, նա չի գալիս,— ասաց հայրը:

— Ոչ, ես չեմ գալիս, ասաց տղան,— հայրս հիվանդ է, ես խնամում եմ նրան:

Լսելով, որ ինքը հիվանդ է, Ակիրսը հիշեց, թե ինչ պատրվակով էր նա մնացել տանը:

— Այո, այո, ես հիվանդ եմ,— ասաց նա և իսկույն պառկելով սկսեց տնքալ:— Իսկ դու կորիր այստեղից, շուտ: Ես թույլ չեմ տա, որ իմ տղան խաղ անի Տրապնաների հետ: Դու էլ, իհարկե, նման ես մեծ եղբորդ, որը...

— Իլեն սեղմեց բռունցքները: Եթե Ակիրսը վատ բան ասեր նրա մահացած եղբոր հասցեին, նա պիտի հարձակվեր Ակիրսի վրա և խփեր նրան, թեև դրանից հետո այդ սարսափելի մարդը կարող էր մի հարվածով սպանել հանդուգն տղային: Բայց Ակիրսը, բարեբախտաբար, կիսատ թողեց իր խոսքը և շարունակեց տնքալ:

— Օ՜ֆ... Դուրս կորիր, շո՜ւտ... օ՜ֆ…

Իլեն ետ-ետ սողաց և ոտքերով գտնելով միջանցքի մուտքը, մտավ այնտեղ:

Նրա դուրս գնալուց հետո Ակիրսը վեր կացավ և նորից դիմեց որդուն.

— Դե ասա տեսնեմ, թե ի՞նչ էին խոսում երեխաները:

— Իլեն պատրաստվում է երեխաներին տանել ինչ-որ տեղ,— հաղորդեց Չինտամը։— Պատվիրեց մի-մի ձուկ վերցնել իրենց հետ: Ինչպես երևում է, ճանապարհը երկար է լինելու:

— Ճանապա՞րհ... Զո՞ւկ…— անկապ կրկնեց Ակիրսը։

— Այո, հենց հիմա: Նրանք շտապում են, որ չուշանան:

— Շուռ տուր երեսդ ուրիշ կողմ,— գոռաց Ակիրսը որդու վրա։— Մի՛ նայիր այստեղ...

Չինտամը շուռ տվեց երեսը:

Ակիրսը նետվեց դեպի բնակարանի պատը, պատի մոտ բարձրացրեց հատակը ծածկող մորթու ծայրը, վերցրեց այնտեղից մի տափակ սառույց և բաց արեց դրա տակ թաքնված մի փոս:

Խրատված լինելով այն բանից, որ մի քանի տարի առաջ Տրապնաների ավագ որդին նրա տնից գողացել էր Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվը, նա այժմ այնպիսի խնամքով էր թաքցրել փոսերը, որ այլևս ոչ ոք չէր կարող գտնել դրանք: Եվ ոչ ոք, իհարկե, բացի նրանից, չգիտեր դրանց գոյության մասին, ոչ նույնիսկ նրա կինը կամ որդին։

Ձեռքը կոխելով փոսի մեջ, Ակիրսն սկսեց փնտրել, ապա քահ-քահ ծիծաղեց:

— Հայրիկ,— ասաց Չինտամը՝ առանց երեսը դարձնելու դեպի նա,— գուցե սա Վերջին Ձկնագլխի Օ՞րն է, երբ երեխաներին արգելվում է Կատպիսից հեռանալ: Եթե արգելելու ես նրանց՝ շտապիր, քանի դեռ նրանք չեն գնացել։

— Իսկ ինչո՞ւ արգելել,— ժպտաց հայրը և ամեն ինչ նորից խնամքով թաքցնելուց հետո մոտեցավ տղային։— Թող գնան՝ ուր որ ուզում են: Բայց և այնպես հետաքրքիր է, թե ինչ են խոսելու նրանք գնալուց առաջ, հատկապես այդ Տրապնան։ Այնպես որ, դու հենց հիմա վազ տուր նրանց մոտ, թաքնվիր, լսիր նրանց խոսակցությունը և եկ ասա ինձ...

ԿԱՏՊԻՍԻ ԱՅՆ ԿՈՂՄՈՒՄ, ՈՐՏԵՂ ՄԱՅՐ Է

ՄՏՆՈՒՄ ԱՐԵՎԸ

Տուն գնալուց և մի-մի ձուկ վերցնելուց հետո երեխաները հավաքվեցին Կատպիսի այն կողմում, որտեղ մայր է մտնում արևը՝ մի դատարկ տարածության վրա: Նրանք չգիտեին, թե ինչի համար էր Իլեն կանչել նրանց և, ճիշտն ասած, չէին էլ ուզում դուրս գալ Խարունայի տաք բնակարանից, որտեղ կարելի էր լսել այնքա՜ն հետաքրքիր պատմություններ: Բայց Իլեն նրանց բոլորի առաջնորդն էր և հետաքրքիր խաղերի հնարողը, և չէր կարելի չլսել նրան: Բացի դրանից, նա այսօր բորբոքել էր նրանց հետաքրքրությունը՝ պատվիրելով վերցնել իրենց հետ մի-մի ձուկ՝ որպես ճանապարհի պաշար: Ո՞ւր պիտի գնային նրանք, երբ նրանցից ոչ մեկը երբեք չէր հեռացել Կատպիսից՝ նույնիսկ երկու քսան քայլ:

Դուրս սողալով Խարունայի տան միջանցքից, նրանք տրորում էին աչքերը և նայում զարմանքով ու հիասթափությամբ, որ շուրջը դարձյալ փռված է Սպիտակ և ոչ թե՝ Գույնզգույն Թագավորությունը, որն այնքա՛ն վառ կերպով պատկերացրել էր նրանց աչքերի առջև պառավ Խարունան: Նրանք քայլում էին և ափսոսում, որ երբեք չեն տեսնելու սև ձյունը, որ կոչվում է՝ հող, չեն տեսնելու հողի վրա բուսնող բույսերը, որ կոչվում են՝ թփեր, ծառեր, չեն տեսնելու դրանց վրա գտնվող բաները, որ կոչվում են՝ միրգ, խոտ, կծու, թթու, որոնք կարմիր են, կապույտ և ունեն այնպիսի համեր, որոնք կոչվում են՝ քաղցր, եղջերու, պտուղ: Եվ երբեք չեն տեսնելու այն բարի կենդանիներին, որոնք կոչվում են՝ շուն, կաթ, և որոնք տալիս են՝ միս, տերև...

Բոլոր երեխաները զեր էին: Բայց դա ոչ թե նրա համար, որ նրանք լավ էին ապրում և միշտ կուշտ էին, այլ որովհետև ճարպը պաշտպանում էր նրանց ցրտից: Նիհար երեխաները պարզապես մեռնում էին ամենափոքր հասակում:

Իրենց սպիտակ մորթե հաստ հագուստներով նրանք նման էին ձնե մարդկանց: Գլխարկները ծածկում էին նրանց ոչ միայն գլուխը, այլև ծոծրակն ու ականջները, այտերն ու կզակը: Բաց էին մնում միայն փոքրիկ բերանը, փոքրիկ աչքերն ու շատ փոքրիկ քիթը: Անհնար կլիներ այդ հագուստների մեջ տղաներին զանազանել աղջիկներից՝ եթե չլինեին աղջիկների մազերի ծայրերը, որոնք դուրս էին պրծել նրանց ճակատի վրա:

Երբ Իլեն տեսավ, որ Կատպիսի բոլոր մեծ երեխաներն արդեն հավաքվել են՝ բացի Չինտամից, նա ասաց.

— Երեխաներ... Քիչ առաջ Խարունա տատը մեզ պատմեց Գույնզգույն Թագավորության մասին: Ո՞վ է ուզում տեսնել Գույնզգույն Թագավորությունը...

Ոչ ոք ձայն չհանեց:

— Մի՞թե ոչ ոք չի ուզում տեսնել Գույնզգույն Թագավորությունը,— ապշեց Իլեն:— Ինչո՞ւ չեք պատասխանում...

— Որովհետև հիմար հարց ես տալիս,— պատասխանեց բարակ ձայնով մի գեղեցիկ աղջիկ՝ Կիվերան:— Ո՞վ չի ուզում տեսնել Գույնզգույն Թագավորությունը:

— Ուրեմն դուք ինձ չհասկացաք,— հուզված ժպտաց Իլեն:— Ես ասում եմ՝ ո՞վ է ուզում հենց այսօր, իր սեփական աչքերով, տեսնել Գույնզգույն Թագավորությունը…

— Ի՞նչ ես դուրս տալիս, Իլե,— քաշելով նրա թևից, ասաց Տովեսը,— դու գժվել ես:

Բայց Իլեն ուշադրություն չդարձրեց նրա վրա: Երեխաները, բերանները զարմանքից կիսաբաց, մեծ կասկածով նայում էին իրենց ամենավստահելի ընկերոջը, որից նրանք այսօր պատրաստ էին հիասթափվել:

Իլեն հասկացավ նրանց հայացքը և բացականչեց.

— Երեխաներ, դուք գիտեք, թե որքան եմ ես սիրում իմ մեծ եղբոր հիշատակը: Ահա ուրեմն երդվում եմ նրա հիշատակով, որ ցույց կտամ ձեզ այսօր Գույնզգույն Թագավորությունը...

— Իլե,— թնդացին բոլորը չորս կողմից,— Իլե՛, Իլե՛... Նրանք անկարող էին արտասանել ուրիշ որևէ բառ, այնքա՛ն մեծ էր նրանց զարմանքը: Իլեի երդվելուց հետո նրանք հավատում էին նրան, բայց

այժմ արդեն չէին հավատում իրենց ականջներին: Չնայելով ցրտին, նրանք վար քաշեցին գլխարկներն իրենց գլխից, բացեցին ականջները:

— Կրկնիր, Իլե Տրապնա,— խնդրեց Վինզան:

— Կրկնիր,— խնդրեց Կիվերան:

— Կրկնիր, Իլե,— խնդրեց Ժունան:

— Կրկնիր,— թնդաց խումբը միահամուռ... Կրկնիր, Իլե Տրապնա…

Իլեն բարձրացրեց ձեռքը՝ նրանց լռեցնելու համար: Բոլորը լռեցին վայրկենապես: Եվ այդ լռության մեջ հստակ հնչեց Իլե Տրապնայի ձայնը.

— Ես երդվում եմ իմ մեծ եղբոր հիշատակով, որ այսօր ցույց կտամ Գույնզգույն Թագավորությունը բոլոր նրանց, ովքեր կուզենան տեսնել: Իսկ ովքեր չեն ուզենա՝ թող վերադառնան և նորից տեղը դնեն իրենց վերցրած ձուկը:

— Ուզում ենք, բոլորս, բոլորս,— բղավեցին երեխաները: Բայց Իլեն նորից բարձրացրեց ձեռքը և լռություն հաստատեց:

— Մի շտապեք, երեխաներ,— ասաց նա,— իմացեք, որ գնալու ենք հեռու տեղ, շատ հեռու: Ով որ չի կարող երկար քայլել, ով որ չի կարող ցրտի դիմանալ՝ թող մնա: Հակառակ դեպքում նա կմեռնի այնպես, ինչպես երեք տարի առաջ մեռան իմ մեծ եղբայրը և մյուսները...

Ոչ ոք ձայն չհանեց:

Իլեն սպասում էր:

— Ես չգիտեմ՝ լա՞վ եմ քայլում, թե ոչ,— ասաց, վերջապես, Կիվերան:— Ես երբեք չեմ քայլել երկար ճանապարհ: Չգիտեմ նույնպես՝ կդիմանա՞մ ցրտի, թե ոչ: Ես երբեք դրսում չեմ մնացել շատ ցուրտ ժամանակ: Բայց ինչ ուզում է լինի՝ ես կգամ ձեզ հետ: Ավելի լավ է գոնե մի անգամ տեսնել Գույնզգույն Թագավորությունն ու սառչել, քան թե միշտ ապրել Սպիտակ Թագավորության մեջ և չտեսնել ոչինչ…

Նուրիսը խորիմաստ նայեց Իլեին, այսինքն՝ տեսնո՞ւմ ես, քո խոսքերն է կրկնում:

— Բոլո՞րդ եք այդպես մտածում,— հարցրեց Իլեն:

— Բոլորս,— թնդաց խումբը:

— Բոլո՞րդ եք գալիս:

— Բոլորս,— նորից արձագանքեցին երեխաները:

— Այդ դեպքում լսեցեք: Մենք գնալու ենք դեպի Չհալչող Սառցե Տունը: Ինչպես գիտեք, տասը-տասնհինգ օրը մի անգամ այնտեղ գնում են մեր ծնողները և ձուկ ու մորթիներ են տանում Տավա Նեմայի համար: Բայց նրանք, իհարկե, չեն տեսնում Գույնզգույն Թագավորությունը, որովհետև դա կարելի է տեսնել միայն տարին մի անգամ, այսօր...

— Իսկ ի՞նչ օր է այսօր,— հարցրեց Վինզան:

Իլեն լռեց, հայացք փոխանակեց Նուրիսի հետ, ապա նորից դառնալով դեպի երեխաները, հայտարարեց.

— Վերջին Ձկնագլխի Օրը…

Երեխաներից շատերը, որոնք գիտեին այդ օրվա մասին, վախեցած բացականչեցին: Նրանք անմիջապես շուռ եկան, նայեցին բնակարանների կողմը, թե չի՞ գալիս արդյոք ոչ ոք՝ նրանց ծեծելու և տուն վերադարձնելու համար: Բայց ձյան մեջ սառած Կատպիսում չէր նկատվում ոչ մի շարժում:

— Հիմա հասկացա՞ք,— հարցրեց Իլեն,— թե ինչի համար ամեն տարի այս օրը մեծերը հսկում են մեզ: Նրանք վախենում են, թե մենք կգնանք և կսառչենք: Իսկ այս տարի նրանք չեն հսկում, որովհետև կարծում են, թե մենք կորցրել ենք հաշիվը: Գնանք, երեխաներ, ճանապարհը երկար է, իսկ մենք առաջին անգամն ենք քայլելու այդքան երկար: Հազիվ հասնենք կեսգիշերին:

— Իսկ ի՞նչ ենք տեսնելու կեսգիշերին,— հիասթափված բացականչեց Տովեսը:— Մի՞թե պիտի սպասենք այնտեղ մինչև լուսաբաց: Այ, այդ ժամանակ, իսկապես, կսառչենք…

— Սպասելու կարիք չի լինի,— հանգստացրեց Իլեն,— մենք ամեն ինչ կտեսնենք կեսգիշերին:

— Կես... գիշերի՞ն...— անկարող եղավ զսպել իր մեծ թերահավատությունը Նուրիսն ինքը:— Այդ ի՞նչ ես ասում, Իլե, ինչպե՞ս կարելի է կեսգիշերին տեսնել որևէ բան, այն էլ՝ Գույնզգույն…

— Կեսգիշերին,— կրկնեց Իլեն,— ուղիղ կեսգիշերին, միմիայն կեսգիշերին…

Դա այնքան անհեթեթ էր, որ ոչ ոք, նույնիսկ Նուրիսը, չուզեց հավատալ: Վերջ ի վերջո հո չի՞ տեսել Իլեն ինքն այդ բոլորը: Լսել է ուրիշներից: Գուցե դա հեքիա՞թ է...

— Ի՞նչ է,— հարցրեց Իլեն՝ խիստ զայրացած,— դուք ուզում եք, որ ես նորի՞ց երդվեմ իմ եղբոր հիշատակով: Չեմ երդվի այլևս: Ով հավատում է՝ թող գա ինձ հետ, իսկ ով որ չի հավատում՝ թող մտնի իր տունը, պառկի ցրտի ու մթության մեջ ու երազի: Ես ինքս կգնամ մենակ:

Նա վեր կացավ:

— Գալիս ենք,— ձայն տվեցին բոլորը՝ նույնպես վեր կենալով:

Նույն րոպեին հավաքվածների վերջին շարքերից անջատվեց Ակիրսի որդի Չինտամը, շուռ եկավ և վազ տվեց դեպի բնակարանները:

— Դու այդ ո՞ւր ես շտապում,— ճանաչելով նրան, բղավեց Իլեն և վազ տվեց նրա ետևից:— Հասեք, երեխաներ, նա ուզում է գնալ հոր մոտ և մատնել մեզ…

Բոլորը վազեցին Չինտամի ետևից: Իլեն, որ ամենաարագաշարժն էր բոլորից, ոտքերի տակից ձյան փոշի բարձրացնելով, ընկնելով ու ելնելով, հասավ փախչողին և գցեց նրան: Չինտամը շրմփաց ձյան մեջ:

— Թողեք ինձ,— գոռաց նա,— ես տուն եմ գնում:

Իլեն իր ձեռներով փակեց նրա բերանը, որպեսզի նրա ձայնը չհասնի Ակիրսին, և ասաց.

— Եթե հայրդ տանը չլիներ՝ մենք բաց կթողնեինք քեզ: Բայց քանի որ նա տանն է և դու մատնելու ես մեզ, դրա համար էլ ստիպված ենք տանել քեզ մեզ հետ:

— Չեմ մատնի, երդվում եմ,— աղերսեց Չինտամն Իլեի մատների արանքից։— Եվ հայրս էլ ասաց, որ չի արգելում ձեզ գնալու։

— Քեզ ոչ ոք չի հավատում,— գլուխն օրորեց Նուրիսը։— Դու վատ տղա ես և իհարկե կմատնես մեզ։ Իսկ հայրդ... Նա ինչո՞ւ պիտի թույլ տա, որ մենք գնանք։ Պարզ է, որ դու սուտ ես ասում։ Օյ, օյ,— ճչաց նա հանկարծ,— օգնեցեք Իլեին...

Չինտամը ամուր կծելով Իլեի ձեռքը՝ ձեռնոցի մեջ, դուրս էր պրծել և փախչում էր։ Բայց Վինզան ու երկարահասակ Տովեսը հասան նրա ետևից, գցեցին ձյան մեջ և սկսեցին ծեծել բռունցքներով։ Վրա հասան նաև մյուս երեխաները։ Իլեն Չինտամին կանգնեցրեց ոտքի, խնամքով թափ տվեց հագուստները ձյունից, շուռ տվեց նրան դեպի արևմուտք, ապա մի ուժեղ քացի տալով նրա ետևից, կարգադրեց.

— Քայլիր։

Երեխաների խումբը քայլեց դեպի արևմուտք, որտեղ դաշտավայրն աննկատելիորեն բարձրանում էր ու բարձրանում, և որտեղ, հորիզոնից այն կողմ, ո՞վ գիտե, ինչ հեռավորության վրա, գտնվում էր Չհալչող Սառցե Տունը՝ Տավա Նեմայի բնակարանը…

ԴԵՊԻ ՉՀԱԼՉՈՂ ՍԱՌՑԵ ՏՈՒՆԸ

Երեխաներն արդեն բավական հեռացել էին Կատպիսից։ Հարթ տարածությունը, որով գնում էին նրանք, այնքան աննկատելիորեն էր բարձրանում, որ նրանք չէին զգում այդ։ Ճիշտն ասած, տարածությունը նրանց առջևում երևում էր միայն մի քիչ տեղ, որից այն կողմ կանգնած էր անթափանց մառախուղը։ Թվում էր, թե մի քսան քայլից հետո նրանք հասնելու էին մառախուղին։ Բայց որքան քայլում էին նրանք, մառախուղը դարձյալ մնում էր նույն հեռավորության վրա։ Երբ նրանք երբեմն-երբեմն նայում էին ետ, այնտեղ ևս, տեսնում էին խիտ կանգնած մառախուղը։

Երեխաներից ոչ մեկը դեռ չէր հոգնել։ Ընդհակառակը, քայլելը հաճելի էր նրանց համար, և նրանք բոլորը զվարթ տրամադրության մեջ էին։

Իլեն գնում էր առջևից։ Վստահ փոխելով քայլերը, նա մինչև ազդրերը խրվում էր փափուկ ձյան մեջ և ապա միայն ոտքի տակ զգում արդեն պնդացած հին ձյունը։ Երկարահասակ Տովեսը, որը քայլում էր Իլեի ետևից, տրորում էր ոչ թե նրա թողած խոր հետքերը, այլ դրանց միջև անխախտ մնացած ձյունը։ Վինզան, որ գնում էր երրորդը, անում էր նույնը։ Այդպիսով բացվում էր մի նեղ շավիղ՝ մյուս երեխաների համար, որոնք գալիս էին նրանց ետևից՝ շղթա կազմած, և նրանց համար հեշտ էր քայլելը։

Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։ Ապա առջևից գնացող Իլեն ասաց բարձրաձայն, որպեսզի բոլորը լսեն.

— Մենք կգնանք, կտեսնենք Գույնզգույն Թագավորությունն ու կվերադառնանք, երեխաներ։ Մեզանից ոչ ոք չի սառչի ճանապարհին։ Եղբորս սխալը երեք տարի առաջ այն էր, որ նա ուտելիք չէր վերցրել իր հետ։ Իսկ մենք վերցրել ենք և երբ ուժասպառ լինենք քայլելուց՝ կուտենք։

— Չինտամը, որ քայլում էր Վինզայի ետևից՝ դժգոհ փնթփնթալով և նույնիսկ արտասվելով, բղավեց.

— Ես ձուկ չունեմ, ես սոված կմնամ, ես կսառչեմ: Թողեք ինձ՝ վերադառնամ տուն...

Իլեն նույնիսկ կանգ առավ անսպասելիությունից: Երեխաների ձգված շղթան եկավ, կծկվեց, կարճացավ և նույնպես կանգ առավ: Իլեն մռայլվեց, մտածեց մի պահ, ապա ձեռքը տարավ գրպանը, հանեց այնտեղից իր ձուկը և ետ դառնալով, մեկնեց Չինտամին:

— Վերցրու, ես եմ քեզ բերել՝ ես էլ պետք է մնամ սոված: Գնանք, երեխաներ…

Բոլորը լուռ հետևեցին նրան:

— Քիչ հետո մառախուղը ցրվեց: Դիմացը, արդեն բավական նկատելի, բարձրանում էր հարթավայրը:

Երեխաները նայեցին ետ: Այնտեղ նույնպես, մառախուղ չկար, բայց Կատպիսը դարձյալ չէր երևում: Գուցե նա արդեն ծածկվել էր հորիզոնի ետևը, գուցե նրա սառցե սպիտակ տները պարզապես ձուլվել էին ձյան սպիտակությանը և չէին նկատվում:

Իլեն շատ էր վախենում, որ Ակիրսը կարող էր հետապնդել նրանց և հասնել, ուստի և քայլում էր առանց դանդաղելու, շտապեցնելով երեխաներին:

Ձնագնդի պես կլոր մի աղջիկ՝ Ժունան, ամենացածրահասակը բոլորից, սկսեց ետ մնալ: Նրա ետևից եկողները նույնպես, ակամայից դանդաղեցրին քայլերը: Շղթան խզվեց, բաժանվեց երկու մասի: Մի քիչ ժամանակ այդպես քայլելուց հետո Ժունայի ետևից գնացողները մեկառմեկ սկսեցին առաջ անցնել նրա կողքով և հասնել շղթայի առաջին կեսին: Չանցած մի քանի րոպե, Ժունան նկատեց, որ ինքն ամենավերջինն է և բավական ետ է մնացել բոլորից: Փորձեց շտապել, հասնել, բայց դա չէր հաջողվում: Նրա ամեն մի քայլի դիմաց երեխաները կատարում էին երկու քայլ և տարածությունը նրա և նրանց միջև, փոխանակ կարճանալու, ընդհակառակը, երկարում էր:

— Երեխաներ...— վախեցած բղավեց նա:

Բոլորը միանգամից կանգ առան, նայեցին ետ: Նուրիսը վազ տվեց շղթայի կողքով դեպի նա, բռնեց նրա թևից, օգնեց մոտենալու շղթային:

— Շա՞տ մնաց...— հարցրեց Ժունան՝ նայելով Իլեին:

— Դու արդեն հոգնե՞լ ես,— տխուր հարցրեց Իլեն:

— Ոչ, ոչ, Իլե Տրապնա,— ամաչեց խոստովանել իր թուլությունը Ժունան:— Բայց... Շո՞ւտ ենք հասնելու...

— Ես չգիտեմ, Ժունա,— ասաց Իլեն:— Մենք բոլորս առաջին անգամ ենք գնում դեպի Չհալչող Սառցե Տունը: Մեր ծնողները, ինչպես գիտեք, գնում են վաղ առավոտյան և վերադառնում են կեսգիշերին…

Նա նայեց արևին:

— Այնպես որ, Ժունա, երևի մենք կտրել ենք ճանապարհի…

Իլեն ընդհատեց: Ասե՞լ, թե ոչ... Բայց ինչո՞ւ խաբել:

— Կտրել ենք ճանապարհի կեսի կեսը,— ավարտեց նա:

Ժունայի հետ միասին գլուխները կախեցին նաև շատ ուրիշները:

Իլեն նկատեց դա, մռայլվեց, բայց ձևացնելով, թե ոչինչ չի նկատում, դիմեց ոչ թե բոլորին, այլ միայն Ժունային.

— Ժունա... Չէ՞ որ դու այնքան արագ-արագ վազվզում էիր Կատպիսում՝ տների արանքներում պահմտոցիկ խաղալիս: Հիշիր, թե ուր ենք գնում մենք՝ Գույնզգույն Թագավորությունը տեսնելու: Այսօր քո կյանքի ամենաերջանիկ օրն է, Ժունա: Մի՞թե դու չես ուզում տեսնել Գույնզգույն Թագավորությունը…

Ժունան, որ դադարից օգտվելով նստել էր հանգստանալու, վեր ցատկեց տեղից:

— Նստիր, նստիր,— ասաց Իլեն:— Ապա, երեխաներ, նստեցեք բոլորդ: Հանգստացեք:

— Միևնույնն է, բոլորս էլ սառչելու ենք,— ասաց Չինտամը խեղճ ձայնով,— և առաջինը սառչելու է Ժունան: Ես տուն եմ ուզում գնալ, դուք իրավունք չունեք պահելու ոչ ինձ, ոչ Ժունային: Էլ ո՞վ է ուզում վերադառնալ...

— Լռելո՞ւ ես, թե ոչ,— բղավեց Տովեսը՝ ձեռքը բարձրացնելով նրա վրա:

— Հիմա ուր որ է՝ հայրս կհասնի մեզ, ցույց կտա բոլորիդ,— սպառնաց Չինտամը:— Եվ ամենից առաջ քեզ, Իլե Տրապնա:

Իլեն խայթվածի պես ցատկեց ոտքի:

— Ապա, վեր կացեք,— շտապեցրեց նա բոլորին:— Հանգստացանք մի քիչ՝ և բավական է: Բայց քո հայրը, Չինտամ, չի հասնի մեզ: Նա մինչև երեկո չի անհանգստանա քո բացակայությունից, կկարծի, թե խաղ ես անում քեզ համար: Նա չի կարող արգելել մեզ, և մենք կտեսնենք Գույնզգույն Թագավորությունը…

Երեխաները շարունակեցին ճանապարհը:

Երկինքը թխպոտ էր՝ հորիզոնից հորիզոն, արևի հետք անգամ չկար այնտեղ, և զգացվում էր, որ երեկոն արդեն իջնում է:

Սկսեց ձյուն տեղալ: Դրա խոշոր, սպիտակ փաթիլները լուռ ու դանդաղ իջնում էին գորշ օդի միջով և կամացուկ նստում երեխաների թարթիչների, այտերի, շրթունքների վրա: Ձնահատիկները խոշոր էին, փափուկ և կարծես նույնիսկ տաք: Բայց հանկարծ, չգիտես որտեղից, ուժգին թափով եկավ քամին, մի կողմ թեքեց դանդաղ իջնող փաթիլները: Դրանք կծկվեցին՝ կարծես ցրտից, դարձան փոքրիկ, կլոր և ծանր սառցահատիկներ, որոնք սկսեցին ցավ պատճառող ուժգնությամբ թակել երեխաների երեսները և թրջել:

Երեխաների տրամադրությունը միանգամից ընկավ: Այնպես ցրտեց, որ կարծես հանեցին նրանց տաք հագուստները և հագցրին ավելի բարակ կամ պատառոտված հագուստներ: Բոլորը կծկվեցին ցրտից և կախեցին գլուխները, որպեսզի պաշտպանեն դեմքերը ձյունախառն քամու հորձանքներից:

— Ամուր կացեք,— բղավեց Իլեն դեպի ետ՝ շարունակելով գնալ առջևից:— Չխզեք շղթան:

Նա չէր լսում՝ խոսո՞ւմ էին երեխաներն իր ետևում, թե ոչ: Չէր լսի՝ եթե նույնիսկ բղավեին: Քամին հենց բերանից խլում էր նրանց խոսքերը և տանում ետ: Բոլորի ականջներում կանգնած էր հետզհետե սաստկացող քամու դժժոցը՝ ձյունահատիկների կտկտոցի հետ միասին:

Հանկարծ Իլեն իր ետևում դատարկություն զգաց։ Արագ ետ շրջվելով, նա տեսավ, որ իրոք, ինքը մենակ է և բավական առաջ է անցել շղթայից։ Երեխաները կանգ էին առել քիչ հեռվում, մեջքները շուռ էին տվել դեպի բուքը և սպասում էին դրա վերջանալուն։

Վազ տալով նրանց մոտ, Իլեն բղավեց.

— Ինչո՞ւ կանգ առաք։

Կծկված կերպարանքներից մեկը շուռ եկավ դեպի նա։ Վինզան էր։ Մորթե գլխարկի փոքրիկ անցքից երևում էին նրա միայն աչքերը, քիթն ու բերանը։ Նրա ծնոտը կափկափում էր ցրտից։ Եվ նա սարսափելի ուժասպառ եղածի տեսք ուներ։ Դա անսպասելի էր Իլեի համար, որովհետև Վինզան ամենաուժեղ տղաներից մեկն էր։

— Ապա, առա՛ջ,— բղավեց Իլեն երեխաներին։— Տովես, Նուրիս, Կիվերա, անցեք շղթայի առաջը։ Որտե՞ղ է Ժունան…

Ժունան, որ առաջինն էր հոգնել բոլորից, այժմ նորից կայտառ էր և ամուր։ Նրա փոքրիկ կերպարանքը կանգնել էր սպասողական դիրքով՝ իսկույն քայլելու պատրաստ։

— Ի՞նչ առաջ, ո՞ւր գնալ,— լսվեց բուքի մեջ Չինտամի վհատեցնող ձայնը,— չե՞ս տեսնում, որ բոլորս արդեն սառ...

Իլեի բռունցքի հարվածը թողեց նրա խոսքը կիսատ։

— Առա՛ջ,— բղավեց նա նորից։— Գնանք։

Եվ դիտմամբ ավելացրեց.

— Առջևում բուք չկա։ Մենք շուտով դուրս կգանք բքի միջից։ Դե, շո՛ւտ... Հայրս ասում է, որ այս տեղում միշտ բուք է լինում։

Շղթան շարժվեց, բայց այժմ բոլորը քայլում էին անհավասար, ընկնում, ելնում, շեղվում շղթայից, նորից մտնում այնտեղ։ Իլեի մոտով գլխիկախ, ընկճված, սկսեցին անցնել երեխաները։ Իլեն սպասում էր նրանցից ամենավերջինին, որպեսզի ինքը գնա ետևից և օգնի թույլերին։

Բուքը շարունակում էր վայել ավելի և ավելի կատաղի։ Քամին այնքան ուժեղ էր դիմադրում, որ երեխաները դրա արգելքը հաղթահարելու համար ամբողջ մարմնով թեքվել էին առաջ։ Եթե հանկարծ քամին միանգամից կտրվեր, նրանք կընկնեին բերանքսիվայր, իրար վրա։ Բայց քամին մտադրություն չուներ կտրվելու։

Իլեի մոտով անցավ Նուրիսը։ Նա մի պահ բարձրացրեց գլուխը, նայեց իր ընկերոջը, ժպտաց։ Այդ ժպիտով նա ավելի քաջալերեց Իլեին և ավելի առույգացավ նաև ինքը։

— Գնում ենք դեպի Գույնզգույն Թագավորությունը, Իլե Տրապնա,— դիտմամբ բարձր ձայնով բացականչեց նա։

— Մենք գնում ենք ոչ թե...— սկսեց Չինտամը, բայց հիշելով Իլեի բռունցքը, խոսքը թողեց կիսատ։

Բուքը, կարծես մի սպառնական նախազգուշացումով, ետ էր հրում երեխաներին դեպի Կատպիս։ Բայց ոչ ոք՝ բացի Չինտամից, չէր ուզում վերադառնալ այնտեղ։ Պառավ Խարունայի պատմությունը բորբոքել էր բոլորի երևակայությունը։ Նրանք, որ երբեք կյանքում չէին տեսել ոչ մի գեղեցիկ բան,

այժմ երազում էին գոնե մի անգամ, թեկուզ և մեռնելուց առաջ, տեսնել Գույնզգույն Թագավորությունը, որտեղ լույս է և տաք, որտեղ կան այնքա՛ն գույներ, կան բույսեր ու կենդանիներ, համեղ ուտելիքներ և էլի այնպիսի բաներ, որոնց մասին գաղափար անգամ չունեն Կատպիսի ո՛չ երեխաները, ո՛չ մեծերը…

Այդ միտքն ուժ էր տալիս երեխաների հոգնած ոտքերին: Միայն Չինտամն էր, որ հուսահատ փնթփնթում էր երբեմն-երբեմն, զսպելով իր վախն Իլեից.

— Ոչ մի Գույնզգույն Թագավորություն չկա և չի կարող լինել, այ, կտեսնեք: Մենք իզուր ենք գնում…

Բուքը, ինչպես հանկարծակի սկսվել էր, այնպես հանկարծակի էլ կտրվեց: Գուցե ընդհատվեց նա, կամ գուցե, իրոք, ինչպես Իլեն էր ասել, մնաց ետևում և շարունակվում էր այնտեղ նույն կատաղությամբ:

Երեխաները կանգ առան, խորը շունչ քաշեցին, տխուր նայեցին իրար, բայց երեկոյան մթության մեջ այլևս չէր կարելի տեսնել ոչ ոքի:

— Նստել,— կարգադրեց Իլեն:— Ուտել:

Երեխաները հանեցին ձկներն իրենց գրպաններից և սկսեցին կրծել: Իլեն կուլ տվեց թուքը, հառաչեց և սրբելով իր թաց երեսը, նստեց գլուխը կախ:

— Իլե՛…— հանկարծ լսեց նա իր կողքին մի կամացուկ ձայն:

Դա Նուրիսն էր ձայն տալիս ընկերոջը:

— Իլե՛…— կրկնեց աղջիկը,— վերցրու իմ ձկան կեսը…

— Ես սոված չեմ, հեռացիր,— ասաց Իլեն կտրուկ և նույնիսկ բավական կոպիտ: Նուրիսը, իմանալով իր ընկերոջ ինքնասիրությունը, այլևս չպնդեց և հառաչելով հեռացավ նրանից:

Որքան էլ կամացուկ էր տեղի ունեցել նրանց խոսակցությունը, այնուամենայնիվ, բոլորը լսել էին այն: Քամին ընդհատվել էր, շուրջը բացարձակ լռություն էր, և հստակ լսվում էր ամեն մի հնչյուն, նույնիսկ այն, թե ինչպես երեխաներն ագահությամբ ծամում են սառած ձուկը:

Քիչ հետո Իլեն մի փոքրիկ ծանրություն զգաց իր ծնկի վրա: Նա ձեռքը տարավ և շոշափեց: Այնտեղ դրված էր կես ձուկ: Ինչ որ մեկը, գուցե նույն Նուրիսը, աննկատելիորեն մոտեցել էր նրան, դրել էր այնտեղ իր ուտելիքի կեսը և հեռացել…

Իլեն ձուկը ձեռքին, բարկացած նայեց շուրջը, բայց անթափանց մթության մեջ ոչինչ չէր երևում: Նույն պահին նա իր ծնկի վրա նորից զգաց ծանրություն: Այժմ նա այնտեղ գտավ ձկան երկու կեսեր: Նա վերցրեց դրանք ևս, ուզեց դնել իր կողքին, ձյան վրա, և պահանջել, որ երեխաները ետ վերցնեն դրանք, բայց իր կողքին նա գտավ ևս մի քանի ձկան կեսեր: Նրա բարկությունը, որ պատրաստ էր պոռթկալու, տեղի տվեց շնորհակալության զգացումի՝ իր ընկերների հանդեպ, որոնք անօգնական չէին թողնում նրան դժվար րոպեին:

— Երեխաներ,— ասաց նա՝ հուզմունքից խզված ձայնով, բայց ժպտալով,— ինձ մոտ հավաքվել է տասը ձուկ, եթե ոչ ավելի: Եթե ուզում եք, որ ես ուտեմ կես ձուկ, ետ վերցրեք մյուսները: Ահա…

Այս ասելով, նա հավաքեց ձկան կեսերը՝ սակայն առանց պահելու իր համար մի կտոր:

— Ես ձուկ չեմ դրել այդտեղ,— ասաց մեկը:

— Ես նույնպես,— լսվեց Նուրիսի ձայնը:

— Իսկ ես չգիտեմ էլ, թե այդպիսի մի բան է կատարվել:

— Ես մեծ ուրախությամբ կտայի իմ ձկան կեսն Իլեին, բայց այլևս չեմ տա, քանի որ շատերն արդեն տվել են:

— Իսկ ես չէի տա: Իլեն այնքան հպարտն է, որ չէր վերցնի: Ես գաղտնի կդնեի նրա կողքին, բայց քանի որ ուրիշներն արդեն…

Իսկ միևնույն ժամանակ, հակառակ այդ խոսակցությունների, ձկան կեսերն ավելանում և ավելանում էին Իլեի աջ կողմում, ձախ կողմում, ծնկների վրա: Իլեն պատրաստ սպասում էր՝ բռնելու համար որևէ մեկին, բայց դա չէր հաջողվում նրան:

— Նա սպասում էր աջից, իսկ նրան մոտենում էին ձախից, կամ ընդհակառակը: Ես նույնպես չեմ տա իմ ձուկը,— ասաց Չինտամը,— ես պարտավոր չեմ: Նա ինձ բռնի կերպով է բերել:

Նա միակ երեխան էր, որ ճիշտ էր ասում, և իրոք, ձուկ չէր տվել:

Քիչ հետո Իլեն հաշվեց և տեսավ, որ իր մոտ ձուկ են դրել բոլոր երեխաները՝ բացի մեկից, իհարկե, Չինտամից:

Ձկան կեսերը հաշվելուց հետո Իլեն չկերավ ոչ մի կտոր, այլ կուլ տվեց թուքը, հառաչեց և պահեց դրանք իր մեծ գրպաններում: Պետք կգան: Ճանապարհը դեռ հեռու է, դեռ պետք է հասնել և ապա վերադառնալ…

— Ես ավարտեցի ուտելը,— ասաց նա,— իսկ դո՞ւք: Բոլո՞րդ եք վերջացրել: Դե ուրեմն, վեր կացեք:

Երեխաները շարունակեցին ճանապարհը: Ուտելուց հետո նրանց տրամադրությունն այժմ բարձր էր, բայց նրանք չէին խոսում, այլ մտածում էին այն երջանիկ պատկերի մասին, որ շուտով տեսնելու էին իրենց առջևում: Բացարձակորեն լուռ էր նաև շրջապատը, երեխաների մորթե ոտնամանների տակ չէր ճռճռում ձյունը: Նույնքան բացարձակ էր մթությունը: Դա այնպիսի մթություն էր, որի մեջ չէր երևում ոչինչ, ամպերով ծածկված երկնքում չէր պլպլում ոչ մի աստղ, այնտեղից վար չէր իջնում ոչ մի ցոլք: Եվ, իհարկե, չէր երևում՝ գալի՞ս էր արդյոք ձյունը, թե ոչ: Բայց շուտով երեխաներն զգացին, որ ձյան հատիկներ են դիզվում իրենց թարթիչների վրա:

— Իլե Տրապնա,— լռության մեջ հստակ հնչեց Չինտամի ձայնը:— Դու ինձ ոչ թե խփիր, այլ լսիր: Ես ոչ ոքի չեմ ուզում վախեցնել, այլ ուզում եմ նախազգուշացնել: Մենք կկորչենք, կսառչենք, երդվում եմ գետի բոլոր ձկներով: Գուցե մենք արդեն մոլորվել ենք, կորցրել ենք ուղղությունը: Դու ի՞նչ գիտես, թե ուր ենք գնում մենք: Չէ՞ որ դու էլ, մեզ նման, առաջին անգամն ես անցնում այս տեղերով: Ոչ թե դու, մեր ծնողներն էլ կմոլորվեին, կկորցնեին ճանապարհը գիշերով…

Երեխաներին պաշարեց կասկածն ու վախը: Չինտամն իրավացի է...

— Ես քեզ ոչ թե կխփեմ, այլ կպատասխանեմ,— ասաց Իլեն:— Ճանապարհը մենք չենք կորցնի: Ես դա հաստատ գիտեմ: Դու զգո՞ւմ ես, որ մենք շարունակ բարձրանում ենք:

— Դրանից ի՞նչ: Մենք կարող ենք և բարձրանալ, և շեղվել:

— Չենք կարող: Լսիր: Կատպիսից նայելիս մենք տեսնում ենք, որ այնտեղ, ուր մայր է մտնում արևը, ամբողջ դաշտը բարձրանում է կամաց-կամաց, ճի՞շտ է: Բայց հայրս պատմել է, որ քանի մենք մոտենում ենք Չհալչող Սառցե Տանը, այնքան նեղանում է դաշտի բարձրացող շերտը, իսկ դրա շուրջն ամբողջ տարածությունը շարունակ իջնում է, այսինքն՝ ոչ թե իջնում է, այլ մնում է հարթ վիճակում: Վերելքը, հետզհետե նեղանալով, դառնում է ճանապարհ և մեզ ուղիղ տանում է դեպի Տավա Նեմայի բնակարանը: Այ, երբ որ ոտքերիդ տակ զգաս, թե մենք իջնում ենք, այդ ժամանակ իսկապես որ շեղված կլինենք ճանապարհից: Բայց դա զգալով, մենք իսկույն կթեքվենք և նորից կընկնենք ճանապարհի վրա: Հիմա հասկացա՞ր:

Երեխաները շունչ քաշեցին թեթևացած:

— Լավ, ասենք, թե դա այդպես է,— ստիպվեց համաձայնել Չինտամ,— բայց դու ինչպե՞ս ես հավատում եղբորդ պատմած հեքիաթներին, թե այս մթության մեջ մենք կարող ենք տեսնել Գույնզգույն Թագավորությունը: Եվ ո՞վ կարող է պատմած լինել այդ հեքիաթը քո եղբորը…

— Գույնզգույն Թագավորությունը լուսավոր է, հիմար,— լսվեց Նուրիսի բարկացած ձայնը:

— Իսկ ո՞ւր է, ինչո՞ւ չի երևում այդ լույսը: Չէ՞ որ մենք շարունակ բարձրանում ենք, և նա արդեն պիտի երևար բարձրում՝ որքան էլ որ հեռու լիներ: Հո աստղերից էլ հեռու չէ՞…

Այս անգամ Իլեն ինքն էլ զգաց նրա խոսքերի իրավացիությունը: Նա չգիտեր ինչ պատասխանել, իսկ լռելը հավասար էր պարտության, դա կարող էր հիասթափեցնել երեխաներին և վերադարձնել ետ: Բայց նույն րոպեին բոլորի ուշադրությունը գրավեց մի խոր, արագ-արագ շնչառություն և ապա Վինզայի վհատ բացականչությունը.

— Հոգնել եմ... Այլևս չեմ կարող անել ոչ մի քայլ... Դուք գնացեք, երեխաներ, իսկ ես կմնամ այստեղ, կհանգստանամ... Վերադառնալիս կվերցնեք ինձ... Օ՛հ, օ՛հ, օ՛հ...

Այնքան անսպասելի էր ամենաուժեղ տղաներից մեկի հոգնելը, որ բոլորը կանգ առան: Կանգ առան և զգացին, որ իրենք ավելի շատ են հոգնած և այլևս անկարող են նույնիսկ մի քայլ անելու: Բայց դա չէր ամենասարսափելին: Դրանից ավելի վատը երեխաներն զգացին հետևյալ վայրկյանին: Շուրջն այնպիսի մի չտեսնված, երբեք չզգացած ցուրտ էր, որ բոլորը ցնցվեցին իրենց ոտքերի ծայրից մինչև մազերի ծայրը: Ոչ, կանգ առնելն անհնար էր, հարկավոր էր քայլել՝ որ կողմ էլ լինի, միայն թե քայլել, չսառչել ինչպես ձուկ...

— Գնանք տուն,— լեղապատառ գոռաց Չինտամը,— ես սառչում եմ…

— Լռի՛ր, արջի մռութ,— հայհոյեց Իլեն:

— Սառչո՛ւմ ենք… Սառչո՛ւմ ենք...— պոռթկաց բոլոր երեխաների ընդհանուր ճիչը:

Իլեն ուզեց պատասխանել, բայց նրա ատամներն այնպես ուժգին և արագ-արագ էին չխկչխկում իրար, որ նա անկարող էր ծնոտն ավելի բաց անել, արտասանել որևէ բառ: Դա նրան հաջողվեց միայն կամքի մեծ լարումից հետո:

— Մի՞թե մենք Կատպիսում հենց այդպես էլ չպայմանավորվեցինք,— գոռաց նա,— որ թեկուզև սառչենք, բայց պիտի տեսնենք Գույնզգույն Թագավորությունը: Ուրեմն ինչո՞ւ եկաք: Ես էլ գիտեմ, որ սառչում ենք: Ուրեմն ավելի լավ չէ՞, որ շտապենք, մահվանից առաջ գոնե տեսնենք Գույնզգույն Թագավորությունը: Առա՛ջ...

Բոլորը վազեցին առաջ, բայց ոչ այնքան նրա խոսքերի ազդեցության տակ, որքան ցրտից քշված: Քայլելիս նրանց արյունը շարժվում էր, և նրանք կարծես մի քիչ տաքանում էին:

Իլեն կռացավ դեպի իր ընկերը, որը նստա՞ծ, թե՞ պառկած էր ձյան վրա.

— Վեր կաց, Վինզա, ամոթ չէ՞ քեզ: Բոլորն արդեն գնացին…

— Չեմ կարող: Իլե Տրապնա: Մնաս բարև քեզ... Ես... Ես... սառչում եմ... Ափսոս, որ չտեսա Գույնզգույն…

— Ես թույլ չեմ տա, որ դու սառչես հիմա,— ասաց Իլեն՝ ինքը նույնպես դողալով ամբողջ մարմնով:— Հասնենք տեղ՝ հետո թող սառչենք բոլորս միասին... Վեր կաց: Չէ՞ որ դու այնքան ուժեղ ես...

Բայց նա սարսափով զգաց, որ իզուր են հորդորները: Նա արագ հանեց գրպանից մի երկար փոկ, որը կանխամտորեն վերցրել էր իր հետ, մոտեցավ Վինզային, փոկն անցկացրեց նրա թևատակերով և ինքը լծվեց դրան:

— Պետք չէ,— թույլ ձայնով դիմադրեց Վինզան,— դու էլ ես հոգնած, դու բոլորովին կուժասպառվես…

— Լռիր, Վինզա: Դու միայն աշխատիր չսառչել: Պառկած ժամանակ ավելի հեշտ է, ուրեմն՝ զգույշ կաց…

Իսկ թե ինչպե՞ս պիտի զգույշ մնար Վինզան, Իլեն ինքն էլ չգիտեր:

— Շնորհակալություն, Իլե Տրապնա,— ասաց ընկերը՝ այլևս չդիմադրելով նրան:— Տար ինձ, այո, այո, խնդրում եմ քեզ: Ես էլ եմ ուզում սառչելուց առաջ տեսնել Գույնզգույն Թագավորությունը:

Իլեն սկսեց քայլել՝ քաշելով ընկերոջն իր ետևից: Ձյան վրա դա շատ դժվար չէր նույնիսկ այդ ուժասպառ պատանու համար: Բայց այդպես թվաց միայն առաջին մի քանի քայլն անելիս: Այնուհետև այնպես թվաց, թե Վինզան ամեն քայլափոխի հետ ավելի և ավելի է մեծանում ու ծանրանում: Իլեն սկսեց հևալ, նրա սիրտն արագ-արագ խփում էր: Բայց նա չէր մոռանում շուտ-շուտ ետ նայել և ձայն տալ ընկերոջը՝ համոզվելու համար, որ նա դեռ չի սառել: Մի անգամ էլ, երբ Իլեն ձայն տվեց՝ պատասխան չստացավ:

— Վինզա,— սարսափած կրկնեց Իլեն:

Նորից լռություն:

Իլեն ետ դարձավ և սկսեց ցնցել նրան.

— Վինզա՛, Վինզա՛...

— Հա՞, ի՞նչ,— վերջապես արտասանեց պառկածը՝ քնից արթնացածի ձայնով:

— Ապա, ոտքի կանգնի՛ր,— հրամայեց Իլեն,— դու սառչում ես:

— Ավելի լավ,— հարբածի պես ասաց Վինզան և սկսեց մշմշալ:

— Վե՛ր կաց,— կոպտությամբ ցնցեց նրան Իլեն:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, Տրապնա, ինչո՞ւ ես անհանգստացնում։

Այլևս առանց խոսելու, Իլեն քաշեց, ոտքի կանգնեցրեց նրան և հրեց առաջ.

— Գնա՛...

Վինզան արեց մի քանի օրորվող քայլ, ապա սթափվեց և սկսեց վազել։

Երբ նրանք հասան առջևից գնացող երեխաներին, Վինզան շշնջաց իր ընկերոջը.

— Նորից շնորհակալություն, Իլե Տրապնա։ Դու ինձ քաշեցիր բավական տեղ և ես հանգստացա։

— Եթե շնորհակալություն ես ասում, ապա ասա ոչ թե դրա համար,— բարկացավ Իլեն,— այլ այն բանի, որ ես քեզ չշարունակեցի քաշել։ Դու արդեն սառչում էիր…

— Մի՞թե,— սարսափից աչքերը չռեց Վինզան։

Իլեն նրան մտցրեց շղթայի մեջ, իսկ ինքն անցավ շղթայի գլուխը։

Մինչև կեսգիշեր քայլում էին երեխաները՝ հետզհետե և ավելի սաստկացող սառնամանիքի մեջ։ Այժմ հուսահատվել էին բոլորը, որ ամենավատն էր, հուսահատվել էր նաև ինքը՝ Իլեն։ Չէ՞ որ վաղուց արդեն պիտի երևային Գույնզգույն Թագավորության լույսերը, բայց չկային...

Ախ, որքա՛ն լավ կլիներ՝ գտնվել հիմա տանը, պառկել մորթե տոպրակի մեջ և չշարժվել, քնել... Կատպիսն այժմ երեխաներին թվում էր գերագույն երջանկության վայր։ Բայց ոչ ոք այլևս չէր մտածում այնտեղ վերադառնալու մասին, որովհետև այդ անհնար էր։ Կատպիսը հեռու էր, շատ հեռու, ոչ ոք տեղ չէր հասնի... Դիմացը նույնպես, նրանք այլևս ոչինչ չէին սպասում տեսնել, իսկ եթե քայլում էին, ապա միայն նրա համար, որ չքայլելն անհնար էր…

Հանկարծ Իլեն, որ գնում էր առջևից, մթության մեջ ամբողջ մարմնով խփվեց ինչ-որ կոշտ և ողորկ առարկայի։ Նա ճչաց, որովհետև հասկացավ, որ դա Չհալչող Սառցե Տունն էր՝ առանց Գույնզգույն Թագավորության, մութ, անձայն…

Իլե Տրապնայի հուսահատ ճիչը ցնցեց բոլորին։ Նրանք հասկացան, թե ինչ էր կատարվել։

— Սրիկա, խաբեբա,— գոռաց Չինտամը և երկու բռունցքներով ուժեղ հարվածեց Իլեի դեմքին։

— Օ՛յ,— հեծեծաց Կիվերան,— օ՛, խաբեցիր դու մեզ…

— Ամոթ քեզ, Իլե Տրապնա,— լսեց տղան իր ականջի մոտ Նուրիսի շշուկը։

Իր ամենամոտ ընկերուհու հանդիմանությունը լրացրեց ամեն ինչ և գետին տապալեց Իլեին։ Նա բերանքսիվայր ընկավ ձյան վրա և սկսեց ջղագար հեկեկալ։ Նա լաց էր լինում՝ այլևս կորցրած իր քաջությունը, կամքը, համառությունը, նա լաց էր լինում փոքրիկ երեխայի պես…

Քիչ հետո, գլուխը բարձրացնելով վեր, նա զգաց մթության մեջ, որ այլևս ոչ ոք չկա իր շուրջը։ Բոլոր երեխաները գնացել էին։ Այժմ, երբ նրանք չէին տեսել Գույնզգույն Թագավորությունը, հիմար և անիմաստ բան կլիներ մեռնելը։ Ուստի և, իրենց վերջին ուժերը լարած, նրանք վազելով շտապել էին դեպի Կատպիս։ Իլե Տրապնան մենակ էր, նրան լքել էր նույնիսկ նրա ամենամտերիմ ընկերուհի Նուրիսը…

Այն միտքը, որ նա մենակ է այդ ամայության և մթության մեջ, սարսափեցրեց Իլեին: Նա վեր ցատկեց և շնչակտուր, ընկնել-ելնելով, վազեց՝ հասնելու երեխաներին: Նա նույնիսկ գոռաց, ձայն տվեց նրանց, բայց նրա ձայնը կորավ ամայի մթության մեջ՝ առանց պատասխանի: Ինչպես երևում էր, նա երկար էր լաց եղել՝ գետնի վրա պառկած, և արդեն շատ էին հեռացել երեխաները...

Նա շատ ուշ հասավ նրանց և հասավ միայն այն պատճառով, որ նրանք արդեն ուժասպառ, փռվել էին ձյան վրա: Անշարժ պառկած, նրանք արդեն սկսում էին սառչել: Գիշերվա մթությունն զգալի նոսրացել էր, սկսվում էր լույսը, և Իլեն նկատեց, թե ինչպես երջանկությունից փայլում էին բոլորի դեմքերը: Կատպիսի յուրաքանչյուր բնակիչ, նույնիսկ երեխաները, գիտեին, որ ճիշտ այդպես են մեռնում մարդիկ ցրտից: Սկզբում նրանք դողում են, սարսափելի մրսում, բայց երբ սկսվում է մահը՝ այլևս դադարում են մրսելուց, տաքանում են և զգում քնելու անդիմադրելի պահանջ:

— Ապա՛, վեր կացեք, շո՛ւտ,— բղավեց Իլեն:— Դուք սառչում եք…

Ոչ ոք չլսեց նրան: Բոլորը շարունակում էին ժպտալ՝ աչքերը փակ:

Իլեն տագնապահար սկսեց ոտքերով, ձեռքերով անխնա խփել, հարվածել բոլորին: Նա գիտեր, որ դա միակ միջոցն էր՝ նրանց ուշքի բերելու, սառչող արյունը նրանց երակներում նորից շարժման մեջ դնելու համար:

— Ինչո՞ւ ես խփում, Իլե,— թույլ բողոքեց մեկը:

— Ոչ թե խփել, այլ կսպանեմ քեզ՝ եթե վեր չկենաս,— գոռաց Իլեն՝ նորից մի ցավագին հարված հասցնելով նրա ուսին:

— Ես իսկույն վեր կկենամ, Իլե, միայն թե թույլ տուր մի քիչ քնեմ, խնդրում եմ քեզ…

Իլե Տրապնայի մի նոր հարվածը վերջապես ոտքի հանեց նրան:

— Օգնիր վեր կացնելու մյուսներին,— կարգադրեց Իլեն:— Արդեն մեռնում են...

— Իլե՛,— բացականչեց տղան,— դու ինձ փրկեցիր, շնորհակալություն...

— Ժամանակը չէ,— բարկացավ Իլեն,— փրկիր պառկածներին: Խփիր՝ առանց խնայելու, ամբողջ ուժով…

Ձայներ լսելով, Նուրիսը բարձրացրեց գլուխը: Նա ևս պառկել էր, բայց նա միակն էր, որ դեռ զգաստ էր: Նա, ինչպես նրան թվում էր, պառկել էր միայն հանգստանալու համար: Այժմ, հասկանալով, որ թե՛ ինքը և թե՛ երեխաները սառչում են, և հասկանալով, թե ինչ է ուզում անել Իլեն մյուս տղայի հետ միասին, վեր ցատկեց և նույնպես սկսեց ամբողջ թափով հարվածներ տեղալ պառկածների վրա, ոտքի հանել նրանց: Յուրաքանչյուր ոտքի ելած երեխա, սթափվելուց հետո, ինքն էլ էր ձեռնարկում մյուսներին արթնացնելու:

Բողոքելով ու զայրանալով, որ չեն թողնում մի փոքր քնել, բոլորը վեր կացան: Նրանք, ովքեր փորձում էին նորից պառկել, ստանում էին նոր հարվածներ և մնում էին ոտքի վրա:

— Ապա, վազքով, շո՛ւտ,— հրահանգեց Իլեն:— Ետ մնացողին կծեծեմ…

Երեխաների խումբը սլացավ առաջ: Նրանց քթածակերից, բերաններից ելնում էր առատ գոլորշի, նրանք շնչասպառ հևում էին, բայց Իլեն քշում և քշում էր նրանց՝ երբեմն-երբեմն ուժեղ հարվածելով ետ մնացողներին:

Երբ նրանք այդպես վազ տալով անցան բավական տարածություն, Իլեն կարգադրեց.

— Կանգ առնել:

Նա ժպտահայաց նայեց իր ուղեկիցներին:

— Փրկվեցիք, երեխաներ, այլևս չեք մեռնի:

Ոչ ոք չպատասխանեց նրան, ոչ ոք չասաց գոնե որևէ ջերմ խոսք:

Իլեն սկսեց գրպանից հանել ձկան կեսերը:

— Հարկավոր է ուտել, որովհետև դեռ շատ ճանապարհ ունենք գնալու:

Նա սկսեց բաժանել ձկները: Այժմ ոչ ոք չուզեց հրաժարվել իր բաժնից, բոլորը վերցրին և մռայլ, անբարյացակամ, նայեցին Իլե Տրապնային: Նրանք իրենց երախտապարտ չէին զգում նրա հանդեպ՝ ոչ այն բանի համար, որ նա պահել էր ձկան կեսերը և այժմ վերադարձնում էր նրանց, ո՛չ այն բանի համար, որ փրկել էր նրանց կյանքը: Նրանք զայրացած էին իրենց առաջնորդի վրա, որը խաբել էր նրանց, պատճառել այդքան չարչարանք և ցույց չէր տվել Գույնզգույն Թագավորությունը:

Երբ հերթը հասավ Նուրիսին, նա ևս վերցրեց ձկան կեսն Իլեի ձեռքից՝ նույնիսկ առանց նայելու նրան: Ապա, մոտենալով Չինտամին, աղջիկը կիսեց իր բաժինը նրա հետ, որովհետև Չինտամն առաջին անգամ կերել էր Իլեի տված ամբողջ ձուկը և այժմ ոչինչ չուներ ստանալու:

Սոված, ուժասպառ, արհամարհված բոլորից, նույնիսկ Նուրիսից, Իլեն շուռ տվեց երեսը, որպեսզի ոչ ոք չտեսնի նրա արցունքները…

Նույն րոպեին, երբ երեխաներն զբաղված էին ուտելով, Իլեն, որ շուռ էր տվել երեսը նրանցից և անորոշ նայում էր դեպի տարածությունը, տեսավ մոտեցող մարդկանց մի խումբ: Նրանք գալիս էին ոչ թե դիմացից, այլ կողքից: Իլեն հասկացավ, որ դրանք Կատպիսի բնակիչներն էին՝ նրանց ծնողները, որոնք դուրս էին եկել իրենց երեխաներին որոնելու: Բայց որտեղի՞ց էին գալիս նրանք... Իլեն մի պահ դեռ չհասկացավ դա, ապա սարսափով գլխի ընկավ, որ իրենք շեղվել էին ճանապարհից և գնում էին այլ կողմ, իսկ ծնողները գալիս են հենց Կատպիսից... Ուշ երեկոյան, տուն վերադառնալով որսից, նրանք, անշուշտ, իսկույն դուրս էին եկել դեպի Չհալչող Սառցե Տունը, և միայն հիմա էին հասնում երեխաներին: Նշանակում է՝ Կատպիսը դեռ շատ հեռու է... Իսկ այն, որ արդեն աղոտ լույս է, դա ոչինչ չի նշանակում, դեռ գիշեր է...

Բոլոր երեխաները նկատեցին ծնողներին, բայց ոչ մեկը ձայն չհանեց: Լուռ և հանցավոր, նրանք սպասում էին մեծերի մոտենալուն:

Առջևից գալիս էր սարսափելի Ակիրսը: Իլեի արյունը սառեց երակներում: Այնուամենայնիվ, հաղթահարելով սարսափը, նա առաջ անցավ և դիմեց նրան բարձր ձայնով.

— Սպանիր ինձ, Ակիրս հորեղբայր, ես եմ ամեն ինչի մեղավորը…

Հաղթանդամ Ակիրսը, որն իր սպիտակ հագուստներով նման էր ձյան մի մեծ կույտի, անտարբերությամբ մի կողմ հրեց Իլեին: Մոտենալով Չինտամին, նա շոշափեց նրան և տեսնելով, որ իր որդին ողջ-առողջ է, հանգստացավ: Շուռ գալով դեպի մյուս ծնողները, նա ասաց.

— Ձեռք չտաք երեխաներին, առանց այն էլ շատ են տանջվել ամբողջ գիշերը: Կնանտ, չհամարձակվես ծեծել Իլեին, թե չէ դու գործ կունենաս ինձ հետ: Իլեն նույնպես մեղավոր չէ: Գնանք,

սիրելի երեխաներ... Իլեն ապշած նայեց Ակիրսին: Որտեղի՞ց էր ծնվել նրա մեջ այդքան բարություն...

ԿՈՐԱԾ ՀԱՇԻՎ

Երեխաների և մեծերի խումբը, լուռ քայլելով մինչև առավոտ, վերջապես հասավ Կատպիսին: Ու թեև բոլորն շտապում էին մտնել իրենց տները, տաքանալ, բայց Ակիրսը ետ պահեց նրանց մի պահ և ասաց.

— Սիրելի երեխաներ... Դուք շատ լավ արեցիք, որ երեկ գնացիք դեպի Չհալչող Սառցե Տունը: Գնացիք և ձեր աչքերով տեսաք, որ սուտ է Գույնզգույն Թագավորության հեքիաթը…

Ապա, դառնալով մեծերին, նա շարունակեց.

— Մենք ինչպե՞ս գլխի չէինք ընկնում այսքան ժամանակ, որ հենց ինքներս ուղարկենք երեխաներին: Իզուր տեղն ամեն տարի հսկում էինք նրանց, ծեծում, արգելում... Իսկ արգելված բանը, ինչպես հայտնի է, միշտ գրավիչ է լինում: Դե, սիրելի երեխաներ, գնացեք տաքանալու, հանգստանալու: Իլե Տրապնա, ապրես, ամենից ավելի ես քեզ պիտի գովեմ: Չէ՞ որ դու ես տարել երեխաներին քեզ հետ: Հիմա նրանք բոլորը տեսան, որ սուտ է Գույնզգույն Թագավորության հեքիաթը և այլևս չեն հավատա դրան...

Բոլորը լուռ, առանց մի խոսք ասելու, ցրվեցին իրենց տները: Ծնողներն այդ օրը չգնացին որսի, այլ մնացին իրենց երեխաներին խնամելու:

Չինտամը մտավ իրենց միջանցքը, նրա ետևից մտավ հայրը: Երբ տղան հայտնվեց բնակարանում, մայրը նետվեց նրան ընդառաջ և սեղմեց որդուն իր կրծքին: Բայց Ակիրսը կոպտաբար հեռացրեց նրանց իրարից և հարցրեց Չինտամին.

— Դու ինչո՞ւ գնացիր նրանց հետ:

— Ես չգնացի, հայրիկ, նրանք զոռով տարան ինձ: Ես թաքնվել էի երեխաների մեջ, լսում էի նրանց, իսկ վերջում ուզեցի հեռանալ, բայց նրանք նկատեցին ինձ և...

Ձեռքի մի ուժեղ հարված գետին գլորեց Չինտամին:

— Ինչո՞ւ ես խփում,— զոռաց մայրը՝ վրա հասնելով, բայց Ակիրսը կոպիտ ետ հրեց կնոջը և ոտքով մի նոր հարված հասցրեց տղային:

— Սրանից հետո կսովորես ավելի լավ թաքնվել,— ասաց նա, և պառկելով փորի վրա, սողաց տնից դուրս:

Միայն իրենց բնակարանները մտնելուց և տաքանալուց հետո երեխաներն զգացին երկար և անօգուտ ճանապարհի պատճառած վնասները: Յուրտը տարել էր մեկի ձեռքի մատները, մյուսի ոտքը, երրորդի ականջները, չորրորդի քթի ծայրը... Այժմ նրանք նվում և հեծեծում էին ցավից, ծնողներն արջի ճարպ էին քսում նրանց մարմնի ցրտահար մասերի վրա: Ցրտից տուժել էին նաև այն երեխաները, որոնց չէր վնասել սառնամանիքը: Նրանց ատամները չխկչխկում էին, և նրանք երկար ժամանակ չէին կարողանում տաքանալ, չնայած որ ծնողները նրանց վրա գցել էին տանը եղած բոլոր մորթիները և, չխնայելով ճարպի սուղ պաշարները, առատ վառել էին ճրագ

վառարանները: Քիչ հետո, երբ երեխաները տաքացան, նրանց պաշարեց երջանկության այնպիսի մի զգացում, որ սառցե բնակարանները նրանց թվացին ավելի տաք, ավելի հաճելի, քան որևէ Գույնզգույն Թագավորություն, որը գոյություն էլ չուներ ոչ մի տեղ: Շուտով նրանք քնեցին խորը և անհանգիստ քնով: Ծնողները, նրանց մոտ նստած, տագնապով լսում էին նրանց շնչառությունը՝ վախենալով, թե երեխաները կարող են ջերմել, հիվանդանալ:

Քնեց նաև Իլե Տրապնան: Նա ցրտահար չէր եղել, բայց ոչ մի երեխա Կատպիսում իրեն այնքան վատ չէր զգում, որքան նա: Չէ՞ որ նա երդվել էր բոլորին իր եղբոր հիշատակով, որ ցույց կտա նրանց Գույնզգույն Թագավորությունը, բայց չէր կարողացել կատարել իր խոստումը: Նրա գլուխը ցավում էր մտածելուց՝ մի՞թե սուտ էր այդ բոլորը, հեքիաթ... Մի՞թե նրա եղբայրը նույնպես, երեք տարի առաջ, չէր տեսել ոչինչ...

Իլեն քնեց անհանգիստ, խռովահույզ քնով: Նա մայր չուներ, նրա մայրը մեռել էր իր ավագ որդու սառչելուց ուղիղ մի տարի հետո՝ չկարողանալով տանել այդ վիշտը: Այժմ Իլեի մոտ նստել էր նրա հայրը՝ Կնանտը: Նա խստահայաց դեմքով մի մարդ էր՝ ճակատի և այտերի վրա խոշոր, հաստ կնճիռներով: Ծանր կյանքը նրան դարձրել էր մռայլ, քչախոս, անժպիտ, բայց նա իր հոգու խորքում բարի մարդ էր: Իլեն չէր հիշում, թե երբևէ ծեծ կերած լիներ նրանից՝ բացի այն մի դեպքից, երբ տղան դիտմամբ թափել էր ճրագ-վառարանից արջի ճարպը, որպեսզի պատրվակ ունենար Կատպիսից հեռանալու և բռնվելու դեպքում իրեն արդարացնելու:

Այժմ Իլեն ամաչում էր նայել հորը՝ գիտենալով, թե ինչպիսի անհանգստություն էր պատճառել նրան մի ամբողջ գիշեր: Եթե Իլեն սառչեր, հայրը, իհարկե, չէր կարողանա տանել այդ վիշտը, և այս անգամ էլ ինքը կմեռներ՝ իր կնոջ նման:

Խուսափելով հոր հանդիմանական հայացքից, Իլեն փակեց աչքերը՝ ձևացնելով, թե քնում է, իսկ քիչ հետո, իսկապես, քնեց:

Շա՞տ էր քնել նա, թե քիչ, երբ ինչ-որ ձայնից բացեց աչքերը: Նա տեսավ Ակիրսին իրենց տանը և սառը քրտինքը պատեց նրան: Ակիրսը խուզարկում էր նրանց պատերը, իսկ Կնանտը լուռ հետևում էր նրա շարժումներին:

— Իհարկե, կգտնի,— անցավ Իլեի մտքով: Նա ափսոսանքից ու վշտից պատրաստ էր լաց լինելու, բայց հանկարծ, մեծ խնդությամբ, հիշեց, որ նույնքան ձկան գլուխներ նա պահել է դրսում, իրենց պատի տակ: Բայց նույն րոպեին նրա այդ խնդությունը նորից փոխվեց ավելի ծանր վշտի, որովհետև նա հիշեց.— գոյություն չունի Գույնզգույն Թագավորությունը... Թող գտնի Ակիրսը ձկան գլուխները փոսի մեջ, տանի, ոչնչացնի: Հենց Իլեն ինքը կոչնչացնի դրսում պատի տակ պահած իր երկրորդ հաշիվը, որը Նուրիսին էր հանձնարարել շարունակելու այս օրվանից: Այլևս ինչո՞ւ պահել Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվը, երբ գոյություն չունի Գույնզգույն Թագավորությունը...

Ակիրսը, վերջապես գտավ փոսերը, ձեռքը կոխեց նախ մեկի մեջ, ապա մյուսի, և ժպտաց ներողամտաբար.

— Ահա թե որտեղ է պահում տղադ հաշիվը: Դե ի՞նչ, թող պահի: Ես չեմ խլի դա նրանից: Ահա հենց ինքս եմ իմ ձեռքով մի ձկան գլուխ փոխադրում դատարկ փոսը: Հիմա, երբ նա տեսավ, որ հեքիաթ է Գույնզգույն Թագավորությունը, հազիվ թե ուզենա շարունակել պահել հաշիվը: Իսկ եթե ուզենա՝ դա իր գործն է: Առողջություն եմ ցանկանում տղայիդ, Կնանտ...

Այս ասելով Ակիրսը պառկեց փորի վրա՝ պատրաստվելով սողալ դուրս: Կնանտը, որ մինչ այդ լուռ էր, ձեռքը դրեց Չինտամի հոր ուսին.

— Սպասիր, Ակիրս...— ասաց նա։

Ակիրսը նայեց նրան հարցական հայացքով, ապա նստեց: Իսկ հիմա ասա...

Կնանտը կիսատ թողեց խոսքը, նայեց Իլեին: Իլեն իսկույն փակեց աչքերը: Համոզվելով, որ տղան քնած է, Կնանտը շարունակեց.

— Ասա, Ակիրս, ինչի՞ համար երեխաները չտեսան Գույնզգույն Թագավորությունը…

— Զարմանալի բան ես հարցնում,— ծիծաղեց Ակիրսը,— չտեսան, որովհետև նա գոյություն չունի:

Կնանտը բռնեց Ակիրսի օձիքից, թափով ձգեց նրան դեպի իրեն.

— Լսիր, Ակիրս... Դու ինձ հետ աչքակապուկ մի՛ խաղա։ Ով՝ ով, իսկ ես ու դու շատ լավ գիտենք, որ Վերջին Ձկնագլխի Օրը երեխաները չէին կարող չտեսնել Գույնզգույն Թագավորությունը…

Քիչ մնաց Իլեն ճչար անսպասելիությունից:

Հայրը շարունակեց.

— Կատպիսում ապրող մարդկանցից մնացել ենք միայն ես ու դու, որոնք տեսել են Գույնզգույն Թագավորությունը: Ինչո՞ւ ես ստում, երբ երկուսս էլ գիտենք, որ նա գոյություն ունի…

— Իսկ քեզ ի՞նչ է հարկավոր,— հարցրեց Ակիրսն իր հերթին,— դու ուզում ես, որ երեխաներն իմանա՞ն այդ մասին և ամեն տարի գնան այնտե՞ղ: Դու հո գիտե՞ս, որ մահ է սպառնում նրանց: Բայց եթե նույնիսկ չմեռնեն և վերադառնան, մի՞թե ավելի լավ կլինի: Նրանք կդժբախտանան և կտանջվեն ամբողջ կյանքում: Ով գոնե մի անգամ տեսնի Գույնզգույն Թագավորության հրաշալիքները՝ նրան այլևս անարժեք կթվա բեռներով ձուկը, արջի ամենափափուկ մորթին, ամենամեծ և ամենատաք սառցե տունը, ամենալուսավոր ճրագ-վառարանը: Փրկվելով ցրտից, նրանք կմեռնեն վշտից, որ իրենք երբեք չեն լինելու Գույնզգույն Թագավորության մեջ, չեն ապրելու դրա երջանիկ կյանքով…

Նա ընդհատեց իր խոսքը, նայեց Իլեի կողմը և համոզվելով, որ տղան քնած է, շարունակեց.

— Ինչու այնքան շուտ մեռան բոլոր նրանք, ովքեր ինձ ու քեզ հետ միասին տեսել էին Գույնզգույն Թագավորությունը: Նրանք մեռան վշտից: Իսկ ես ու դու ապրում ենք, որովհետև գլխներիցս հանել ենք անիրագործելի երազը, մոռացել ենք մեր տեսածը…

— Ես ոչինչ չեմ մոռացել, Ակիրս,— ընդհատեց Կնանտը նրան։— Ես հիշում եմ բոլորը՝ ինչպես այսօր: Այո, իմ սրտում էլ նստած է վիշտը, բայց դա, ինչպես տեսնում ես, չի խորտակել ինձ: Եվ ես մի փափագ ունեմ միայն՝ մեռնելուց առաջ գոնե մի անգամ էլ տեսնել Գույնզգույն Թագավորությունը... Ահա դրա համար եմ հարցնում քեզ, Ակիրս, ինչի՞ համար մեր երեխաները չտեսան այն...

Ակիրսը չպատասխանեց։

— Ես,— շարունակեց Կնանտը,— ոչինչ չեմ ասել և երբեք էլ չեմ ասի Իլեին: Եթե նա տեսնի այն հրաշալիքները՝ հազիվ թե ուզենա ապրել դրանից հետո: Ոչ մի երեխա չպետք է իմանա այդ մասին երբե՛ք, երբե՛ք: Պետք է ընդմիշտ կորցնել Ձկնագլխի Օրվա հաշիվը, դա ճիշտ է: Բայց ես տեսել եմ Գույնզգույն Թագավորությունը և միակ մարդն եմ Կատպիսում, որ իրավունք ունեմ նորից

տեսնելու: Այո, դու էլ իրավունք ունես, բայց չես ուզում տեսնել: Իսկ ես ուզում եմ: Ասա, ինչո՞ւ չտեսան երեխաները Գույնզգույն Թագավորությունը...

Ակիրսը լուռ էր:

— Դու ինձ հետ կատակ մի՛ անիր, Ակիրս,— նախազգուշացրեց Կնանտը:— Դու լավ գիտես, որ Կատպիսում ոչ ոք չի սիրում քեզ: Ես նույնպես, ատում եմ քեզ, Ակիրս, դու ծույլ ես, աշխատել չես սիրում, իսկ ուտել՝ ընդհակառակը: Ուրեմն լսիր: Ես պատրաստ եմ մի տարի շարունակ, օրական ուտել ոչ թե երկու, այլ միայն մի ձուկ, իսկ մյուսը տալ քեզ, միայն թե ասես ինձ՝ ե՞րբ պետք է գնալ տեսնելու համար Գույնզգույն Թագավորությունը...

— Իսկ ինչո՞ւ ես հարցնում ինձ,— խոսեց, վերջապես, Ակիրսը:— Ամեն տարի այդ օրը ես հայտնում էի ձեզ այդ մասին և դուք բոլորդ էլ գիտեիք Վերջին Ձկնագլխի Օրը: Կարող էիր վեր կենալ և գնալ: Ինչո՞ւ չէիր գնում: Ո՞վ էր քեզ խանգարում:

— Սուտ մի՛ ասիր, Ակիրս: Քսան տարի մենք հաշիվը համարում էինք կորած և դու ոչ ոքի չէիր ասում, թե պահում ես այն: Միայն այն բանից հետո, երբ իմ ավագ որդին գտավ հաշիվը երեք տարի առաջ, դու նախանցյալ և անցյալ տարի նախազգուշացրիր մեզ, որպեսզի հսկենք երեխաներին: Նախանցյալ տարի ես չկարողացա գնալ, որովհետև մահացել էր իմ կինը, իսկ անցյալ տարի նույնպես չկարողացա գնալ, որովհետև ինձ նույնպես, ուրիշների հետ միասին, թողել էին Կատպիսում՝ երեխաներին հսկելու: Մի՞թե ես կարող էի փոխանակ հսկելու, ինքս թողնել-գնալ: Ոչ ոք դա ինձ չէր ների և առաջին հերթին՝ ես ինքս: Իսկ այս տարի պատրաստվում էի գնալ, բայց դու, չգիտեմ ինչու, չնախազգուշացրիր Վերջին Ձկնագլխի Օրվա մասին, և ես բաց թողեցի այն…

— Այսուհետև այլևս ոչ ոք չի իմանա, թե երբ է լինելու Վերջին Ձկնագլխի Օրը,— չարախինդ ժպիտով ասաց Ակիրսը:— Երբեք և ոչ ոք, նույնիսկ ես: Քիչ առաջ ես ցրեցի, ոչնչացրի իմ տան պահած հաշիվը: Իսկ քո տղան՝ Իլեն, օ՜յ, ի՜նչ խորամանկն է, նա, հաշիվը պահելիս է եղել երկու տեղ՝ դրսում և ներսում: Հենց քիչ առաջ ես գտա և ոչնչացրի նաև դրսում ձեր պատի տակ պահած հաշիվը: Մնացել է ահա այս վերջինը...

Ակիրսն իր հաստ մատն ուղղեց դեպի փոսերի կողմը: Կնանտը մի ոստյունով ցատկեց դեպի պատը, շուռ եկավ և, բռունցքները սեղմելով, ասաց ատամների արանքից:

— Եթե մոտենաս՝ ես քեզ կսպանեմ, Ակիրս: Դու ուժեղ ես, բայց ես թույլ չեմ քեզանից, դա քեզ հայտնի է: Դու չես խլի մեզանից այս վերջին հաշիվը…

Ակիրսը քահ-քահ ծիծաղեց և, ձեռքը տանելով գրպանը, հանեց այնտեղից ինչ-որ բան:

— Քիչ առաջ,— ասաց նա,— ձկան գլուխը լիքը փոսից դատարկ փոսը փոխադրելիս ես հաշիվը խառնելու համար վերցրի այնտեղից մի քանի ձկան գլուխ: Տես…

Բաց անելով իր մեծ ափը և ցույց տալով ձկան գլուխները, նա ափը մոտեցրեց բերանին:

— Ակի՛ս,— բղավեց Կնանտը,— Ակի՛ս…

Իլեն, իրեն կորցրած, վեր ցատկեց տեղից և հոր նման նետվեց դեպի Ակիրսը: Բայց Կատպիսի ատելի բնակիչը մի արագ շարժումով ձկան գլուխները լցրեց իր մեծ բերանը, կուլ տվեց և քրքջալով դուրս սողաց բնակարանից:

Հայր ու որդի նայեցին իրար: Իլեն հանկարծ փղձկաց և ջղային հեկեկոցով ընկավ հոր գիրկը:

— Կորա՜վ,— արտասանեց նա արցունքների միջից,— ընդմիշտ կորավ Վերջին Ձկնագլխի Օրը…

Հայրը շոյեց որդու գլուխը:

— Գուցե դա ավելի լավ է,— շշնջաց նա:

— Ո՛չ, ո՛չ,— ավելի ուժգին հեկեկաց տղան,— մենք այլևս չենք տեսնի Գույնզգույն Թագավորությունը: Նա կա, նա հեքիաթ չէ, բայց մենք չենք տեսնի, չե՛նք տեսնի…

— Պառկիր,— ասաց Կնանտը որդուն,— դու հոգնած ես: Իսկ ես կգնամ հարևանների մոտ...

Այս ասելով, նա ելավ դուրս: Բայց նա որոշել էր գնալ ոչ թե հարևանների մոտ, այլ Ակիրսին սպանելու: Սակայն դրսում սառը քամին հանգստացրեց Կնանտին, նա սկսեց մտածել: Ի՞նչ օգուտ Ակիրսին սպանելուց: Միևնույնն է, այլևս չի կարելի գտնել կորած հաշիվը, այլևս ոչ ոք չի տեսնի Գույնզգույն Թագավորությունը, ոչ ոք...

Հոր գնալուց հետո Իլեն երկար արտասվում էր, ապա սրբեց աչքերը և նույնպես վճռեց, որ երբ մեծանա՝ անպայման սպանի Ակիրսին: Բայց այդ որոշումը չգոհացրեց նրան: Միևնույնն է, հաշիվը կորած է ընդմիշտ: Եվ չկա ոչ մեկը, որին Իլեն կարողանա հաղորդել իր վիշտը, լսել կարեկցանքի խոսքեր: Հայրը գնաց դուրս և ով գիտե երբ կվերադառնա, Նուրիսն ու բոլոր մյուս երեխաները երես են դարձրել նրանից…

Խարունա տատը... Ինչպե՞ս կարելի է մոռանալ Խարունա տատին…

Իլեն վեր կացավ տեղից: Նա կգնա Խարունա տատի մոտ, կնստի այնքան ժամանակ, մինչև որ պառավը մնա մենակ, ապա կպատմի այս բոլորի մասին: Բարի պառավը կասի այնպիսի խոսքեր, որոնք միայն նա գիտե Կատպիսում, և այդ խոսքերը կհանգստացնեն Իլեին: Ճիշտ է, դրանից չի վերադառնա Գույնզգույն Թագավորության հաշիվը, բայց մի՞թե Խարունան կարող է անել ավելին, քան կարող է անել մի կույր պառավ կին, այսինքն՝ մխիթարել…

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՀԱՇԻՎ

Երբ Իլեն մտավ պառավ Խարունայի բնակարանը, այնտեղ չկար ոչ մի երեխա: Իլեն նոր միայն հասկացավ, որ այդպես էլ պետք է լիներ: Չէ՞ որ ծնողներն այդ օրը տանն էին և ուզում էին ժամանակն անցկացնել իրենց երեխաների հետ: Երեխաները հենց իրենք էլ, այլևս չեն գնա Խարունայի մոտ, որովհետև նա խաբել էր նրանց սուտ հեքիաթով:

Ինքը Խարունան պառկել էր գետնի վրա և աղիողորմ արտասվում էր ու տնքում:

— Ի՞նչ է պատահել, Խարունա տատի,— հարցրեց Իլեն զարմացած:

— Օ՜յ... օ՜յ... Այդ դո՞ւ ես, Իլե: Օ՜յ... Ցավում է ամբողջ մարմինս: Դեռ բավական չէ, որ ես հազիվ եմ ապրում աշխարհի վրա՝ կույր, զառամյալ, Ակիրսը քիչ առաջ մտավ ներս, ծեծեց ինձ... Օ՜յ... օ՜յ…

— Ինչի՞ համար,— սառեց Իլեն:

— Օ՜յ... նրա համար, Իլե Տրապնա, որ ես պատմել եմ ձեզ Գույնզգույն Թագավորության մասին…

Իլեն բարձրացրեց պառավին, նստեցրեց: Լիակատար մթության մեջ նա, իհարկե, չէր տեսնում, թե ինչ վիճակի մեջ էր պառավը, բայց երբ պատկերացրեց սպիտակ արջի պես մեծ ու կոպիտ Ակիրսին՝ այդ խեղճ ու չորուկ պառավին ծեծելիս, նա հասկացավ, որ Խարունան հրաշքով էր մնացել կենդանի:

— Ապրես, Իլե Տրապնա, որ եկար,— օրհնեց պառավը:— Միշտ կուշտ լինես և միշտ արևը տաքացնի քեզ: Իմ մխիթարությունը դուք եք, երեխաներդ, իսկ այսօր, չգիտեմ ինչու, ոչ մեկը չի գալիս ինձ մոտ: Երևի Ակի՞րսն է արգելել…

— Իսկ դու մի՞թե ոչինչ չգիտես, Խարունա տատի…

Խարունան, տանը մեն-մենակ նստած, ոչնչից տեղյակ չէր: Իլեն պատմեց նրան նախորդ օրվա բոլոր դեպքերի մասին, պատմեց նաև իր հոր և Ակիրսի խոսակցության և Վերջին Ձկնագլխի Օրվա հաշվի անհետանալու մասին:

— Նորից Ակիրսը...— մրմնջաց պառավը նրան:— Ամեն տեղ Ակիրսը... և անիծեց:

— Դու շատ բան գիտես, Խարունա տատի,— ասաց Իլեն, ասա, խնդրում եմ, ինչո՞ւ մենք երեկ չտեսանք Գույնզգույն Թագավորությունը…

Պառավը ձայն չհանեց և միայն տնքաց:

— Մի՞թե իմ եղբայրն էլ իզուր էր գնացել երեք տարի առաջ և նույնպես ոչինչ չէր տեսել,— խոսեց Իլեն ինքնիրեն, ապա հանկարծ մի անսպասելի միտք եկավ նրա գլուխը: Ինչպե՜ս նա գլխի չէր ընկել մինչև հիմա…

— Խարունա տատի,— ասաց Իլեն՝ ավելի շուտ հաստատական տոնով, քան թե հարցական,— այդ դո՛ւ ես երեք տարի առաջ պատմել իմ եղբորը Վերջին Ձկնագլխի Օրվա հաշվի մասին...

Պառավը լուռ էր:

— Խարունա տատի,— կրկնեց Իլեն՝ ավելի պահանջկոտ,— այդ դո՞ւ ես պատմել:

Պառավը նորից ձայն չհանեց:

— Դու ինձ չե՞ս ուզում պատասխանել, Խարունա տատի,— վշտացած հարցրեց տղան:

— Մի մեղադրիր ինձ քո եղբոր մահվան մեջ,— ասաց, վերջապես, պառավը:— Ես նրան միայն պատմել եմ Գույնզգույն Թագավորության մասին, իսկ Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվը նա գտել է ուրիշ տեղից...

— Ես քեզ չեմ մեղադրում, Խարունա տատի, դու լավ ես արել, որ պատմել ես: Իմ եղբայրը, ճիշտ է, բայց դրանից առաջ եղել է երջանիկ, որովհետև տեսել է Գույնզգույն Թագավորությունը: Բայց տեսե՞լ է արդյոք: Իսկ եթե չի՞ տեսել և իզուր է մեռել…

— Տեսել է,— ասաց Խարունան:

— Դու հաստա՞տ գիտես,— ուրախացավ Իլեն:

— Այո, Իլե Տրապնա:

— Շնորհակալություն, Խարունա տատի: Ես իմ ամբողջ կյանքում պիտի վշտանայի՝ եթե նա տեսած չլիներ: Իսկ այժմ ասա, թե ինչո՞ւ ուրեմն մենք չտեսանք…

— Նշանակում է՝ երեկ Վերջին Ձկնագլխի Օրը չի եղել…

— Իսկ ե՞րբ է դա, եղե՞լ է, թե դեռ պիտի լինի…

— Դա չգիտեմ...— արտասանեց պառավը կամացուկ և այն էլ՝ երկար լռությունից հետո:

— Ոչ, գիտես,— չհավատաց Իլեն,— ձայնիցդ է երևում, որ գիտես, բայց չես ուզում ասել: Ինչո՞ւ չես ուզում ասել, Խարունա տատի…

Պառավն այս անգամ էլ լուռ մնաց:

— Խնդրում եմ քեզ,— աղերսեց տղան:

— Դու մի վախենա, ես ոչ ոքի չեմ ասի...

— Դու սխալվում ես, Իլե, ես ոչ ոքից չեմ վախենում, ոչ նույնիսկ մահից: Ես արդեն ապրել եմ իմ կյանքը և նա այլևս չարժե մի ձկան պոչ: Բայց դու ոչինչ մի հարցնիր ինձ, Իլե, և գնա...

— Իսկ ինչո՞ւ, Խարունա տատի:

— Ես ոչինչ չգիտեմ:

— Գիտես: Դու ամեն ինչ գիտես:

— Գիտեմ, բայց չեմ ասի, Իլե Տրապնա: Ես չեմ ուզում, որ դու սառչես-մեռնես մեծ եղբորդ նման:

— Ուրեմն դեռ չի՛ անցել Վերջին Ձկնագլխի Օրը,— հասկացավ և ուրախությունից բացականչեց Իլեն:— Ոչ, ես չեմ մեռնի, Խարունա տատի, խնդրում եմ քեզ: Չէ՞ որ երեկ գիշեր ես կենդանի մնացի: Նույնպես և բոլոր մյուս երեխաները:

— Մի գիշեր՝ դա կարելի է,— համաձայնեց պառավը,— բայց երկրորդ գիշերը, այն էլ՝ հետևյալ գիշերը, երբ դու կարգին չես էլ հանգստացել…

— Ուրեմն այսո՞ր է,— իրեն կորցրած, բղավեց Իլեն: Խարունան կծեց լեզուն, բայց արդեն ուշ էր: Նա մատնել էր գաղտնիքը: Ուստի և, վճռելով այլևս ոչինչ չթաքցնել, ասաց.

— Այո, Իլե Տրապնա, Վերջին Ձկնագլխի Օրը ոչ թե երեկ էր, այլ այսօր:

— Տատի՛,— ուրախ բացականչեց Իլեն,— տատի…

Եվ խլելով նրա ձեռքը, համբուրեց:

— Գնա և տես Գույնզգույն Թագավորությունը,— բարեմաղթեց պառավը տղային:— Եվ տար քեզ հետ ուրիշներին, միայն թե ամենաառողջներին ու դիմացկուններին, որպեսզի ոչ ոք չսառչի ցրտից: Եվ երբ վերադառնաս, թոռնիկս, եկ և ինձ էլ պատմիր քո տեսածների մասին: Ես էլ, իր ժամանակին, գաղտնի պահում էի հաշիվը, բայց ինձ չվիճակվեց տեսնել Գույնզգույն Թագավորությունը…

— Իսկ դու որտեղի՞ց գիտես, որ այսօր է դա... Մի՞թե դու դեռ մինչև հիմա պահում ես հաշիվը, Խարունա տատի…

— Այո, թոռնիկս, բայց ես որոշել էի ոչ ոքի չասել դա: Չեմ ասել նաև քո եղբորը, ես արդեն ասացի քեզ այդ մասին: Ես չէի ուզում ոչ ոքի մահվան պատճառ դառնալ:

— Այն դեպքում ո՞ւմ համար ես պահում հաշիվը,— զարմացավ Իլեն:

— Ոչ ոքի: Պահում եմ, որովհետև անհնար է մոռանալ: Իսկ այժմ ես դա կտամ քեզ: Դու ուժեղ ես, Իլե Տրապնա, դու չես մեռնի երբեք, և իմ խղճի վրա չի ծանրանա քո մահը, ոչ:

— Իսկ մի՞թե Ակիրսը երբեք չի խուզարկել քո բնակարանը, Խարունա տատի…

— Խուզարկել է շատ անգամ, թոռնիկս, ավելի շատ, քան բոլորիդ տները միասին... Ես Կատպիսի ամենածեր բնակիչն եմ, ես շատ բան գիտեմ, և Ակիրսն ամենից շատ ինձ վրա է կասկածում և ինձ է ատում:

— Իսկ ինչպե՞ս է, որ նա չի գտել ձկան գլուխները…

— Որովհետև դրանք չկան, թոռնիկս:

Իլեն վեր ցատկեց զարմանքից:

— Ինչպե՞ս թե չկան:

— Հաշիվը ես պահում եմ իմ գլխի մեջ, Իլե Տրապնա: Դու ինձ ասա, մինչև քանի՞սը կարող ես հաշվել դու:

— Մինչև քսանը,— հպարտացավ տղան:

— Իսկ գիտե՞ս, թե ինչ կա դրանից հետո:

— Ոչ, տատիկ: Ոչ ոք չգիտե:

— Ես գիտեմ: Մի քսանից ավելի շատ է երկու քսանը:

— Դա ես էլ գիտեմ,— հիասթափված արտասանեց Իլեն:— Բայց դա անուն չունի:

— Ինչի՞դ է պետք անունը, Իլե Տրապնա: Դու հաշվիր քսաններով: Կարո՞ղ ես:

— Ինչո՞ւ չէ:

— Որ այդպես է՝ լսիր…

Թեև բնակարանում ոչ ոք չկար՝ բացի նրանից, բայց պառավ Խարունան շրթունքները մոտեցրեց տղայի ականջին և միայն դրանից հետո շշնջաց.

— Քսան անգամ քսան՝ առանց քսանի և տասնհինգի…

— Քսան անգամ քսան՝ առանց քսանի և տասնհինգի,— կրկնեց Իլեն:

— Երեք տարի այդպես կլինի հաշիվը,— հայտնեց Խարունան,— իսկ չորրորդ տարին՝ քսան անգամ քսան՝ առանց քսանի և՛ տասնչորսի... Կրկնիր:

Իլեն կրկնեց նաև այդ թիվը՝ հուզմունքից հազիվ արտասանելով բառերը:

— Այս տարի հենց այդ չորրորդ տարին է,— ասաց պառավը,— դրա համար էլ դու մի օրը պակաս ես հաշվել: Այս անգամ Ակիրսն այլևս չի կարողանա խլել հաշիվը քեզանից: Եվ պետք էլ չեն քեզ ձկան գլուխները: Քո ձեռքերի և ոտքերի վրա կան ճիշտ քսան մատներ: Վերցրու մի փոկի կտոր և կապիր մի մատիդ, իսկ հետևյալ օրը փոխադրիր մյուս մատիդ վրա: Երբ որ լրանան բոլոր քսան մատներդ, դու մի ուրիշ փոկ կապիր թևիդ: Երկրորդ քսանից հետո թևիդ վրա կապիր երկրորդ փոկը և այդպես շարունակ՝ մինչև տասնութերորդը: Դրանից հետո հաշվիր էլի հինգ օր, իսկ չորրորդ տարում՝ վեց օր, և դա կլինի Վերջին Ձկնագլխի Օրը…

Հաշիվն այնքան պարզ էր և դրա պահելն այնքան հեշտ, որ Իլեն խոր շունչ քաշեց հիացմունքից: Եվ ոչ ոք այլևս չէր կարողանա խլել հաշիվը նրանից:

Իլեն անթափանց խավարի մեջ երախտագիտությամբ նայեց պառավ Խարունայի կողմը և նորից բռնելով նրա ձեռքը, համբուրեց:

— Իսկ հիմա գնա, որպեսզի չուշանաս,— ասաց Խարունան:— Այսինքն՝ չես ուշանա, բայց շուտ գնա, որ դանդաղ քայլես և շատ չհոգնես: Իսկ այնտեղից վերադարձիր արագ, որքան կարող ես՝ արագ: Գնալուց առաջ ճարպ քսիր դեմքիդ ու ձեռքերիդ: Դե, բարի ճանապարհ քեզ, Իլե Տրապնա, թող արև լինի քո հոգում և այդ արևը տաքացնի քեզ ճանապարհին...

Իլեն հրաժեշտ տվեց պառավին և դուրս նետվեց նրա բնակարանից:

Օրը, ձմեռվա բոլոր օրերի նման, դարձյալ ամպամած էր, բայց նախորդ օրվանից ավելի տաք: Երեխաներից շատերը, քնից արդեն կշտացած, դուրս էին ելել խաղալու իրենց հավիտենական, վաղուց արդեն բոլորին ձանձրացրած ձնագնդին: Եվ նրանցից ոչ ոք դեռ չգիտեր, թե ինչ ուրախ նորություն էր բերում նրանց համար Իլեն: Ճիշտ է, ծնողներն այսօր տանն են, բայց նրանց մտքով էլ չի անցնում, թե երեխաներն այսօր ևս կարող են գնալ դեպի Չհալչող Սառցե Տունը: Իլեն հեշտությամբ կհավաքի նրանցից ամենաառողջներին ու դիմացկուններին և...

Իլեն տեսավ Տովեսին:

— Տովես,— բացականչեց նա ուրախ,— եկ տես ինչ եմ հայտնելու քեզ…

Բայց Տովեսը շուռ տվեց երեսը նրանից և հեռացավ: Իլեի ժպիտը սառեց դեմքի վրա: Տովեսը չէր էլ ուզում խոսել նրա հետ…

Իլեն տեսավ Վինզային՝ ուրիշ երեխաների հետ խաղ անելիս, բայց երբ կանչեց նրան, նա նույնիսկ չնայեց Իլեի կողմը:

Եվ այդպես, բոլոր այն երեխաները, որոնց նա նախորդ օրը տարել էր դեպի Չհալչող Սառցե Տունը, հանդիպելով նրան, կամ երեսներն էին շուռ տալիս, կամ նայում էին բարկացած և կամ ծիծաղում էին նրա վրա: Իլեի տրամադրությունը չափազանց ընկավ: Ոչ ոք այլևս չէր հավատում նրան: Երեխաների շրջանակում ունեցած իր հարգանքն ու հեղինակությունը նա կորցրել էր միանգամից...

«Հարկավոր է իսկույն գտնել Նուրիսին»,— մտածեց Իլեն: Ճիշտ է, աղջիկը նույնպես, երեկ բարկացած էր նրա վրա, բայց նա երբեք չի հրաժարվի իր ընկերոջից, երես չի դարձնի նրանից, Իլեն համոզված է դրանում:

— Է՛յ, Իլե, արջ,— լսեց նա հանկարծ Չինտամի ձայնը,— դու սպասիր, ես քեզ հետ կտեսնեմ իմ հաշիվը: Դու ի՞նչ իրավունք ունեիր երեկ բռնի կերպով տանելու ինձ քեզ հետ: Շնորհակալ եղիր, որ հայրս կենդանի թողեց քեզ…

Իլեն արհամարհանքով նայեց նրան և անցավ՝ առանց պատասխանելու:

Նուրիսին նա տեսավ Գիվերայի հետ դանդաղ քայլելիս: Գիվերան ինչ-որ բան էր պատմում ընկերուհուն և ցույց էր տալիս իր ձախ ձեռքը, որի մատները ցրտահար էին եղել և այժմ, ձեռնոցի մեջ, փաթաթված էին մորթու կտորով:

— Նուրիս,— ձայն տվեց Իլեն,— եկ, բան եմ ասում... Գիվերան հանդիմանական հայացքով նայեց Իլեին և հեռացավ, իսկ Նուրիսը, դեմքի սառը արտահայտությամբ, մոտեցավ ընկերոջը:

— Նուրիս,— շշնջաց Իլեն ուրախ ձայնով,— ես իմացա, Վերջին Ձկնագլխի Օրը ոչ թե երեկ էր, այլ այսօր…

— Իլե Տրապնա,— ասաց Նուրիսը տխուր,— դու հիվանդ ես, իզուր ես դուրս եկել տնից:

— Ոչ, ոչ, Նուրիս, ես բոլորովին առողջ եմ: Դու ինչո՞ւ չես ուրախանում, որ մենք բաց չենք թողել Գույնզգույն Թագավորությունը և կտեսնենք այսօր…

— Նուրիսը ձեռքը դրեց նրա ձեռքի վրա:

— Գնա տուն, Իլե Տրապնա: Եվ աշխատիր գլխիցդ դուրս հանել Գույնզգույն Թագավորությունը, որը հեքիաթ է: Բոլոր երեխաները զայրացած են քեզ վրա, Գիվերան նույնիսկ ասաց, որ այլևս երբեք չի խոսելու քեզ հետ: Բայց ես, Իլե, չեմ հեռանում քեզանից: Մենք էլի միշտ կլինենք իրար հետ, կգնանք միասին խաղ անելու, Խարունա տատի հեքիաթները լսելու: Միայն թե, խնդրում եմ, մոռացիր Գույնզգույն Թագավորությունը: Այսինքն՝ ոչ թե մոռացիր, այլ հասկացիր, որ դա հեքիաթ է:

— Ուրեմն դու չե՞ս հավատում,— մռայլ հարցրեց Իլեն:— Եվ այսօր չե՞ս գալու ինձ հետ…

— Ո՞ւր,— ապշեց Նուրիսը:

— Դեպի Չհալչող Սառցե Տունը:

Նուրիսը նույնիսկ ետ քաշվեց նրանից՝ նայելով վախեցած, կարծելով, թե իր ընկերը խելագարվել է կամ զառանցում է:

— Գնա տուն,— շշնջաց նա նորից,— գնա քնիր, Իլե Տրապնա, և դա կանցնի:

— Ես գնում եմ դեպի Չհալչող Սառցե Տունը,— զայրացած ասաց Իլեն:

— Չհամարձակվես այդպիսի բան անել,— ասաց Նուրիսը,— թե չէ իսկույն կգնամ, կհայտնեմ հորդ:

Հո՞րը... Իլեի դեմքը պայծառացավ: Ահա թե ով կհավատա նրան, ահա թե ով կգա նրա հետ... Թող հրաժարվեն նրանից բոլորը, նույնիսկ Նուրիսը, բայց հայրը կհավատա և կուրախանա, որ Իլեն նորից գտել է հաշիվը…

— Ես ինքս կհայտնեմ հորս,— ասաց Իլեն ընկերուհուն, և թողնելով նրան, վազեց տուն:

Կնանտը տանն էր: Մտնելով տոպրակի մեջ, նա պատրաստվում էր քնել մինչև երեկո և ապա, երեկոյան, քնել մինչև առավոտ: Չէ՞ որ ամբողջ նախորդ գիշերը նա չէր քնել:

— Հայրիկ,— բացականչեց որդին՝ դեռ միջանցքից,— լսիր, թե ինչ եմ ասելու քեզ Վերջին Ձկնագլխի Օրվա մասին...

Հայրը լուռ վեր կացավ, նստեց, ձեռքով դեպի իրեն ձգեց Իլեին, վար առավ գլխարկը նրա գլխից և ուժեղ ոլորեց նրա ականջը:

— Եթե չմոռանաս Վերջին Ձկնագլխի Օրը,— ասաց նա միաժամանակ,— ես քեզ այնքան կծեծեմ, որ քսան օր վեր չկենաս տեղիցդ:

Եվ հրելով նրան իրենից մի կողմ, պառկեց քնելու…

— Պառկիր դու էլ: Եվ քնիր: Շո՛ւտ…

Իլեն պառկեց: Նա հազիվ էր զսպում արցունքները, բայց ոչ թե ականջի ցավից, այլ վիրավորանքից:

Երբ քիչ հետո Կնանտի հանդարտ շնչառությունից Իլեն հասկացավ, որ հայրը քնած է, նա վեր կացավ և անշշուկ, սողաց միջանցք, վերցրեց այնտեղից մի ձուկ, ճարպ քսեց դեմքին և, դուրս գալով տնից, բռնեց Չհալչող Սառցե Տան ուղղությունը:

ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Իլեն արագ քայլերով հեռացավ Կատպիսից, բայց երբ վերջին տնակը ծածկվեց հորիզոնի ետևում, նա դանդաղեցրեց քայլերը՝ չհոգնելու համար՝ ինչպես խորհուրդ էր տվել պառավ Խարունան: Անսահման ուրախությունը պաշարել էր նրա հոգին, և նա հեշտությամբ էր ետ վանում իրենից տխուր տրամադրությունը: Իսկ տխուր լինելու նա շատ հիմքեր ուներ: Նախորդ օրվա անհաջողությունը, երեխաների ատելությունը նրա հանդեպ, նրա մտերիմ ընկերուհի Նուրիսի թերահավատությունը, հոր բարկությունը և, վերջապես, այն, որ նա այսօր մենակ է անցնում այդ ահագին ճանապարհը: Ի՞նչ վատ է մենակությունը... Մենակություն նրա հոգում և մենակություն նրա շուրջը…

Իլեն հիշեց, թե ինչպես նախորդ օրը, չնայած ճանապարհի դժվարություններին, խոր ձյանը, բուքին, սառնամանիքին, երեխաները կարողացան ողջ-առողջ գնալ ու վերադառնալ, որովհետև նրանք շատ էին, խմբովին: Իսկ եթե Իլեն այսօր հոգնի և նստի, ոչ ոք չկա, որ լծվի և քաշի նրան: Իսկ եթե անդիմադրելի կերպով ուզենա քնել, ոչ ոք չկա, որ ցնցի նրան, հարվածի, փրկի մահից... Ուրեմն հարկավոր է չհոգնել, չնստել և չքնել...

Ամբողջ ճանապարհին Իլեն անդադար փորձում էր պատկերացնել իր աչքի առաջ այն ամենը, ինչ որ տեսնելու էր: Բայց ինչպե՞ս կարելի է պատկերացնել մի բան, որի նման ուրիշ որևէ բան երբեք չես տեսել կյանքում: Նա նույնիսկ չէր կարողանում որոշել՝ մի՞րգն է կարմիր, իսկ պտուղը դեղին, թե՞ ընդհակառակը: Եվ ընդհանրապես, ի՞նչ է միրգը և ի՞նչ է պտուղը... Իսկ կծուի և քաղցրի մասին խոսելն անգամ ավելորդ էր…

Երկար, շատ երկար քայլեց Իլեն: Երեխաների երեկվա ոտնահետքերից ոչինչ չէր մնացել ձյան վրա, ամեն ինչ ծածկվել էր նոր ձյունով: Իլեի ոտքերը թաղվում էին ձյան մեջ, նա դժվարությամբ էր քայլում և երբ ուզում էր մի նոր քայլ անել և լայն զցում էր ոտքը, նոր ձյունը փոշու նման սորում էր նրա ոտքի տակից և քայլն ստացվում էր շատ փոքրիկ: Դիմացը, որքան կտրում էր նրա աչքը, փռված էր ամայի տարածությունը: Ե՞րբ էր տեղ հասնելու՝ քայլելով այդպես տոտիկ-տոտիկ…

Լավ էր, որ ոչ քամի կար, ոչ բուք: Բայց Իլեն զգում էր, որ շուրջը ցուրտ է, շատ ցուրտ: Բավական է, որ նա կանգ առնի, որպեսզի իսկույն զգա սառնամանիքը: Ուստի և նա կանգ չէր առնում, քայլում էր

անդադար, բայց ոչ շատ արագ, որպեսզի միաժամանակ թե կտրի տարածությունը և թե հանգստանա...

Ամբողջ օրը քայլեց Իլեն այդպես և չնկատեց, թե երբ մթնեց: Երբ նա զարմացած նայեց շուրջը փռված խիտ մթությանը, նա չհավատաց, որ օրն արդեն անցել է, և ինքը, ըստ երևույթին, կտրել է ճանապարհի կեսը, եթե ոչ ավելին:

Առանց քայլերն ընդհատելու, Իլեն կերավ իր ձկան կեսը և իրեն նորից զգաց առույգ: Արագացրեց քայլերը: Նա աշխատում էր չմտածել Կատպիսի բնակարանների մասին, որտեղ հիմա լույս է և տաք, երեխաներն ու մեծերը տոպրակներում պառկած զրույց են անում կամ արդեն քնել են…

Իլեն զգում էր, որ որքան մտածեր Կատպիսի մասին, այնքան պիտի գեղեցիկ ու հաճելի թվար Կատպիսը նրան և այնքան պիտի նա զղջար այնտեղից հեռացած լինելու համար: Ընդհակառակը, նա շարունակ մտածում էր այն ամենի մասին, ինչ որ սպասում էր նրան առջևում: Ու թեև նա չէր պատկերացնում ոչինչ, բայց համոզված էր, որ տեսնելու էր Կատպիսի բնակարաններից շատ և շատ ավելի լավ մի բան…

Կեսգիշերին մոտ Իլեն հանկարծ նկատեց իր դիմաց, հեռվում, շատ հեռվում, մի փոքրիկ, աննշան լույս, կարծես աստղ էր պլպլում երկնքի և երկրի սահմանում, հորիզոնի վրա: Նրա սիրտն սկսեց բաբախել, նա շունչը պահեց, կարծես նրա ուժեղ շնչառությունից այդ հեռավոր կայծը կարող էր հանգչել: Բայց նա այլևս չէր անհետանում:

— Չհալչող Սառցե Տունը,— բացականչեց Իլեն անպատմելի ուրախությամբ: Ուրեմն ճիշտ է, ուրեմն նա այսօր տեսնելու է Գույնզգույն Թագավորությունը…

Լույսը, որ երևում էր դեղին՝ ինչպես աստղերի ցոլքը, հանկարծ միանգամից դարձավ արյան պես կարմիր: Հիացմունքի մի ճիչ թռավ Իլեի բերանից: Կարմիր, խիստ կարմիր լույս... Այդպիսի գեղեցիկ բան նա չի տեսել երբեք...

Դեռ չէր կատարել Իլեն հարյուր քայլ, երբ կարմիր լույսը, նույնքան հանկարծ, դարձավ կանաչ:

— Գույնզգույն Թագավորությունը...— խելահեղ ուրախությամբ բղավեց Իլեն, բայց նրա ձայնը ոչ ոք չլսեց շրջապատի ամայության մեջ:

Դիմացի լույսն այժմ բավական մեծ էր: Տեսողությունը լարելով, Իլեն նկատեց, որ լույսի կանաչությունը մի պահ կիսեց ինչ-որ սև կերպարանք,— երևի մարդ անցավ դրա առջևով:

Քիչ հետո լույսը դարձավ կապույտ՝ ինչպես անամպ երկինքն է լինում արևի ծագելուց առաջ կամ մայր մտնելուց հետո: Ապա նա դարձավ վարդագույն. այդ գույնի լինում են ամպի փոքրիկ պատառները վերջալույսի ժամանակ: Եվ ապա նորից, գիշերվա անթափանց մթության մեջ, ջերմ փայլեց մուգ կարմիր լույսը…

Եվ այդպես, մինչև Իլեի մոտենալը Չհալչող Սառցե Տանը, լույսը փոփոխվեց բազմաթիվ անգամներ: Այժմ դա աստղի չափ փոքր չէր և ոչ էլ նույնիսկ արջագանգի ճրագի պես բավականաչափ մեծ: Այժմ Իլեի դիմաց փայլում էր մի շատ մեծ, կիսագնդաձև տարածություն: Իլեն արդեն մոտիկ էր, շատ մոտիկ, բայց դարձյալ չէր կարողանում հասկանալ, թե որտեղ է այդ լույսի աղբյուրը և ինչ լույս է դա՝ այդքան շլացուցիչ: Այժմ նա տեսնում էր երկու մարդկանց, որոնք զբաղված էին ինչ-որ բանով, երևի հենց այդ լույսով, բայց նրանք հանկարծ անհետացան՝ իրենց ետևից թողնելով նորից դեղին լույս, որն այլևս չփոխվեց ուրիշ գույնի:

Թեև Իլեն քայլում էր շատ արագ, բայց այժմ դա նրան թվաց դանդաղ: Նա սկսեց վազել: Վազելիս, ըստ սովորության նա նայում էր ոչ թե առաջ, այլ իր ոտքերի տակ, թեև ոչինչ չէր տեսնում այնտեղ: Քիչ հետո, սակայն, նա սկսեց աղոտ տեսնել ձյունը, իր ոտքերը: Նրա շունչն արդեն կտրվում էր, բայց նա շարունակում էր վազել նույն թափով: Եվ հանկարծ նա ուժեղ խփվեց ինչ-որ կոշտ բանի և ետ նետվեց՝ հարվածից շշված: Մի պահ նրան թվաց, թե նախորդ օրվա նման նա խփվեց Չհալչող Սառցե Տան պատին: Բայց երբ բարձրացրեց իր աչքերը և նայեց, նա իր առջև չտեսավ ոչ մի պատ: Չհալչող Սառցե Տունն ամեն կողմից բաց էր և նրա ու Իլեի միջև չկար ոչ մի արգելք: Բայց տղան նույնիսկ ժամանակ չունեցավ զարմանալու: Նրա դիմաց գտնվում էր սքանչելի Գույնզգույն Թագավորությունը…

Տան կենտրոնում, մի խաչաձև պատվանդանի վրա, կանգնել էր մի հսկայական ռումամ՝ կանաչ գույնի: Ըստ երևույթին դա էր ծառը, որի մասին պատմել էր Խարունան: Ծառի ճյուղերը ներքևում լայն տարածվել էին ամեն կողմ, իսկ ներքևից վերև հետզհետե կարճանում էին ու նեղանում, իսկ ամենավերևում ծառը վերջանում էր երկնքից իջած մի հրաշալի աստղով: Ամբողջ ծառը, վերևից մինչև ներքև, շողշողում և պսպղում էր այնքան ու այնքան գույնզգույն, մեծ ու փոքր, զանազան ձևի ու գույնի առարկաներով, որ Իլեի աչքերը շլացան, և նա երկար ժամանակ չէր կարողանում նկատել ոչ մի առանձին առարկա, այլ տեսնում էր այդ բոլորը միասին: Ո՛չ, նույնիսկ երազի մեջ Իլե Տրապնան չէր տեսել դրա նման որևէ բան: Չէ՞ որ երազները գոյանում են այն ամենից, ինչ որ մարդը տեսնում է կյանքում: Իսկ ի՞նչ էր տեսել Իլեն՝ բացի սառած ձկներից և սպանված արջերից, ձյունից և ամպերից, սառցե մութ տներից և արջագանգ-ճրագներից…

Սիրտ առած այն բանից, որ Չհալչող Սառցե Տանը ոչ ոք չկար, Իլեն ուզեց ավելի մոտենալ ծառին: Բայց նա դեռ չէր ավարտել իր առաջին քայլը, երբ նորից խփվեց ինչ-որ արգելքի և ապշած կանգ առավ: Ի՞նչ կա իր դիմաց, երբ ոչինչ չկա… Նա առաջ մեկնեց իր ձեռքը: Ձեռքը դեմ առավ արգելքին: Եվ հանկարծ Իլեն նկատեց, որ այդ արգելքը, ջրից էլ ավելի թափանցիկ, մի լայն և բարձր գմբեթի ձևով շրջապատել և ծածկել է Չհալչող Սառցե Տունը... Ոչ, Իլեն չէր կարող մտնել այնտեղ: Նրա և տան միջև կանգնած էր այն արգելքը, որը, Խարունայի ասածով, կոչվում էր ապակի... Իլեն չէր կարողանում հավատալ իր աչքերին, չէր կարողանում համոզվել, որ համարյա աներևույթ այդ նյութը, թափանցիկ ոչինչը, որը կոչվում է ապակի, իսկապես գոյություն ունի և խանգարում է նրան՝ մոտենալ:

Դե ի՞նչ, հարկավոր է ամեն ինչ դիտել այն տեղից, որտեղ կանգնած է նա:

Ծառի վրա, ճյուղից ճյուղ, ձգվել էին և ամեն ինչ ցանցել ոսկեգույն և արծաթագույն ինչ-որ թելեր, որոնք պսպղում էին արևի կամ լուսնի չհալչող ճառագայթների պես: Ճյուղերի վրա ամրացված էին մատի պես բարակ ու երկար ինչ-որ սպիտակ բաներ, որոնց ծայրերին լույս էր վառվում: Այնքան շատ էին այդ լույսերը, որ անհնար էր դրանք հաշվել: Դրանք ամեն տեղ էին՝ վերևում, ներքևում, մեջտեղում, Իլեի աչքերի առաջ, ճյուղերի արանքներից երևում էին նաև ուրիշ այդպիսի բազմաթիվ լույսեր, որոնք վառվում էին ծառի մյուս կողմերում:

Ճյուղերի վրա ամրացված կամ կախված էին կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, ոսկեգույն, արծաթագույն և էլի բազմաթիվ ուրիշ գույների առարկաներ՝ կլոր, երկարավուն, տափակ, ուռուցիկ, փոս-փոս, օղակաձև, նկարազարդ, խայտաբղետ... Կախված էին շատ փոքրիկ աղջիկներ, ըստ երևույթին՝ ոչ իսկական, որոնց վրա կային ամպի կամ ավելի ճիշտ՝ մառախուղի պես բարակ և թափանցիկ զգեստներ: Նրանց թևերն արմունկներից հետ և ոտքերը ծնկներից հետ մերկ էին: Ինչպե՞ս չէին մրսում նրանք: Ասենք, նրանք իսկական աղջիկներ չեն: Բայց ի՛նչ գեղեցիկ են նրանք,

ունեն ոսկեգույն մազեր, կապույտ աչքեր, կարմիր շրթունքներ և վարդագույն այտեր: Նրանք ժպտում են երջանիկ:

Ծառի վրա կախված էին նաև փոքրիկ տնակներ՝ ոչ թե սառույցից, այլ ինչ-որ ուրիշ, գույնզգույն նյութերից: Եվ դրանք ոչ թե գմբեթաձև էին, այլ քառանկյունի, և պատերի վրա ունեին անցքեր՝ ըստ երևույթին դուրս նայելու համար, որոնք ծածկված էին չհալչող սառույցով: Ծառի վրա կախված էին նաև... Ինչե՞ր էին կախված: Երևի դրանք էին մրգերն ու պտուղները, որոնց մասին ասում էր Խարունան: Սպասիր, իսկ սա՞ ինչ է...

— Զո՛ւկ,— զարմացած բղավեց Իլեն:

Ծառի վրա, բազմաթիվ այլ առարկաների միջև, կախված էր նաև մի շատ փոքրիկ ձուկ: Բայց ի՜նչ գեղեցիկ էր դա... Իլեն երբեք, նույնիսկ երազի մեջ, չէր տեսել այդպիսի ձուկ: Նա ոսկեգույն էր և այնպես էր փայլում, կարծես արև էր կուլ տվել: Ահա էլի մի ձուկ, այս անգամ արդեն արծաթագույն... Իսկ ինչո՞ւ Կատպիսի բնակիչները երբեք չէին որսում այդպիսի ձկնիկներ...

Աչքերն ազահաբար շուռ տալով ծառի մի մասից մյուսը և նկատելով նորանոր առարկաներ, հանկարծ Իլեն նորից բղավեց.

— Ա՛րջ…

Ծառից կախված էր մի սպիտակ արջ, այնքան փոքր ու գեղեցիկ, որ ոչ միայն սարսափելի չէր, այլև ուղղակի բարի ու զվարթ: Իսկ ա՞յս ինչ է: Նորից արջ, բայց արդեն սև: Ահա և գորշ, ահա նաև դարչնագույն...

Իլեն ծառի վրա հետզհետե նկատեց նաև այնպիսի կենդանիներ, որոնցից ոչ մեկի մասին գաղափար չուներ: Երևի դրանց մեջ կային նաև եղջերուներ ու շներ, որոնց մասին ասել էր Խարունան: Դրանք բոլորն ունեին գույնզգույն աչքեր, ծիծաղելի ականջներ և դնչիկներ:

Իլեն չէր զգում ոչ սառնամանիքն իր շուրջը, ոչ ձյունը, որն սկսել էր գալ խոշոր փաթիլներով: Նա կլանված, տարված, ամեն ինչ մոռացած, նայում էր իր առջև կանգնած իսկական հեքիաթին՝ Գույնզգույն Թագավորությանը: Նա շուտ-շուտ գլուխն էր բռնում զարմանքից: Մի՞թե սուտ չէ այս բոլորը: Գուցե նա տանը պառկած երա՞զ է տեսնում և հիմա կարթնանա՞... Բայց ոչ, ամեն ինչ իրական էր…

Վերջապես Իլեն կարողացավ աչքերը մի պահ կտրել ծառից և նայել հատակին: Հատակն ըստ երևույթին և այն նյութից չէր, որը կոչվում է հող, որովհետև սև չէր, այլ կարմիր: Նա համարյա ամբողջովին ծածկված էր չափազանց գեղեցիկ ինչ-որ ծածկոցով, որը ոչնչով նման չէր արջի մորթու, որովհետև ոչ սպիտակ էր և ոչ էլ այնքան բրդոտ: Դա գույնզգույն մի ծածկոց էր, որի վրա կային մեծ ու փոքր բազմաթիվ նախշեր: Բաց էր մնացել հատակի միայն այն մասը, որը գտնվում էր Իլեի համարյա ոտքերի տակ: Եվ ահա հանկարծ հատակի այդ մասը, քառակուսի ձևով, շարժվեց, վեր բարձրացավ՝ բաց անելով դեպի գետնի տակ տանող մի անցք, որտեղից նույնպես, ուժեղ լույս էր ժայթքում: Այդտեղից երևաց բարձրացող մի մարդու գլուխ: Իլեն վախեցած ետ նետվեց ապակե պատից:

Մարդը դուրս եկավ և կանգնեց հատակի վրա: Մի՞թե դա էր Տավա Նեման... Չէ՞ որ հայրը պատմել էր, որ նա գեր մարդ է, իսկ սա նիհար էր, բարձրահասակ, սպիտակած մազերով: Նա հագել էր ինչ-որ անծանոթ նյութից կարած մուգ, համարյա սև հագուստ: Ըստ երևույթին դա մորթե հագուստների չափ հաստ չէր, որովհետև մարդու մարմնի գծերը չէին կորել դրա մեջ, այլ երևում էին, կարծես

մարդը մերկ լիներ: Իսկ նրա ձեռքերն իրոք որ մերկ էին, գլուխը բաց էր: Մի՞թե տան ներսում այնքան տաք է, որ մարդը չի մրսում…

Գետնի տակից դուրս ելավ նաև մի ուրիշ մարդ՝ առաջինին բավական նման: Դա ևս, անշուշտ, Տավա Նեման չէր: Ուրեմն մարդիկ շատ են գետնի տակ…

Բայց ահա, դուրս ելավ նաև երրորդ մարդը: Նա արդեն, նման չէր առաջին երկուսին: Նա ցածրահասակ էր և այնքան հաստ, որ կարծես արջի մորթուց կարած երկու հագուստ էր հագել իրար վրա: Բայց Իլեն հասկացավ, որ դա հագուստ չէր, այլ նրա խիստ գեր մարմինը: Ուրեմն դա էր Տավա Նեման...

Տավա Նեմայի դեմքը շատ դաժան էր և տգեղ: Մյուս երկուսն ըստ երևույթին վախենում էին նրանից և ենթարկվում էին նրան: Ձեռքերի շարժումներով նրանք սկսեցին ցույց տալ ծառի զանազան մասերն ու վրան կախված կամ ամրացված առարկաները, և ինչ-որ բաներ բացատրել: Ի՞նչ էին ասում նրանք, ի՞նչ լեզվով էին խոսում՝ Իլեն չէր կարող ասել, որովհետև նա այդ բոպեին մեծ զարմանքով նկատեց ապակու մի նոր հատկությունը: Թեև դա թափանցիկ էր, բայց դուրս չէր թողնում ոչ մի ձայն, ոչ մի հնչյուն…

Տավա Նեման, առանց նայելու այն մյուս երկուսին և նույնիսկ առանց լսելու նրանց, ինքն սկսեց զննել ծառն ամեն կողմից: Մատով ցույց տալով մի քանի ճյուղեր, նա ինչ-որ բան կարգադրեց: Մարդիկ իսկույն սուզվեցին գետնի տակ և վերադարձան՝ բերելով նորանոր գեղեցիկ առարկաներ, որոնք սկսեցին կախել ճյուղերից, կարծես ծառն առանց այն էլ վերևից ներքև խիտ զարդարված չէր քսան անգամ քսան և էլի այդքան առարկաներով…

Այս անգամ Տավա Նեման գոհ մնաց, բայց արեց մի նոր կարգադրություն: Նիհար մարդկանցից մեկը նորից մտավ գետնի տակ և դրանից անմիջապես հետո Չհալչող Սառցե Տան լույսը դարձավ կարմիր, իսկ հետո նաև կապույտ: Այժմ Իլեն նկատեց, թե ինչից էր փոփոխվում լույսը: Հատակի վրա, ապակե պատերի տակ, խիտ շարված էին բռունցքի մեծության ինչ-որ կլոր առարկաներ՝ գույնզգույն սառույցից սարքված: Դրանք օղակել էին ամբողջ տունը: Երբ միանգամից վառվում էին բոլոր կարմիր առարկաները՝ տունը դառնում էր կարմիր, իսկ երբ վառվում էին կապույտները՝ դառնում էր կապույտ:

Տավա Նեման լուռ և առանց ժպիտի հաստատական շարժումներ էր անում գլխով, ուրեմն գոհ էր: Իսկ լույսը շարունակ փոխվում և փոխվում էր Չհալչող Սառցե Տանը: Ծառի վրայի անթիվ-անհամար դեղին լույսերը դրա տակ իրենք էլ էին փոխում իրենց գույնը: Իրենց գույնը փոխում էին նաև ծառի վրայի բոլոր գեղեցիկ, սքանչելի առարկաները:

Վերջապես Տավա Նեման ավարտեց իր զննումը և նորից իջավ գետնի տակ: Նրա ետևից իջավ նաև նրան ենթակա մարդը:

Օգտվելով նրանց բացակայությունից, Իլեն նորից մոտեցավ չհալչող սառցե պատին՝ ստուգելու համար, թե իրո՞ք չհալչող է դա: Նա ձեռքը դրեց պատին: Պատը չոր էր և նույնիսկ մի քիչ տաք: Իլեն ձեռքը պահեց բավական ժամանակ, բայց պատը չէր հալչում: Իլեն հանեց լեզուն և լեզվի ծայրը մոտեցրեց ապակուն: Ոչ, լեզվի տակ նույնպես, պատը չէր հալչում:

Իսկ ձյունը գալիս էր շուրջն ամեն տեղ՝ որքան որ դա կարելի էր տեսնել լույսի տակ: Երևի նա գալիս էր այժմ ամբողջ Սպիտակ Թագավորության վրա: Նա իր փաթիլներով ծածկում էր Իլեի գլուխը, ուսերը, դեմքը: Բայց նա կարծես չէր գալիս Չհալչող Սառցե Տան վրա: Այսինքն՝ գալիս էր,

բայց հասնելով ապակուն, անհետանում էր աչքից և Իլեն չէր կարողանում ասել, թե ուր էին կորչում ձնահատիկները: Եթե հալչում էին նրանք, ապա ինչո՞ւ ջուր չէր լինում:

Ի՜նչ գեղեցիկ է Գույնզգույն Թագավորությունը, ի՜նչ երջանիկ... Ձյունն իջնում է ամեն տեղ, ամեն տեղ, իսկ նրա մեջ չի թափանցում և ոչ մի ձնահատիկ: Գալիս են դրանք, իջնում ապակու վրա և անհետանում, իջնում և անհետանում... Իսկ ապակուց բարձրանում է հազիվ նկատելի մի ծուխ, թե՞ գոլորշի... Ուրեմն գոլորշիանում են ձնահատիկները, ուրեմն իրոք որ տաք է չհալչող սառույցը, տաք է և չի հալչում... Եվ դա հեքիաթ չէ, և Իլեն տեսնում է դա իր աչքերով... Իսկ մեծերը, որոնք գալիս են այստեղ ամեն տաս-տասնհինգ օրը մեկ, այնքան են վարժվել դրան, որ չեն էլ զարմանում: Ինչպե՞ս կարելի է վարժվել, չզարմանալ…

Հատակի վրայի դռնակը նորից շարժվեց: Իլեն նորից մի բնազդական շարժում արեց՝ ետ նետվելու համար, բայց և իսկույն հիշեց, որ ինքն անվտանգ վիճակումն է, ոչ ոք չի կարող ոչինչ անել նրան ապակու միջով: Նա նայեց հատակի քառակուսի անցքին և հիացմունքի մի բացականչություն դուրս թռավ նրա կրծքից: Գետնի տակից սկսեցին դուրս գալ երեխաներ՝ տղա, աղջիկ, փոքր, մեծ... Իլեին թվաց, թե դրանք ծառի վրա կախված ոչ իսկական երեխաներ էին, որ մեծացած և կենդանացած, այժմ դուրս էին գալիս գետնի տակից: Աղջիկները հագել էին այնպիսի նուրբ, թափանցիկ հագուստներ, կարծես նրանց մարմինը պատած էր բարակ մառախուղով: Նրանց մազերը նույնպես ոսկեգույն էին, գանգուր, օղակ-օղակ: Նրանց գլխների կամ հյուսերի վրա կային գույնզգույն ժապավեններ՝ պատրաստված ինչ-որ անծանոթ, փայլուն նյութից:

Տղաները հագել էին սպիտակ հագուստներ, որ պսպղում էին՝ ինչպես ձյունն արևի տակ: Կային և այնպիսիները, որոնք հագել էին երկնքի նման կապույտ հագուստներ, որոնց վրա շաղ էին եկել ոսկեգույն աստղեր: Ահա նորից աղջիկներ՝ ամեն մեկը տարբեր գույնի հագուստներով, ահա տղաներ, որոնք հագել էին... Բայց մի՞թե կարելի էր մեկառմեկ դիտել, թե ինչ էին հագել տղաներն ու աղջիկները: Գույնզգույն հեղեղի պես նրանք դուրս էին հորդում գետնի տակից և կարծես վերջ չէր լինելու նրանց: Եվ նրանցից յուրաքանչյուրը, հայտնվելով գետնի տակից, մի պահ կանգ էր առնում, հիացած նայում էր ծառին և ծափ էր տալիս:

Վերջապես երեխաների հոսանքն ավարտվեց, և այժմ գետնի տակից սկսեցին դուրս գալ մեծահասակ մարդիկ: Առաջինը դուրս ելավ Տավա Նեման: Նրա ետևից՝ մի կին, ապա ուրիշ տղամարդիկ և կանայք: Նրանք նույնպես, մանավանդ՝ կանայք, հագել էին շատ գեղեցիկ հագուստներ: Նրանց ոսկեգույն մազերի մեջ, պարանոցի, կրծքի, թևերի, մատների վրա, աչք կուրացնելու չափ պսպղում էին ինչ-որ չհալչող կաթիլներ: Դրանք արձակում էին գույնզգույն սուր ճառագայթներ, որոնք կնոջ յուրաքանչյուր շարժման ժամանակ շատանում էին կամ քչանում, փոփոխում էին իրենց գույները, անընդհատ կայծկլտում…

Տղամարդկանց հագուստը մեծ մասամբ սև էր կամ որևէ ուրիշ մուգ գույնի, որը խիստ դուր էր գալիս ձյան սպիտակությունից հոգնած Իլեի աչքերին: Ուռած փորերով կամ բոլորովին առանց փորի, բեղերով կամ առանց բեղերի, հաճախ չար դեմքերով, որոնք սակայն ժպտում էին կանանց հետ խոսելիս, նրանք իրենց մատների արանքներում բռնել էին ինչ-որ երկար, կլոր, սպիտակ բաներ, որոնց ծայրերին կրակ կար: Նրանք այդ առարկաների մյուս ծայրերը դնում էին իրենց բերանը և ծծում, որից կրակն ավելի էր բորբոքվում, իսկ մարդկանց բերանից ծուխ էր դուրս գալիս: Իլեին խիստ զարմացնում էր այն, որ ծուխը մի տեղից էր ելնում, իսկ կրակը՝ մի այլ տեղից, մինչդեռ արջագանգից սարքված ճրագներում դրանք երկուսն էլ միասին էին: Գույնզգույն Թագավորության մեջ ամեն ինչ անծանոթ էր, հետաքրքիր և զարմանալի…

Մեծահասակ մարդիկ կանգնեցին պատերի տակ, իսկ երեխաները, որոնց կարգադրություններ էր անում մի կին, շրջան կազմեցին ծառի շուրջը և սկսեցին պարել: Երեխաները կազմեցին ոչ թե մի շրջան, այլ չորս, իրար մեջ: Երբ առաջին և երրորդ շրջանակը պարելով ու երգելով պտտվում էր աջից ձախ, ապա երկրորդ ու չորրորդ շրջանակները պտտվում էին ձախից աջ: Ապա մի շրջանակի երեխաները բարձրացնում էին թևերը, իսկ նրանց ետևի շրջանակի երեխաները թողնում էին միմյանց ձեռքերը, կռանալով անցնում էին նրանց թևերի տակով և նոր շրջանակ կազմում: Իլեն չէր կարողանում հետևել նրանց բոլոր շարժումներին: Մերթ նա տեսնում էր, որ առաջին և երրորդ շրջանակները կազմված էին միայն աղջիկներից, իսկ երկրորդն ու չորրորդը՝ տղաներից, մերթ բոլոր շրջանակներն անսպասելիորեն դառնում էին խառը՝ տղա-աղջիկ, տղա-աղջիկ... Երբեմն բոլոր երեխաները թողնում էին միմյանց ձեռքերը և պտտվում իրենք իրենց շուրջը, երբեմն կազմում էին բազմաթիվ փոքրիկ շրջանակներ՝ բաղկացած չորսական երեխայից…

Պատերի տակ կանգնած մեծահասակ մարդկանց մի խումբ զբաղված էր ինչ-որ տարօրինակ գործով: Նրանք այնտեղ իրենց ձեռքերում բռնել էին ինչ-որ առարկաներ, որոնց վրա շարժում էին իրենց մատները, իսկ բերանով փչում դրանց անցքերից: Ըստ երևույթին այդ առարկաներից հնչյուններ էին դուրս գալիս, որովհետև խմբի առջևում կանգնած մի մարդ, որը երկու ձեռքերով չափ էր տալիս նրանց, երբեմն ձեռքը դնում էր ականջի ետևը, ուշադիր լսում էր մարդկանցից մեկնումեկի արձակած հնչյունները և կարգադրություն էր անում նշանացի:

Իսկ դրսում, Իլեի շուրջը, անթափանց խավար էր, խիստ ցուրտ, և այդ խավարի ու ցրտի մեջ կանգնել էր իր հեռու բնակավայրից մեն-մենակ կանգնած Իլե Տրապնան: Երկու ձեռքերի ափերն ապակու վրա դրած, դեմքն ապակուն հպած, մոռացած և՛ հոգնություն, և՛ քնելու ցանկություն, մոռացած ամեն ինչ, կլանված նայում էր հեքիաթային, սքանչելի Գույնզգույն Թագավորությանը... Ոչ ոք Չհալչող Սառցե Տնից չէր նկատում նրան, իսկ եթե նույնիսկ նկատում էլ էին, ապա ոչ մի ուշադրություն չէին դարձնում նրա վրա...

Երբ երեխաները կշտացան պարելուց, հանկարծ գետնի տակից բարձրացավ մի նոր մարդ: Իլեն քիչ մնաց բղավեր զարմանքից: Առաջին վայրկյանին նրան թվաց, թե դա Կատպիսի տարիքոտ բնակիչներից մեկն է: Համենայն դեպս նա նույնպես հագել էր սպիտակ հաստ հագուստ, դրել էր սպիտակ գլխարկ: Բայց, իհարկե, նա Կատպիսից չէր, Իլեն իսկույն նկատեց, որ առաջին անգամն է տեսնում նրան, իսկ նրա հագուստն ու գլխարկն սպիտակ արջի մորթուց չէին կարած, այլ ձյունից, որը պսպղում էր լույսի տակ և նույնպես չէր հալչում: Ձնե մարդն ուներ սպիտակ երկար մորուք, կարմիր այտեր ու քիթ, սպիտակ հոնքերի տակից ժպտացող բարի աչքեր: Նա շալակել էր մի մեծ պարկ:

Տեսնելով նրան, երեխաները թողեցին պարելը և ուրախ բացականչություններով հավաքվեցին նրա շուրջը: Ձնե մարդը, ավելի ճիշտ՝ ձնե պապը, վար դրեց պարկը և սկսեց ինչ-որ բան ասել, երևի երգել: Իսկույն երգեցին նաև երեխաները: Ձնե պապն էլի ինչ-որ բան ասաց և դրանից հետո երեխաները ծիծաղեցին: Իլեն տխուր հառաչեց: Ոչ մի բան չի լսվում, ոչ նույնիսկ ամենափոքր մի հնչյուն…

Ձնե պապը մոտեցավ իր մեծ պարկին, բաց արեց այն... Բոլոր երեխաներն այնպես խիտ խռնվեցին նրա շուրջը, որ Իլեն դեռ մի քանի րոպե չէր կարողանում ոչինչ տեսնել: Ապա, մի քիչ շարժվելով տեղից, նա տեսավ:

Ձնե պապը պարկի միջից հանում էր փոքրիկ, թափանցիկ տոպրակներ, երևի փափուկ ապակուց պատրաստած, որոնք լիք-լցված էին ինչ-որ գույնզգույն բաներով, և հերթով տալիս էր երեխաներին: Յուրաքանչյուր երեխա, ստանալով իր տոպրակը, իսկույն բաց էր անում այն, հանում այնտեղի

գույնզգույն առարկաներից մի կամ մի քանի հատ և ուտում: Ի՞նչ ուտելիքներ էին դրանք, ի՞նչ համ ունեն... Եվ մի՞թե կարելի էր ուտել, ոչնչացնել այդպիսի գեղեցիկ առարկաները, որոնց նայելիս նույնիսկ, Իլեի գլուխը պտտվում էր երջանկությունից...

Մինչդեռ երեխաներն զբաղված էին նվերներ ստանալով, հասակավոր մարդկանցից մեկը բաց արեց հատակի դռնակը և ինչ-որ բան բղավեց դեպի ներքև: Ապա հանեց իր վրայի մի հագուստը և դրեց մի կողմ: Մի՞թե այնքան տաք էր Չհալչող Սառցե Տանը, որ նա շոգում էր իր առանց այն էլ բարակ հագուստի մեջ…

Գետնի տակից դուրս ելավ նիհար տղամարդկանցից մեկը, որին Իլեն տեսել էր բոլորից առաջ, իսկ նրա հետ՝ մի երիտասարդ աղջիկ: Մարդը բերում էր գունավոր սառույցից սարքված ինչ-որ նեղ ու բարձր աման: Աղջիկը, մի տափակ առարկայի վրա դրած, բերում էր նույնպես թափանցիկ սառույցից պատրաստված, բայց անգույն շատ ամաններ՝ փոքրիկ, գեղեցիկ:

Նիհար տղամարդը բաց արեց գունավոր ամանը, սկսեց այնտեղից գունավոր ջուր լցնել փոքրիկ ամանների մեջ: Մարդիկ վերցրին դրանք և խմեցին:

Ձնե պապն ավարտեց ուտելիքներ բաժանելը, դատարկ պարկը դրեց մի կողմ և այժմ սկսեց ծառի վրայից վար առնել գեղեցիկ խաղալիքները և նույնպես բաժանել երեխաներին:

Չհալչող Սառցե Տունն ըստ երևույթին դառնում էր ավելի և ավելի տաք, որովհետև տղամարդիկ ու կանայք սկսեցին քրտնել: Տավա Նեման, որ բոլորից ավելի գեր լինելու պատճառով բոլորից ավելի էր քրտնել, ինչ-որ բան ասաց մի մարդու: Այդ մարդը մոտեցավ տան ապակե պատին, կռացավ և գետնի մոտ սկսեց ինչ-որ բան անել պատի վրա: Իլեն հետաքրքրված մոտեցավ նրան:

Մարդը բռնեց ապակե պատի վրա ցցված երկու հաստ և կարճ կոթեր, սկսեց պտտեցնել: Պատի մի փոքրիկ, կլոր կտոր սկսեց պտտվել, պտտվել, ետ-ետ գնալ, և հանկարծ պոկվեց-մնաց մարդու ձեռքերում: Մարդը դա մի կողմ դրեց և հեռացավ: Պատի վրա բացված կլոր անցքով սկսեց ներս խուժել ցուրտ օդը և զովացնել ներսում գտնվողներին: Անշուշտ դա այն անցքն էր, որով Կատպիսի բնակիչները ներս էին լցնում իրենց դառն աշխատանքի վաստակը՝ դրա փոխարեն փոքր փնջերով ռումամ ստանալու համար:

Արդեն բավական ժամանակ էր, ինչ Իլեն դադարել էր մրսելուց, և նրա քունը սարսափելի տանում էր: Նա մտածում էր՝ մի քիչ էլ նայեմ, հետո մի քիչ կքնեմ, իսկ հետո, առավոտյան կողմ, կվերադառնամ տուն... Նա մեծ դժվարությամբ էր զսպում իրեն, որ չքնի հենց հիմա, իսկույն: Նա ափսոսում էր կտրվել Գույնզգույն Թագավորությունից: Բայց որ նա արդեն սառչում էր՝ չէր էլ ենթադրում: Նրա ականջին հասան ինչ-որ հնչյուններ: Մի՞թե դա թվում էր նրան: Գիտակցությունը լարելով, նա հասկացավ, որ հնչյունները լսվում են ապակյա պատի վրա բացված անցքից: «Հարկավոր է մոտենալ»,— մտածեց նա, բայց քունն արդեն հաղթում էր նրան: «Միայն մի փոքր, միայն մի փոքր աչքս կպցնեմ, իսկ հետո կմոտենամ անցքին»,— վճռեց նա և արդեն պատրաստվում էր պառկել ձյան վրա, երբ ինչ-որ հրաշքով հասկացավ, որ նա սառչում է: Հասկացավ և սարսափեց: Այդ սարսափը մի պահ ցրեց նրա անդիմադրելի քունը, բայց և այնպես նա իսկույն նորից զգաց քնելու մի այնպիսի պահանջ, քունը նրան թվաց մի այնպիսի երջանկություն, որպիսին նա չէր զգացել երբեք: «Ոչ, ոչ,— մտածեց տղան,— չպետք է քնել ոչ մի դեպքում, դա մահ է»... Բայց մի ուրիշ ձայն կարծես համոզում էր նրան.— քնել՝ ոչ, բայց մի պահ աչք կպցնել հո կարելի՞ է: Դա էլ հո քուն չէ՞...

Իլեն ցնցվեց բավական ուժեղ մի ցավից: Նա նիրհել էր և ընկել ապակե պատի վրա: Հարվածն սթափեցրեց նրան: Նա նորից լսեց ինչ-որ հնչյուններ: «Հարկավոր է շտապել Կատպիս, ես սառչում եմ»,— մտածեց նա: Բայց և իսկույն պատկերացրեց այն հսկայական ճանապարհը, որը հարկավոր էր կտրել՝ տուն հասնելու համար: «Ոչ, չեմ հասնի,— մտածեց նա,— որքան էլ արագ շարժվեմ, միևնույնն է, արյունն այլևս չի խաղա իմ մարմնի մեջ: Այս գիշեր, ինչպես երևում է, սարսափելի ցուրտ է, թեև ես ոչ մի ցուրտ չեմ զգում...»:

Ուղեղի մի վերջին լարումով Իլեն հասկացավ, որ փրկություն չկա նրա համար: Ուրեմն էլ ինչի՞ հեռանալ՝ սառչելու համար մի քանի տասնյակ քայլ այն կողմ: Նա կմնա այստեղ, կշարունակի նայել Գույնզգույն Թագավորությանը՝ մինչև որ մահը փակի նրա աչքերը: Ոչինչ, ոչինչ, գոնե մեռնելուց առաջ նա երջանիկ եղավ նրանով, որ տեսավ այդ ամենը: Ափսոս, որ նա չի կարողանալու պատմել Նուրիսին և մյուս երեխաներին իր տեսածների մասին, որպեսզի բոլորն իմանան, որ Ակիրսը ստում է և Խարունա տատն իրավացի է, Գույնզգույն Թագավորությունը գոյություն ունի: Իսկ հաշիվը…

Նա հիշեց, որ ոչ ոքի չի հաղորդել հաշիվը: Ուրեմն դա կորչելու է: Խարունա տատն Իլեի մահվանից հետո այլևս ոչ ոքի չի հաղորդի, դա կասկածից վեր է: Նա չի ուզենա խորտակել ուրիշ երեխաների ևս…

Երրորդ անգամ Իլեն լսեց ինչ-որ հնչյուններ: Հարկավոր է մոտենալ պատի անցքին, լսել այդ հնչյունները…

Իլեն, արդեն մշուշված աչքերով, շարժվեց տեղից և հազիվ փոխելով իր ճոճվող ոտքերը, անկանոն քայլերով մոտեցավ անցքին և այլևս գիտակցությունը կորցրած, ամբողջ հասակով ընկավ վար: Այս անգամ նա այլևս ոչ մի ցավ չզգաց, ընդհակառակը, նրա մարմնին այնպես թվաց, թե նա ընկղմվում է արջի բազմաթիվ մորթիներից սարքված մի հրաշալի, փափուկ անկողնի մեջ...

Չհալչող Սառցե Տան ներսից, այդ կլոր նեղ անցքով, դուրս էր փչում այնպիսի մի տաքություն, որ Իլեն չսառեց, այլ մի քանի րոպե հետո բացեց աչքերը: Նա մի պահ դեռ չհասկացավ, թե որտեղ է գտնվում ինքը, իսկ երբ հիշեց, նա չկարողացավ որոշել՝ շա՞տ ժամանակ էր անցել, թե քիչ: Տան ներսից լսվում էր մի հեքիաթային երաժշտություն, մի այնպիսի նվագ, որի նման որևէ բան Իլեն երբեք չէր լսել իր կյանքում: Կլանված, կախարդված, նա վար առավ գլխարկն ականջների վրայից, գլուխն ավելի մոտեցրեց անցքին: Եվ նրա դեմքի, գլխի, ականջների վրա հորդեց տաքության և երաժշտության մի այնպիսի չքնաղ խառնուրդ, որ Իլեն չկարողացավ որոշել՝ դրանցից որո՞վ էր նա ավելի երջանիկ:

Բայց միայն տաքությունն ու երաժշտությունը չէ, որ հորդում էին ներսից: Այնտեղից գալիս էր մի այնպիսի բույր կամ բույրերի խառնուրդ, որ Իլեի գլուխն սկսեց պտտվել երանավետ մի զգացումից: Սպիտակ Թագավորության մեջ բույրեր ընդհանրապես չկային, իսկ եթե կային էլ, Իլեն չէր հիշում դրանք: Երևի դրանք տհաճ բույրեր էին, վառվող ճարպի ու ծխի, արջի խոնավացած մորթու և կեղտոտ մարմնի…

Ճիշտն ասած, Իլեն հաշիվ էլ չէր տալիս իրեն, թե ինչ էր հորդում իր վրա Չհալչող Սառցե Տան ներսից՝ գույնե՞ր էին դրանք, բույրե՞ր, հնչյունե՞ր, համե՞ր, թե տաքություն: Նրա վրա հորդում էր Գույնզգույն Թագավորությունը…

Երբ Իլեի գլուխը, դեմքը, կուրծքն ու թևերը բավական տաքացան, նա նոր միայն զգաց ցուրտն իր մեջքի վրա: Նա շուռ եկավ մեջքով դեպի պատի անցքը և մեջքի վրա նույնպես զգաց հաճելի,

կենդանացնող տաքությունը: Եվ միայն այդ պահին նա սարսափով հիշեց, թե ինչպես քիչ առաջ նա արդեն քնում էր, այսինքն՝ սառչում: Որքան էլ որ Կատպիսում և ամբողջ ճանապարհին նա որոշել էր չսառչել, այնուամենայնիվ, եկավ ժամանակը, և նա սկսեց սառչել՝ մոռացած ամեն որոշում... Բայց ոչ, իզուր է մեղադրում նա իրեն այդպես: Եթե նա այնուամենայնիվ, չսառեց, ապա հենց նրա համար, որ վերջին րոպեին կարողացավ հասկանալ դա: Ու թեև հասկացավ, բայց մտածել փրկության մասին նա չէր կարող, որովհետև գլխի չէր ընկնում, որ դա կարելի է՝ այդ անցքին մոտենալով: Նա մոտեցավ ոչ թե տաքության, այլ հնչյունների համար…

Այժմ, երբ Իլեն մեջքով էր շուռ եկել դեպի Չհալչող Սառցե Տունը, նրա աչքերի առաջ այլևս Գույնզգույն Թագավորությունը չէր, այլ անթափանց մթությունը, որի խորքում, շատ և շատ հեռու, գտնվում էր Կատպիսը... Այժմ, երբ նա փրկված էր, նա արդեն մտածում էր վերադառնալու մասին: Մի՞թե, իսկապես, նա տեսավ այս ամենը և մնաց կենդանի... Ուրախությունը պաշարում էր նրա սիրտը, բայց դեռ շուտ է դրա համար, դեռ պետք է անցնել հսկայական ճանապարհը դեպի ետ…

Իլեն արդեն լիովին տաքացել էր, երբ իր մեջքի վրա զգաց ինչ-որ շարժում: Մեկը ձեռք էր տալիս նրան: Նա սարսափած վեր ցատկեց տեղից, ետ նետվեց մի քանի քայլ և միայն դրանից հետո շուռ գալով, նայեց: Բայց Տավա Նեմայի կամ մյուս խստադեմ մարդկանց փոխարեն նա տեսավ անցքի մոտ պպզած մի շատ գեղեցիկ աղջկա:

Իլեն մոտեցավ նրան: Աղջիկը ժպտաց: Նա ինչ-որ բան ասաց, բայց Իլեն չէր լսում նրա ձայնը: Ծունկ չոքելով պատի անցքի մոտ, նա գլխարկից ազատեց իր ականջը: Աղջիկը կրկնեց իր խոսքը: Նա ինչ-որ բան էր հարցնում, բայց Իլեն չէր հասկանում նրա լեզուն:

Տեսնելով, որ այդպես ոչինչ չի ստացվի, աղջիկը ձեռքը դրեց իր կրծքին և ասաց.

— Տրիսնա:

Ապա մատը հարցականորեն ուղղեց դեպի տղան:

— Իլե,— անվանեց տղան իրեն,— Իլե Տրապնա…

Աղջիկը բաց արեց իր ձեռքում բռնած թափանցիկ փոքրիկ տոպրակը, այնտեղից հանեց գույնզգույն առարկաներից մեկը և մեկնեց դեպի Իլեն: Պատը հաստ էր և երբ աղջիկը դուրս մեկնեց իր ձեռքը, հազիվ նրա մատները դուրս ելան այնտեղից: Նույն րոպեին Տավա Նեման նկատեց նրանց և նետվեց դեպի Տրիսնան: Իլեն հազիվ ժամանակ ունեցավ վերցնել աղջկա ձեռքից փոքրիկ առարկան և թաքցնել իր գրպանում: Տավա Նեման ետ քաշեց աղջկան, գոռաց Իլեի վրա և վերցնելով անցքը փակող ապակին, պտտեցրեց պատի մեջ:

Իլեն նայեց: Չհալչող Սառցե Տունն այլևս դատարկ էր, բոլորը նորից մտել էին գետնի տակ: Այժմ, Իլեից երեք քայլ դեպի աջ, գետնի տակ էին մտնում Տավա Նեման ու Տրիսնան: Տղամարդը բարկացած-բարկացած ինչ-որ բան էր ասում աղջկան, երևի Իլեի մասին, որովհետև աղջիկը բոլորովին անհետանալուց առաջ նայեց ետ՝ Իլեին, և նրա հայացքն այժմ անբարյացակամ էր, համարյա թշնամական:

Հատակի դռնակը ծածկվեց: Դատարկ տան մեջ վառվում էին պատերի տակ շարված բոլոր գույնզգույն լույսերը միասին, վառվում էին նաև խաղալիքներից զրկված ծառի բոլոր լույսերը: Եվ հանկարծ, այդ բոլորը միանգամից, հանգեցին: Իլեն ճչաց անսպասելիությունից՝ չհավատալով աչքերին: Անթափանց մթությունը կլանեց նրան: Նա տրորեց աչքերը, բայց մթությունը չէր անցնում: Վերջ Գույնզգույն Թագավորությանը…

Իսկ այժմ հարկավոր է իսկույն, առանց ուշանալու, վերադառնալ Կատպիս՝ քանի դեռ Իլեի մեջ պահպանվում է Չհալչող Սառցե Տնից ստացած տաքությունը…

Նա շուռ եկավ իսկույն ճանապարհ ընկնելու համար, բայց նույն վայրկյանին նրա ուղեղը ծակեց մի սարսափելի հարց.— իսկ ո՞ւր գնալ, ո՞ր կողմումն է Կատպիսը…

Սառը քրտինքը պաշարեց Իլեին: Դեռ լույս ժամանակ նա նկատել էր, որ Չհալչող Սառցե Տան բոլոր կողմերից ձյունե ճանապարհներ էին իջնում դեպի հարթավայրի զանազան կողմերը՝ ըստ երևույթին, տանելով դեպի Սպիտակ Թագավորության մյուս բնակավայրերը: Այդ ճանապարհներից ո՞րն էր Կատպիսինը: Ո՞ր կողմից էր եկել նա և ո՞ւր պետք է գնար…

Դրությունն անելանելի էր: Նա մի պահ վճռեց գնալ ճանապարհներից որևէ մեկով՝ առանց ընտրելու: Վերջ ի վերջո հո հասնելո՞ւ է որևէ բնակավայր: Բայց նա հրաժարվեց այդ մտադրությունից: Ո՛վ գիտե, Կատպիսից ավելի հեռու չե՞ն դրանք, կհասնի՞ արդյոք Իլեն դրանց՝ նախքան սառչելը:

Իսկ ցուրտն ավելի էր սաստկանում, որովհետև տաքությունն արագությամբ անհետանում էր Իլեի մարմնից: Հարկավոր էր շտապել, շտապել, շտապել…

Ո՞րն էր Կատպիսի ճանապարհը... Սպասիր, հարկավոր չէ շփոթվել, հուզվել, մատնվել խուճապի: Սպասիր, սպասիր…

Եվ իրոք, սառնարյունությունն ու ինքնատիրապետությունը փրկեցին Իլեին: Նա հիշեց, որ Կատպիսից գալով, նա Չհալչող Սառցե Տանը մոտեցել էր հենց այն տեղում, որտեղ գտնվում էր դեպի գետնի տակ տանող դռնակը: Իհարկե, հենց դռնակի մոտից է սկսվում Կատպիսի ճանապարհը: Իսկ որտե՞ղ է դռնակը, ինչպե՞ս գտնել մթության մեջ…

Իլեն հիշեց այն, ինչ-որ տեսել էր լույսերի հանգչելուց մի վայրկյան առաջ,— այն, թե ինչպես Տավա Նեման ու Տրիսնան իջնում էին գետնի տակ: Դա աջ կողմումն էր, նրա կանգնած տեղից երեք քայլի վրա…

Իլեն կատարեց երեք մեծ քայլ դեպի աջ և ընկավ Կատպիսի ճանապարհի վրա: Նա սկսեց քայլել արագ-արագ, համարյա վազել:

ԾԱՆՐ ԳԻՇԵՐ

Իլեն բաց արեց աչքերը: Նա պառկած էր իրենց տանը: Ճրագ-վառարանի թույլ լույսը թրթռում էր առաստաղի վրա: Նա հայացքը հառեց այնտեղ: Նա իրեն զգում էր շատ թույլ, ուժասպառ, բայց, չնայած դրան, երջանկության զգացումը պաշարել էր նրա հոգին: Ինչի՞ց էր դա՝ նա չէր հասկանում: Չէ՞ որ ամեն ինչ նույնն էր նրա շուրջը՝ ճրագ-վառարանը, առաստաղը, տոպրակը, որի մեջ պառկած էր նա, և չկար նրա կյանքում որևէ նոր, լավ բան:

Բայց հանկարծ, միանգամից, նա հիշեց ամեն ինչ:

— Ես տեսա Գույնզգույն Թագավորությունը...— ասաց նա բարձր, երջանկությունից ժպտացող ձայնով:

Նրա կողքին շարժվեց ինչ-որ մեկը: Իլեն շուռ եկավ, նայեց: Բայց հոր փոխարեն նա այնտեղ նստած տեսավ Նուրիսին:

— Դո՞ւ…— ուրախացավ տղան:— Ե՞րբ եկար: Սպասում էիր, որ արթնանա՞մ... Իսկ ինչո՞ւ չէիր արթնացնում ինձ:

— Քնի՛ր, քնի՛ր...— շշնջաց աղջիկը:

— Նուրիս, ես տեսա Գույնզգույն Թագավորությունը,— բացականչեց Իլեն:

— Հետո, հետո,— ասաց աղջիկը կամացուկ:— Քնի՛ր…

— Ինչո՞ւ քնեմ,— զարմացավ Իլեն,— մի՞թե առավոտ չէ:

— Կեսգիշեր է, Իլե:

— Կես... գիշե՞ր... Իսկ ուրեմն որտե՞ղ է հայրիկը… Իսկ ի՞նչ ես անում դու այստեղ…

— Ես քեզ եմ խնամում, Իլե,— ասաց աղջիկը մեծավարի:— Ահա երեք օր է, որ դու անզգա պառկած ես և զառանցում ես:

— Երեք... օ՞ր... Իսկ որտե՞ղ է հայրիկը…

— Այո, երեք օր: Այն առավոտ քեզ գտան հենց Կատպիսում, համարյա սառած: Սովորականի պես ես շուտ էի արթնացել և դուրս էի ելել, որ լվացվեմ, և տեսա, որ դու պառկած էիր համարյա մեր տան մուտքի մոտ: Հասել էիր Կատպիս՝ առանց դա իմանալու, և ընկել էիր վար: Հիմա էլ դրսում շարունակվում է բուքը:

— Իսկ որտե՞ղ է հայրիկը,— երրորդ անգամ հարցրեց Իլեն,— ինչո՞ւ չես պատասխանում…

Նուրիսը լռեց մի պահ, ապա ասաց կամացուկ.

— Դու այլևս հայր չունես, Իլե…

— Այդ ի՞նչ ես ասում, Նուրիս,— ճչաց տղան՝ վեր ցատկելով տեղից և սարսափով նայելով ընկերուհուն:

— Նա ինքը փրկեց քեզ, բերեց տուն և մնաց քեզ մոտ մի ամբողջ օր: Բայց հարկավոր էր որսի գնալ: Երեկ չէ մյուս օրը նա գնաց բոլորի հետ և... քնած արջն արթնացել ու պատառոտել է նրան...

Իլեն փուլ եկավ հատակի վրա և սկսեց հեկեկալ:

— Նրան արդեն թաղել են,— շարունակեց Նուրիսը:— Մայրիկս պատմեց, որ նրան թաղել են գետի վրա, ձյան տակ: Երբ գարունը գա և ձյունն ու սառույցը հալչեն գետի վրայից, ջուրը նրան կտանի հեռո՛ւ, հեռո՛ւ, այնտեղ, ուր որ բոլոր ջրերն են գնում... Դու այլևս ոչ մի հարազատ չունես, Իլե, բացի... բացի ինձանից: Դժբախտ Իլե…

Նուրիսը շոյեց իր ընկերոջ գլուխը, ապա լուռ մնաց՝ հասկանալով, որ չպետք է խանգարել նրան՝ լաց լինելու:

Մի ժա՞մ, թե երկու, գուցե և երեք, Իլեն լալիս էր, իսկ Նուրիսը լուռ նայում էր նրան՝ նույնպես արտասվելով։ Ապա սրբեց իր արցունքները և զգալով, որ ժամանակն է Իլեին հանգստացնելու, ձեռքը դրեց նրա ձեռքի վրա.

— Բավական է, Իլե…

Բայց Իլեն շարունակում էր լաց լինել աղիողորմ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՉԱՐՔԱՇ ԱՇԽԱՏԱՆՔ

Հոր մահից հետո Իլե Տրապնան ինքը պետք է հոգար իր ապրուստի մասին։ Նրա տան միջանցքում, սառցակտորով ծածկված փոսի մեջ, մնացել էր ընդամենը երկու քսան ձուկ և մի կտոր արջի միս։ Ճիշտն ասած, մոտավորապես այդքան էլ մնացել էր Կատպիսի մյուս բնակարաններում։ Բնակիչները որսը բաժանում էին հավասարապես բոլոր աշխատողների միջև։ Աշխատել չկարողացողներին և նրանց ընտանիքներին տալիս էին ողորմելի բաժին, այնքան, որ նրանք սովից չմեռնեն։ Բայց ուրիշ կերպ չէին էլ կարող վարվել։ Տավա Նեման նրանցից խլում էր նրանց համարյա ամբողջ վաստակը։

Երկու օր սուգ անելուց հետո, երրորդ օրվա առավոտյան, Իլեն վաղ արթնացավ, հագնվեց, ելավ դուրս և մոտենալով որսի գնալ պատրաստվող տղամարդկանց ու կանանց խմբին, լուռ կանգնեց նրանց մոտ։

— Դու ինչպե՞ս պիտի որս անես,— հառաչեց Նուրիսի մայրը, դու նույնիսկ քայլել չես կարողանա մեզ հետ…

— Ոչինչ, կաշխատի,— չարախինդ ժպտաց Ակիրսը։— Հո կարողացա՞վ երկու օր իրար վրա գնալ-գալ Չհալչող Սառցե Տուն։

— Այստեղ միայն գնալ-գալ չի հարկավոր, Ակիրս, այլ աշխատել, որս անել,— հիշեցրեց Տովեսի հայրը։

— Ի՞նչ ես ուզում ասել,— բարկացավ Ակիրսը,— ուրեմն թողնենք, որ պարապ-սարապ շրջի ու փչացնի մեր երեխաներին։

— Դու անխիղճ մարդ ես, Ակիրս,— հառաչեց մի ծերունի։

— Իսկ եթե դու շատ խղճով ես՝ ինքդ պահիր նրան քո հաշվին։

— Եթե կարողանայի… նորից հառաչեց ծերունին։

— Ես ինքս կպահեմ ինձ,— կամացուկ, բայց հաստատակամ, ասաց Իլեն։

— Տեսնո՞ւմ եք,— մատով ցույց տվեց նրան Ակիրսը,— չնայած իր թշվառ վիճակին, դեռ հպարտն էլ է։ Կտեսնենք, թե ինչպես ես աշխատելու, լակոտ։

Իրենց տնից լվացվելու դուրս եկավ Նուրիսը: Տեսնելով Իլեին որսի գնացող խմբի մեջ, նա սառեց-մնաց իր տեղում: Անթարթ նայում էր իր ընկերոջը և կարծես պատրաստվում էր լաց լինել: Ապա, մտքում վճռելով ինչ-որ բան, նա ձայն տվեց.

— Բարի լույս քեզ, Իլե Տրապնա: Եկ, քեզ բան եմ ասում...

Իլեն մոտեցավ ընկերուհուն:

— Մի՛ գնա որսի,— աղերսեց Նուրիսը շշուկով,— դու դեռ փոքր ես: Ես իմ ձուկն ու ռումամը կկիսեմ քեզ հետ…

— Ես ինքս կպահեմ ինձ,— ասաց Իլեն և վերադարձավ մեծերի մոտ:

— Գնանք,— կարգադրեց Ակիրսը,— արդեն բոլորս ենք հավաքվել:

Իլեն վերջին բոպեին ետ դարձավ, նայեց ընկերուհուն, որը, լվացվելը մոռացած, նայում էր նրան, և քայլեց:

Հարթավայրը, որով որսորդները գնում էին դեպի արևելք, հետզհետե իջնում էր և իջնում, թեև դա հազիվ էր նկատվում: Շուրջն ամայի սպիտակություն էր և բացարձակ լռություն, միայն ձյունն էր ճռճռում մարդկանց ոտքերի տակ:

Երկար ժամանակ բոլորը գնում էին լուռ, մտածկոտ, ձեռքերում բռնած արջի ոսկորներ, որոնք կազմում էին նրանց միակ զենքը՝ ահարկու արջերին սպանելու համար:

Ապա նրանք կանգ առան, բաժանվեցին երեք խմբի և գնացին զանազան կողմեր:

Իլեն ընկավ այն խումբը, որտեղ գտնվում էր Ակիրսը: Չինտամի հայրն ինքը կարգադրեց այդպես:

— Ես քեզ կսովորեցնեմ որս անել,— չարագուշակ կերպով ասաց նա:

Ձյունն ամեն կողմ տարածված էր հարթ և ընդարձակ: Իր ճանապարհի վրա չհանդիպելով ոչ մի արգելքի, նա չէր կուտակվել ոչ մի տեղ, չէր կազմել դարուփոսեր: Հարթավայրը երևում էր մեծ տարածության վրա, բայց այնտեղ չէր երևում ոչ մի առարկա: Ի՞նչ որս կարող էր լինել այդտեղ…

Հանկարծ Վինզայի հայրը կանգ առավ և շշնջաց.

— Գոլորշի եմ նկատում…

Եվ նա ցույց տվեց մատով: Իլեն նայեց այդ կողմ և չնկատեց ոչ մի գոլորշի: Նա ոչինչ չնկատեց նույնիսկ այն ժամանակ, երբ մարդիկ դանդաղ քայլերով, զգույշ, որպեսզի ձյունը չճռճռա, մոտեցան և շրջապատեցին մի փոքրիկ տարածություն:

— Նայիր,— ցույց տվեց Կիվերայի մայրը՝ դիմելով տղային:

Իլեն նայեց: Մարդկանց շրջանակի մեջ, ձյան հարթության վրա նկատվում էր մատնաչափ մի անցք, որից դուրս էր գալիս հազիվ նկատելի գոլորշի:

— Սկսիր,— կարգադրեց Ակիրսը Կիվերայի մորը՝ կամացուկ ձայնով:

— Իսկ ինչո՞ւ դու ինքդ չես սկսում, տղամարդ,— հեգնանքով հարցրեց Կիվերայի մայրը, բայց և այնպես ծունկի գալով, սկսեց երկու ձեռքով կամացուկ ետ տալ ձյունն անցքի չորս կողմից: Մի քանիսն էլ օգնեցին նրան, իսկ մյուսներն իրենց խղճուկ զենքերը պատրաստ պահած սպասում էին:

Իլեն չնկատեց, թե երբ վերջացավ ձյունը և երբ դրա տակից բացվեց արջի սպիտակ մորթը, այնքան նման էին դրանք իրար: Տովեսի հայրը, որն ամենափորձվածն էր, կռացավ, նայեց և օրորեց գլուխը: Նա շարժումներով հասկացրեց, որ արջը, գունդ ու գծիկ եղած, այնպես է թաքցրել գլուխը, որ հարվածել գլխին անհնար է: Գուցե սի՞րտը ծակել...

— Ոչ, ոչ,— շարժումներով հասկացրեց Ակիրսը,— մորթին կփչանա և Տավա Նեման շատ ռումամ չի տա դրա համար: Հարկավոր է արագ դուրս քաշել նրա գլուխը թաթերի միջից և ապա բոլոր կողմերից հարվածել: Ապա, ո՞վ դուրս կքաշի: Ա՛, Իլե, դու այստե՞ղ ես: Եկ տեսնեմ: Քեզ հարկավոր է սովորել: Վերցրու իմ ոսկորը և խփիր...

Նուրիսի մայրը ետ քաշեց Իլեին և կոպիտ կերպով մի կողմ հրեց Ակիրսին: «Ի՞նչ է, դու ուզում ես սպանե՞լ երեխային»,— ասում էր նրա ցասկոտ հայացքը:

Հանկարծ արջը շարժվեց: Այլևս մտածելու ժամանակ չկար: Այն պահին, երբ նա իր գլուխն էր դուրս բերում թևի տակից, Կատպիսի բնակիչները հարձակվեցին և սկսեցին ծանր ոսկորներով հարվածել նրա գլխին: Արջը բաց արեց բերանը՝ գոռալու կամ կռվելու համար, բայց այդ րոպեին Նուրիսի մայրը մի սուր ոսկոր խրեց նրա բերանը: Արջը սատկեց:

— Շնորհավոր լինի,— ուրախ բացականչեցին բոլորը:

Վինզայի հայրն իսկույն մոտեցավ արջին, մի սուր ու տափակ ոսկորով վերևից ներքև ճեղքեց նրա մորթին կոկորդի ու փորի վրա, և ետ տվեց մորթու եզրերը: Մորթը պոկվեց, արջը մերկացավ: Նրանից առատ գոլորշի էր բարձրանում: Տղամարդիկ արջի մարմինը մաս-մաս արեցին, որպեսզի հեշտ լիներ տանելը:

Իլեն, որ մինչև այդ ոչինչ չէր արել, մոտեցավ արջի մսին, վերցրեց ամենամեծ կտորներից մեկը և շալակեց:

— Դու սա՛ վերցրու,— ցույց տվեց Նուրիսի մայրը մի ավելի փոքր մսակտոր:

— Դա ես ինքս կվերցնեմ,— միջամտեց Ակիրսը,— հիվանդությունից հետո ես դեռ թույլ եմ…

Մարդիկ զզվանքով նայեցին նրան, բայց վախեցան որևէ բան ասել:

Որսորդներն անմիջապես չվերադարձան Կատպիս, այլ շարունակեցին շրջել, նոր որս փնտրել: Բայց բախտն այլևս չժպտաց նրանց: Երբ նրանք ուշ երեկոյան վերադարձան տուն, պարզվեց, որ մյուս երկու խմբերից ոչ մեկն արջ չէր որսացել:

Կատպիսում մի քանի ուժեղ տղամարդիկ կտրատեցին արջի միսը փոքր կտորների, իսկ երեք ծերունիներ արդար կերպով բաժանեցին դրանք բնակիչների միջև: Արջի մեծ մարմնից յուրաքանչյուր բնակչի հասավ մի չնչին կտոր, հազիվ մի երկու օրվա պաշար:

— Վերցրու քո արդար աշխատանքի վաստակը,— ասաց ծերունիներից մեկն Իլեին՝ միսը երկարելով նրան: Իլեն ուզեց վերցնել, բայց անզգա ընկավ գետին: Երկար ճանապարհը, այն էլ՝ մսի մեծ կտորը մեջքի վրա, ուժասպառել էր նրան:

Մարդիկ օրորեցին գլուխները:

— Այլևս չպետք է տանել նրան որսի,— ասաց Վինզայի հայրը։— Կմեռնի երեխան:

— Ոչինչ էլ չի լինի,— ասաց Ակիրսն անհոգ,— կսովորի:

— Իսկ ինչո՞ւ դու քո Չինտամին չես տանում որսի, չէ՞ որ նա նույնիսկ մեծ է Իլեից,— հարձակվեց նրա վրա Նուրիսի մայրը:

— Շա՞տ ես խոսելու,— գոռաց Ակիրսը,— Չինտամը հայր ունի, որը պահում է նրան:

— Իլեին այլևս չպետք է տանել որսի,— որոշեցին բոլորը։— Մենք կմտածենք, թե ինչ գործ գտնենք նրա համար:

— Ես կգնամ... որսի...— նվաղած ձայնով արտասանեց Իլեն պառկած տեղից…

— Դու վճիռ անելու իրավունք չունես, դու փոքր ես,— բարկացավ նրա վրա Նուրիսի մայրը:

ՔԱՂՑՐ ԵՐԴՈՒՄ

Իլեն մնաց տանը: Արթնանալով վաղ առավոտյան, նա, սովորականի պես, իսկույն քաղց զգաց։ Բայց ուտել չէր կարելի, հարկավոր էր խնայել ուտելիքի պաշարը: Նա հագնվեց և գնաց պառավ Խարունայի մոտ՝ կատարելու իր խոստումը՝ պատմելու նրան Գույնզգույն Թագավորության մասին:

Դեռ վաղ էր և Խարունայի մոտ ոչ ոք չկար, բայց գուցե և չլիներ երբեք, որովհետև թե՛ երեխաներն էին բարկացած նրա վրա և թե՛ նրանց ծնողները: Պառավը, իհարկե, արդեն վեր էր կացել և աշխատում էր:

— Բարի լույս, Խարունա տատի,— ողջունեց Իլեն:

— Բարի լույսը քեզ, Իլե, թոռնիկս: Իսկ ինձ համար վաղուց է, որ լույս չկա: Թե բարին է մութ, թե չարը: Դու ողջ-առո՞ղջ ես: Գնացիր և վերադարձա՞ր: Ապրես, Իլե Տրապնա: Իսկ ինչո՞ւ չէիր գալիս ինձ մոտ երեք օր: Ես սպասում էի: Ինչպե՞ս է հայրդ՝ Կնանտը:

— Ուրեմն դու ոչի՞նչ չգիտես,— հառաչեց Իլեն:

— Ոչինչ չգիտեմ, թոռնիկս: Ես ոչ ոքի հետ չեմ խոսել ահա երեք օր, և ոչ ոք էլ չի խոսել ինձ հետ: Երեխաները չեն գալիս ինձ մոտ…

Իլեն հայտնեց նրան իր հոր մահվան լուրը: Պառավն ընդհատեց աշխատանքը, գրկեց տղային, շոյեց նրա գլուխը՝ աշխատելով մխիթարել իր գիտեցած ու կարողացած ձևով: Իլեն արտասվեց, ապա հանգստացավ և սկսեց պատմել Գույնզգույն Թագավորության մասին: Պառավ Խարունան, որն իր պատմություններն անելիս միաժամանակ աշխատում էր, այժմ այնպես էր կլանվել, որ մոռացել էր ամեն ինչ: Երբ տղան ավարտեց իր պատմությունը, պառավը դեռ երկար ժամանակ նստած էր լուռ և անշարժ:

— Դու երջանիկ ես, Իլե,— շշնջաց, վերջապես, Խարունան։— Եվ դժբախտ եմ ես, որ չեմ տեսել և այլևս երբեք չեմ տեսնի այդ ամենը... Բայց դու, Իլե Տրապնա, տեսել ես ոչ թե Գույնզգույն Թագավորությունը…

Իլեն վեր ցատկեց զարմանքից։

— Այլ,— շարունակեց պառավը,— տեսել ես դրա միայն մի կտորը։ Դա կոչվում է Նոր տարի։ Նա գեղեցիկ է, բայց քսան անգամ ավելի գեղեցիկ է այն մեծ Գույնզգույն Թագավորությունը, որը փռված է եղել ամեն տեղ՝ գիշեր ու ցերեկ, ամբողջ ժամանակ... Բայց դա այլևս ոչ ոք չի տեսնի…

Երբ Իլեն հրաժեշտ տվեց պառավին ու ելավ դուրս, առավոտը բավական տաքացել էր։ Երեխաները հեռվում մի տեղ հավաքված, ձնագնդի էին խաղում։

— Բարի լույս քեզ, Իլե Տրապնա,— սովորականի պես լսեց Իլեն իր ընկերուհի Նուրիսի ձայնը։— Ինչ շուտ ես վեր կացել այսօր։ Իսկ որտեղի՞ց ես գալիս։ Դու դեռ չե՞ս լվացվել։ Եկ լվացվենք միասին։

Իլեն լուռ արձակեց հագուստը, մերկացավ գոտկից ետ և սկսեց ձյունով շփել մարմինն ու երեսը։

— Ես երեք շատ անհանգստացա քեզ համար,— ասաց Նուրիսը՝ տխուր նայելով ընկերոջը։— Անհամբեր սպասում էի, թե երբ ես վերադառնալու որսից։ Ինչ լավ արեցին մեծերը, որ որոշեցին այլևս չտանել քեզ իրենց հետ։ Նրանք բոլորը բարի են՝ բացի Ակիրսից։

— Միևնույնն է, ես կաշխատեմ,— ասաց Իլեն համառությամբ։

— Դու դեռ փոքր ես,— հիշեցրեց Նուրիսը։

— Ոչ, ես արդեն մեծ եմ,— մռայլ ձայնով հակաճառեց տղան։

Նրանք լուռ շարունակեցին լվացվելը, ապա հագնվեցին։

— Իսկ դու, Նուրիս, ինչո՞ւ չես հարցնում ինձ Գույնզգույն Թագավորության մասին…

— Նորի՞ց այդ մասին,— հառաչեց Նուրիսը։— Իսկ ես կարծում էի, թե դու արդեն բոլորովին առողջացել ես…

— Դու ինձ չե՞ս հավատում,— չափազանց վիրավորվեց Իլեն։— Ուրեմն այլևս չխոսես ինձ հետ…

Այս ասելով, նա թողեց ընկերուհուն և արագ քայլեց։

— Իլե,— ձայն տվեց աղջիկը, բայց Իլեն ավելի արագացրեց քայլերը…

Նուրիսը վազ տվեց նրա ետևից, հասավ նրան, բայց չվստահանալով հավասարվել և հետը խոսել, շարունակեց գնալ ետևից։

Իլեն գնում էր դեպի հավաքված երեխաները։ Երբ նա տեղ հասավ, նրանք մի պահ ընդհատեցին ձնագնդի խաղալը, լուռ և անտարբեր հայացքով նայեցին իրենց բոլոր խաղերի նախկին առաջնորդին, ապա նորից շուռ եկան և այլևս ոչ մի ուշադրություն չդարձրին նրա վրա։

Նուրիսն Իլեի մոտ կանգնած, ցավակցությամբ նայում էր իր ընկերոջը։

Բավական ժամանակ լուռ մնալուց հետո Իլեն ասաց բարձրաձայն, բայց հանգիստ.

— Երեխաներ, ես տեսա Գույնզգույն Թագավորությունը…

Բոլորը միահամուռ և բարձր ծիծաղեցին:

— Ես ամենաերջանիկ մարդն եմ Կատպիսում,— առանց ուշադրություն դարձնելու նրանց ծիծաղի վրա, հպարտությամբ ասաց Իլեն:

Երեխաները նորից ծիծաղեցին և այս անգամ ընդհատեցին խաղը:

— Ուզո՞ւմ եք պատմեմ,— առաջարկեց Իլեն:

— Օ՛, իհարկե, իհարկե, ուզում ենք,— ավելի և ավելի սաստկացող ծիծաղի միջից լսվեցին բազմաթիվ ձայներ:

— Իլե, խնդրում եմ, լռիր,— շշնջաց Նուրիսը՝ քաշելով նրա թևից,— չե՞ս տեսնում, որ ծիծաղում են քեզ վրա…

Բայց Իլեն ցնցումով պոկեց իր թևը նրանից և դիմեց բոլորին.

— Դե ուրեմն լսեցեք... Այն ամենը, ինչ որ պատմելու եմ ձեզ, զուտ իրողություն է, երդվում եմ իմ եղբոր հիշատակով:

— Ամաչիր, Իլե Տրապնա,— իսկույն լրջանալով, ձայն տվեց նրա երբեմնի ընկեր Վինզան:— Փչում ես՝ փչիր, մենք կլսենք, բայց ինչո՞ւ ես վիրավորում եղբորդ հիշատակը:

— Նրա եղբայրն էլ նրա նման ստախոսն է եղել,— ասաց Չինտամը,— նա նույնպես հավաքել է երեխաներին, տարել և սառեցրել: Իմ կարծիքով ոչ թե պետք է լսել սրան, այլ ծեծել ու վռնդել մեր մոտից:

— Ծեծելը չի խանգարի,— համաձայնեց Տովեսը,— կարելի է և ծեծել:

— Ինչո՞ւ եք շտապում, տղաներ,— բարկացավ Ժունան,— եկեք լսենք, մի քիչ ծիծաղենք, իսկ հետո կծեծեք: Դե, Իլե Տրապնա, փչիր տեսնենք…

— Իլեն, առանց վիրավորվելու, տխուր, նայեց կլորիկ Ժունային, նայեց բոլորին և սկսեց պատմել: Երբ նա ասաց այն մասին, թե ինչպես առաջին անգամ հեռվից տեսել էր գույնզգույն լույսը, բոլորը նորից ծիծաղեցին, որովհետև, ինչպես հայտնի է, գույնզգույն լույս չկա և չի կարող գոյություն ունենալ: Լույսը միշտ դեղին է լինում: Իսկ երբ տղան սկսեց նկարագրել մարդու հասակից երկու-երեք անգամ բարձր ռումամը, նա ստիպված եղավ ընդհատել պատմությունը, որովհետև երկար ժամանակ ոչ ոք չէր կարողանում զսպել քրքիջը:

Բայց հասավ մի րոպե, երբ այլևս ոչ ոք չծիծաղեց: Իլեն այնքան վառ էր նկարագրում իր տեսածները, այնպիսի հետաքրքիր բաներ էր պատմում, որ բոլորը կլանված, լուրջ, լուռ, շնչները պահած, լսում էին նրան: Ոչ ոք, իհարկե, չէր հավատում նրա պատմածներին, բայց ի՞նչ նշանակություն ուներ դա: Խարունա տատը նույնպես, հաճախ պատմում էր հեքիաթներ, որոնց ոչ ոք չէր հավատում, բայց բոլորը բավականությամբ լսում էին:

Իլեն պատմեց ամեն ինչի մասին՝ ամենայն մանրամասնությամբ: Իսկ երբ խոսեց Տրիսնայի մասին, նա դիտմամբ պատմեց ավելի մանրամասն, հիացած նկարագրեց նրա գեղեցկությունը, որպեսզի վշտացնի Նուրիսին: Աչքի տակով նայելով իր ընկերուհու կողմը, նա պատմեց, թե ինչպես Տրիսնան և ինքը փոխանակել էին իրենց անունները և ինչպես Տավա Նեման ետ էր քաշել աղջկան պատի

անցքից։ Եթե նա չլիներ, Տրիսնան ու Իլեն մինչև հիմա էլ դեռ իրար հետ խոսելիս կլինեին այնտեղ, ազնիվ խոսք…

Երբ Իլեն ավարտեց իր պատմությունը, մի քանի րոպե շարունակ բոլորը լուռ էին։ Լուռ էր նույնիսկ Չինտամը։

— Դու Խարունա տատից ավելի լավ ես պատմում, Իլե,— ասաց վերջապես Կիվերան՝ հիացած աչքերով։

— Ի՞նքդ ես հնարել դա, թե՞ ուրիշից ես լսել,— առանց ծիծաղելու, լուրջ հարցրեց Վինզան։

— Գուցե երազո՞ւմն է տեսել,— ենթադրեց Ժունան։

— Ոչ, մենք Իլեին չենք ծեծի՝ քանի որ նա այդպիսի լավ հեքիաթ պատմեց մեզ,— ասաց Տովեսը։

— Դա հեքիաթ չէ, երեխաներ,— հակաճառեց Իլեն, բայց Չինտամը կոպտաբար ընդհատեց նրան.

— Դե, Իլե, լավ կանես՝ եթե չպնդես և չջղայնացնես մեզ։ Լսեցի՞նք քեզ, չե՞նք ծեծում՝ ուրեմն շնորհակալ եղիր և հեռացիր։

Ըստ երևույթին Չինտամն սկսել էր գրավել Իլեի տեղը, դառնալ երեխաների առաջնորդը։ Երեխաներն այժմ լսում էին նրան, համաձայնվում նրա հետ։

— Բայց ես ճիշտ եմ ասում, երեխաներ, դա հեքիաթ չէ,— հուսահատ բացականչեց Իլեն։— Երդվում եմ, թող ես արև չտեսնեմ, թող ես ձուկ չուտեմ, թող ես մերկ մնամ՝ եթե…

— Իսկ ինչո՞վ ես ապացուցում, որ դու ճիշտ ես ասում,— գրգռված հարցրեց Վինզան։

— Ոչնչով,— խոստովանեց Իլեն։

— Տեսնո՞ւմ ես,— խրատական ձևով վրա բերեց Տովեսը։— Էլ ուրեմն մի պնդիր։ Լավ հեքիաթ էր, խոսք չկա, բայց ինչո՞ւ խաբել մեզ, թե դա իրականություն է։ Լավ բան չես անում, Իլե։

— Դա նա հենց այնպես է ասում, կատակի համար,— փորձեց պաշտպանել նրան Նուրիսը։— Նա ինքն էլ գիտե, որ դա հեքիաթ է, չէ՞ որ հենց ինքն է հնարել։ Իհարկե, լավ հեքիաթ է, մանավանդ՝ Տրիսնայի մասին…

Իլեն բարկացած, համարյա ատելությամբ, նայեց իր նախկին ընկերուհուն։

— Հա, լավ հիշեցի,— ասաց նա հանգիստ ձայնով, վրեժխնդրությունը թաքցրած,— Տրիսնան քեզանից ավելի գեղեցիկ էր։

— Հեքիաթների աղջիկները միշտ ավելի գեղեցիկ են լինում,— առանց վիրավորվելու, անտարբերությամբ համաձայնվեց Նուրիսը։

— Եվ ավելի բարի,— շարունակեց Իլեն։

— Եվ ավելի բարի են լինում, այո,— հաստատեց Նուրիսը։

— Եվ մենք մտերմացանք միմյանց հետ,— հայտնեց տղան։

— Այդ արդեն սուտ ես ասում,— գլուխը բացասաբար օրորեց աղջիկը։ — Հեքիաթի աղջկա հետ չի կարելի մտերմանալ։

Իլեն զայրութից չիմացավ ինչ անել։ Ամենից ավելի նրան վիրավորում էր իր նախկին ընկերուհու թերահավատությունը։

Հանկարծ Իլեն ինչ-որ բան հիշեց երազի նման։ Զառանցա՞նք էր դա, թե իրականություն... Նա ձեռքը դանդաղ տարավ գրպանը, շոշափեց և նրա դեմքը փայլեց անսպասելի ուրախությունից։

— Եվ նա ինձ նույնիսկ նվեր տվեց,— ասաց նա։

— Ո՞վ,— զարմացավ Նուրիսը։

— Տրիսնան։

— Ի՞նչ ես դուրս տալիս,— բարկացավ Տովեսը։

Իլեն գրպանից հանեց մի փոքրիկ առարկա՝ մատի հաստությամբ, և կես մատի երկարությամբ, սպիտակ գույնի։ Բոլորը տեսան այդ։ Իլեն բռունցքի մեջ պահած այդ առարկան մոտեցրեց իր աչքերին և ճչաց ուրախությունից։

Առարկայի վրա, բոլոր մանրամասնություններով, նկարված էր Գույնզգույն Թագավորության ծառը…

— Ի՞նչ է դա, Իլե,— լսվեց մեկի ձայնը, բայց Իլեն նույնիսկ չլսեց նրան։

— Այդ ի՞նչ հանեցիր գրպանիցդ, Իլե Տրապնա…

— Այդ ի՞նչ ես բռնել ձեռքումդ, Իլե…

Բայց Իլեն չէր կարողանում կտրվել նկարից։ Նրա աչքի առաջ, ինչպես իրականություն, նորից կանգնած էր ծառը՝ խաղալիքների և զարդարանքների տակ ծանրացած։ Դրա շուրջը կլոր պար էին բռնել բարակ հագուստ հագած գեղեցիկ երեխաները։

— Ցույց տուր, Իլե, ցույց տուր,— լսվում էր չորս կողմից։

Վերջապես Իլեն լսեց ձայները, նայեց։ Նա տեսավ հետաքրքրությունից վառվող բոլոր հայացքները, խնդրական արտահայտությամբ իրեն նայող դեմքերը։ Բայց, փոխանակ ցույց տալու, նա փակեց իր ափը և ձեռքը կոխեց գրպանը։

— Այդ ի՞նչ է, Իլե, ինչո՞ւ պահեցիր, խնդրում ենք քեզ, ցույց տուր,— թնդացին բոլոր երեխաները միանգամից,— այդ ի՞նչ է…

— Դա հեքիաթ է,— ասաց Իլեն անտարբեր։

— Ցույց տուր, ցույց տուր…

— Հեքիաթը չի կարելի ցույց տալ, հեքիաթը գոյություն չունի,— վրեժ առավ Տրապնան բոլորից։

— Խնդրում ենք, Իլե, խնդրում ենք,— աղերսեցին բոլոր կողմերից։

— Իսկ ինչո՞ւ եք խնդրում,— լսվեց Չինտամի հանդիմանական ձայնը,— խլեցեք ձեռքից՝ վերջացավ գնաց։

Բայց բոլոր երեխաներն այնպիսի զայրույթով շուռ եկան դեպի Ակիրսի որդին, որ նա խոհեմ համարեց ձայնն իրեն քաշել և մի քիչ հեռու քաշվել։

Տեսնելով երեխաների վերաբերմունքի այդպես փոխվելը դեպի իրեն, Իլեն փափկեց:

— Հիմա հավատո՞ւմ եք, որ ես սուտ չէի ասում,— հարցրեց նա:

— Հավատում ենք,— թնդացին երեխաները միահամուռ:

— Նայեցեք...

Իլեն հանեց գրպանից առարկան, բռնեց դրա ծայրից: Երեխաները, իրարից առաջ անցնելով, իրար հրիրելով, մոտեցան Իլեին և դեմքերը մոտեցնելով, սկսեցին նայել: Նրանցից ոչ մեկը ձայն չէր հանում, բոլորը կլանվել, մոռացել էին ամեն ինչ և նայում էին, նայո՛ւմ, նայո՛ւմ... Ետևի շարքերում գտնվողները մի քիչ հետո հրում էին նրանց մի կողմ, բռնում էին նրանց տեղը և այժմ էլ իրենք էին նայո՛ւմ, նայո՛ւմ... Քիչ հետո նրանց ևս հրում էին մի կողմ և մոտենում ուրիշները՝ նորերը և նախկինները:

— Որքա՛ն շատ գույներ... որքա՛ն շատ առարկաներ... Ի՛նչ գեղեցիկ պատկեր...— շշնջաց Կիվերան:— Եվ դու այդ բոլորը տեսա՞ր քո աչքերով, Իլե Տրապնա... Ի՛նչ երջանիկն ես դու և ի՛նչ դժբախտ ենք մենք...

Ցույց տալով ծառի զանազան մասերը, Իլեն սկսեց բացատրել: Այ, այստեղ կանգնած էր ինքը՝ Իլեն: Այ, այստեղ, իր ոտքերի տակ, գտնվում էր գետնահարկի դուռը: Այ, այստեղ կախված էր ոսկե ձկնիկը, տեսնո՞ւմ եք: Այ, այս գեղեցիկ աղջիկը նման է Տրիսնային…

— Իսկ ինչպե՞ս է կոչվում այդ առարկան, որ բռնել ես ձեռքումդ,— հետաքրքրվեց Կիվերան:

Անտեղյակ չերևալու համար Իլեն անմիջապես անուն հնարեց դրա համար:

— Սա կոչվում է վալտաշ:

— Իսկ չե՞ս տա, որ բռնենք մեր ձեռքում վալտաշը,— խնդրեց մի աղջիկ:

— Ոչ, չի կարելի:

Նայելով Նուրիսի կողմը, Իլեն ավելացրեց.

— Տրիսնան խնդրեց, որ ոչ ոքի ձեռքը չտամ այս նվերը:

Նուրիսը շուռ տվեց երեսը նրանից:

Բավական ժամանակ էր, ինչ երեխաները լուռ նայում էին, երբ Տովեսը հառաչեց և ասաց.

— Ափսոս, որ մենք չտեսանք այս բոլորը: Ի՛նչ գեղեցիկ է Գույնզգույն Թագավորությունը: Իսկ ինչո՞ւ մենք չտեսանք, Իլե Տրապնա: Այդ ինչպե՞ս եղավ, որ դու սխալվեցիր…

— Ես մեղավոր չեմ,— ասաց Իլեն,— ես…

Նա ուզեց պատմել քսան անգամ քսանի մասին, որից պետք էր հանել ամեն տարի մի քսան և տասնհինգ, իսկ այդ տարի՝ մի քսան և ընդամենը տասնչորս, բայց լռեց: Հարկավոր չէ պատմել՝ մինչև հաջորդ տարի:

— Իսկ մենք մի տարի հետո կտեսնե՞նք այս ամենը,— կարծես կարդալով նրա միտքը, հարցրեց Ժունան:

— Եթե ուզենաք՝ կտեսնեք:

— Չեք տեսնի,— ժխտեց Չինտամը:— Հայրիկն ասում է, որ հաշիվն արդեն կորել է իսպառ:

— Իսկ մենք կտեսնենք,— պնդեց Իլեն:

— Իսկ ես, միևնույնն է, չեմ ուզում տեսնել,— ասաց Չինտամը:— Եթե ոչ՝ ես կդժբախտանամ: Ես հիմի էլ եմ դժբախտ: Ինչո՞ւ պատմեցիր Գույնզգույն Թագավորության մասին, ինչո՞ւ ցույց տվեցիր վալտաշը: Ես չեմ կարողանում աչքերս կտրել դրա գույնզգույն պատկերից, նորից նայել մեր սպիտակ տներին, մեր սպիտակ հագուստներին, սպիտակ ձյանը, Սպիտակ Թագավորությանը…

Նա սկսեց հեկեկալ:

— Իսկ դո՞ւք, երեխաներ,— հարցրեց Իլեն մյուսներին:

Պարզվեց, որ բոլորն էլ իրենց զգում էին դժբախտ, բոլորն էլ հիասթափվել էին իրենց սառցե տներից, մորթե հագուստներից, ձյունածածկ գետնից, գորշ երկնքից, բայց հակառակ Չինտամի, նրանք միաժամանակ երջանիկ էին զգում իրենց, որ գոնե վալտաշի վրա տեսան Գույնզգույն Թագավորությունը: Երբ Իլեն մտածեց իր մասին, նա գտավ, որ ինքն էլ է դժբախտ և միաժամանակ երջանիկ, բոլորից ավելի երջանիկ: Մենք այլևս չենք կարող ապրել առանց Գույնզգույն Թագավորության,— հառաչելով ասաց նա:

— Մենք ոչ միայն պիտի տեսնենք Գույնզգույն Թագավորությունը, այլև պիտի ապրենք դրա մեջ: Ո՞վ է ուզում այդպես, երեխաներ:

Երեխաները նայեցին Իլե Տրապնային և տխուր ժպտացին նրա անհույս ցանկության վրա:

Ժունան, որ բոլորից ավելի մոտիկ էր կանգնած Իլեին, հանկարծ ձեռքը երկարեց դեպի վալտաշը և բացականչեց՝ համարյա վախեցած.

— Իմ կարծիքով դա կարող է բացվել, Իլե…

Իլեն, որ դեռ բռնել էր ձեռքում վալտաշը, որովհետև երեխաները դեռ շարունակում էին նայել, սկսեց զննել այն: Իրոք որ, վալտաշի վրա, նկարի հակառակ կողմում, կար մի երիզ, կարծես իրար վրա բերած հագուստի եզր: Իլեն իր մորթե ձեռնոցների պատռվածքներից դուրս հանեց մատները և կոխելով եղունգը վալտաշի սպիտակ հագուստի եզրի տակ, զգուշությամբ ձգեց: Հագուստը մի քիչ ետ գնաց:

— Բացվում է,— հուզված բղավեց նա,— տեսնես ի՞նչ կա մեջը…

Երեխաներն ավելի մեծ հետաքրքրությամբ խռնվեցին նրա շուրջը և շնչները պահած սկսեցին նայել: Իլեն սկսեց զգուշությամբ աշխատել եղունգներով: Վալտաշի երկու ծայրերը ծալված էին եռանկյունի ձևով: Նա կամացուկ բացեց դրանք և ետ տարավ հագուստը: Ետ տարավ և բղավեց ուրախությունից: Սպիտակ հագուստի տակ գտնվում էր մի ուրիշ հագուստ՝ արծաթագույն: Ճիշտ է, դրա վրա պատկեր չկար, բայց այնքա՜ն գեղեցիկ էր դա: Ոչ ոք չէր տեսել այդպիսի գույն…

— Դա էլ է բացվում,— ասաց Նուրիսը՝ հուզմունքից շնչասպառ:

Իլեն նայեց վալտաշի արծաթագույն հագուստին: Այո, դա էլ ուներ իր եզրը: Սրտի բաբախումով նա ետ տարավ նաև այդ հագուստը…

— Ո՛չ, ո՛չ անհնար էր հավատալ աչքերին: Եվ եթե չլիներ նույն րոպեին բոլոր երեխաների զարմացական միահամուռ բացականչությունը, Իլեն իրոք որ, չպիտի հավատար, թե դա իրականություն է: Նա իր ձեռքում բռնել էր... Ի՞նչ էր բռնել նա իր ձեռքում: Դա Գույնզգույն Թագավորության մի կտորն էր: Դա գույնզգույն սառույց էր: Այնտեղ բարակ շերտերով, լայնակի, ձգվել էին աշխարհի բոլոր հայտնի և անհայտ գույները՝ կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, վարդագույն, երկնագույն, էլի ուրիշ գույներ…

— Գույնզգույն սառույց,— բացականչեցին բոլորը:

— Ապակի,— ուղղեց Իլեն նրանց,— այսինքն՝ չհալչող սառույց:

Եվ որպեսզի ստուգի, որ իրոք, դա չհալչող սառույց է, նա հանեց լեզուն և մոտեցրեց վալտաշին՝ ինչպես մի քանի օր առաջ մոտեցրել էր Չհալչող Սառցե Տան պատին: Մոտեցրեց և նույն վայրկյանին կարծես մի ուժեղ հարված ցնցեց նրան: Աննկարագրելի բավականությունից նա չռեց աչքերը և ճոճվեց ոտքի վրա...

— Իլե՛,— վախեցած բղավեց Նուրիսը,— ի՞նչ պատահեց քեզ...

— Իլե՛,— բացականչեցին նաև մյուսները:

Բայց, ոչ, Իլեին ոչ մի վատ բան չէր պատահել, այդ նրանք տեսնում էին նրա փայլող աչքերից, ժպտացող շրթունքներից: Իլեն լուռ նայեց նրանց, ապա հարձակվելով վալտաշի վրա, սկսեց լիզել, լիզել…

— Այդ ի՞նչ ես անում, Իլե,— ապշեցին երեխաները,— դու խելագարվել ես:

Իլեն ախորժակով կուլ տվեց թուքը, լիզեց-լպստեց շրթունքները և ուրախ, երջանիկ, ծիծաղեց, ծիծաղեց ամբողջ դեմքով, բերանով, աչքերով, նույնիսկ քթով:

— Շարք կանգնեցեք, շո՛ւտ,— կարգադրեց նա:

Ծայր աստիճան հետաքրքրված, երեխաները կանգնեցին կողք կողքի:

— Հանեցեք լեզուներդ: Կախ գցեցեք…

Երեխաները հանեցին լեզուները, կախ գցեցին:

Իլե Տրապնան սկսեց անցնել նրանց շարքի առջևով՝ կանգ առնելով նրանցից յուրաքանչյուրի առաջ և վալտաշը մի քանի անգամ քսելով նրաց լեզվին: Երեխաները դրանից հետո իսկույն ներս էին քաշում լեզուները, թքոտում, ծծում, ծիծաղում և նույնիսկ լաց լինում ուրախությունից ու երջանկությունից: Մի՞թե կարող էր գոյություն ունենալ այդպիսի համ...

— Ինչպե՞ս է կոչվում դա,— հարցրեց Կիվերան,— քա՞ղցր, կծո՞ւ, թթո՞ւ:

— Կծու,— առանց մի րոպե տատանվելու, ասաց Իլեն:— Բայց գուցե քա՞ղցր…

Հասնելով Չինտամին, նա հարցրեց.

— Իսկ դո՞ւ, Չինտամ... Մի՞թե չես ուզում…

Իլեն իրավունք ուներ հարցնելու, որովհետև Չինտամը կանգնել էր, ճիշտ է, շարքի մեջ, բայց առանց լեզուն հանելու:

— Ոչ...— ասաց նա տատանվելով։— Դրանից հետո ես ավելի կդժբախտանամ։ Չեմ ուզում…

Իլեն անցավ առաջ։

— Սպասիր, Իլե Տրապնա, ուզում եմ...

Իլեն ետ դարձավ և մի քանի անգամ, ուժեղ կերպով, վալտաշը քսեց նրա լեզվին։

Ամբողջ շարքն անցնելուց հետո Իլեն ինքը նորից լիզեց վալտաշը՝ ոչ ավելի, ոչ պակաս, քան մյուսները, և նորից, երկրորդ անգամ, անցավ շարքի առջևով։ Այդպես նա անցավ մի քանի անգամ և ամեն անգամի վերջում լիզեց նաև ինքը։ Երեխաները խնդրում էին ավելի երկար լիզել, բայց նա թույլ չէր տալիս, որովհետև մյուսներն անհամբեր սպասում էին։ Նա արդեն մտածում էր, որ երբ բոլոր երեխաները գոնե մի քիչ կշտանան այդ համից, նա կսկսի ավելի երկար տալ վալտաշը յուրաքանչյուրին և այդպես ամեն օր, ամբողջ կյանքում։ Բայց մի անգամ էլ գույնզգույն սառույցը լիզելիս նա սարսափով նկատեց, որ դա փոքրացել էր…

— Վալտաշը հալչում է,— բացականչեց նա հուսահատ։ Եվ իսկույն հիշեց։ Չէ՞ որ Չհալչող Սառցե Տան երեխաներն ուտում վերջացնում էին դա։ Իհարկե, չհալչող սառույց չէ…

— Պահիր մնացածը քեզ,— ասաց մեկը,— դու արժանի ես դրան, Իլե Տրապնա…

— Ոչ, ոչ, լիզեցեք՝ քանի դեռ բոլորովին չի հալվել,— շտապեցրեց Իլեն։

— Նա միայն լիզելով է հալչում, իսկ այնպես՝ ոչ,— հանգստացրեց Նուրիսը։

— Միևնույնն է, լիզեցեք,— ասաց Իլեն։ — Վերջին անգամ։ Իսկ մնացածը ես կտանեմ Խարունա տատին…

Երբ այդ անգամ էլ ավարտեց շարքը, նա ասաց երեխաներին.

— Ես տեսա, թե ինչպես Չհալչող Սառցե Տանը բոլոր երեխաներն ունեին դրանից, և ոչ թե մի հատ, այլ շատ։ Եվ նրանք ոչ թե լիզում էին դա, այլ ուտում։ Ահա թե ինչպես են ապրում երեխաները Գույնզգույն Թագավորության մեջ։ Ես տեսա այդ բոլորը, բայց ես չեմ կարող ապրել նրանց պես։ Ես հիմա ամենադժբախտ երեխան եմ Սպիտակ Թագավորության մեջ։ Ո՞վ է ինձանից ավելի դժբախտ…

— Բոլորս, բոլորս։

— Երեխաներ, ես էլ եմ ուզում լինել երջանիկ։ Էլ ո՞վ է ուզում լինել երջանիկ։

— Բոլորս, բոլորս։

— Իսկ երջանիկ կարելի է լինել միայն Գույնզգույն Թագավորության մեջ, ճի՞շտ է։ Եկեք ուրեմն երդվենք, որ մենք կամ կմեռնենք, կամ ձեռք կբերենք Գույնզգույն Թագավորությունը…

— Իսկ ինչպե՞ս,— անվստահ հարցրեց Վինզան։

— Ես դա չգիտեմ,— անկեղծ խոստովանեց Իլեն։— Բայց եթե շատ ուզենանք, իհարկե, կկարողանանք։ Ո՞վ է երդվում…

— Մենք բոլորս արդեն երդվեցինք, Իլե Տրապնա,— ասաց Նուրիսը։— Մենք տվեցինք քաղցր երդում։ Վալտաշի համն առնելուց հետո մենք ինչպե՞ս կարող ենք այլևս ապրել առանց Գույնզգույն Թագավորության։ Մի՞թե բավական չէ մեր քաղցր երդումը…

— Բավական է,— ասաց Իլեն։

ՊԱՏԻԺ

Երեկոյան կատպիսցիները որսից վերադարձան տխուր, գրգռված։ Նրանք ոչինչ չէին որսացել։

Լիակատար մթություն էր և սկսվում էր բուքը։ Ինչպես երևում էր, գիշերը շատ ցուրտ էր լինելու։ Բոլորն շտապում էին վառել իրենց ճրագ-վառարանները՝ կրակը վերցնելով Ակիրսի տնից։ Այնտեղ Կատպիսի միակ ճրագն էր, որը վառվում էր գիշեր-ցերեկ, որպեսզի կրակը չանհետանար մարդկանց մոտից։ Դրա համար Ակիրսը, որսի բաժանքի ժամանակ ստանում էր ավելի մեծ քանակությամբ ճարպ։

Երբ Չինտամի ծնողները ներս սողացին իրենց սառցե բնակարանը, Չինտամը մորթի վրա նստած, ծնկները ձեռքերով գրկած, մտածում էր։ Մայրն իսկույն մոտեցավ որդուն և ամեն օրվա պես հարցրեց, թե ինչպես էր անցկացրել նա իր օրը և ինչ նորություն կար Կատպիսում։ Եվ ամեն օրվա նման որդին պատասխանեց, որ օրն անցկացրել է ոչինչ, լավ։ Ծուռ-ծուռ նայելով հոր կողմը ասաց նաև, որ Կատպիսում չկա ոչ մի նորություն և որտեղի՞ց կարող է լինել։

Հետո ընտանիքը նստեց ընթրիքի, այսինքն՝ հայրը միջանցքից բերեց երեք ձուկ և տվեց յուրաքանչյուրին մի հատ։ Ըստ իր սովորության, նա ձուկն սկսեց ուտել առանց տաշելու, կրծելով։ Մայրը տաշեց իր ձուկը և նույնպես ագահությամբ կերավ։ Չինտամը տաշեց դանդաղ, դժկամ, վերցրեց մի տաշեղ, առանց շտապելու տարավ բերանը, ծամեց զզվանքով։

— Ինչ է, դու կո՞ւշտ ես,— բարկացավ հայրը,— դու ձո՞ւկ ես կերել՝ առանց մեզ սպասելու։

Չինտամն առանց պատասխանելու, զզվանքի արտահայտությունը դեմքին, փորձեց կուլ տալ դեռ լրիվ չծամած ձուկը, բայց որձկալով դուրս տվեց այն։

— Ի՞նչ է պատահել քեզ, Չինտամ,— անհանգստացավ մայրը,— դու հիվա՞նդ ես։

Չինտամը բերանքսիվայր ընկավ հատակը ծածկած մորթու վրա և լաց եղավ աղիողորմ։ Մոր հարցից հետո նա օրորեց գլուխը՝ «ոչ, ոչ, հիվանդ չեմ»։

— Նա ձուկ է կերել՝ առանց մեզ սպասելու,— կատաղած կրկնեց հայրը։ Եվ չնայած նրան, որ Չինտամը նորից շարժեց գլուխը՝ «ոչ, ոչ, չեմ կերել», հայրը կոպիտ բռնեց տղայի օձիքից, բարձրացրեց վեր և ուզում էր խփել նրան, բայց մայրը բռնեց նրա թևը։

— Ես չեմ ուզում ձուկ ուտել, ես չեմ կարող ձուկ ուտել, ես վալտաշ եմ ուզում,— փոքր երեխայի նման դառը հեկեկաց Չինտամը։

— Ի՞նչ վալտաշ, ի՞նչ ես դուրս տալիս,— չհասկացավ հայրը և նորից բարձրացրեց բռունցքը։

— Սպասիր,— բարկացավ կինը նրա վրա,— տեսնենք ինչ է ասում։ Պատմիր, որդիս, մենք ոչինչ չենք հասկանում։

Մի կերպ զսպելով արցունքները, Չինտամը պատմեց ամեն ինչ։ Ամբողջ պատմության ընթացքում ծնողները լուռ էին, միայն թե Ակիրսը մերթ-մերթ կատաղի փնչում էր, և նրա աչքերը փայլատակում էին։

— Ես վաղուց էի ասում, որ Տրապնաների ամբողջ ընտանիքը հարկավոր էր կոտորել,— գոռաց նա հանկարծ։— Այն քավթառ Խարունային՝ նույնպես։ Ես դեռ կխոսեմ նրանց հետ...

Նայելով դեռ արտասվող Չինտամին, նա տվեց նրան ձուկը և կարգադրեց.

— Կե՛ր։

Չինտամը գլուխն օրորեց բացասաբար։

Հայրն ուժեղ հարվածեց նրան.

— Կե՛ր։

Որդին սկսեց բարձր հեկակալ, բայց դարձյալ ձեռք չտվեց ձկանը։

Հայրը նորից խփեց։

— Կե՛ր։

Մայրը, չհամարձակվելով ընդհատել հորը, խնդրեց որդուն.

— Կեր, Չինտամ, սիրելիս, թե չէ կմեռնես սովից…

— Թող մեռնեմ,— հուսահատ բղավեց տղան,— բայց ես այլևս ձուկ չեմ ուտի…

Ակիրսը հարձակվեց նրա վրա, սկսեց անխնա ծեծել։ Կնոջը, որն այնուամենայնիվ փորձեց միջամտել, նա նույնպես հարվածեց մի քանի անգամ։ Ապա վերցնելով մի մեծ, սուր ոսկոր, որով արջ են սպանում, սողաց տնից դուրս։

Կինը սարսափած նայեց նրա ետևից։

Քամին ուժեղ փչում էր հարավից, և ձյունը ծածկել էր բոլոր տների մուտքերն ու հարավային պատերը։ Ակիրսը ոտքի կանգնեց, թափ տվեց ձյունն իր վրայից և մթության մեջ նայեց իր շուրջը։ Նրան թվաց, թե մի քիչ հեռվում շարժվում է ինչ-որ մեկը։

— Ո՞վ է,— հարցրեց նա։

— Այդ ես եմ, Ակիրս,— լսվեց Վինզայի հոր ձայնը,— տղաս հիվանդացել է, գնում եմ Խարունայի մոտ՝ իմանալու, թե ինչպես պետք է բուժել։

— Իսկ ի՞նչ է պատահել որդուդ,— հարցրեց Ակիրսը։

— Չգիտեմ, Ակիրս։ Տաքություն չունի, ամեն ինչ կարգին է, բայց ձուկ չի ուտում։ Հենց որ տանում է բերանը, իսկույն որձկում է և ետ է տալիս։ Ինքն էլ չգիտե, թե ինչից է դա։ Ոչինչ չի ասում։

— Մի գնա այդ քավթառի մոտ,— մռայլ ասաց Չինտամի հայրը,— ես գիտեմ, թե ինչ հիվանդություն է դա։ Եկ ինձ հետ։

— Ո՞ւր։

Ակիրսը չպատասխանեց, այլ քայլեց: Վինզայի հայրը հետևեց նրան: Հասնելով հաջորդ տանը, Ակիրսն ասաց իր ուղեկցին.

— Ապա, մտնենք, տեսնենք ինչ է կատարվում այստեղ...

Բնակարանում ոչ ոք քնած չէր, հայրն ու մայրն անհանգստացած հայացքով նայում էին իրենց երեխաներին՝ տղային ու աղջկան, որոնք պառկած, լաց էին լինում: Նրանց կողքին դրված էին նրանց ձկները՝ բոլորովին ձեռք չտված:

— Գնանք,— ասաց Ակիրսը՝ երեխաների հորը,— ես գիտեմ դրանց հիվանդության պատճառը: Հարկավոր է պատժել մեղավորին:

— Որտեղի՞ց գիտես պատճառը՝ երբ իրենք էլ չգիտեն,— չհավատաց մայրը:

— Գիտեն, բայց չեն ասում: Բոլոր երեխաները ստախոս ու գաղտնապահ են Կատպիսում՝ բացի իմ Չինտամից…

Իր ուղեկիցների հետ միասին հերթով մտնելով բոլոր բնակարանները, Ակիրսը համոզվեց, որ բոլոր երեխաները որձկալով հրաժարվում են ձուկ ուտելուց, լաց են լինում և նրանցից ոչ ոք չի ասում պատճառը: Հավաքելով նրանց ծնողներին և ճանապարհին պատմելով ամեն ինչ, նա նրանց տարավ Իլե Տրապնայի բնակարանը:

— Մենք կխոսենք նրա հետ՝ ինչպես հարկն է,— բաց թողեց նա ատամների արանքից:— Այդ լակոտը դժբախտացրեց բոլորիս: Մեր երեխաները կմեռնեն սովից:

— Իսկ այդ ինչո՞ւ ես վերցրել հետդ,— հարցրեց Կիվերայի մայրը՝ տեսնելով ոսկրե զենքն Ակիրսի ձեռքում:

— Սա՞... Պետք կգա,— ասաց Ակիրսը չարագուշակ կերպով:

— Ի՞նչ ես ուզում անել,— վախեցած հարցրեց Վինզայի հայրը:

— Քայլիր, քայլիր, դա քո գործը չէ:

— Ինչպե՞ս թե քո գործը չէ,— զայրացավ մի ծերունի:— Դու մենա՞կ ես ապրում Կատպիսում, ի՞նչ է: Ինչպես որոշեն բոլորը՝ այնպես էլ կվարվենք Իլե Տրապնայի հետ: Ճիշտ է, նա շատ վատ բան է կատարել, բայց մի՞թե մեր երեխաները կառողջանան՝ եթե մենք սպանենք նրան…

Երբ Ակիրսը ներս սողաց Տրապնաների բնակարանը, Իլեն այնտեղ, մեջտեղում կանգնած, վալտաշի հագուստը բռնել էր ճրագի մոտ և դրա լույսի տակ կլանված նայում էր Նոր տարվա ծառի նկարին: Տեսնելով Ակիրսին, նա սոսկալի վախեցավ և, թաքցնելով նկարը մեջքի ետևը, մեջքը հենեց պատին:

Ակիրսը ոչ մի շարժում չարեց և ոչինչ չասաց՝ մինչև որ մյուս բոլոր մարդիկ չսողացին ներս: Բնակարանը լիք-լցվեց մարդկանցով: Իլեն ապշած նայեց նրանց՝ առանց հասկանալու:

Այժմ միայն, մոտենալով Իլեին, Ակիրսը ձեռքը հանգիստ մեկնեց նրան:

— Տուր վալտաշը:

— Չեմ տա,— մերժեց Իլեն:

Ակիրսն առանց դժվարության քաշեց նրա թևը մեջքի ետևից, բաց արեց նրա բռունցքը և վերցրեց այնտեղից վալտաշի հագուստը: Մոտեցնելով ճրագին, նա սկսեց նայել: Նրա ուսերի վրայով սկսեցին նայել նաև ուրիշները: Ոչ ոք ոչինչ չասաց: Երկար, շատ երկար նայեցին մարդիկ, բայց հանկարծ Ակիրսն սթափվեց, ետ հրեց մարդկանց իր ուսերի ետևից:

— Ի՞նչ է, դուք է՞լ եք ուզում նմանվել ձեր երեխաներին,— գոռաց նա ահարկու,— ի՞նչ կա այստեղ նայելու:

Վալտաշի հագուստը, որ նա խիստ մոտ էր բռնել ճրագին, հանկարծ բոցավառվեց կրակով: Իլեն առաջինը նկատեց այդ:

— Կրակն ուտում է վալտաշի հագուստը,— գոռաց նա,— տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ…

Նկատելով իր ձեռքում բռնած առարկայի այրվելը, Ակիրսն ուրախացավ և ավելի բարձրացնելով ձեռքը, պահեց այդպես, մինչև որ այն այրվեց-վերջացավ:

— Տո՛ւր ինձ, տո՛ւր ինձ,— գոռում և արտասվում էր Իլեն: Նա նույնիսկ հարձակվեց Ակիրսի վրա, ցատկեց վեր, փորձեց հասնել նրա ձեռքին, բայց Ակիրսը չհրեց նրան: Եվ ապա մոխրի բարակ շերտը դեմ անելով տղայի քթին, ծիծաղեց.

— Այ, հիմա վերցրու:

Իլեն խփեց նրա ձեռքին և ընկնելով հատակի վրա, լաց եղավ աղիողորմ: Մյուս մարդիկ, որ լիք-լցվել էին բնակարանը, լուռ էին և դրանով իրենց համաձայնությունն էին տալիս Ակիրսին:

— Վեր կաց,— ասաց Չինտամի հայրը և կոպիտ կերպով ոտքի բարձրացրեց տղային:— Եվ ասա, որտե՞ղ է վալտաշն ինքը…

Իլեն, որ լալիս էր, անսպասելիորեն սրբեց արցունքները և ասաց համարձակ.

— Չկա, Ակիրս, ուշացել ես: Վալտաշը լիզել են երեխաները:

— Ինչո՞ւ տվեցիր լիզելու:

— Որպեսզի նրանք գոնե մի անգամ լինեն երջանիկ: Իսկ դու երբեք չես լինի երջանիկ, Ակիրս, դու չգիտես էլ, թե ինչ համ ունի վալտաշը, դու չգիտես նույնիսկ, թե ինչ է նշանակում կծու, այսինքն՝ ոչ թե կծու, այլ քաղցր:

— Իսկ դու գիտե՞ս, որ բոլոր երեխաները մեռնելու են սովից,— ասաց Կիվերայի մայրը:— Եվ դու՝ նույնպես:

— Չեն մեռնի, մորաքույր: Ես էլ ամբողջ երեկոյան չէի կարողանում ձուկ ուտել, բայց հետո կերա: Նրանք էլ, վաղ թե ուշ, կուտեն՝ հենց որ շատ սովածանան: Իսկ վալտաշը չեն մոռանա, իհարկե: Կհիշեն ամեն անգամ և հիշելիս կլինեն երջանիկ: Իսկ դու երջանիկ չես լինի: Ակիրս…

— Տո՛ւր վալտաշը,— կատաղությունը զսպելով, բայց ամբողջ դեմքով կարմրած, նորից պահանջեց Ակիրսը:— Ես գիտեմ, որ մնացել է մի կտոր:

— Իսկ քո այդ անպիտան լրտես Չինտամը մի՞թե չի ասել քեզ, որ այդ կտորը ես տարա Խարունա տատին:

— Խարունայի հետ մենք նույնպես կմաքրենք մեր հաշիվը,— սպառնագին մռմռաց Ակիրսը։— Բավական է, որ պղտորի մեր երեխաների մտքերը։

— Հարկավոր չէ նրան ձեռք տալ, խնդրում եմ,— աղերսեց Իլեն։— Նա այլևս ոչինչ չունի մեզ պատմելու, նա ամեն ինչ պատմել է։

— Ոչ, դեռ ունի,— գոռաց Ակիրսը։— Ես ոչնչացրի Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվն իմ տնից, քո տնից, նա այլևս գոյություն չունի, բայց այդ քավթառը կարող է նորից վերականգնել և հաղորդել ձեզ։ Պետք է սպանել նրան։

Հավաքվածներից մի քանիսը գլուխներն օրորեցին հաստատակամորեն։

— Նա չգիտե հաշիվը,— ճչաց Իլեն։

— Գիտե,— փնչաց Ակիրսը,— նա ամեն ինչ գիտե։

— Այո, գիտե,— ասաց Իլեն հուսահատ,— բայց արդեն հայտնել է ինձ։ Ի՞նչ օգուտ նրան սպանելուց, երբ ես ինքս էլ արդեն գիտեմ գաղտնիքը։

— Սուտ ես ասում, լակոտ,— ֆշշաց Կատպիսի սարսափելի բնակիչը,— սուտ ես ասում, որ փրկես քավթառին։

— Ոչ, ճիշտ եմ ասում, Ակիրս։ Էսիր... Քսան անգամ քսան՝ առանց քսանի և տասնհինգի, իսկ չորրորդ տարին…

— Ի՞նչ բան է դա,— չհասկացավ Չինտամի հայրը։

— Դա Վերջին Ձկնագլխի Օրվա հաշիվն է՝ առանց ձկան գլուխների։ Մտքով պահելու համար…

— Ա՜...— սառեց մնաց Ակիրսը։— Ուրեմն դու հաջորդ տարիներին է՞լ ես վտանգի ենթարկելու մեր երեխաներին…

Շուռ գալով դեպի կատպիսցիները, Ակիրսը հարցրեց.

— Իսկ հիմա՞ ինչ եք կարծում, հարկավոր չէ՞ սպանել Խարունային և այս լակոտին…

Ոչ ոք չխոսեց։ Դժվար հարց էր տվել Ակիրսը, բայց կարևոր հարց, որից կախված էր բոլոր երեխաների կյանքը։ Մարդիկ սկսեցին երկար մտածել։ Նրանցից ոչ ոք դաժան չէր, ոչ ոք չէր ուզում վնասել Իլեին, բայց չէ՞ որ բոլորն ուզում էին փրկել իրենց երեխաներին…

— Սպանել...— ասաց վերջապես մի ծերունի։

— Սպանել,— միացան նրա հետ ուրիշ մի քանիսը։

— Սպանել,— ակամա, մեծ դժվարությամբ, համաձայնվեցին բոլորը։

Իլեի արյունը սառեց երակներում։ Ակիրսը նայեց նրան, չար ծիծաղեց և դանդաղ բարձրացրեց սուր ոսկորը։

— Ես դուրս կգամ,— ճչաց Նուրիսի մայրը,— ես չեմ կարող տեսնել, թե ինչպես է մեռնելու խեղճ տղան...

— Ես նույնպես կգնամ,— արտասվելով ասաց Կիվերայի մայրը։ Ակիրսը մի քայլ արեց դեպի Իլեն։

Ակիրսը երկրորդ քայլն արեց դեպի Իլեն և այլևս ոչ մի տարածություն չմնաց նրանց միջև:

Իլեն զգաց, որ հասել է իր վերջին ժամը: Նայեց հավաքվածներին, բայց միայն դաժան մռայլություն կարդաց նրանց աչքերում: Նա հասկացավ, որ այդ բարի մարդիկ իրենք էլ են խղճում նրան, բայց ուզում են փրկել իրենց երեխաներին: Իլեն զգաց, որ չկա իր համար այլևս ոչ մի փրկություն, բայց այդ րոպեին նա մտածում էր ոչ այնքան իր մասին, որքան որ կույր Խարունայի, որը նույնպես, զոհ էր գնալու իր պատճառով: Ինչպե՞ս փրկել նրան... Իլեին ապրելու էր մնացել միայն մի վայրկյան՝ մինչև որ Ակիրսը թափով վար իջեցներ ձեռքում բռնած սուր ոսկորը: Ի՞նչ կարելի էր մտածել այդ մի վայրկյանում...

— Սպասիր, Ակիրս,— հանկարծ բացականչեց Իլեն։— Ի՞նչ օգուտ ինձ ու Խարունա տատին սպանելուց, քանի որ Վերջին Զկնագլխի Օրվա գաղտնիքը ես արդեն հայտնել եմ բոլոր երեխաներին…

— Ի՞նչ...— չհավատաց Ակիրսը։— հայտնել ես... բոլորի՞ն...

— Այո, բոլորին՝ բացի Չինտամից,— հաստատ ձայնով պնդեց իր սուտն Իլեն՝ զգալով, որ արդեն փրկված են թե՛ Խարունա տատը և թե՛ ինքը։— Ուզո՞ւմ ես՝ կարող եմ երդվել: Երդվում եմ... եղբորս հիշատակով…

Ոսկորը դողում էր Ակիրսի ձեռքում: Նա այժմ ավելի էր կատաղել և նորից բարձրացրեց ձեռքը նրա վրա։

— Հեռու քաշվիր, Ակիրս,— ասաց մի ծերունի՝ մտնելով տղայի և նրա միջև։— Հիմա արդեն, երբ բոլորին է հայտնի գաղտնիքը, սպանելն այլևս օգուտ չունի: Վրեժխնդրությունն ընդունված չէ Կատպիսում: Ապրիր, Իլե, և թող արեգակը լինի քո դատավորը…

Ակիրսը փնչաց ափսոսանքով և վար բերեց ոսկորը:

— Գնանք,— դիմեց Վինզայի հայրը բոլորին:

— Սպասեցեք,— կանգնեցրեց Ակիրսը նրանց,— էլի մի գործ կա։— Ապա, դառնալով դեպի Իլեն, ասաց։— Տուր նաև վալտաշի մյուս հագուստը: Դա էլ է հարկավոր ոչնչացնել: Չփորձես ստել, թե վալտաշը երկրորդ հագուստ չի ունեցել: Չինտամն ինձ պատմել է ամեն ինչ։

Նորից չգրգռելու համար մարդկանց, Իլեն գրպանից հանեց արծաթագույն հագուստը և տվեց Ակիրսին: Ակիրսը շուռումուռ տվեց այն, նայեց և մոտեցրեց կրակին: Բայց կրակը չէր ուզում ուտել վալտաշի այդ հագուստը: Ակիրսը ետ տարավ դա կրակից, մոտեցրեց իր աչքերին: Արծաթագույն հագուստի վրա, մի տեղում, նա նկատեց ինչ-որ գունավոր շերտ: Նա հոտ քաշեց, բայց ոչ մի հոտ չէր գալիս: Այս անգամ Ակիրսն իր լեզուն մոտեցրեց դրան, լիզեց, և երանության զգացումը ցնցեց նրա ամբողջ դաժան կերպարանքը: Հանելով իր մեծ ու լայն լեզուն, նա սկսեց նորից և նորից լիզել արծաթագույն խշխշան հագուստը, ապա, չգոհանալով դրանով, առավ բերանի մեջ, ծամծմեց, կլորացրեց և կուլ տվեց: Լիզելով շրթունքները և մի քանի անգամ չմփչմփացնելով բերանը, նա հանկարծ իր ահագին մեծ թաթերով խփեց իր գլխին և գոռաց սպիտակ արջի պես.

— Օ՜յ, այդ ի՜նչ արեցի, ինչո՞ւ առա վալտաշի համը... Ես դժբախտացա, ես այլևս չեմ կարող ձուկ ուտել, ոչինչ չեմ կարող ուտել՝ բացի վալտաշից: Օ՜յ, օ՜յ... Ես վալտաշ եմ ուզում, ես վալտաշ եմ ուզում…

Իլեն բավարարված նայեց նրան: Իր չարության համար Ակիրսը դաժանորեն պատժված էր:

ԱԿԻՐՍ ԵՎ ԻԼԵ

Ինչպես Իլեն էր ասել համոզված կերպով, Կատպիսի երեխաները կամաց-կամաց վարժվեցին նորից ձուկ ուտելուն: Ճիշտ է, մի քանի օր սոված մնալուց հետո նրանք բավական նիհարել էին, իսկ այժմ, ամեն անգամ ձուկ ուտելիս զզվանքով ծռմռում էին դեմքը՝ հիշելով վալտաշի սքանչելի համը, բայց ոչ ոք, իհարկե, սովամահ չէր եղել: Իսկ պառավ Խարունան վալտաշի մնացորդը լիզել-վերջացնելուց հետո ոչ մի օր չէր կորցրել իր ախորժակը: Բայց խեղճ պառավն այնքան քիչ էր ուտում և այնպես հաճախ էր սոված մնում, որ եթե մի երկու օր ոչինչ չուտեր՝ անշուշտ կմեռներ սովից:

Իսկ Ակիրսը, իրոք որ, պատժված էր չարաչար: Հինգ-վեց օր նա բոլորովին ոչինչ չկերավ, չափազանց նիհարեց և այժմ ոչ թե վախ էր պատճառում, այլ ծիծաղ: Առանց այն էլ աշխատել չսիրող, նա այժմ որսի ժամանակ բոլորովին ոչինչ չէր անում, այլ մի կողմ կանգնած, կարգադրում էր՝ «ձյունը քանդել», «հարձակվել», «չվախենալ», «սպանել»…

Երբ կատպիսցիների մոտ հավաքվեց արջի երեք մորթի, նրանք որոշեցին տանել դա Տավա Նեմային: Ռումամի պաշարն արդեն վերջանում էր և, եթե բոլորովին վերջանար՝ մարդիկ պիտի հիվանդանային լնդացավից:

Այդ անգամ Չհալչող Սառցե Տուն գնալու հերթը Վինզայի հորն էր, բայց աշխատել չսիրող Ակիրսն անսպասելի կերպով պատրաստակամություն հայտնեց ինքը տանել արջի մորթիները: Բոլորը չափազանց զարմացան, իսկ Վինզայի հայրն ասաց, որ ինքը հիվանդ չէ, որպեսզի իր փոխարեն ուրիշն աշխատի: Նա այդ թույլ չի տա: Բայց Ակիրսն սկսեց գոռգոռալ և պահանջել, որպեսզի անպայման ինքը տանի: Իր մասին ասում են, որ նա ծույլ և անբան մարդ է, իսկ ինքն ահա ուզում է ապացուցել հակառակը: Վերջապես մարդիկ զիջեցին, և Ակիրսը գնաց:

Չհալչող Սառցե Տունը խուլ և դատարկ կանգնած էր շրջապատի սպիտակության մեջ: Նրա ապակե պատերը միշտ տաք էին և իջնող ձյան հատիկները, շփվելով ապակուն, իսկույն գոլորշիանում էին կամ հալչում և հոսում վար: Հիմքի շուրջը գոյացել էր սառցե հաստ շրջանակ, տունը կարծես դուրս էր ցցվել ուղղակի սառույցների միջից:

Հասնելով Չհալչող Սառցե Տանը, Ակիրսը ցած նետեց արջի երեք մորթիները, սրբեց քրտինքը, շունչ քաշեց և ապա սկսեց զույգ ափերով թակել ապակին: Երկար ժամանակ նրան ոչ ոք չէր արձագանքում, բայց հետո հատակի դռնակը կիսով չափ բացվեց, և այնտեղից դուրս նայեց մի մարդ: Տեսնելով Ակիրսին և նրա մոտ՝ արջի մորթիները, նա նորից անհետացավ՝ իր ետևից դռնակը ծածկելով: Ակիրսն էլի սպասեց մի քիչ, որից հետո դռնակը նորից բացվեց և գետնի տակից սկսեց բարձրանալ մի մեծ մսագունդ՝ Տավա Նեման: Նրա ետևից բարձրացավ և առաջին անգամ երևացած նիհար մարդը և սկսեց բաց անել պատի կլոր անցքը: Ակիրսը կռացավ և արջի մորթիները մեկառմեկ հրեց այդ անցքով ներս: Տավա Նեման, դեմքի խիստ դժգոհ արտահայտությամբ, սկսեց ուշադիր զննել մորթիները և նետել մի կողմ՝ այնպիսի ձևով, կարծես բոլորովին անպետք իրեր էր շպրտում իրենից հեռու: Նա գլխով արեց նիհար մարդուն և ինչ-որ բան ասաց: Նիհար մարդը տարավ մորթիները գետնի տակ և այնտեղից բերեց երեք փոքրիկ փունջ ռումամ: Տավա Նեման վերցրեց փնջերը նրանից, շպրտեց անցքով դուրս, դեպի Ակիրսը, և կարգադրեց նիհար մարդուն՝ անցքը փակել:

Տեսնելով այդ, Ակիրսը ձեռքի աղաչական շարժումով խնդրեց սպասել: Տավա Նեման զարմացած նայեց նրան: Ակիրսը յուրաքանչյուր փնջից հանեց մի քանի ռումամ, միացրեց իրար և դա դուրս եկավ մի փնջի չափ: Երկարելով այդ փունջը Տավա Նեմային, նա խնդրեց.

— Առ և սրա փոխարեն տուր ինձ վալտաշ…

Չհալչող Սառցե Տան տերը չհասկացավ նրան:

— Վալտաշ, վալտաշ...— կրկնեց Ակիրսը:

Հաստամարմին մարդն ինչ-որ բան հարցրեց բարկացած, բայց այժմ արդեն Ակիրսը չհասկացավ նրան: Կրկնելով էլի մի քանի անգամ՝ «վալտաշ, վալտաշ» և տեսնելով, որ իզուր է դա, նա դուրս հանեց իր մեծ, լայն լեզուն և սկսեց լիզելու շարժումներ անել: Տավա Նեման նորից ոչինչ չհասկացավ, բարկանալով թքեց հատակին և իջավ գետնի տակ: Նիհար մարդը փակեց պատի անցքը և նույնպես անհետացավ:

Ակիրսը ձյան վրայից վերցրեց ռումամի չորրորդ փունջը, նորից բաժանեց մյուս երեք փնջերի վրա և վերադարձավ Կատպիս:

Հետևյալ առավոտյան, երբ Իլեն դեռ պառկած էր իր մորթե տոպրակի մեջ, նրա բնակարանը սողաց ահարկու Ակիրսը: Իլեն սարսափած վեր ցատկեց տեղից:

— Պառկիր, պառկիր,— ձեռքով արեց Ակիրսը և նույնիսկ փորձեց ժպիտ ձևացնել իր դաժան դեմքի վրա:

Իլեն չպառկեց, այլ նստեց և սկսեց տագնապով նայել Կատպիսի ամենավատ բնակչին:

— Տրապնա,— ասաց Ակիրսը,— դու լա՞վ գիտես, որ գույնզգույն սառույցը կոչվում է վալտաշ…

— Այո...— կմկմալով հաստատեց Իլեն:

— Ո՞վ է ասել քեզ:

— Տավա Նեմայի աղջիկը,— ստեց Իլեն,— Տրիսնան:

— Իսկ ինչի՞ համար Տավա Նեման չհասկացավ ինձ,— տարակուսեց Ակիրսը:— Երեկ ես գնացի նրա մոտ, տարա արջի մորթիները և խնդրեցի մի վալտաշ, բայց նա չհասկացավ, թե ինչ է նշանակում վալտաշ: Ես ցույց տվեցի, թե իբր լիզում եմ, բայց նա այդ էլ չհասկացավ:

— Դու ինքդ ես շփոթեցրել Տավա Նեմային, Ակիրս հորեղբայր,— ժպտաց Իլեն:— Մի՞թե վալտաշը լիզում են: Այդ մենք լիզեցինք, որովհետև նա մի հատ էր և չէր բավականացնի բոլորիս: Իսկ Չհալչող Սառցե Տան երեխաները դա դնում էին իրենց բերանը և ուտում՝ ինչպես մենք՝ ձուկը:

— Ուտո՞ւմ,— կրկնեց Ակիրսը:

— Այո, այո, իսկ մեծերը խմում էին դա:

— Ի՞նչ ես դուրս տալիս,— զայրացավ Ակիրսը:

— Այո՛,— պնդեց Իլեն,— խմում էին: Այնպես որ դու ոչ թե լիզելու շարժում պիտի անեիր, այլ խմելու…

Ակիրսը կասկածով նայեց երեխային։

— Ճիշտ եմ ասում,— վստահեցրեց երեխան։

— Տեսնենք...— ասաց Ակիրսը և ելավ դուրս։

Իլե Տրապնան հանգիստ շունչ քաշեց։

Հետևյալ օրն Ակիրսը, առանց մտածելու, որ սոված է թողնում իր երեխային ու կնոջը, վերցրեց իրենց ձկան փոքրիկ պաշարի մի զգալի մասը և ուղևորվեց դեպի Չհալչող Սառցե Տունը։ Այս անգամ տան մոտ գտնվում էին ուրիշ բնակավայրերի մարդիկ, որոնք նույնպես արջի մորթիներ էին բերել ռումամի հետ փոխանակելու համար։ Ակիրսը չխոսեց նրանցից ոչ մեկի հետ, նույնիսկ չբարևեց, այլ մի կողմ քաշվելով սպասեց, մինչև որ նրանք ավարտեն իրենց գործը և հեռանան։

Քիչ հետո, մնալով մենակ, նա մոտեցավ պատի անցքին և այնտեղով ներս թափեց իր բերած ձկները։ Տեսնելով դա, Տավա Նեման խիստ զարմացավ։ Որտեղի՞ց ձուկն այս ձմռան կեսին՝ երբ գետը սառած է։ Բայց նա ոչ միայն զարմացավ, այլև գոհ մնաց։ Հենց այն է, ուզում էր կարգադրել իր ծառային՝ ռումամ բերել, երբ Ակիրսը, ինչպես սովորեցրել էր նրան Իլեն, բռունցքը մոտեցրեց բերանին և խմելու շարժում արեց։ Տավա Նեման մեծ զարմանքով նայեց նրան, ապա հանկարծ ժպտաց, մատը թափ տվեց նրա վրա և ինչ-որ բան կարգադրեց իր նիհար ծառային։ Ծառան, սովորականի պես անխոս իջավ գետնի տակ և դուրս բերեց այնտեղից մի արծաթագույն սկուտեղ՝ վրան դրած չհալչող սառցե գավաթ, որի մեջ կար ինչ որ բաց դեղնագույն հեղուկ։ Տավա Նեման վերցրեց գավաթը և ինքը դուրս երկարեց պատի անցքից։

Ակիրսը դողդողացող ձեռքերով բռնեց գավաթը, զգուշությամբ տարավ դեպի իր բերանը, նայեց երջանիկ հայացքով, հոտ քաշեց, որից հետո նրա դեմքը դարձավ ավելի երջանիկ։ Ապա, շարունակ զույգ ձեռքով, նա գավաթը մոտեցրեց իր մեծ բերանին և մի ումպով դատարկեց պարունակությունը։

Հազիվ էր Ակիրսը կուլ տվել հեղուկը, երբ նրա աչքերը չռվեցին սարսափից։ Հեղուկի համը բոլորովին նման չէր վալտաշի համին։ Նա իր բերանում զգաց ինչ-որ դառնահամ, իսկ կոկորդն ու փորն այնպես այրվեցին, կարծես կրակ էր կուլ տվել։ Նա լեղապատառ նայեց Տավա Նեմային։ Չհալչող Սառցե Տան տերն այնքան բարձր էր ծիծաղում, որ նրա քրքիջը պարզ լսվում էր պատի անցքից։ Ակիրսը, կարծելով, թե ինքը սխալվել է և այնուամենայնիվ հարկավոր էր ոչ թե խմել, այլ լիզել, սկսեց լիզել գավաթը։ Նկատելով այդ Տավա Նեման խիստ բարկացավ և պահանջեց գավաթը։ Ակիրսը գավաթը տվեց նրան և սարսափահար վազ տվեց դեպի Կատպիս՝ չհասկանալով, թե ինչ էր կատարվում իր հետ։

Հազիվ էր նա կատարել մի քանի քայլ, երբ նրա սարսափը փոխարկվեց բավականության։ Ճիշտ է, նրա աչքերը պղտորվել էին և նա շրջապատը տեսնում էր կարծես մշուշի մեջ, իսկ ինքը, չգիտես ինչու, չէր կարողանում ուղիղ քայլել, բայց այդ բոլորն այլևս չէր անհանգստացնում նրան։ Նա ցուրտ չէր զգում և ընդհանրապես հիանալի տրամադրության մեջ էր։ Ոտքերը ոլոր-մոլոր գցելով, նա ծիծաղում էր, երգում և երբեմն էլ հենց այնպես գոռում։

Ակիրսը Կատպիս հասավ ուշ երեկոյան։ Ամբողջ բնակավայրը հուզված էր, բոլորը զայրացել էին, որ նա, հիվանդ ձևանալով, դուրս չէր եկել աշխատանքի, բայց կարողացել էր գնալ Չհալչող Սառցե Տուն։ Եվ ի՞նչ գործ ուներ նա այնտեղ…

Ակիրսի կինն իր ամուսնու վրա զայրացած էր կրկնակի չափով։ Ընթրելու համար ձուկ վերցնելիս նա նկատել էր իրենց ձկան պաշարի քչանալը և հասկացել էր, որ դա Ակիրսն էր տարել... Նա

մտքովն էլ չէր անցկացնում թե կարող էր մի ուրիշը գողացած լինել, որովհետև Կատպիսում գողություն չկար... Մարդիկ գիտեին, որ գողանալ ուրիշի ուտելիքը՝ նշանակում էր մահվան դատապարտել նրան: Իսկ այդպիսի գողն անշուշտ ինքը կդատապարտվեր մահվան՝ բոլորի կողմից:

Այժմ Կատպիսի բնակիչներից ամենաազդեցիկները, նրա բնակարանում հավաքված, սպասում էին նրա վերադարձին՝ հետը ինչպես հարկն է խոսելու համար:

Ակիրսն իր բնակարանը մտավ զվարթ երգելով: Տեսնելով այնտեղ հավաքվածների մռայլ հայացքները, նա բոլորովին չանհանգստացավ ոչ նրանց ներկայությունից և ոչ էլ հայացքներից, այլ կարծես ավելի ուրախանալով ունկնդիրներ և հանդիսատեսներ գտնելու համար, սկսեց ավելի բարձր երգել և միաժամանակ պարել:

Այդ ժամանակ մարդիկ մտածեցին, թե Ակիրսն իրոք որ հիվանդ է, բայց մի այնպիսի հիվանդությամբ, որպիսին դեռ երբեք չի եղել Կատպիսում: Նրանք ոչինչ չասացին նրան, որովհետև Ակիրսը որևէ բան հասկանալու վիճակի մեջ չէր: Կատպիսի ամենավատ բնակիչը պարեց էլի մի քիչ, ապա նրա գլուխը պտտվեց, նա սպանված արջի նման թրմփաց գետնին և սկսեց խռմփալ:

— Մեռնում է,— ճչաց Չինտամը:

Մի քանիսը կռացան դեպի պառկածը: Բայց նա ոչ թե մեռնում էր, այլ խոր քնած էր:

Կատպիսի բնակիչները մեկառմեկ դուրս եկան նրա բնակարանից, իսկ կինն ամբողջ գիշերը չքնեց, այլ նրա մոտ նստած, հսկեց նրա քունը:

Առավոտյան Ակիրսն արթնացավ ուժեղ գլխացավով: Նա մենակ էր բնակարանում: Կինը գնացել էր որսի, իսկ որդին՝ խաղ անելու և մյուս երեխաների խոսակցությունները լսելու:

Նախորդ երեկոյից Ակիրսի մոտ մնացել էր ինչ-որ հաճելի հիշողություն: Ճիշտ է, նա շատ քիչ բան էր հիշում, բայց լավ հիշում էր, որ վերադարձի ամբողջ ճանապարհին նա ցուրտ չէր զգում և հիանալի տրամադրության մեջ էր: Երբ մտավ իր բնակարանը՝ դա լիքն էր մարդկանցով: Ինչո՞ւ... Ակիրսը մռայլվեց: Իսկապես, ինչո՞ւ էին հավաքվել մարդիկ: Նրանք ինչ-որ բան ասացին նրան, կինը նույնպես ինչ-որ բան ասաց, բայց թե ինչ՝ չի հիշում: Ափսոս, ոչ ոք չկա տանը, որ հարցնի...

Ակիրսը վեր կացավ տոպրակի միջից: Նրա գլուխը պտտվում էր, քիչ մնաց, որ վար ընկնի: «Երևի սոված եմ», մտածեց նա և ուզեց գնալ ձուկ բերելու, բայց ախորժակ չուներ: Դրա փոխարեն նա հանկարծ մի այնպիսի ցանկություն զգաց նախորդ օրվա վիճակի մեջ լինելու, որ նրա գլուխը նորից պտտվեց:

— Պետք է այսօր նույնպես գնալ Տավա Նեմայի մոտ,— վճռեց նա,— պետք է գնալ նորից գունավոր ջուր խմելու: Բայց ի՞նչ տանել՝ վճարելու համար: Ձկան պաշարին այլևս չի կարելի ձեռք տալ, թե չէ ընտանիքը կմեռնի սովից: Դե, ամենաշատը կարող է վերցնել էլի մի քանի հատ, ոչ ավելի: Բայց դա քիչ է: Արջի մի՞ս տանել: Ոչ, Տավա Նեման արջի միս չի ընդունում: Խնդրե՞լ, որ նա ձրի հյուրասիրի գոնե մի բաժակ, կես բաժակ, քառորդ բաժակ... Օ, ոչ, Տավա Նեման այնպիսին է, որ առանց վճարի չի տա նույնիսկ մի կաթիլ...

Ելնելով տնից դուրս, Ակիրսը երկար ժամանակ թափառում էր սառցե տների միջև և մտածում, թե ինչպես անի, որ կարողանա նորից խմել գունավոր ջուր: Ձուկ է հարկավոր տանել: Իսկ որտեղի՞ց

ձուկ: Ոչ, նա այլևս չի կարող խմել գունավոր ջուր: Բայց նա այնքան է ուզում խմել, որ ուղղակի անհնար է ասել: Նա չի կարող չխմել…

Հանկարծ Ակիրսը կանգ առավ կտրուկ: Նրա աչքերը փայլում էին ինչ-որ վատ մտքից: Իսկ ի՞նչ կլինի, եթե նա ամեն մի տան միջանցքում պահվող փոքրիկ պաշարներից գողանա մեկական ձուկ... Ոչ ոք չի նկատի տարբերությունը, իսկ իր մոտ կհավաքվի գունավոր ջրի վճարը…

Նա նայեց շուրջը: Ոչ ոք չէր երևում: Երեխաներն անշուշտ նորից այն քավթառ Խարունայի մոտ էին: Բնակարաններում ոչ ոք չկա՝ բացի մի քանիսից, որոնք պառավներ են կամ հիվանդներ, կամ նորածին երեխաների մայրեր: Բայց դա ոչինչ, կարելի է մտնել նաև այդպիսի բնակարանների միջանցքները: Եթե զգույշ շարժվես՝ ներսում գտնվողները ոչինչ չեն լսի…

Երեկոյան, երբ որսի գնացածները վերադարձան, Ակիրսը նորից՝ Կատպիսում չէր և նորից վերադարձավ քիչ հետո՝ ծիծաղելով ու երգելով: Այժմ բոլորը հասկացան, որ նա հիվանդ չէր, այլ Տավա Նեման էր թունավորում նրան ինչ-որ ուտելիքով կամ խմիչքով: Բայց թե այսօր ինչ էր վճարել Ակիրսը Տավա Նեմային դրա համար՝ ոչ ոքի հայտնի չէր: Ընթրելու համար ձուկ վերցնելիս Կատպիսի բնակիչները, իրոք որ, չնկատեցին իրենց փոքրիկ պաշարների վրայից մեկական ձկան պակասելը…

ՊԱՏԻԺ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Կատպիսի բոլոր երեխաներն այժմ նորից լսում էին Իլե Տրապնային և ենթարկվում նրան: Քաղցր երդումից հետո նրանք որոշել էին ինչ գնով էլ լինի ձեռք բերել Գույնզգույն Թագավորությունը: Նրանք վաղուց էին մոռացել ձանձրալի ձնագնդին և մյուս խաղերը: Ոչինչ նրանց շուրջը այլևս չէր գոհացնում և չէր հետաքրքրում:

Մի անգամ Իլեն ասաց նրանց.

— Հիշո՞ւմ եք, երեխաներ, Խարունա տատը մեզ պատմել է, որ քամիներն են ցրտեցնում մեր երկիրը և դարձնում սպիտակ: Եկեք քամու դեմ սարքենք մի ձնե պատ՝ այնքան բարձր, որ քամիները չկարողանան անցնել դրա վրայով... Մի քանի օր շարունակ երեխաները կառուցում էին պատը, իսկ մեծերը ծիծաղում էին նրանց վրա: Պատը քանդվում էր: Հարկավոր էր ավելի հաստ պատ: Նրանք սկսեցին կառուցել ավելի հաստ պատ, բայց այս անգամ էլ դա խիստ դանդաղ էր բարձրանում: Մեծերը նորից ծիծաղում էին նրանց վրա և ասում, որ միևնույնն է, պատը գարնանը հալչելու է: Բացի դրանից, չէ՞ որ քամին ու ձյունը գալիս են ոչ թե մի կողմից, այլ փոխնիփոխ, բոլոր կողմերից: Վերջապես նրանք հրաժարվեցին պատը կառուցելու գաղափարից:

Մի ուրիշ անգամ Իլեն առաջարկեց կառուցել մի տուն՝ Չհալչող Սառցե Տան նման: Դրա համար հարկավոր էր գործածել գետի թափանցիկ սառույցը: Սակայն քանի որ ձմեռ էր և գետը սառած, ուստի և երեխաներն այդ գործը թողեցին մինչև գարուն, երբ հնարավոր կլիներ սառցի կտորներ պոկել գետի ափից: Բայց ո՞ւմ էր հարկավոր այդ տունը... Դրա ներսում ցուրտ էր լինելու՝ ինչպես բոլոր մյուս տներում: Ճիշտ է, դա թափանցիկ կլիներ, բայց հալչող, ուստի և գարնանը հարկ կլիներ ամեն օր այն ծածկել ձյան մի նոր շերտով՝ ինչպես մյուս տները: Իսկ դա կնշանակեր, որ տունը կդադարեր նաև թափանցիկ լինելուց…

Ոչ, երեխաները չգիտեին, թե ինչպես ձեռք բերեն Գույնզգույն Թագավորությունը, և չկար որևէ մեկը, որ կարողանար ասել այդ նրանց: Այնպես որ, դարձյալ մնում էր գոհանալ նրանով, որ պետք էր

սպասել մի տարի՝ մի քանի ժամով նորից տեսնելու համար Գույնզգույն Թագավորության զարդարված ծառը…

Իսկ մինչ այդ, կյանքը Կատպիսում գնում էր իր սովորական հունով: Ձկան պաշարները հալչում էին կասկածելի արագությամբ, Ակիրսը մի քանի օրը մեկ դուրս չէր գալիս աշխատանքի, գնում էր Չհալչող Սառցե Տուն և վերադառնում ծիծաղելով, երգելով, պարելով: Եվ դարձյալ, կատպիսցիներից ոչ ոք չէր կարող ասել, թե ինչ էր վճարում Ակիրսը Տավա Նեմային՝ այդ թույնի դիմաց:

Իսկ որս համարյա չկար: Համարյա ամեն օր որսորդները վերադառնում էին դատարկ ձեռքերով: Ռումամի պաշարն ավարտվելու վրա էր, իսկ Տավա Նեմային տանելու համար պահված էր ընդամենը երկու արջի մորթի: Դրանով հազիվ կարելի է ստանալ երկու փունջ ռումամ: Ինչպե՞ս կարող է բավականացնել դա ամբողջ բնակավայրին... Լնդախտի սարսափը նորից կախվել էր Կատպիսի վրա:

Մի օր, առավոտյան, երբ մեծերը գնացել էին որսի, իսկ երեխաները հավաքվել էին պառավ Խարունայի բնակարանը, Իլեն դուրս ելավ լվացվելու: Նա այժմ ամեն օր էր լվացվում, այսինքն՝ ձյունով շփում մարմինն ու երեսը՝ թե մաքրելու, թե իրեն կոփելու համար:

Նուրիսը նույնպես, իրենց բնակարանի գործով էր զբաղված: Նախկին ընկերներն այժմ միայն բարևում էին իրար, բայց չէին մոտենում: Իլեն վիրավորված էր ընկերուհուց, որ նա չէր հավատացել Գույնզգույն Թագավորությանը, չէր հավատացել իր ընկերոջը: Իսկ Նուրիսը վիրավորված էր Իլեից այն բանի համար, որ նա, չնայած աղջկա մի քանի փորձերին, չէր հաշտվում նրա հետ:

Բայց այդ բոլորը հեշտ կհարթվեր, եթե չլիներ Տրիսնայի հիշատակը: Իլե Տրապնան չէր կարողանում մոռանալ Գույնզգույն Թագավորության աղջկան: Նա շլացուցիչ կերպով գեղեցիկ էր՝ ինչպես գարնան արևը երկնքում: Նա նիհար էր և նուրբ կազմվածքով՝ ինչպես գետի ձկնիկ: Նրա աչքերը կապույտ էին՝ կարծես երկնքի նյութից սարքված, իսկ մազերը կարծես արևի ճկուն ճառագայթներ լինեին: Եվ նա բարի էր, ո՞վ ասաց, թե ոչ: Չէ՞ որ նա ինքը մոտեցավ Իլեին և վալտաշ նվիրեց: Եվ եթե չլիներ Տավա Նեման՝ աղջիկը չէր հեռանա տղայից մինչև առավոտ: Այո, եթե չլիներ Տավա Նեման: Բայց ինչպե՞ս չլիներ, երբ նա կա, երբ նա ոչ միայն Սպիտակ Թագավորության տերն է, այլև Տրիսնայի, բոլորի…

Իսկ Նուրիսը... Մի՞թե նա կարող է համեմատվել Չհալչող Սառցե Տան աղջկա հետ՝ իր գեր մարմնով, կլոր դեմքով, մորթե հագուստներով…Ճիշտ է, Նուրիսն էլ է բարի և դա նրան դարձնում է համարյա գեղեցիկ, բայց Տրիսնան, Տրիսնան... Ե՞րբ պիտի անցնի մի տարին, որպեսզի Իլեն նորից տեսնի նրան: Թող աղջիկը չխոսի տղայի հետ, թող թեկուզ նայի ատելությամբ, միայն թե տղան նորից տեսնի նրան և անլսելի շշնջա ապակու ետևից նրա անունը՝ Տրիսնա... Տրիսնա...

Ընկերները հեռվից բարևեցին միմյանց, բայց չմոտեցան: Սակայն, համարյա իսկույն, Նուրիսը բացականչեց խեղդված ձայնով.

— Իլե՛, Իլե՛, եկ այստեղ, շո՛ւտ, շո՛ւտ...

Զգալով, որ մի ինչ-որ կարևոր պատճառ կա դրա համար, բայց դեռ չիմանալով, թե որն է դա, Իլեն վազեց:

— Նայի՛ր,— շշնջաց աղջիկը՝ մատով ցույց տալով:

Իլեն նայեց. Ակիրսը դուրս էր սողում ուրիշի բնակարանից…

— Տեսնես ինչի՞ համար էր մտել,— շշնջաց Նուրիսը։— Չէ՞ որ նա գիտե, որ այդ բնակարանում ոչ ոք չկա։

— Սը՛ս...— զգուշացրեց Իլեն,— թաքնվիր, նա ոտքի է կանգնում։

Երեխաներն անցան պատի ետևը և սկսեցին նայել այդտեղից։

Ակիրսը վեր կացավ, ինչ-որ բան ուղղեց իր գրպանում, նայեց շուրջը և մտավ հաջորդ բնակարանը։ Շատ շուտով նա դուրս ելավ նաև այդտեղից, նորից ինչ-որ բան ուղղեց իր գրպանում և մտավ երրորդ բնակարանը։

— Ձուկ է գողանում,— հասկացավ և սարսափահար շշնջաց Իլեն։

— Դու խելագարվել ես, Իլե,— բարկացավ Նուրիսը,— չի կարող պատահել այդպիսի բան։

— Քո կարծիքով Գույնզգույն Թագավորությունը նույնպես չէր կարող պատահել,— հանդիմանեց Իլեն։

Ակիրսը դուրս ելավ և մտավ չորրորդ բնակարանը։

— Շուտով կհասնի մեր բնակարանին,— շշնջաց Նուրիսը։

— Ապա, շուտ,— շտապեցրեց Իլեն,— մտիր ներս և հաշվիր, թե քանի ձուկ կա ձեր պահեստում։

Նուրիսը մտավ, քիչ հետո դուրս եկավ և ասաց.

— Երկու քսան և տասնմեկ։

Հազիվ էին նրանք նորից թաքնվել տան պատի ետևը, երբ Ակիրսը մտավ Նուրիսի տունը։ Հարկ չեղավ երկար սպասել։ Նա դուրս ելավ և գնաց շարունակելու իր ստոր գործը։

— Իսկ հիմա նորից մտիր ներս և հաշվիր, թե քանի ձուկ մնաց,— ասաց Իլեն ընկերուհուն։

Նուրիսը մտավ բնակարան և դուրս ելավ չոված աչքերով։

— Երկու քսան և տասը,— շշնջաց նա։

— Տեսնո՞ւմ ես։ Իսկ դու չէիր հավատում։

— Օ՛հ, գարշելի արարած, գողանում է մեր վերջին ուտելիքը... Ի՞նչ անենք, Իլե…

— Մի՞թե պարզ չէ։ Պետք է հայտնել մեծերին։

— Բայց նրանք կսպանեն նրան,— վախեցած առարկեց Նուրիսը։

— Ի՞նչ արած,— ասաց Իլեն անտարբեր,— նա արժանի է դրան։

— Օ՛հ, գարշելի մարդ,— կրկնեց Նուրիսը։

Քիչ հետո Ակիրսը, ուռած գրպաններով, բռնեց Չհալչող Սառցե Տան ճանապարհը։

Իլեն ու Նուրիսը, չափազանց վրդովված, սպասեցին մեծերի վերադառնալուն: Նրանք վերադարձան մռայլ, անխոս, որովհետև այդ օրը նույնպես որս չէին ճարել: Տեղեկանալով Չինտամից, որ նրա հայրը նորից գնացել է Տավա Նեմայի մոտ, մարդիկ դուրս ժայթքեցին իրենց մինչ այդ զսպած զայրույթը:

— Պետք է զրկել նրան որսաբաժնից,— բղավեց մեկը:

— Ով կարող է աշխատել, բայց չի աշխատում՝ նա չպետք է ուտի,— բղավեց երկրորդը:

Նույն բոպեին մարդկանց մոտեցան Իլեն ու Նունիսը և պատմեցին Ակիրսի կատարած գողության մասին:

Մարդիկ, որ պատրաստվում էին ցրվել իրենց տները՝ կանգ առան շշված: Բավական ժամանակ դեռ ոչ ոք չէր կարողանում որևէ բան ասել՝ կատարված անհավատալի հանցագործության լուրից կարկամած:

— Այ թե ի՜նչ,— արտասանեց, վերջապես, մի կին:— Ահա թե ինչու էր այդքան արագ հալչում իմ պաշարը:

— Իմը նույնպես,— ասաց մի ուրիշը:

— Եվ իմը,— վրա բերեց երրորդը:— Իսկ ես կասկածում էի իմ երեխաների վրա:

Մարդիկ նայեցին իրար: Խոսքեր հարկավոր չէին՝ միմյանց հասկանալու համար:

Ակիրսն իրավունք չուներ ապրելու: Բոլորի հայացքներում կարելի էր կարդալ դատավճիռը... Ակիրսին, իհարկե, ոչ ոք չի սպանի, որովհետև Կատպիսում չկա այդպիսի դաժան մարդ՝ բացի հենց իրենից՝ Ակիրսից: Բայց նրան կվռնդեն և նա կսառչի արձակ դաշտում: Իսկ այդ արդեն կատպիսցիների գործը չէ: Ավելի լավ է, որ սառչի մի ծույլ ու ստոր մարդ, քան թե սովահար լինի ամբողջ ժողովուրդը:

Քիչ հետո հայտնվեց Ակիրսը: Նա նախորդ անգամներից ավելի զվարթ էր և երբ իր միջանցքով սողալով մտավ բնակարան, ուզեց ոտքի կանգնել, չկարողացավ և ընկավ վար: Բայց դա նրա հոգը չէր, նա շարունակեց պառկած վիճակում էլ երգել ու ծիծաղել:

Մարդկանցից ոմանք փորձեցին խոսել նրա հետ, բայց նա ոչինչ չէր հասկանում: Որոշեցին պատիժն իրագործել հետևյալ օրը, որպեսզի նրա գիտակցությունը տեղը լիներ և նա լիովին հասկանար, թե ինչ էր կատարվում իր հետ: Ցրվելով տները, նրանք իրենց սպառվող պաշարներից վերցրին և կերան մեկական ձուկ, ծամեցին ռումամի վերջին շյուղերը: Հենց հաջորդ օրը, առանց ուշացնելու, հարկավոր էր արջի երկու հիանալի մորթիները տանել Տավա Նեմային՝ երկու փոքրիկ փունջ ռումամ ստանալու համար:

Ակիրսի կինը, ի ծնե բարի հոգու տեր, ամբողջ գիշերը չքնեց և լաց էր լինում: Ճիշտ է, նա ինքն էլ էր ատում իր ամուսնուն, դատապարտում էր նրա արարքը, բայց միաժամանակ նաև խղճում էր: Չինտամը նույնպես տխրել էր, բայց շուտով քնեց:

Առավոտյան կատպիսցիները որսի չգնացին: Սպասում էին Ակիրսի արթնանալուն, որպեսզի դատեին նրան: Միայն Վինզայի հայրը, մորթիներն ուսերին գցած, դուրս ելավ բնակարանից՝ շուտ մեկնելու համար Չհալչող Սառցե Տուն և շուտ վերադառնալու:

Մինչև կեսօր Ակիրսը քնած էր, և մարդիկ համբերությամբ սպասում էին։ Վերջապես նրանք չհամբերեցին և սկսեցին ցնցել նրան։

— Է՛յ, Ակիրս, արթնացիր…

— Ո՞վ է, ի՞նչ եք ուզում,— բարկացած հարցրեց Կատպիսի գարշելի բնակիչը՝ նստելով իր տեղում։

— Հագնվիր։

— Ինչո՞ւ։ Ես հիվանդ եմ, որսի գնալ չեմ կարող։

— Հագնվիր, Ակիրս, քո հիվանդությունն արդեն վերջացավ։ Մենք այսօր դատելու ենք քեզ։

— Ի՞նձ...— ապշեց Ակիրսը։— Դատե՞լ... Ապա, դուրս կորեք տնից։

Նա աչքերով փնտրեց որևէ հարմար առարկա՝ հանդուգն մարդկանց վրա շպրտելու համար, բայց նույն րոպեին նկատեց իր կնոջն ու որդուն։

— Իսկ դո՞ւ ինչու որսի չես գնացել,— գոռաց նա կնոջ վրա։— Իսկ դո՞ւ ինչու խաղալու չես գնացել,— հարձակվեց նա որդու վրա։— Իսկ... Իսկ դո՞ւք... ի՞նչ եք անում այստեղ...— դիմեց նա իր բնակարանում գտնվող երկու տղամարդկանց՝ նոր միայն լրիվ սթափվելով քնից։

Նրանք լուռ նայեցին բնակարանի տիրոջը, ապա նրանցից մեկը նորից կրկնեց.

— Հագնվիր և գնանք, Ակիրս, մարդիկ սպասում են քեզ։ Բոլոր մարդիկ։

Ակիրսը, որ նախորդ օրվա խմիչքից հետո խիստ գունատ էր, ավելի գունատվեց վախից։

— Ինչի՞ համար եք դատելու ինձ,— ասաց նա կակազելով։— Ի՞նչ եմ արել ես ձեզ…

— Հագնվիր...— միայն կրկնեցին մարդիկ։

Ակիրսը լուռ հագնվեց և սողաց դուրս՝ իրեն խաբելով այն հույսով, թե դատելու են սուտ հիվանդ ձևանալու համար։ Կստիպեն դուրս գալ աշխատանքի, կսպառնան հակառակ դեպքում զրկել ուտելիքից՝ վերջացավ-գնաց։ Իսկ նա, որպեսզի հանգստացնի նրանց, խոսք կտա և, իրոք, որոշ ժամանակ կանոնավոր կերպով կգնա որսի։

Բայց երբ Կատպիսի ամենավատ բնակիչը դուրս ելավ և կանգնեց ոտքի, երբ սառն օդը դիպավ նրա դեմքին, և նա լայն բացած աչքերով նայեց իր շուրջը, նա տեսավ բոլոր բնակիչներին՝ իր տան առջև հավաքված և նրանց անողոք հայացքներից հասկացավ ամեն ինչ։

— Ի՞նչ եք ուզում անել ինձ,— ճչաց նա՝ խզված ձայնով և, այլևս անկարող լինելով ոտքի վրա մնալ, նստեց։

— Գող,— ասաց մի ծերունի՝ նրա երեսին։

— Սուտ է,— լեղապատառ բղավեց Ակիրսը՝ շատ լավ գիտենալով, թե ինչ պատիժ է սպասում գողության մեջ բռնվածին։— Սո՛ւտ է...

— Պատմիր, Իլե Տրապնա,— դիմեց ծերունին տղային։

Ինչպիսի՜ ատելությամբ ու ոխով էր նայում Ակիրսը երեխային՝ նրա պատմության ողջ ընթացքում։ Ինչպիսի՜ բավականությամբ կսպաներ նա այդ տղային՝ եթե կարողանար։ Եվ ինչո՞ւ չի արել այդ

բանը մինչև հիմա: Իսկ այժմ արդեն, նա հնարավորություն չունի ոչ ոքի բախտը վճռելու, ընդհակառակը, նրա բախտն են վճռելու հիմա... Իլեից հետո պատմեց նաև Նուրիսը:

— Ո՞վ ասելիք ունի,— հարցրեց ծերունին՝ երբ աղջիկն ավարտեց իր պատմությունը:

— Ես,— լսվեց կանացի մի ձայն:

Բոլորը շուռ եկան դեպի նա:

— Խոսիր, Խարունա,— ասաց ծերունին:

— Ես կույր եմ,— ասաց Խարունան:— Ես վաղուց եմ կույր: Բայց ես աշխատում եմ, որպեսզի ձրի չուտեմ իմ մի կտոր ձուկը: Հարկավոր է կարկատել ձեր հագուստները: Եթե ես չանեմ՝ դուք ստիպված պիտի լինեք մի ուրիշին հանձնել այդ գործը՝ կտրելով նրան որսից: Ճի՞շտ եմ ասում:

— Ճիշտ ես ասում, Խարունա,— ձայն տվեցին բոլորը:

— Ճիշտ է, Խարունա տատի,— կրկնեցին հավաքված երեխաները:

— Իսկ դո՞ւ, Ակիրս,— հարցրեց Խարունան՝ իր կույր աչքերը դարձնելով դեպի նա:

Ակիրսը ոչինչ չասաց:

— Նա ուժե՞ղ է,— հարցրեց Խարունան բոլորին:

— Ամենաուժեղն է Կատպիսում,— պատասխանեցին բոլորը միասին:

— Նա առո՞ղջ է:

— Ամենաառողջն է,— թնդաց պատասխանը:

— Ծո՞ւյլ է:

— Միակ ծույլը:

— Ստոր է ու դաժա՞ն:

— Միակ ստորն է ու դաժանը:

— Գո՞ղ է:

— Գո՛ղ է, գո՛ղ, գո՛ղ...

— Լսեցի՞ր, Ակիրս, ժողովրդի ձայնը,— հարցրեց Խարունան:— Հիմա դու ինքդ ասա՝ ի՞նչ պատժի է արժանի այդպիսի մարդը, այսինքն՝ ծույլը, ստորը, դաժանը և գողը:

— Ես մեղավոր չեմ,— սկսեց աղիողորմ լաց լինել Ակիրսը:— Ինձ թունավորեց Տավա Նեման: Ես վալտաշ էի ուզում՝ բայց նա տվեց տավտաշ՝ խմելու…

— Վալտաշ, թե տավտաշ՝ դա միևնույնն է,— ասաց մի ծերունի:— Դու մեզ սովի կմատնեիր նաև վալտաշի համար, որովհետև դու մտածում ես միայն քո փորի և քո բավականության մասին և ոչ թե ամբողջ Կատպիսի: Նայիր մեր երեխաներին: Մի՞թե նրանք էլ չեն ճաշակել վալտաշի համը: Բայց նրանցից ո՞րը կաներ այն, ինչ որ դու էիր անում: Ընդհակառակը, նրանք երազում են բերել

Գույնզգույն Թագավորությունը բոլորիս համար: Եվ Իլե Տրապնան առաջինն է նրանց մեջ, որին դու ատում ես այնքան:

Դառնալով դեպի հավաքվածները, ծերունին հարցրեց.

— Ասացեք, մարդիկ, ինչպե՞ս վարվենք սրա հետ…

— Վտարել Կատպիսից,— բղավեցին բոլոր կողմերից,— վտարել, վտարել…

— Մի՛ արեք դա,— խնդրում եմ,— ճչաց Ակիրսը:

Տարիքոտ մարդիկ հազիվ են հիշում, թե մեկ էլ երբ էր ապրել Կատպիսում այդպիսի վատ մարդ և երբ էր ժողովուրդը նրա մասին հանել այդպիսի անողոք որոշում: Եվ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, ընդունված կարգի համաձայն, պետք է իրենց կարծիքն ասեին բոլոր չափահաս բնակիչները: Դա կտևեր բավական երկար, մինչև երեկո, բայց ինչպե՞ս կարելի էր այլ կերպ, երբ որոշվում էր մի մարդու ապրել-չապրելու հարցը:

Մինչև երեկո խոսեցին կատպիսցիները և մինչև երեկո ոչ ոք մի լավ խոսք չասաց Ակիրսի մասին: Բոլորը պահանջում էին վտարել նրան բնակարանից և բոլորն ավելացնում էին.

— Մենք դաժան մարդիկ չենք, բայց ուրիշ կերպ վարվել չենք կարող, որպեսզի նրա արածը վատ օրինակ չդառնա ուրիշների համար…

— Ես այլևս չեմ անի, ես կուղղվեմ, ես երդվում եմ,— շարունակ բղավում-ճղավում էր Ակիրսը:— Ես արդեն հասկանում եմ, թե որքան վատություն եմ արել ձեզ: Ես չեմ աշխատել, ես ապրել եմ ձեր հաշվին, ես գողություն եմ կատարել, ես իսկապես որ ստոր և գարշելի մարդ եմ եղել: Օ՛, ինչպես եմ զղջում, օ՛, օ՛, օ՛... Բայց ես կուղղվեմ, ես կդառնամ օրինակելի մարդ, երդվում եմ արևով...

— Ակիրս,— ընդհատեց նրան Խարունան,— մարդիկ շատ են ներել քեզ քո ծուլությունն ու դաժանությունը: Մի քանի անգամ ուզել են պատժել քեզ, բայց ամեն անգամ դու խոսք ես տվել, թե կուղղվես: Բայց փոխանակ ուղղվելու, դու ավելի վատ բաներ ես արել: Դուրս է գալիս, որ մենք իզուր ենք հավատացել քեզ, իզուր ենք ներել: Չգիտեմ, թե ինչպես կվարվեն ուրիշները, բայց ես չէի ների քեզ այլևս:

— Ոչ ոք չի ներում,— թնդացին բոլորը:

Ակիրսը բերանքսիվայր ընկավ ձյան վրա և սկսեց լաց լինել աղիողորմ:

— Վե՛ր կաց,— դիմեց նրան ծերունին:— Վե՛ր կաց և գնա՛:

Ակիրսն սկսեց լաց լինել ավելի աղիողորմ:

— Կինս, երեխաս...— հեծկլտաց նա:— Ես այլևս չեմ տեսնի նրանց: Ես այլևս ոչ ոքի և ոչինչ չեմ տեսնի, որովհետև կսառչեմ, կմեռնեմ հենց այս գիշեր, օ՜յ, օ՜յ, օ՜յ…

Մարդիկ լուռ և հարցական նայեցին իրար:

— Գուցե այս անգամ է՞լ ներենք,— հարցրեց հանկարծ Խարունան, և նրա ձայնը տատանվեց:

— Ի՞նչ եք ասում,— հարցրեց ծերունին բնակիչներին:— Գուցե, իսկապես, ներե՞նք…

Լինելով ի բնե բարի մարդիկ, Կատպիսի բնակիչները չառարկեցին նրան: Պարզվեց, որ բոլորն էլ հակված էին ներելու՝ չնայած իրենց դաժան խոսքերին: Ծերունին գոհունակությամբ շունչ քաշեց և հարցրեց.

— Բոլո՞րդ եք գտնում, որ պիտի ներել: Ով որ հակառակ կարծիքի է՝ թող խոսի:

Ոչ ոք չխոսեց:

Ծերունին մոտեցավ բերանքսիվայր պառկած Ակիրսին և ցնցեց նրա ուսը:

— Վեր կաց... Ժողովուրդն այս անգամ էլ ներեց քեզ…

Ակիրսն արագ շուռ եկավ և, ի նշան շնորհակալության, սկսեց համբուրել ծերունու ոտքերը:

— Ի՞նչ ես անում, գարշելի,— զայրացավ ծերունին:— Ժողովուրդն է քեզ ներել և ոչ թե միայն ես:

— Իսկ ես հերթով կհամբուրեմ բոլորի ոտքերը,— բացականչեց Ակիրսը:— Սիրելիներ... Թանկագիններ... Դուք ինքներդ էլ չգիտեք, թե ինչպիսի լավ գործ կատարեցիք հիմա: Դուք ինձ ուղղեցիք: Ես այժմ կաշխատեմ իմ բոլոր ուժերով: Իսկ իմ ուժերը շատ են, շատ-շատ, ես ստում էի, թե շուտ-շուտ հիվանդանում եմ: Ես մեն-մենակ կարող եմ գնալ արջ սպանելու: Միայն թե հրամայեցեք: Շնորհակալություն ձեզ, սիրելիներ, թանկագիններ…

Բնակավայրի արևմտյան կողմից երևաց Վինզայի հայրը, որն առավոտյան գնացել էր Չհալչող Սառցե Տուն: Բայց նա գալիս էր ոչ թե երկու փունջ ռումամ ձեռքին բռնած, այլ արջի երկու մորթիներն ուսին գցած: Բոլորը զարմացան ծայր աստիճան:

Վինզայի հայրը մոտեցավ, մռայլ վար նետեց մորթիները, սրբեց քրտինքը:

— Ի՞նչ է պատահել,— վախով հարցրին մարդիկ:

— Տավա Նեման չվերցրեց արջի մորթիները:

— Ինչո՞ւ…

— Տավա Նեման ասաց, որ այլևս ոչ ոքից չի ընդունի որևէ բան և ամեն ինչ կընդունի միայն Ակիրսի միջոցով:

— Ակիրսի միջոցո՞վ...— սառեցին բոլորը:— Դա ի՞նչ նորություն է: Բայց դու ճի՞շտ հասկացար նրան:

— Միանգամայն ճիշտ: Նա ասաց, որ այսուհետև ամեն բնակավայրից միայն մի մարդու հետ է գործ ունենալու, և որ Կատպիսից այդ մարդը կլինի Ակիրսը:

— Դե ի՞նչ, թող լինի Ակիրսը,— ժպտաց հանկարծ տղամարդկանցից մեկը:— Նա արդեն զղջացել է իր վատության համար և որոշել է աշխատել ազնվաբար: Իսկ որպեսզի նրա համար դժվար չլինի ամեն անգամ Տավա Նեմայի մոտ գնալ-գալը, մենք նրան կօգնենք, կտանք մի օգնական, օրինակ, օրինակ, Իլեին, որպեսզի բեռի մի փոքրիկ մասն էլ նա վերցնի...

— Ես ուրախությամբ կգնամ Ակիրս հորեղբոր հետ,— ասաց Իլեն:

— Ես չեմ ուզում ձրի ուտել իմ ձուկը: Ակիրսը, որ դեռ նստած էր գետնի վրա, ծերունու ոտքերի մոտ, դանդաղ վեր բարձրացրեց գլուխը: Նրա դաժան աչքերը փայլում էին չարության այնպիսի մի

կրակով, որ բոլորը ցնցվեցին: Նա ոտքի կանգնեց, թափ տվեց ձյունն իր վրայից, հաղթականորեն նայեց շուրջը, և հանկարծ, Կատպիսով մեկ, որոտաց նրա ահռելի քրքիջը:

— Այդ ի՞նձ էիք ուզում վռնդել: Կատպիսից,— ասաց նա՝ ոխից հևալով:— Ուրեմն գնա՞մ: Բայց ոչ, դուք հիմա ծնկաչոք կաղաչեք ինձ, որ մնամ, որովհետև միայն ինձ հետ է ուզում գործ ունենալ Տավա Նեման: Եթե ես չլինեմ՝ դուք բոլորդ կմեռնեք լնդացավից: Հիմա դուք բոլորդ գտնվում եք իմ ձեռքում, հասկացա՞ք, ստոր գարշելիներ: Ձեզ Գույնզգույն Թագավորությո՞ւն է հարկավոր, ձեզ չի՞ գոհացնում Սպիտակ Թագավորությունը: Ինչպե՜ս չէ... Տավա Նեմայի իշխանությունը ձեզ բավական չէ՞ր, այսօրվանից սկսվում է Ակիրսի իշխանությունը…

Իրերի այդպիսի ընթացքից շշմած, ոչ ոք չէր կարողանում ձայն հանել:

— Լսեցեք իմ կարգադրությունը,— ասաց Ակիրսը:— Վաղվանից դուք բոլորդ կգնաք որսի՝ ինչպես միշտ, իսկ ես այլևս չեմ գնա երբեք: Ես պետք է արջի մորթիներ և ձուկ տանեմ Չհալչող Սառցե Տուն: Եվ որպեսզի դա ինձ համար ծանր չլինի, ես կգնամ հենց այնպես, դատարկ ձեռքերով, իսկ բեռը կտանեն ուրիշները: Իլե, էյ դու, վերջին Տրապնա, դու կլինես իմ ամենաառաջին ծառան: Մի՛ վախենա, ես քեզ չեմ սպանի: Դու այնքան հեշտ չես ազատվի իմ ձեռքից: Դու հիմա իմ ձեռքումն ես, ինչպես ձուկն՝ արջի թաթերում: Բայց ես երկար եմ ուզում զվարճանալ քո թպրտոցով…

— Նզովված լինես, Տավա Նեմա,— ասաց Խարունան բարձրաձայն:— Եվ նզովված լինես դու, Ակիրս:

— Այդ դո՞ւ ես ասում, քավթառ,— չար ժպտաց Ակիրսը:— Դե ի՞նչ, դու այսուհետև չես ստանա ինձանից ոչ մի ճյուղ ռումամ: Դու կմեռնես լնդացավից: Ում որ ուզենամ՝ կմեռցնեմ լնդացավից: Եվ ոչ մեկը չի կարողանա օգնել ուրիշին, կիսել իր ռումամը նրա հետ, որովհետև ես ոչ մեկի ձեռքը չեմ տա ռումամը: Ամեն անգամ կծամեք և կուլ կտաք իմ ներկայությամբ... Դե, ցրվեցեք տներդ քնելու: Բավական է, վաղը շատ վաղ եք գնալու որսի: Եվ վա՛յ ձեզ՝ եթե վերադառնաք դատարկ ձեռքերով: Կծեծեմ բոլորիդ: Երդվում եմ Տավա Նեմայի անունով…

Կատպիսում սկսվեց Ակիրսի իշխանությունը:

ՁՈՒԿ

Հետևյալ առավոտյան, մտնելով Իլեի տան միջանցքը, Ակիրսը բղավեց.

— Վեր կաց, լակոտ, շո՛ւտ:

Իլեն հլու վեր կացավ:

— Գնանք: Կնախաճաշես ճանապարհին: Չպետք է ժամանակ կորցնել:

Իլեն դուրս սողաց միջանցքով: Հազիվ էր նա ոտքի կանգնել, երբ Ակիրսը նրա ուսերի վրա շպրտեց մի մեծ ծանրություն: Իլեն ճռճվեց դրա տակ: Ինչպե՞ս պիտի հասցնի նա դա Չհալչող Սառցե Տուն... Բայց նույն րոպեին Ակիրսը նրա ուսերի վրա շպրտեց նաև երկրորդ մորթին: Իլեի ծնկները ծալվեցին, նա ուղղակի տապալվեց ձյան վրա:

— Չեմ կարող տանել երկուսը, Ակիրս հորեղբայր,— շշնջաց նա:

— Կկարողանաս,— փնչաց սարսափելի մարդը։— Մի անգամ, որ ծեծ ուտես՝ դրանից էլ ավելին կկարողանաս։ Իսկ ինձ, լակոտ, այլևս չանվանես հորեղբայր։ Տեր Ակիրս՝ կասես դու ինձ, որովհետև դու իմ ծառան ես…

Իլեն չթաքցված ատելությամբ նայեց Կատպիսի ամենավատ բնակչին և քայլեց։

Ինչպիսի՜ դժվարությամբ նա հասավ Չհալչող Սառցե Տուն…

Ճանապարհին Ակիրսը մի քանի անգամ ծեծեց նրան՝ երբ նա ուժասպառ կանգ էր առնում կամ ընկնում գետին։ Իլեն ոչ ժամանակ ուներ և ոչ էլ հնարավորություն՝ անելու իր աղքատիկ նախաճաշը։ Նա միայն մի բան էր երազում՝ շուտ հասնել Տավա Նեմայի բնակարանին և վար գցել բեռը։

Տեսնելով, վերջապես, իր դիմաց ապակյա գմբեթաձև շենքը, Իլեն արագացրեց քայլերը, մոտեցավ, վար նետեց մորթիները և պառկեց։ Ախ, ինչպիսի՜ երջանկություն՝ պառկել ձյան վրա... Բայց նա ամբողջովին քրտնել էր և այժմ կարող էր մրսել, հիվանդանալ։ Ուստի և, հառաչելով, վեր կացավ-նստեց։

Ակիրսն սկսեց զույգ ափերով թակել ապակին։ Իլեն հանեց իր ձկնիկը և սկսեց կրծել…

Չհալչող Սառցե Տան մոտ նստել էր նաև մի անծանոթ ծերունի։ Նա բերել էր արջի մորթի։ Իլեն մոտեցավ և բարևեց նրան։

— Դուք որտեղի՞ց եք,— հարցրեց ծերունին։

— Կատպիսից, պապիկ։ Իսկ դո՞ւ։

— Իսկ ես Տրուցից։ Ա՜յ, այն կողմից։

Ծերունին ձեռքը երկարեց դեպի Կատպիսի հակառակ կողմը։ Ապա սկսեց հարցուփորձել երեխային նրա բնակավայրի մասին։ Իլեն ուտում էր ձուկը և պատասխանում։

Հառաչելով, ծերունին եզրակացրեց։

— Ինչպես տեսնում եմ՝ Սպիտակ Թագավորության ոչ մի կողմում ոչ ոք լավ չի ապրում այս ձյան ու սառույցի վրա։ Հավիտենական ձմեռ է իջել մեր բախտի վրա, թոռնիկս։ Գարունն ընդմիշտ հեռացել է մեզանից։ Գարունը գողացել է Տավա Նեման։

— Ինչպե՞ս է գողացել,— զարմացավ Իլեն։

— Շատ հին ժամանակներում մեզ մոտ տիրապետել է Գույնզգույն Թագավորությունը, թոռնիկս։ Դու գիտե՞ս այդ մասին։

— Գիտեմ։ Պատմել է մի պառավ կին։

— Ահա ուրեմն այն ժամանակ մարդիկ ապրել են ավելի լավ։ Չի կարելի ասել, թե շատ լավ, որովհետև նրանք դեռ շատ բան չեն կարողացել իմանալ կամ անել, և միայն կամաց-կամաց են սովորել, բայց և այնպես ապրել են ավելի լավ, քան հիմա։ Այդ ժամանակ էլ հենց, հայտնվել է Տավա Նեմայի նախահայրը, որը հազար ու մի խորամանկություններով իր ձեռքն է վերցրել բոլոր մարդկանց, ստրկացրել է, ստիպել է աշխատել միայն իր համար։ Ոչ ոք այլևս չի կարողացել

խնամել անտառը, որը կանգնած է եղել ձյան ու սառնամանիքի մեջ: Ծառերը... Դու գիտե՞ս, թե ինչ բան է ծառը…

— Գիտեմ:

— Ուրեմն, ծառերը ոչնչացել են մեկը մյուսի ետևից և ազատ ճանապարհ են բացել հավիտենական ձմեռվա համար, որն ամեն կողմից արշավել է մեր երկրի վրա: Գարունը ետ-ետ է քաշվել նրա առաջից, կուչ է եկել, կծկվել, այնքան է փոքրացել, որ հավաքվելով մեր երկրի կենտրոնում, դարձել է ահա այսքան…

Նա ցույց տվեց Չհալչող Սառցե Տան բռնած տարածությունը:

Եվ ահա հենց այստեղ է կատարվել դա, թոռնիկս, որովհետև սա է մեր երկրի կենտրոնը, այսինքն՝ մեջտեղը: Տավա Նեմայի նախահայրերը քաշել են գարունը գետնի տակ, բանտարկել և դրա վրա կառուցել են ահա այս տունը... Եթե մի օր, հրաշքով, կործանվի այս տունը, գարունը դուրս կգա դրա տակից և նորից կտարածվի մեր երկրի ամեն կողմը: Բայց դա չի լինի երբեք, թոռնիկս…

Նույն րոպեին Տավա Նեման դուրս ելավ գետնի տակից: Տեսնելով ծերունուն, նա բաց արեց պատի անցքը, բարկացած շարժեց ձեռքը, այսինքն՝ կորիր գնա այստեղից, և բղավեց.

— Մակարաչ, Մակարաչ…

— Ի՞նչ է ասում,— չհասկացավ ծերունին:

— Տավա Նեման ասում է,— հառաչելով բացատրեց Իլեն,— որ այլևս ոչ մի բան չի ընդունի ոչ քեզանից, ոչ Տրուցի մյուս բնակիչներից, բացի… Ձեզ մոտ կա՞ Մակարաչ անունով մարդ:

— Կա,— հառաչեց ծերունին,— սրիկայի մեկը:

— Ահա հենց այդ Մակարաչի հետ է ուզում գործ ունենալ Տավա Նեման:

— Օ՛հ,— հառաչեց ծերունին՝ սարսափած աչքերով,— ուրեմն արևը խավարեց մեր գլխին…

— Վերջացրի՞ր գործդ, քավթառ,— բղավեց Ակիրսը՝ մոտենալով ծերունուն:— Դե ուրեմն կորիր, շո՛ւտ: Իսկ դու, Իլե Տրապնա, բավական է շաղակրատես:

— Ցտեսություն, Իլե Տրապնա, թոռնիկս,— հրաժեշտ տվեց ծերունին:— Դու լավ տղա ես: Ես չեմ մոռանա քեզ…

Ակիրսը վերցրեց արջի մորթիները, ներս մտցրեց պատի անցքով: Տավա Նեման ներս քաշեց դրանք, շպրտեց հատակի դռնակով ցած և ինչ-որ բան բղավեց դեպի այնտեղ: Տավա Նեմայի ծառաներից մեկը բերեց երկու փունջ ռումամ: Չհալչող Սառցե Տան տերը, որն այդ օրը, չգիտես ինչու, չար տրամադրության մեջ էր, փնջերը կոպիտ կերպով դուրս շպրտեց պատի անցքով: Ակիրսը, հաճոյակատար ժպիտով, վերադարձրեց մի փունջը և ձեռքով խմելու շարժում արեց:

Իլեն սառեց-մնաց Ակիրսի անամոթությունից: Կատպիսի սարսափելի բնակիչն ուզում էր խմել մարդկանց վերջին ռումամի հաշվին, նրանց առողջության ու կյանքի հաշվին…

Բայց Տավա Նեման, փոխանակ խմիչք բերելու, սոսկալի զայրացավ, փունջը նորից շպրտեց դուրս և ինչ-որ բան բղավեց հատակի դռնով: Համարյա իսկույն դուրս ցատկեցին այնտեղից Տավա Նեմայի բոլոր ծառաները՝ բերելով ռումամի հսկայական խուրձեր՝ զույգ ձեռքերով հազիվ գրկած: Թափելով

ռումամը հատակին, նրանք իջան ներքև և բերեցին նորից ու նորից: Ամբողջ Չհալչող Սառցե Տունը լցվեց ռումամով, տան տերը կորավ դրա մեջ: Բայց նա, բարձրանալով ռումամի դեզերի վրա, պահանջեց, որ բերեն էլի՛, էլի՛...

Երբ Չհալչող Սառցե Տունը, համարյա մինչև առաստաղ լցվեց ռումամով, Տավա Նեման, դրա վրա նստած, առաստաղի տակից շարժուձևերով հասկացրեց համարյա հետևյալը.

— Ինչի՞ս է պետք քո մի փունջ ռումամը, հիմար Ակիրս, երբ ես ունեմ ահա այսքան ռումամ և դեռ դրանից քսան անգամ ավելի: Եթե խմել ես ուզում՝ դու ձուկ բեր ինձ համար: Իսկ այժմ կորիր գնա՝ եթե չես ուզում ավելի բարկացնել ինձ…

Իլե Տրապնան չէր հավատում իր աչքերին: Այդքան ռումա՞մ... Իսկ ինքը մինչև հիմա կարծել էր, թե ռումամը չափազանց հազվագյուտ բան է, դրա համար է Տավա Նեման քիչ-քիչ տալիս նրանց: Բայց բանից պարզվում է, որ Չհալչող Սառցե Տան տերը դիտմամբ է այդպես անում, որ մարդիկ ստիպված լինեն ավելի շատ արջի մորթի և ձուկ տանել նրան:

Կատպիս վերադառնալուց հետո Ակիրսը հավաքեց բոլոր հասակավոր բնակիչներին և ասաց.

— Վաղվանից սկսած դուք ոչ միայն արջի մորթիներ եք բերելու ինձ, այլև ձուկ:

— Ինչպե՞ս թե ձուկ,— ապշեցին մարդիկ,— չէ՞ որ դեռ ձմեռ է:

— Դա իմ գործը չէ: Սուր ոսկորներով ծակեցեք, ջարդեցեք գետի սառույցը և երբ արթնացած ձկները մոտենան անցքին՝ օդ շնչելու, բռնեցեք նրանց:

— Ակիրս,— ասաց մի ծերունի,— սթափվիր, անհնար է այդպիսի բան:

— Դա նույնպես իմ գործը չէ: Չե՞ք կարողանա ոսկորներով ծակել սառույցը՝ լեզուներով լիզեցեք հալեցրեք, ինչպես ձեր երեխաները վալտաշն են լիզել,— հռհռաց նա:— Դուք ռումամ կստանաք միայն ձկան դիմաց:

— Ակիրս…

— Իսկ ես այլևս Ակիրս չեմ ձեզ համար, այլ Տեր Ակիրս:

Ով որ այդպես չանվանի ինձ կպատժեմ: Ես վերջացրի և այլևս ոչինչ չեմ ուզում լսել ձեզանից: Վաղը երեկոյան դուք ձուկ կբերեք ինձ համար: Իսկ եթե որսալ չկարողանաք՝ կբերեք ձեր ունեցած պաշարից: Ձեր տներում դեռ մնացել են մի քանի հատ, ես դա լավ գիտեմ, չէ՞ որ տեսել եմ մեկառմեկ: Ցրվեցեք տներդ, շո՛ւտ...

Սպիտակ Թագավորության մեջ մարդիկ այլևս ոչ թե Գույնզգույն Թագավորությունն էին երազելու, այլ գոնե այն ժամանակները, երբ չկար Ակիրսի իշխանությունը: Այժմ մարդկանց թվում էր, թե մինչև երեկ նրանք լավ են ապրել, իսկ ամենամեծ պատուհասն սկսվել է հիմա: Ախ, գոնե վերադառնար երեկվա օրը, երեկվա վիճակը…

Միայն Իլեն էր, որ չափահասների հետ միասին այդտեղ կանգնած, ոչ թե նայում էր ետ՝ անցյալին, այլ առաջ՝ Գույնզգույն Թագավորությանը... Խե՞նթ էր Իլեն, ի՞նչ է…

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳՐՈՀ ՉՀԱԼՉՈՂ ՍԱՌՑԵ ՏԱՆ ՎՐԱ

Կատպիսի ոչ մի ծեր բնակիչ, ոչ նույնիսկ նրանցից ամենամեծը՝ Խարունան, չէր հիշում այդպիսի սարսափելի ձմեռ: Բոլորը, մեծից փոքր, նզովում էին Տավա Նեմային, որը նրանց վրա տեր էր նշանակել Ակիրսի պես մի գարշելի մարդու:

Մարդիկ, համարյա թե մերկ ձեռքերով, ջարդում էին գետի սառույցը, բաց անում մի փոքրիկ անցք, որպեսզի ձուկ հանեն այդտեղից: Այդ գործով զբաղված էին բազմաթիվ մարդիկ, որոնք այլևս չէին գնում արջ որսալու: Մորթիներ համարյա չկային ռումամի հետ փոխանակելու, և մարդիկ ստանում էին չափազանց քիչ ռումամ:

Ակիրսը, իր ասածի համաձայն, մարդկանց ստիպում էր իր ներկայությամբ ծամել ռումամը և կուլ տալ, իսկ պառավ Խարունային նա չէր տալիս և ոչ մի սեզ: Եվ նա չէր կարողանում հասկանալ, թե ինչի համար պառավը շարունակում էր ապրել: Բայց դա գիտեին Կատպիսի բոլոր բնակիչները, որոնք ռումամի բոլոր իրենց հին պաշարների մնացորդները պահել էին բնակավայրի ամենից հարգված կույր պառավի համար:

Ամեն հետևյալ առավոտ, գնալով դեպի գետը, մարդիկ տեսնում էին, որ նախորդ օրը բաց արած անցքը գիշերով սառել է նորից: Եվ նրանք նորից էին արջի ոսկորներով թակում, ջարդում սառույցը և բաց անում անցքը: Դա զբաղեցնում էր նրանց՝ կես օրից ավելի, ուստի և ձուկ որսալու համարյա ժամանակ չէր մնում: Ամեն երեկո նրանք Ակիրսի համար բերում էին հազիվ մի քանի ձուկ և ստանում նույն քանակությամբ բռունցքի հարվածներ:

Բայց Կատպիսում ամենասարսափելի վիճակի մեջ էր Իլե Տրապնան: Ակիրսը նրան աշխատեցնում էր ծայր աստիճան՝ այդպիսով վրեժ լուծելով նրանից: Նա ուրախությամբ կսպաներ տղային՝ եթե տղան պետք չլիներ նրան: Հոր նման, Իլեն նույնպես, հետզհետե դառնում էր Կատպիսի ամենաուժեղ մարդը՝ Ակիրսից հետո: Ամեն անգամ նա էր Ակիրսի հետ գնում-գալիս Չհալչող Սառցե Տուն: Նա ազատ էր միայն այն օրերը, երբ կատպիսցիները ոչինչ չունեին Տավա Նեմային ուղարկելու կամ երբ Չհալչող Սառցե Տանը տոն օր էր և ոչ ոքից ոչինչ չէին ընդունում: Իսկ այդպիսի տոն օրեր այնտեղ լինում էին ամեն յոթ օրը մեկ:

Կատպիսցիները չէին կարող թույլ տալ իրենց այդպիսի շռայլություն:

Բայց կարելի՞ էր արդյոք ասել Իլեի մասին, թե նա ուներ ազատ օրեր: Այն օրերին, երբ նա ազատ էր, Ակիրսը նրան ստիպում էր մյուսների հետ միասին գնալ որսի: Իլեն գնաց մի քանի անգամ, բայց մարդիկ խղճացին նրան և վճռեցին այսպես.— Ակիրսի աչքին փոշի փչելու համար նա կձևացնի, թե գնում է նրանց հետ, բայց հետո շուռ կգա և կվերադառնա Կատպիս:

— Ո՛չ,— հակաճառեց Նուրիսի մայրը,— այդպես չի կարելի: Եթե Ակիրսը տեսնի նրան այնտեղ՝ վատ կլինի նրա համար: Ավելի լավ է՝ գնա քեզ համար մեն-մենակ շրջելու, Իլե…

Եվ բոլորը վճռեցին՝ գնա քեզ համար մեն-մենակ շրջելու, Իլե:

Բայց ո՞ւր գնար Իլեն: Մնալ որսորդների հետ՝ չէր կարելի, նրանք արագ-արագ անցնում էին տեղից տեղ, Իլեն կհոգներ նրանց հետ: Իսկ շուրջն ամեն տեղ ձյունածածկ հարթավայրն էր և ոչինչ չկար... Վերջ ի վերջո նա վճռեց թափառել հենց այնպես, առանց նպատակի, առանց ուղղության, միայն թե շատ չհեռանալ Կատպիսից՝ չմոլորվելու համար:

Եվ, տարօրինակ բան: Առաջին իսկ օրը նրա ոտքերը նրան նորից բերեցին Չհալչող Սառցե Տան մոտ: Ինչո՞ւ, ի՞նչ էր փնտրում նա այնտեղ: Մի՞թե քիչ անգամներ էր անցնում նա այդ նզովյալ ճանապարհով՝ ծանր բեռը շալակին…

Շուտով Իլեն հասկացավ, որ նրան հաճելի էր կանգնել գմբեթաձև տան ապակե պատի մոտ և վերհիշել Նոր տարվա գիշերը... Ահա այստեղ էր կանգնած ինքը: Ահա այստեղ նա խոսեց Տրիսնայի հետ: Եվ երբ Տավա Նեման հեռացրեց նրանից աղջկան, ահա այստեղ Տրիսնան ետ նայեց տղային... Ինչի՞ համար նա այնպիսի ատելությամբ նայեց տղային... Ի՞նչ էր արել Իլեն նրան: Ինչո՞ւ հավատաց Տրիսնան Տավա Նեմային:

Աղջիկն Իլեին նայեց ատելությամբ, թշնամանքով, և չնայած դրան, Իլեն մինչև հիմա կարոտով է հիշում այդ նուրբ հագուստներով, շեկ մազերով և կապույտ աչքերով աղջկան: Ու թեև նա այժմ լրիվ հաշտվել է իր հին ընկերուհի Նուրիսի հետ, բայց երբեք նրա մասին չի մտածում, իսկ Տրիսնայի մասին մտածում է միշտ…

Սակայն ոչ մի անգամ Իլեին չհաջողվեց տեսնել աղջկան: Գուցե նա նույնիսկ այդտեղ չէր, գետնի տակ, այլ մեկնել էր իր հեռու երկիրը՝ ինչպես բոլոր նրանք, ովքեր գալիս էին իրենց Նոր տարին Սպիտակ Թագավորության մեջ դիմավորելու:

Երբ եկավ գարունը, և գետի սառույցը բարակացավ, դրա ջարդելը և ձուկ որսալը դարձավ ավելի հեշտ: Այժմ Ակիրսը Չհալչող Սառցե Տուն էր տանում ավելի շատ ձուկ և դրա փոխարեն ստանում էր ոչ միայն տավտաշ, այլև վալտաշ: Տասը ձկան փոխարեն Տավա Նեման տալիս էր մի վալտաշ, իսկ քսան ձկան փոխարեն՝ մի փոքրիկ գավաթ տավտաշ: Տասը և քսան... Այդքանով մարդ կարող էր ապրել տասնհինգ օր, բայց դրանով գնած խմիչքն ու քաղցրավենիքը վայրկենաբար անհետանում էին Ակիրսի մեծ բերանում: Իսկ լինում էին օրեր, երբ այդպիսի ուտելիք կամ խմիչք Ակիրսն ստանում էր ոչ թե մի հատ, այլ մի քանի... Նա ուտում էր, խմում, և թունավորված պառկում էր քնելու կամ դուրս էր գնում և ծեծում առաջին իսկ հանդիպած մարդուն, նույնիսկ երեխային: Հենց այնպես, բավականության համար:

Երբեմն-երբեմն Իլեն ազատ ժամանակ էր գտնում պառավ Խարունային այցելելու: Նա ուզում էր մխիթարել պառավին, իսկ պառավը՝ նրան, բայց երկուսն էլ չգիտեին, թե ինչպես անեն այդ: Մարդիկ սովորաբար մխիթարում են միմյանց՝ հույս տալով ապագայի նկատմամբ: Իսկ հիմա ինչպե՞ս մխիթարել, երբ ոչ միայն պառավը, այլև Իլեն ինքը հույս և սպասելիք չունեին ապագայից…

Մի անգամ, երբ Իլեն որսորդների հետ մի քիչ տեղ գնալուց հետո վերադարձել էր և պատրաստվում էր քայլել Չհալչող Սառցե Տան ճանապարհով, Ակիրսի աչքից հեռու, հանկարծ ձյան միջից նրա դիմաց բարձրացավ մի կերպարանք: Իլեն մի կողմ ցատկեց սարսափած՝ իսկույն մտածելով, թե դա Ակիրսն է:

— Մի վախենա, այդ ես եմ,— ասաց Վինզան մռայլ ձայնով, և մոտեցավ:

Իլեն բավական ժամանակ էր, ինչ չէր տեսել իր ընկերոջը: Վինզայի մորթե հագուստն այժմ ավելի էր քրքրվել, բայց նա ուշադրություն չէր էլ դարձնում դրա վրա.— արդեն գարուն է: Բավական նիհարած, տխուր կլոր աչքերով, նա նայեց Իլեին:

— Ո՞ւր ես գնում…

— Չգիտե՞ս: Ոչ մի տեղ:

— Իսկ ինչո՞ւ չես մտնում Կատպիս։

Իլեն նախ չուզեց պատասխանել, որովհետև ավելորդ և միամիտ հարց էր տվել ընկերը, ապա, այնուամենայնիվ, ասաց բարկությամբ.

— Մի՞թե այդ էլ չգիտես։

— Գիտեմ։ Հենց դրա համար եմ ասում։ Դու ոչ մի տեղ և ոչ մի օր հանգիստ չունես, որովհետև բոլորովին կտրվել ես մեզանից, Իլե Տրապնա։ Դու մեր կարիքը չես զգում։ Իսկ դու կարող էիր հենց հիմա վերադառնալ, մտնել թեկուզ մեր տուն, քնել, հանգստանալ, իսկ մենք՝ երեխաներս, կհսկեինք, և եթե Ակիրսը հայտնվեր դրսում և մեր տան ուղղությամբ՝ իսկույն իմաց կտայինք քեզ։ Դու կգնայիր մի ուրիշ տուն և կշարունակեիր քնել կամ հանգստանալ։

— Ես չեմ ուզում, որ մի օր էլ Ակիրսը ձեզ պատժի իմ պատճառով,— գլուխն օրորելով, մերժեց Իլեն։

Վինզան բարկացավ։

— Դու մեզ պետք չես, հասկանո՞ւմ ես, բոլորովին պետք չես։ Եթե քեզ դուր է գալիս՝ շրջիր գիշեր-ցերեկ, առանց հանգստանալու։ Ո՛չ ես, ո՛չ մյուսները, ո՛չ ոք, քո մասին չի էլ մտածում, քեզ համար չի էլ ցավում։ Ընդհակառակը, մենք ուզում ենք կռվել քեզ հետ։

— Ինչի՞ համար,— զարմացավ Իլեն։

— Որովհետև դու, Իլե Տրապնա, ամենից առաջ դու, մոռացար քաղցր երդումը։ Ինչի՞ համար երդվեցինք մենք, Իլե։ Որպեսզի ետ բերենք Գույնզգույն Թագավորությունը։ Իսկ ինչո՞ւ չենք բերում…

Իլեն ծիծաղեց մեծ մարդու նման, բայց նա չէր ձևացնում, այլ իսկապես, դառնություններն ու չարչարանքները նրան հասունացրել էին, նա այլևս երեխա չէր։

— Եթե այդքան հեշտ լինե՛ր…— հառաչեց նա։

— Ոչ ոք չի ասում, թե դա հեշտ է։

— Եթե դա հնարավոր լինե՛ր…— շարունակեց Իլեն։

— Ինչպե՞ս,— սառեց Վինզան,— ուրեմն դու չե՞ս հավատում Գույնզգույն Թագավորությանը… Իսկ ուրեմն ինչո՞ւ էիր հավատացնում մեզ…

— Ես հավատում եմ, Վինզա, բայց չգիտեմ, թե ինչպես պիտի ձեռք բերել։ Հիշո՞ւմ ես, ես հենց այդպես էլ ասել եմ ձեզ…

— Իսկ մենք գիտենք։ Դու կլինե՞ս մեզ հետ, դու չե՞ս դրժի քաղցր երդումը։

— Իհարկե ոչ,— ասաց Իլեն,— բայց ի՞նչ գիտեք դուք, որ չգիտեմ ես։

— Կիմանաս։ Միայն թե նախ ասա՝ դու ճի՞շտ ես պատմել Նուրիսին, որ տեսել ես Չհալչող Սառցե Տունը՝ ռումամով լիքը։

— Այո։

— Լիքը-լի՞քը, մինչև առաստա՞ղ։

— Եվ դեռ ավելին, Վինզա: Տավա Նեման ձեռքերով ցույց տվեց, որ դրանից ավելի շատը կա գետնի տակ…

— Դու գետնի տակինը չես տեսել, ուրեմն դրա մասին չխոսենք: Իսկ քո տեսածը բավական կլինի՞ Կատպիսին մի տարի…

— Բավական կլինի քսան տարի, Վինզա: Իսկ դրանի՞ց ինչ:

— Մեզ քսան տարի պետք չէ: Մենք դա կբաժանենք քսան մասի, թող բոլոր բնակավայրերի մարդիկ տանեն իրենց մասը և գործածեն մի տարի՝ մինչև որ գա Գույնզգույն Թագավորությունը: Նա մի տարում, իհարկե, կգա, այնպես չէ՞…

Այնքան լուրջ էր ասում Վինզան այդ բոլորը, որ Իլեն այլևս չկարողացավ համբերել և բարձր ծիծաղեց:

— Իսկ ինչպե՞ս պիտի բաժանես ռումամը՝ ձեռք բերելուց առաջ:

— Մենք դա կբաժանենք ձեռք բերելուց հետո:

— Իսկ ինչպե՞ս պիտի ձեռք բերես: Օ՛հ, Վինզա, փորս ցավում է ծիծաղելուց: Շնորհակալություն, ես վաղուց էի մոռացել ծիծաղելը…

Բայց Վինզան համարյա թշնամաբար նայեց իր մտերիմ ընկերոջը և ապա, նայելով մի կողմի վրա, սուլեց: Կարծես ձյան միջից ծնվելով, վեր ցատկեցին Կատպիսի համարյա բոլոր մեծ երեխաները: Նրանք իրենց մի ձեռքով թափ տվեցին հագուստները, որովհետև մյուս ձեռքում բռնել էին արջի հաստ և մեծ ոսկորներ, որոնք, որպես զենքի կամ գործիքի համար անպետք, դեն էին նետում մեծահասակ կատպիսցիները:

Իլեն հարցական նայեց ընկերոջը:

— Մենք գնում ենք ջարդելու Չհալչող Սառցե Տունը, ազատելու գերված գարունը: Կգա՞ս մեզ հետ…

Նոր միայն Իլեն հասկացավ, որ կատակ չէր անում Վինզան և կատակ չէին անում երեխաները: Բայց դա ավելի սարսափեցրեց նրան:

— Դա անհնար է, Վինզա,— ասաց նա եռանդով,— հասկանո՞ւմ ես, դա անհնար է: Դու չգիտես, թե ինչ է նշանակում չհալչող սառույց, այսինքն՝ ապակի: Ի՞նչ պիտի անեն ոսկորի կտորները դրան…

Այժմ երեխաները շրջապատել էին երկու ընկերներին և լուռ հետևում էին նրանց վեճին:

— Ախ, դու պարզապես վախենում ես Տավա Նեմայից,— բացականչեց Վինզան,— և դրա համար չես ուզում գալ մեզ հետ: Դա քո գործն է: Գնանք, երեխաներ…

— Սպասեցեք,— ձեռքով արեց Իլեն:— Սպասիր, Վինզա… Ոչ ոք քեզ չի նշանակել մեզ ղեկավար: Եվ ոչ ոք չի վռնդել ինձ ձեր միջից՝ ինչպես այն գարշելի մարդու տղա Չինտամին: Իսկ ես ոչ վախենում եմ և ոչ էլ մոռացել եմ իմ երդումը: Գնանք… Ես գիտեմ, որ ոչինչ դուրս չի գա դրանից, բայց քանի որ բոլորդ եք ուզում՝ գնանք…

Թեև ցուրտ առավոտ էր, բայց ոչ ձյուն էր սպասվում, ոչ բուք, որովհետև ձմեռն անցել էր և արդեն գարուն էր: Իսկ մի քիչ հետո դարձավ համարյա թե տաք: Երեխաներն իրենք էլ չզգացին, թե ինչպես շուտ հասան տեղ:

Երբ Չհալչող Սառցե Տան պատերի վրա տեղաց հաստ ու ծանր ոսկորների առաջին տարափը, համարյա իսկույն բացվեց գետնահարկի դռնակը և այնտեղից, ծայր աստիճան զարմացած, դուրս ելան Տավա Նեման, նրա ծառաները և էլի ուրիշ տղամարդիկ: Տեսնելով երեխաների բարկացած դեմքերը և նրանց գործը, Տավա Նեման սկզբում ոչինչ չհասկացավ: Ապա նաև հասկացավ, բայց ըստ երևույթին նա այդ օրը շատ լավ տրամադրության մեջ էր, որովհետև ոչ միայն չբարկացավ, այլև քահ-քահ ծիծաղեց: Թեև չէր լսվում նրա ձայնի և ոչ մի հնչյունը, բայց այնքան ուրախ և անզուսպ էր ծիծաղում նա, որ երեխաները կարծես լսում էին նրա քրքիջի որոտալի ելևէջները:

Տավա Նեման սկսեց վազվզել տան մի մասից մյուսը, ցույց տալ ապակե պատի այս կամ այն մասը և ձեռքով հասկացնել՝ ահա այստեղ խփեցեք, այստեղ պատն ավելի թույլ է... Իսկ հիմա այստեղ... Հա՜-հա՜-հա՜...

— Մի հավատաք նրան,— բարակ ձայնով բղավեց Նուրիսը,— նա ուզում է անջատել մեր ուժերը, որպեսզի ոչ մեկիս խփածն օգուտ չտա: Եկեք բոլորս միասին խփենք՝ միևնույն տեղը…

— Ճիշտ է, Նուրիս,— համաձայնվեց Իլեն և կանչեց բոլորին իր մոտ: Երեխաները, ոսկորների բարակ ծայրերից բռնած, հաստ և կլոր ծայրերը սպառնալիորեն ցցած, մոտեցան: Իլեն ինքը հասցրեց առաջին հարվածը: Նրանից հետո, նույն տեղում, տեղացին մյուս բոլոր հարվածները:

Տավա Նեման մի փոքր մռայլվեց և արագ մոտենալով, սկսեց ներսի կողմից լուռ տագնապով նայել հարվածի տեղին: Քիչ հետո համոզվելով, որ ոսկորները նույնիսկ հետք չեն թողնում ապակու վրա, նա նորից սկսեց ծիծաղել՝ առաջվանից էլ բարձր:

— Թողե՛ք,— գոռաց Իլեն՝ համարյա լաց լինելով անզորությունից:

Բայց ոչ միայն նա, բոլոր երեխաներն էին հուսահատվել և պատրաստ էին լաց լինելու: Վինզան մոտեցավ իր ընկերոջը և ասաց կամացուկ.

— Դու ճիշտ էիր ասում, Իլե Տրապնա, սա իզուր է...— Ապա բարձրաձայն դիմեց բոլորին.— Գնանք, երեխաներ…

— Սպասեցեք,— կտրեց Իլեն նրանց ճանապարհը:— Իսկ դու, Վինզա, նորից իմ փոխարեն ես խոսում: Ո՞ւր գնանք: Քանի որ չի կարելի ապակին կոտրել՝ գոնե հարկավոր է պատժել Տավա Նեմային: Ձյուն հավաքեցեք այստեղ: Մենք բոլոր կողմերից կծածկենք Չհալչող Սառցե Տունը, կծածկենք մինչև գագաթ, որպեսզի լույս չմտնի այնտեղ…

— Հարկավոր չէ,— ձեռքերը թափահարեց Կիվերան,— Տավա Նեման կբարկանա մեզ վրա, կզրկի մեզ ռումամից…

— Ճիշտ է ասում, հարկավոր չէ,— Կիվերային պաշտպանեցին մի քանիսը:

— Իսկ ես ասում եմ, որ հարկավոր է,— պնդեց Իլեն:— Թող Տավա Նեման իմանա, որ թեև մենք չենք կարող ջարդել ապակին, բայց գոնե կարող ենք զրկել նրան լույսից, իսկ դա քիչ բան չէ: Այն ժամանակ նա կվախենա մեզանից և շատ չի նեղի…

— Դու ճիշտ ես ասում, Տրապնա,— բացականչեց Տովեսը:

— Դու ճիշտ ես ասում,— պաշտպանեցին շատերը:

— Ես համաձայն չեմ,— մի կողմ քաշվեց Կիվերան:

— Ես էլ,— ասաց Վինզան՝ թեև բավական անվստահ:

Սկսվեց վեճ՝ մեծամասնության և փոքրամասնության միջև:

Մինչ այդ, Տավա Նեման, արդեն լրջացած, լուռ նայում էր նրանց և սպասում, թե էլ ինչ ծիծաղելի բան պիտի անեն երեխաները, որպեսզի նա նորից քրքջա: Նա, իհարկե, չէր լսում նրանց ձայները, և եթե նույնիսկ լսեր էլ, չէր հասկանա նրանց լեզուն: Նա չգիտեր, թե ինչի մասին են վիճում նրանք այդպես տաք-տաք: Բայց նա տեսավ, թե ինչպես բոլոր երեխաները շատ շուտով եկան ընդհանուր համաձայնության և շաղ գալով զանազան կողմեր, սկսեցին ձյուն հավաքել և բերել դեպի իր տունը: Դեռ նախքան հասկանալը, թե ինչի համար է դա, նա մռայլվեց և սկսեց անթարթ նայել նրանց բոլորին և յուրաքանչյուրին առանձին-առանձին: Նրան դուր չէր գալիս այն համերաշխությունը, որով գործում էին երեխաները: Նրան դուր չէր գալիս հենց այն, որ նրանք հավաքվել և եկել են նրա տունը կործանելու: Ու թեև նա գիտեր նրանց լիակատար անզորությունը, բայց նրան դուր չէր գալիս հենց նրանց ատելությունն իր հանդեպ: Որ իրեն ոչ ոք չի սիրում Սպիտակ Թագավորության մեջ՝ նա գիտեր վաղուց: Բայց որ այդ ատելությունը կարող է մարդկանց դրդել գործի՝ նա դա տեսնում էր առաջին անգամ…

Շատ ժամանակ չանցավ, և ահա, երեխաներն այլևս չէին տեսնում Տավա Նեմային, այլ տեսնում էին միայն նրա գլուխը: Ապա դա էլ անհետացավ բարձրացող ձյան պատնեշի ետևում: Այժմ արդեն, երեխաները բարձրացան ձյունե պատերի վրա և ուրիշ երեխաներ սկսեցին ներքևից ձյուն տալ նրանց: Քիչ հետո պատի վրայի երեխաներն ավելի բարձրացան, հետո ավելի և ավելի, և ահա, գագաթի չորս կողմից նրանց գլուխները մոտեցան իրար: Վերևից նրանք տեսնում էին, թե ինչպես մթնել էր Չհալչող Սառցե Տունը:

Նրա տերն անշարժ կանգնել էր դրա մեջտեղում և մտածում էր: Ի՞նչ էր մտածում նա... Երեխաները ներքևից ձյան նոր կոշտեր տվեցին վերևում գտնվողներին, իսկ նրանք՝ իրենցից վերև գտնվողներին, և ահա ծածկվեց նաև վերջին անցքը, որով լույսի վերջին շողերն էին սպրդում ներս: Ու թեև դեռ հազիվ էր անցել կեսօրը, բայց տան ներսում այժմ անշուշտ մութն էր՝ ինչպես ամեն մի սառցե բնակարանում՝ ճրագի հանգչելուց հետո:

Երեխաները հաղթական հայացքով նայեցին միմյանց, ժպտացին:

— Իսկ հիմա գնանք,— ասաց Տովերսը,— և հայտնենք մեծերին: Այժմ նրանք կարող են մի արջի մորթու դիմաց պահանջել երկու, երեք փունջ ռումամ, որպեսզի մաքրեն ձյունը տան պատերի վրայից: Իսկ Ակիրսի իշխանությանը՝ վերջ…

Ժունան, որը նույնպես այդտեղ էր, կկոցեց իր առանց այդ էլ նեղ աչքերը և ասաց Իլեին.

— Իսկ դու չէիր հավատում…

— Նա չէր հավատում տունը ջարդելուն,— պաշտպանեց Նուրիսն իր ընկերոջը,— իսկ ձյունով ծածկելը հենց ինքն առաջարկեց:

— Գնանք,— շտապեցրեց Իլեն,— կվիճեք ճանապարհին:— Ես մեղավոր եմ, երեխաներ: Եթե մինչև անգամ դա էլ չհաջողվեր մեզ՝ մենք դարձյալ իրավունք չունեինք հուսահատվելու: Իսկ ես հուսահատվել էի... Չի լինի մի կերպ՝ կանենք մի ուրիշ կերպ, բայց վերջապես կխորտակենք Չհալչող Սառցե Տունը, կազատենք այնտեղից մեր գարունը, կբերենք Գույնզգույն Թագավորությունը…

Բոլոր երեխաները ոգևորված էին իրենց հաղթանակից և քայլելիս շուտ-շուտ նայում էին ետ՝ Չհալչող Սառցե Տանը, որն այժմ, ձյան տակ թաղված, ոչնչով չէր տարբերվում Կատպիսի որևէ տնից, միայն թե շատ ավելի մեծ էր։

— Այ թե կկատաղի Ակիրսը,— պատկերացրեց Իլեն՝ աչքերը փայլեցնելով։— Բայց ի՞նչ կարող է անել նա բոլոր բնակիչների դիմաց։ Այ, այս անգամ մենք կվռնդենք նրան Կատպիսից և այլևս չենք հավատա նրա երդումներին ու լացին։

Նույն րոպեին, երեխաներից մեկը, որը ետ էր նայել, ճչաց սրտապատառ.

— Նայեցե՛ք, նայեցե՛ք…

Բոլորը ետ դարձան և քար կտրեցին։ Ձյունը, Չհալչող Սառցե Տան պատերի վրայից հալչելով, իջնում էր վար։ Տան գմբեթն արդեն ազատ էր ձյունից…

Երեխաները վազեցին ետ՝ դեպի Տավա Նեմայի բնակարանը։ Երբ նրանք տեղ հասան՝ տունն արդեն բոլորովին մաքրվել էր ձյունից և նույնիսկ չոր էր։ Տան կենտրոնում դրված էր մի մեծ, կլոր առարկա, որն էլ հենց, ըստ երևույթին, տաքացրել էր տունն ու դրա պատերը։ Տավա Նեման ինքը կանգնել էր քրտնած, հագուստի օձիքն արձակած, և դաժան հաղթողի լուռ հայացքով նայում էր շփոթված երեխաներին։ Նա այլևս չէր ժպտում, ավելի ճիշտ՝ ժպտում էր, բայց այժմ դա ուրիշ ժպիտ էր՝ մռայլ, չար։ Ու թեև նա լրիվ հաղթանակ էր տարել երեխաների հանդեպ, բայց, ինչպես երևում էր, նա դրա մասին չէր մտածում, այդ հաղթանակը նրան չէր գոհացնում։ Նրան մտահոգում էր այն, որ անհիշատակելի ժամանակներից ի վեր հլու դարձած Սպիտակ Թագավորության բնակիչները պայքար էին սկսել նրա դեմ։

Ինչո՞վ կարող էր վերջանալ այդ պայքարը, ո՞վ գիտեր…

ՏՐԻՍՆԱ

Եվ ահա, մի օր Իլեն տեսավ Տրիսնային։

Արդեն բավական ժամանակ էր, ինչ նա իր ազատ օրերին թաքնվում էր Կատպիսում և ոչ մի անգամ Ակիրսը ոչ միայն չէր տեսել նրան, այլև չէր էլ կասկածել, որ նա կարող էր լինել այդտեղ։ Հետևաբար և, Իլեն կարող էր շարունակել ամեն օր մնալ Կատպիսում։ Բայց կապույտ աչքերով շեկ աղջկան տեսնելու ցանկությունն ու կարոտը նրան դրդում էին որսի գնացողների մոտից Կատպիս վերադառնալիս երեք չորս օրը մեկ շեղել իր ճանապարհը և նորից գնալ դեպի Չհալչող Սառցե Տունը... Իր այդ այցելությունների ժամանակ նա ծանոթացավ Սպիտակ Թագավորության ուրիշ բնակավայրերից մորթիներ և ձուկ բերող մարդկանց հետ։ Նրանք նույնպես, ինչպես և Ակիրսը, չար և կոպիտ մարդիկ էին, և նրանց հետ նույնպես, Տավա Նեմայի մոտ գալիս էին Իլեի նման պատանիներ կամ Տրուցի ծերունու նման լավ մարդիկ։ Չհալչող սառցե տան անցքով նրանք ներս էին հրում արջի մորթիներ, ձուկ, Սպիտակ Թագավորության ամբողջ հարստությունը…

Որոշ ժամանակ հետո Իլեն հասկացավ, որ եթե նույնիսկ Տրիսնան այդտեղ է, նա հազիվ թե գետնի տակից դուրս գա այն օրերը, երբ նրա հայրն զբաղված է առևտրով։ Ըստ երևույթին աղջկան պետք է փնտրել այն տոն օրերին, որոնք լինում են յոթ օրը մեկ։

Ահա մի այդպիսի օր Իլեն տեսավ Տրիսնային։

Դեռ հեռվից նա նկատեց, որ Չհալչող Սառցե Տան հատակի վրա սևին է տալիս մի ինչ-որ բան, որը բռնել է համարյա ամբողջ հատակը: Նա դեռ չէր կարողանում որոշել, թե ինչ էր դա, բայց այնքա՛ն հաճելի էր այդ գույնը շրջապատի բացարձակ սպիտակության մեջ: Ինչպե՛ս են հանգստանում տղայի աչքերը՝ այդ սևությանը նայելիս: Իրավացի էր Խարունան, հաճելի գույն է սև գույնը…

Իլեն բավական մոտեցավ տանը և նրա սիրտն սկսեց թփրտալ: Տան կենտրոնում, այդ սևության վրա, պառկած էր մի աղջիկ: Որ դա Տրիսնան էր՝ Իլեն ավելի շուտ զգաց, քան թե տեսավ: Նա վազեց, կանգ առավ և սկսեց նայել…

Չհալչող սառցե տան հատակի վրա փռված էր մի ինչ-որ փափուկ անկողին, որի վրա փռված էր սև ծածկոց: Այդ սև ծածկոցի վրա պառկել էր Տրիսնան... Նա իր սպիտակ ձեռքերով ու ոտքերով, ոսկեգույն մազերով ու վարդագույն դեմքով այնքան շլացուցիչ գեղեցիկ էր այդ սև ծածկոցի վրա, որ Իլեի շունչը կտրվեց հիացմունքից: «Տրիսնա... Տրիսնա...»— շշնջացին նրա շրթունքները, և ուրախության երկու փոքրիկ արցունքահատիկներ վար իջան նրա այտերով:

Տրիսնան զբաղված էր մի տարօրինակ գործով: Նա իր ձեռքերում բռնել էր ինչ-որ քառանկյունի տափակ առարկա, որի դրսի կողմը գույնզգույն էր, իսկ ներսի կողմը՝ սպիտակ, որի վրա կային փոքր սև կետերի շարքեր: Տրիսնան այնպիսի հետաքրքրությամբ էր նայում այդ սև կետերին, կարծես դրանք նկար լինեին կամ մի հետաքրքիր տեսարան: Երբեմն-երբեմն աղջիկը մատով շուռ էր տալիս այդ սպիտակ առարկայի մի շերտը և նույնպիսի հետաքրքրությամբ նայում էր հետևյալ շերտին:

Իլեն կամացուկ թխկթխկացրեց պատի ապակին: Նա շատ էր ուզում, որ աղջիկը նկատեր նրան: Եվ իրոք, Տրիսնան մի պահ կտրվեց իր գործից, անտարբեր նայեց Իլեին և նորից իր հայացքը դարձրեց դեպի քառանկյունի առարկան:

«Չճանաչեց»,— մտածեց Իլեն, բայց և իսկույն նրա մտքով անցավ մի կասկած.— գուցե ընդհակառակը, ճանաչեց և հենց դրա՞ համար չի ուզում խոսել նրա հետ:

Իլեն նորից թխկթխկացրեց ապակին, բայց աղջիկն այս անգամ ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա վրա:

Հանկարծ Իլեն նկատեց, որ պատի անցքը բաց է: Տրիսնայի գլուխը գտնվում էր այդ անցքին բավական մոտիկ, իսկ սև ծածկոցի ծայրը հասել էր ուղղակի անցքի եզրին: Նա շտապ մոտեցավ, պպզեց անցքի մոտ և շշնջաց.

— Տրիսնա…

Աղջիկը չշարժվեց տեղից:

— Տրիսնա,— ասաց Իլեն՝ ավելի բարձր ձայնով, բայց դարձյալ չստացավ ոչ մի պատասխան:

— Իլե Տրապնա,— անվանեց նա իրեն,— Իլե Տրապնա…

Բայց չօգնեց նաև այդ վերջին միջոցը:

Իլեն վեր կացավ անցքի մոտից: Նա այժմ խիստ վշտացած էր: Ինչի՞ց է վախենում Տրիսնան, չէ՞ որ Տավա Նեման գետնի տակն է: Ուրեմն ոչնչից չի վախենում Տրիսնան, նա հենց ինքը չի ուզում գործ ունենալ Իլեի հետ…

Իլեն մոտեցավ աջից և նորից թխկթխկացրեց ապակին: Աղջիկը, առանց նրան նայելու, շուռ եկավ ձախ կողքի վրա:

Իլեն մոտեցավ ձախից և նորից թխկթխկացրեց ապակին: Աղջիկն այս անգամ շուռ եկավ աջ կողքի վրա:

Ծանր վիրավորանքը խոցեց տղային: Նա զայրացավ: Այժմ նա ուզում էր մի վատ բան անել աղջկան, բայց ի՞նչ կարող էր անել՝ ապակե պատով նրանից անջատված: Այո, բայց պատի անցքը հո բա՞ց է...

Իլեի աչքերը փայլեցին: Դու սպասիր, անպիտան Տրիսնա... Նա աննկատելիորեն ձյուն վերցրեց գետնից, սեղմեց իր ձեռքերի մեջ, դարձրեց մեծ ձնագունդ: Նշան կբռնի և պատի անցքով ուղղակի կխփի աղջկա գլխին... Բայց ձնագունդը մեծ է, կարող է ցավացնել աղջկա գլուխը... Հարկավոր է փոքրացնել: Բավական է: Ոչ, սա էլ է մեծ...

Իլեի ձեռքում մնաց մի շատ փոքրիկ ձնակտոր, բայց նա մտածկոտ շուռումուռ էր տալիս նաև այդ կտորը: Ինչպե՞ս կարելի է խփել այդպիսի գեղեցիկ աղջկան՝ թեկուզև նա չի ուզում տեսնել քեզ…

Նա վար գցեց ձյան կտորը:

Բայց չարացնել աղջկան հարկավոր է, գոնե անհանգստացնել:

Վերջապես, Իլեն գտավ: Սև ծածկոցի եզրը հասել է պատի անցքին: Իլեն կամացուկ կմոտենա անցքին, մատներով կբռնի այդ եզրը և աղջկան ավելի մոտ կձգի անցքին: Այդ ժամանակ, ո՞վ գիտե, գուցե աղջիկն ստիպված լինի նույնիսկ խոսել տղայի հետ…

Իլեն մոտեցավ անցքին, պպզեց, ապա ծունկի եկավ և թևը կոխեց ներս: Մեծ դժվարությամբ նրան հաջողվեց իր մատների ամենածայրերով շոշափել սև ծածկոցը: Ծածկոցի նյութն անչափ դուրեկան էր, փափուկ, տաք և խավոտ: Անցավ էլի բավական ժամանակ, մինչև որ Իլեին հաջողվեց երկու մատներով բռնել ծածկոցը: Դրանից հետո արդեն հեշտ էր: Նա ծածկոցի ծայրը հավաքեց իր բռան մեջ և ձգեց:

Եվ տեղի ունեցավ մի անսպասելի բան: Աղջիկը ճչալով վեր ցատկեց տեղից, իսկ ծածկոցը, աղջկա մարմնի ծանրությունից թեթևացած, սահեց և դուրս պրծավ անցքով: Իլեն ձգեց, բոլորովին դուրս հանեց այն և իսկույն սարսափեց իր արարքից:

Բաց անելով հատակի դռնակը, աղջիկն արտասվելով մտավ ներս՝ անշուշտ իր հորը տեղեկացնելու: Իլեն հավաքեց ծածկոցն իր թևի տակ և վախեցած փախավ Չհալչող Սառցե Տնից դեպի Կատպիս:

Ինչի՞ց էր վախենում նա, երբ Տավա Նեման չէր կարող դուրս գալ իր տնից և պատժել տղային: Գուցե նա վախենում էր, որ հենց ի՞նքը կամավոր կվերադարձներ ծածկոցը: Կամ գուցե նա ոչնչից ու ոչ ոքից չէ՞ր վախենում, այլ ուզում էր հեռու տանել անսպասելիորեն ձեռք բերած իր ավարը…

Երկար ժամանակ Իլեն ետ չէր նայում և միայն վազում էր շնչասպառ: Ապա, երբ կանգ առավ նայեց, Չհալչող Սառցե Տունն այլևս չէր երևում: Նա հանգիստ շունչ քաշեց և հայացքը դարձրեց ծածկոցի վրա…Ինչպիսի՜ երջանկություն՝ Սպիտակ Թագավորության մեջ տեր դառնալ այսպիսի սև ծածկոցի... Մի՞թե իրոք, նա իր ձեռքերում բռնել է սա, և երազ չէ այս ամենը…

Իլեն իր դեմքը թաղեց ծածկոցի խավոտ ու տաք ծալքերում, ագահությամբ շնչեց դրանից եկող այն քաղցր բույրը, որը մի անգամ արդեն նա զգացել էր Նոր տարվա գիշերը: Ի՞նչ է վալտաշը դրա դիմաց: Իլեն քսան անգամ քսան վալտաշի հետ չի փոխի այդ ծածկոցը: Սպասիր, սպասիր, միթե, այնուամենայնիվ, սա երազ չէ…

Ծածկոցը ծանր էր, բայց դա հաճելի ծանրություն էր՝ արջի կես մորթուց էլ թեթև: Այժմ Իլեն նկատեց, որ դրա մի երեսն առանց խավի էր, համեմատաբար կոպիտ, և դա անշուշտ թարս կողմն էր: Իսկ շիտակ կողմը... Իլեն նորից իր դեմքը թաղեց դրա մեջ, այտերը քսեց դրա խավին և ձյունածածկ արձակ տարածության մեջ մեն-մենակ կանգնած, բարձր և ուրախ ծիծաղեց իր երջանկությունից: Նա ամենահարուստ մարդն է Սպիտակ Թագավորության մեջ: Ոչ ոք չունի և չի կարող ունենալ այսպիսի բան, իսկ նա ունի... Ինչպե՜ս պիտի զարմանան Կատպիսի երեխաները, ինչպե՜ս պիտի զարմանան բոլորը... Բայց ո՛չ, ո՛չ, ո՛չ... Ոչ ոքի չպետք է ցույց տալ դա, ոչ ոքի չպետք է ասել այդ մասին, այլապես Ակիրսը կխլի դա նրանից:

Երբ Կատպիսը երևաց, Իլեն շեղվեց ճանապարհից, հաշվեց երկու անգամ քսան քայլ ու էլի տասը քայլ, և կանգ առավ: Նա փորեց ձյունը և թաղեց ծածկոցն այդտեղ: Ապա, վերադառնալով ճանապարհի վրա, նա սկսեց հաշվել մինչև Կատպիս մնացած տարածությունը: Դուրս եկավ քսան անգամ քսան և էլի քսան անգամ քսան քայլ և էլի տասը անգամ քսան քայլ՝ մինչև իր տան մուտքը:

Ոչ, սև ծածկոցի տեղը նա չի կորցնի:

ՍԵՎ ԾԱԾԿՈՑ

Մի քանի օր շարունակ ամեն ինչ խաղաղ էր Կատպիսում, որովհետև այնտեղից դեռ ոչ ոք չէր եղել Չհալչող Սառցե Տանը և տեղյակ չէր կատարվածի մասին: Արդեն գարուն էր, գետը բավական լայն շերտով ազատվել էր սառույցից, և մարդիկ այժմ զբաղվում էին միայն ձկնորսությամբ: Զգուշությամբ մոտենալով սառցապատ ափերին, որպեսզի չսայթաքեն, նրանք փոկե պարաններով կախում էին ջրի մեջ արջի մորթուց պատրաստված ծակոտկեն մեծ պարկեր: Սպասում էին մի քիչ և քաշում: Վեր բարձրացնելիս նրանք տեսնում էին, թե ինչպես ջուրն անմիջապես վար էր հոսում պարկի փոքրիկ անցքերով, իսկ պարկի պատերը շարժվում էին շունչ առնող մարդու փորի նման, որովհետև ներսում թպրտում էին բազմաթիվ մեծ ձկներ: Որքա՜ն շատ ձուկ կար գետի մեջ... Բայց ավաղ, այդ բոլորը հարկավոր էր տանել Տավա Նեմային: Դա դեռ քիչ էր, պետք էր ձուկ որսալ նաև Ակիրսի համար, որպեսզի նա ամեն օր կարողանար տավտաշ խմել…

Մարդկանցից բավական հեռու, ջուրն էին մտնում ձմեռվա քնի ընթացքում զգալիորեն նիհարած արջերը: Ճիշտ է, մարդիկ վախենում էին նրանցից, բայց նրանք էլ մարդկանցից էին վախենում, մանավանդ երբ մարդիկ շատ էին:

Արևը տաքացնում էր մարդկանց, թեկուզև շատ աննշան, որովհետև օդը միշտ ցուրտ էր: Ձյունը ոտքերի տակ, իհարկե, հալչում էր, թեև ոչ մի կերպ չէր կարելի նկատել դա: Ամեն օր մարդիկ գնում էին Կատպիսի հյուսիսային կողմում գտնվող և բոլորին ծանոթ այն տեղը, որտեղ մարդիկ տարիների հաշիվը պահելու համար դրել էին մորթու անպետք կտորներ: Մի քանի օրում հալվեց երեք տարվա ձյուն, այնուհետև, մի օրվա ընթացքում, ևս երկու տարվա: Ձյան տակից դուրս էին գալիս շարունակ նորանոր մորթու կտորներ: Բայց ոչ ոք այլևս, գուցե բացի ամենամիամիտ երեխաներից, հույս չուներ, թե երբևէ այդպիսով կարող էր հալվել ամբողջ ձյունը:

Սև ծածկոցի հափշտակությունից հետո, առաջին գիշերը, Իլեն չկարողացավ քնել: Նա միայն հիմա էր զգում իր արածի ամբողջ սարսափելիությունը: Բայց, հակառակ դրա, նա երջանիկ էր, ամեն րոպե ավելի երջանիկ, քան թե նախորդ րոպեին: Նրա սիրտը պատռվում էր իր ուրախությունը մի ուրիշին հայտնելու ցանկությունից, նա պատրաստ էր դուրս գալ տնից, կանգնել Կատպիսի մեջտեղում և բղավել.

— Լսեցեք, բոլորդ լսեցեք, ինձ մոտ է սև ծածկոցը, իմն է դա: Ահա, նայեցեք…

Բայց ոչ միայն ցույց տալ, այլև ասել որևէ մեկին այդ մասին՝ նա չէր համարձակվում: Ոչ ոք չէր կարողանա պահել այդպիսի մի գաղտնիք, և Իլեն կկորցներ ծածկոցն ու կպատժվեր չարաչար…

Այն, ինչին որ վախով սպասում էր Իլեն, տեղի ունեցավ վեցերորդ օրը: Այդ օրը մարդիկ, Ակիրսի գլխավորությամբ, Չհալչող Սառցե Տուն տարան մեծ քանակությամբ ձուկ՝ ռումամի հետ փոխելու: Իլեն, իբր թե տեղյակ չլինելով, որ այդ օրը բեռ պետք է տանել Տավա Նեմայի մոտ, վաղ առավոտյան վեր էր կացել և ձկնորսների հետ գնացել դեպի գետը:

Երեկոյան Ակիրսն ու նրա հետ գնացած մարդիկ վերադարձան ձուկը հանձնած, բայց առանց ռումամի: Նրանք գնացին դեպի Իլեի տունը, և Ակիրսը, կռանալով, ահարկու ձայնով բղավեց միջանցքով ներս.

— Դուրս եկ, ամենավերջին Տրապնա…

Իլեն դուրս եկավ տնից և աստղերի ցոլքի տակ, իբր թե զարմանքով, նայեց Ակիրսին:

— Մի՞թե այսօր ձուկ տանելու օր էր, Տեր Ակիրս... Իսկ ես…

Մի ահարկու ապտակ վար գցեց տղային: Մարդկանցից ոչ մեկը ցույց չտվեց դժգոհության որևէ նշան:

— Որտե՞ղ է,— հարցրեց Ակիրսը:

— Ի՞նչն է որտեղ, Տեր Ակիրս,— հարցրեց Իլեն:

— Սև ծածկոցը:

— Ի՞նչ սև ծած…

Նա չավարտեց իր խոսքը: Ակիրսի ոտքի հարվածը նրան նորից գլորեց գետին: Կատպիսի ամենասարսափելի բնակիչը դրանից հետո մտավ Իլեի տունը, մնաց այնտեղ բավական ժամանակ, ըստ երևույթին տակնուվրա անելով քրքրված մորթիներն ու տակի սառույցը, շոշափելով պատերի յուրաքանչյուր մասը, և նորից դուրս ելավ այնտեղից՝ ավելի կատաղած:

— Որտե՞ղ է սև ծածկոցը,— կրկնեց նա:

— Տեր Ակիրս,— փորձեց ժպտալ Իլեն, բայց ինչպես ուժեղ քամուց քշված, բարձրացավ օդի մեջ և խփվեց իր տան պատին:

— Օ՛յ,— ճչաց նա այս անգամ:

— Իլե, որդիս,— ասաց Նուրիսի մայրը,— մի՞թե դու ուզում ես, որ բոլորս մեռնենք լնդախտից: Տուր մեզ սև ծածկոցը՝ վերադարձնելու համար Տավա Նեմային:

— Ես չգիտեմ, թե ինչի մասին ես խոսում, մորաքույր,— ժպտաց Իլեն։

— Դու ճիշտն ասելո՞ւ ես վերջապես, լակոտ,— բղավեց Նուրիսի մայրը, և դա ավելի շշմեցրեց Իլեին, քան Ակիրսի բոլոր հարվածները։

Ոչ, այլևս գթություն հայցել որևէ մեկից՝ անկարելի է, բոլորն են զայրացած նրա վրա…

— Մորաքույր,— ասաց Իլեն այնուամենայնիվ,— եթե ուզում եք, որ չմեռնենք լնդախտից՝ հարկավոր է չենթարկվել Տավա Նեմային, այլ պատժել նրան և պահանջել, որ նա ավելացնի ռումամի քանակը։ Եվ հետո…

Նա սարսափից կակազեց և խոսքը թողեց կիսատ։ Ակիրսը, արյունակալ աչքերով, մոտենում էր նրան։

— Տեր Ակիրս,— խեղդված ձայնով հազիվ արտասանեց Իլեն,— ձեռք մի տա ինձ։ Եթե ինձ սպանես՝ ավելի վատ, այդ դեպքում բոլորովին կկորցնես սև ծածկոցը։

— Ա՜, ուրեմն խոստովանեցի՞ր, որ դա քեզ մոտ է։

— Դե, իհարկե։ Մի՞թե առանց դա էլ հասկանալի չէր։ Իսկ… իսկ… իսկ ի՞նչ ես ուզում անել, Տեր Ակիրս,— ճչաց Իլեն՝ ետ ցատկելով։

— Մի վախենա, ես քեզ չեմ սպանի, դու իրավացի ես։ Ես քեզ միայն շնչահեղձ կանեմ՝ մինչև որ ասես, թե որտեղ ես թաքցրել ծածկոցը։

— Միևնույնն է, չեմ ասի,— բղավեց Իլեն։

— Ինչի՞դ է պետք, հիմար,— մթության ինչ-որ կողմից լսվեց Վինզայի հոր ձայնը։ Մի՞թե նա էլ այդտեղ էր… Իլեն նայեց։ Նրա տան առջև արդեն հավաքվել էր Կատպիսի ամբողջ բնակչությունը։

— Լսեցեք,— ասաց Իլեն,— եկեք այսպես անենք։ Դուք վաղը գնացեք Տավա Նեմայի մոտ և ասացեք, որ սև ծածկոցը չեք վերադարձնում և ամեն մի բեռ ձկան դիմաց պահանջում եք ոչ թե մի, այլ երկու փունջ ռումամ։ Եվ կտեսնեք, որ դա կօգնի, նա ստիպված կլինի համաձայնվել։ Եթե չհաջողվեց՝ այդ դեպքում կտամ ձեզ սև ծածկոցը։

— Ճանապարհ տվեք ինձ…

Դա Խարունան էր խարխափելով մոտենում Իլեին։ Բոլորը, նույնիսկ Ակիրսը, իրենց տեղը տղայի մոտ զիջեցին պառավին՝ գիտենալով նրա ազդեցությունը տղայի վրա և հույս ունենալով, որ Խարունան կարող է օգնել։

Եվ իրոք, պառավը մոտեցավ տղային, շոշափեց-գտավ նրա գլուխը, շոյեց և ասաց.

— Իլե Տրապնա, թոռնիկս… Երբ որ դու անում էիր որևէ խելացի բան՝ ես քեզ քաջալերում էի, այդպե՞ս է։ Իսկ հիմա ես էլ եմ դատապարտում քեզ։ Դու ինչպե՞ս կարող ես քո կամքը թելադրել Տավա Նեմային։ Նա մահվան կդատապարտի ամբողջ Կատպիսը, իսկ ինքը չի տուժի ոչնչով, որովհետև նրա համար աշխատում են ուրիշ շատ բնակավայրեր, բոլորը։

— Իսկ մենք բոլորին էլ կասենք՝ նույնպես վարվել, Խարունա տատի…

Խարունան դժգոհությամբ ձեռքը հեռացրեց տղայից։

— Ո՞վ է սովորեցրել քեզ այդպիսի հանդգնություն, Տրապնա... Դու խելագար ես, Տրապնա…

— Ես ուզում եմ, որ մենք ազատվենք Տավա Նեմայի ձեռքից։

— Դու խելագար ես, Տրապնա,— ավելի բարձրաձայն ու ցասկոտ, կրկնեց պառավ Խարունան։— Վերադարձրու մարդկանց սև ծածկոցը։

— Ո՛չ։

Մթության մեջ լսվեց բոլոր հավաքվածների ընդհանուր բացականչությունը։ Ակիրսը մոտեցավ Խարունային։

— Ապա, քավթառ, քաշվիր մի կողմ՝ քանի որ ոչինչ չկարողացար անել։ Այժմ հերթն իմն է...

Ի՞նչ կատարվեց մթության մեջ՝ ոչ ոք չկարողացավ ասել, բայց լսվեց Իլեի ծանր տնքոցը։

— Կտա՞ս սև ծածկոցը,— հևալով հարցրեց Ակիրսը։

— Չտաս, Իլե Տրապնա,— լսվեց հանկարծ ամբոխի միջից։

Դա Նուրիսն էր։

— Չտաս, Իլե,— կրկնեց Վինզան,— ավելի լավ է մեռնել լնդախտից, քան թե ապրել այսպես…

Ծնողները լռեցրին հանդուգն երեխաներին, բայց նրանց փոխարեն սկսեցին բղավել մյուսները, բոլոր երեխաները, պատանիները, երիտասարդները։

— Չտա՛ս, Իլե…

Ժողովրդի մեջ սկսվեց իրարանցում։ Ոմանք բղավում էին՝ չտաս, մյուսները բարկանում էին նրանց վրա։ Ակիրսն զգաց, որ կարող է գալ մի պահ, երբ բոլորը մտածեն, որ գուցե, իրոք, ավելի լավ է չհանձնել սև ծածկոցը։ Ուստի և, որպեսզի այդպիսի բան չլինի, նա շտապեց Իլեից կորզել հափշտակած ծածկոցի թաքցրած տեղի գաղտնիքը։ Թե նորից ինչ կատարվեց մթության մեջ՝ դարձյալ չտեսավ ոչ ոք։ Բայց այն հատուկտոր հնչյուններն ու հեծեծանքը, որ կարողանում էր արձակել տղան, սարսռեցնում էր մարդկանցից նույնիսկ ամենազայրացածներին։

— Ասա,— կրկնեց Ակիրսը և մի պահ բաց թողեց տղայի կոկորդը՝ նրա պատասխանը լսելու համար։

— Ոչինչ չունեմ ասելու, Ակիրս,— արտասանեց տղան։— Կորչես դու էլ, Տավա Նեման էլ…

Մինչև կես գիշեր չարչարեց Ակիրսն Իլե Տրապնային և մինչև կես գիշեր դիմացավ տղան։ Ընդհակառակը, Ակիրսն ինքն էր արագ-արագ հևում հոգնածությունից։ Վերջապես նա շուռ եկավ դեպի հավաքվածները և ասաց.

— Հարկավոր է մահվան դատապարտել նրան…

Եվ մարդիկ որոշեցին,— վտարել Իլեին Կատպիսից, այսինքն՝ դատապարտել մահվան։ Իհարկե, երեխաների և պատանիների կարծիքը ոչ ոք չհարցրեց։ Նրանք դեռ չափահաս չէին և չէին կարող ոչինչ որոշել։

— Եվ քանդել Տրապնաների տունը, որպեսզի հետքն անգամ չմնա,— ավելացրեց Ակիրսը։

Ոչ ոք ձայն չհանեց: Համարելով դա համաձայնության նշան, Ակիրսը մոտեցավ Իլեի բնակարանին, և մինչդեռ որևէ մեկն ուշքի կգար, ոտքի հարվածներով ավերեց նրա միջանցքը և ապա պատից դուրս քաշելով մի քանի սառցակտոր, իր հուժկու ուժով մեն-մենակ տապալեց համարյա ամբողջ տունը... Իլեն նայեց բութ հայացքով, սրբեց արցունքները և ոչինչ չասաց:

— Ով որ ներս առնի Իլեին՝ վռնդել նաև նրան,— ասաց Ակիրսը:

Ոչ ոք ձայն չհանեց: Դա ևս, հասկանալի էր:

— Գնաս բարև, Իլե Տրապնա,— ձայն տվեց Նուրիսը,— գնաս բարև, իմ ամենամոտիկ ընկեր: Դու կսառչես այս գիշեր, իսկ մենք կմեռնենք մի քանի օր հետո, լնդախտից: Ավելի լավ է այդպես՝ քան թե ապրել՝ ինչպես մենք ենք ապրում: Գնաս բարև, Իլե, մենք այլևս չենք տեսնի իրար:

— Վերջին անգամն եմ հարցնում,– դիմեց Ակիրսը տղային,— տալո՞ւ ես սև ծածկոցը:

— Նուրիսն արդեն ասաց,— պատասխանեց տղան, ապա, դառնալով դեպի ընկերուհու կողմը, ձայն տվեց.— մնաս բարև, Նուրիս... Իհարկե, դու ավելի գեղեցիկ ես, քան թե Տրիսնան: Նրա հագուստն է գեղեցիկ, իսկ քո՝ հոգին: Եթե ես կենդանի մնայի և դու կենդանի մնայիր, մենք այլևս երբեք չէինք խոռվի միմյանցից, Նուրիս... Մնաս բարև:

Չսպասելով, որ մարդիկ վտարեն իրեն, նա ինքը կամավոր կերպով քայլեց դեպի արձակ տարածությունը:

— Կա՛ց,— հասավ նրա ետևից և ետ դարձրեց նրան Ակիրսը,— դու այդքան հեշտ չես պրծնի: Հանիր հագուստդ: Դու մերկ կգնաս:

Լսվեց սարսափից փշաքաղված մարդկանց այնպիսի մի ընդհանուր ճիչ, որ Ակիրսն ստիպված եղավ թողնել տղային և կատաղած գոռալ հավաքվածների վրա.

— Լռեցեք, ողորմելիներ: Ձեզ համար միևնույնը չէ՞, թե ինչպես է սառչելու այս գարշելին: Եթե թողնենք, որ հագուստով գնա, կարող է գնալ և գնալ: Իսկ եթե մերկացնենք, գուցե ցուրտն ստիպի նրան ետ գալ և վերադարձնել մեզ սև ծածկոցը…

Նորից ոչ ոք ձայն չհանեց: Ակիրսը մոտեցավ տղային և մի կտրուկ շարժումով պոկեց նրա վրայից քրքրված մորթե հագուստը:

— Դաժան, ատելի, դահիճ,— որոտացին զանազան կողմից ոչ միայն երեխաները, այլև մեծերից շատերը: Նուրիսն ու Կիվերան սկսեցին բարձրաձայն հեկեկալ, իսկ Ժունան վար ընկավ անզգա և մայրը տարավ նրան տուն:

Երբ գիշերվա ցուրտը դիպավ Իլեի մերկ մարմնին, նա ցնցվեց ոտից գլուխ, և ցրտից մղված, սլացավ դեպի մթությունը: Մինչդեռ մարդիկ ուշքի եկան և նետվեցին տղային փրկելու, նա այլևս չկար: Վազ տալով դեպի բնակավայրի զանազան ծայրերը, նրանք կանգ առան և սկսեցին բղավել.

— Իլե՛... Վերադարձի՛ր... Իլե՛...

Վինզան, Իլեի մոտիկ ընկերը, կանգնել էր մեն-մենակ, նույնպես մերկ, և աղիողորմ լալիս էր: Լսելով, որ Ակիրսն ուզում է վտարելուց առաջ մերկացնել Իլեին, նա իսկույն քաշվել էր հավաքվածներից մի կողմ, հանել էր իր հագուստը և պատրաստ պահել՝ ընկերոջը տալու համար:

Բայց Իլեն վազել էր ուրիշ կողմ և Վինզան չէր տեսել նրան: Ծնողները, ձայնից ճանաչելով իրենց որդուն, ուժով տարան տուն:

Դժվարությամբ տուն տարան նաև Նուրիսին, որը շարունակ ետ-ետ էր նայում և արցունքների միջից կանչում կրկին և կրկին.

— Վերադարձի՛ր, Իլե Տրապնա՛...

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳԻՇԵՐ

Գիշերվա խավարի և սարսափելի ցրտի մեջ Իլեն վազում էր խելագարի պես՝ ինքն էլ չիմանալով, թե դեպի ուր: Իր ետևում նա չէր լսում ոչ մի ձայն, ոչ մի կանչ, գուցե նրա համար, որ նա արդեն շատ էր հեռացել, գուցե նրա համար, որ այլևս անընդունակ էր դարձել որևէ բան լսելու կամ զգալու՝ բացի քամու շրշոցից և այն զարհուրելի ցրտից, որը սեղմել էր նրա մարմինը բոլոր կողմերից և կրակի պես այրում էր նրա ոտքերի ներբանները: Նա այդ րոպեին պատրաստ էր առանց տատանվելու, առանց մի վայրկյան ուշացնելու ետ վերադարձնել սև ծածկոցը, միայն թե նորից մտներ իր մորթե հագուստի մեջ, ապրեր, չսառչեր... Ախր նրա ինչի՞ն էր պետք սև ծածկոցը: Մի՞թե դա թանկ էր նրա համար այն պատճառով, որ դրա վրա պառկել էր Տրիսնան: Իհարկե ոչ: Սև ծածկոցն այնպիսի մի սքանչելի առարկա էր՝ թե՛ իր գույնով, թե՛ իր փափկությամբ, որ զրկվել դրանից՝ Իլեի համար հավասար էր կյանքից զրկվելուն: Բայց այժմ, երբ նա, իսկապես, զրկվում էր կյանքից, նա պատրաստ էր վերադարձնել ծածկոցը: Նա արդեն մտածում էր այդ դրության մեջ: Նա մեծ դժվարությամբ հիշեց, որ ծածկոցը թաքցրել է ձյան մեջ: Ապա, շատ ավելի մեծ դժվարությամբ, հիշեց, որ դրա տեղը գտնելու համար հարկավոր է հաշվել իր տան մուտքի մոտից քսան անգամ քսան քայլ և էլի քսան անգամ քսան քայլ և էլի տասը անգամ քսան քայլ՝ դեպի Չհալչող Սառցե Տունը, ապա շեղվել ճանապարհից դեպի ձախ, հաշվել քսան և քսան և տասը քայլ: Իսկ ինչպե՞ս անել այդ բոլորը: Որտե՞ղ է այդ տեղը, որտե՞ղ է գտնվում հիմա ինքը՝ Իլեն... Ըստ երևույթին Իլեն արդեն սառչում էր, որովհետև միայն մեծ ճիգերից հետո կարողացավ հասկանալ այն հասարակ բանը, որ ծածկոցի տեղը գտնելու համար հարկավոր է վերադառնալ տուն և մուտքի մոտից սկսել հաշվել իր քայլերը: Իսկ որտե՞ղ է Կատպիսը…

Նա չգիտեր, թե որտեղ է Կատպիսը: Բայց քանի որ դա փրկության միակ հույսն էր, նա շուռ եկավ և սկսեց վազել:

Այն, որ նա եկավ ուղիղ Կատպիս, իհարկե, արդյունք էր զուտ պատահականության: Ճիշտ նույն կերպ նա կարող էր գնացած լինել բոլորովին այլ կողմ: Տեսնելով սառցե տները, նա ճչաց ուրախությունից, բայց և իսկույն կտրեց իր ձայնը՝ վախենալով մարդկանցից: Չէ՞ որ բոլորը, բոլորը դեմ են նրան, զայրացած են նրա դեմ, համարում են, որ ինքը պատճառ է դառնում նրանց մահվան: Մինչդեռ Իլեն ուզում էր ազատել նրանց Տավա Նեմայի քմահաճույքներից…

Ամբողջ մարմնով դողդողալով ու ցնցվելով, Իլեն մեծ զգուշությամբ ու դանդաղությամբ անցնում էր տների մոտով դեպի իր տունը՝ շատ լավ գիտենալով, որ ձյան ճռճռոցը հաճախ լսվում է տների ներսում: Քայլելով այդպես, նա հանկարծ հիշեց, որ Ակիրսն ավերել է նրա տունը, և ցրտից էլ սուր վիշտը ծակեց պատանու սիրտը: Բայց և իսկույն ուրախության հորձանքը ողողեց նրան: Նա հիշեց, որ իր տանը նա կարող է վերցնել և հագնել իր հոր հագուստը կամ իր և նրա տոպրակները, կամ հենց թեկուզ փաթաթվել այն մորթիների մեջ, որոնցով պատած էին իր տան պատերը: Դրանք բոլորը, իհարկե, ոչ ոք չի վերցրել, որովհետև, ինչպես հայտնի է, դժբախտացած մարդկանց իրերը

կարող են դժբախտություն բերել նաև դրանց նոր տերերին: Իլեն կվերցնի դրանք բոլորը, կգնա հեռո՛ւ-հեռո՛ւ, տուն կշինի իր համար, կպատի այդ տունը մորթիներով, կապրի մեն-մենակ, որս կանի, արջ կսպանի... Բայց ամենաուրախալին այն է, որ նա այլևս ստիպված չի լինի վերադարձնել սև ծածկոցը: Այո, բայց ռումամ... Ինչպե՞ս ճարել ռումամ... Որ ինքը կարող է մեռնել լնդախտից առանց ռումամի՝ դա ոչինչ, բայց ինչո՞վ են մեղավոր կատպիսցիները... Բայց ոչինչ, կա նաև դրա միջոցը: Նա իր որսած ձուկը կտանի ուրիշ որևէ բնակավայր և դրա բնակիչների միջոցով կփոխի ռումամի հետ և կատպիսցիներին կսովորեցնի անել նույնը: Եթե հնարավոր չէ Տավա Նեմային հաղթել ուժով, ապա պետք է հաղթել խորամանկությամբ…

Սակայն, երբ Իլեն մոտեցավ իր տանը, նրա այդ բոլոր գեղեցիկ երազները միանգամից հօդս ցնդեցին: Նա հազիվ կարողացավ թաքնվել իր տան ավերակների ետևում: Տան կիսաքանդ կտուրի տակից դուրս եկավ Ակիրսը՝ Իլեենց ամբողջ մորթեղենը շալակած: Մեծ-մեծ զցելով արջի թաթերի պես խոշոր իր ոտքերը, նա մոտեցավ իր տանը, մորթիները հրեց միջանցքով ներս և ինքն ևս մտավ այնտեղ: Ախ, Ակիրս, երանի թե իմ տան մորթիներն իսկապես դժբախտացնեն նաև քեզ, գարշելի մարդ,— մտածեց Իլեն հառաչելով: Մտնելով իր տան կիսավեր կտուրի տակ, նա կարծես հրաժեշտ տվեց դրան և հենց այն է, ուզում էր մոտենալ այն տեղին, որտեղ իր տան մուտքն էր եղել, երբ նրա բոբիկ ոտքը շոշափեց մի փափուկ բան: Իլեն ուրախ կռացավ, բայց որևէ մեծ մորթու փոխարեն նա բարձրացրեց մի փոքրիկ պատառ... Այնուամենայնիվ դա ևս մի բան էր: Նա համարյա լիովին փտած մորթու այդ կտորը հեշտությամբ բաժանեց երկու մասի, փայտացած մատներով մի կերպ արձակեց իր թևի վրայից այն փոկերը, որոնցով Վերջին Զկնագլխի Օրվա հաշիվն էր պահում, և դրանց օգնությամբ մորթու կտորները կապեց իր ներբանների վրա: Նա հառաչեց: Իսկ այժմ, քանի դեռ նա չի սառել բոլորովին, հարկավոր է հանել նաև սև ծածկոցը թաքցրած տեղից և վերադարձնել...

Ծածկոցը նա գտավ շատ հեշտ: Ուղղակի կռացավ և ձյան տակից հանեց այն: Նշանակում է՝ ճիշտ էր հաշվել թե՛ առաջին և թե՛ երկրորդ անգամ:

Երբ Իլեի մատները հպվեցին ծածկոցի խավոտ և փափուկ մակերեսին, նա մի այնպիսի երանություն զգաց, որ մի պահ նորից մտածեց՝ մի՞թե նա ուժ կունենա վերադարձնել դա իր տիրոջը... Բարձրացնելով ծածկոցը ձյան միջից, նա տեսավ, որ դա բոլորովին չոր էր և նույնիսկ տաք: Նա իսկույն բաց արեց այն և ամբողջ մարմնով, գլխովին, փաթաթվեց դրա մեջ: Դարձավ այնպես տաք, որ նա ժպտաց բավականությունից: Բայց ավաղ, այդպես թվաց միայն սկզբում: Քիչ հետո նա զգաց, որ սև ծածկոցը ոչ մի կերպ չի կարող համեմատվել արջի մորթուց կարած հագուստի հետ: Նա նորից զգաց ցուրտը, բայց դա այլևս առաջվա պես սարսափելի չէր, համենայն դեպս կարելի էր և չսառչել: Մանավանդ, որքան էլ որ գիշերը ցուրտ էր, այնուամենայնիվ դա ձմեռվա գիշեր չէր, այլ գարնան:

Սև ծածկոցը պետք էր վերադարձնել... Իլեն քայլերն ուղղեց դեպի Կատպիս: Բայց ինչո՞ւ Կատպիս: Ավելի լավ չէ՞, որ հենց ինքը տանի դա Չհալչող Սառցե Տուն, հանձնի, ստանա ռումամը և այդպես վերադառնա իր բնակավայրը: Կտա ռումամը բնակիչներին, կվերցնի նրանցից, այսինքն՝ Ակիրսից, իր հագուստն ու մյուս մորթիները և ընդմիշտ հրաժեշտ կտա Կատպիսին: Նա կգնա Տրուց, որտեղ ապրող նրա ծանոթ ծերունին գրկաբաց կընդունի Իլեին իր տանը նա մի քանի անգամ ասել է տղային այդ մասին՝ երբ իրենց բնակավայրի Մակարաչի հետ միասին մորթիներ էր բերում Տավա Նեմային և այնտեղ հանդիպում էր Տրապնային:

Իլեն շուռ եկավ դեպի Չհալչող Սառցե Տունը:

Լույսն սկսում էր բացվել: Իհարկե, նա տեղ կհասնի դեռ արևածագից առաջ:

ՀՈՂ

Լուռ և անշարժ, կանգնել էր Իլեն Չհալչող Սառցե Տան դիմաց՝ ինչպես սև արձան: Նա ոտից գլուխ փաթաթված էր սև ծածկոցով, որի տակից գծագրվում էին նրա մերկ մարմնի գծերը: Թեև ցուրտն ավելի էր սաստկացել այդ վաղ առավոտյան, բայց տղան այլևս չէր դողում: Նրա մարմինը կարծես քարացել էր ցրտից և դադարեցրել որևէ շարժում, որևէ գործունեություն: Եվ եթե նա չէր սառչում, ապա պատճառն անշուշտ այն էր, որ նա երկար ժամանակ իր մարմինը վարժեցրել էր ցրտին, նաև այն էր, որ այժմ գարուն էր և ոչ թե ձմեռ:

Չնայած, որ ցուրտն անտանելի էր, բայց Իլեն չէր համարձակվում թակել տան ապակե պատն արևածագից առաջ: Կատպիսի բոլոր բնակիչներին հայտնի էր, որ այդ ժամին Տավա Նեման դեռ քնած է լինում և խիստ վտանգավոր բան է նրան արթնացնելը: Սոսկալի կզայրանա և կպատժի իր ձեռքից եկած բոլոր միջոցներով:

Բոլոր կողմերից, բազմաթիվ ճառագայթների պես, ճանապարհները եկել և շրջապատել էին Չհալչող Սառցե Տունը: Դաշտավայրը դրա շուրջը հարթ էր և այդ հարթության վրա տունը գտնվում էր մի փոքրիկ բլրի գագաթին: Ավելի շուտ դա բլուր էլ չէր, այլ նույն ձյունե դաշտը, որը մի փոքր ուռուցիկացել էր և միայնակ ալիքի նման վեր բարձրացած՝ անշարժացել: Չհալչող Սառցե Տան ապակյա գմբեթը, որը կանգնած էր այդ բլրի կենտրոնում, կարծես դրա թափանցիկ շարունակությունը լիներ: Գմբեթի շուրջը կազմվել էր ողորկ սառույցի մի լայն օղակ, որն իրար էր միացնում բոլոր ճանապարհները: Իսկ տան այն կողմում, որտեղ ապակյա պատի փոքրիկ անցքն էր, գտնվում էր մի փոքրիկ հարթ հրապարակ, որտեղ նստում կամ իրենց բեռներն էին վար թափում մարդիկ՝ անցքից ներս լցնելու համար: Ճանապարհները նույնպես, ոտքերի տակ ամրանալով, վերածվել էին սառույցի և պնդացել: Ճանապարհների միջև ոտնակոխ շարված ձյունը բավական հալվել և իջել էր՝ գոյացնելով համարյա մարդու հասակի չափ փոսեր:

Իլեին թվում էր, թե վերջ չի ունենա այդ սպասումը: Այժմ նա զղջում էր, որ ծածկոցը չէր տարել Կատպիս, այլ բերել էր այստեղ: Բայց չէ՞ որ նա այդ արեց նրա համար, որպեսզի պահանջի Տավա Նեմայից ավելի շատ ռումամ, քան տալիս էր նա մինչև հիմա: Եվ եթե այդ հաջողվի՝ կտանի Իլեն այդ ռումամը Կատպիս, կտա մարդկանց և կասի՝ վերցրեք և ձեր հաջորդ որսը մի տարեք Տավա Նեմային, այլ կերեք ինքներդ…

Եվ մարդիկ կսովորեն պահանջել իրենց իրավունքները և ոչ թե աղերսել:

Ահա այդպես էր մտածում Իլեն այն ժամանակ: Բայց այժմ, երբ ցուրտը դարձել էր անտանելի, նա համարյա մոռացել էր այդ, նա միայն բարկացած էր իր վրա, թե ինչու չտարավ ծածկոցը Կատպիս, չշպրտեց մարդկանց և չասաց՝ վերցրեք և շարունակեցեք ապրել, ինչպես ապրել եք մինչև հիմա: Դուք արժանի չեք ավելի լավ կյանքի…

Եթե մի քիչ ավելի տաք լիներ, Իլեն գուցե այդպիսի չար բան չմտածեր Կատպիսի բոլոր բնակիչների մասին: Բայց այժմ նա բարկացած էր բոլորի վրա և, իհարկե, առաջին հերթին իր վրա:

Վերջապես Իլեն չհամբերեց և սկսեց թակել ապակին: Իրե՞ն ինչ, թե քնած է Տավա Նեման: Եթե ուզում ես ետ ստանալ քո ծածկոցը՝ բարի եղիր արթնանալ մի քիչ ավելի շուտ, քան սովորաբար:

Բայց գուցե Տավա Նեմային բոլորովին էլ պետք չէ ծածկոցը, գուցե նա շատ ունի դրանից: Եվ հիմա, արթնանալով, նա գուցե խիստ բարկանա և հրամայի իր ծառաներին՝ բերել և ցույց տալ հանդուգն

Իլեին իր բոլոր ծածկոցները, ինչպես մի օր նա Ակիրսին ցույց էր տվել իր ռումամի պաշարները: Իսկ նա այս ծածկոցը ետ է պահանջում ոչ թե նրա համար, որ դրա կարիքն ունի, այլ որպեսզի պատժի Իլեին և պահի բոլորին իր հպատակության տակ:

Իլեն սկսեց թակել ավելի կատաղի, ապա ընդհատեց և սկսեց սպասել: Նա համարյա խելագարվում էր ցրտից, նա նայում էր շուրջը՝ պատսպարվելու հույսով, բայց որտե՞ղ, ի՞նչ կար շուրջը՝ բացի ձյունածածկ դատարկությունից... Նա այտը մոտեցրեց ապակյա պատին՝ ստուգելու համար դրա տաքությունը: Ապակին նույնպես սառն էր:

Հանկարծ Իլեն սարսափած հիշեց, որ Տավա Նեմայի դուրս գալը ոչ միայն չի փրկի նրան ցրտից, այլև ընդհակառակը: Նա կհանձնի ծածկոցը և կմնա բոլորովին մերկ... Իսկ իր հագուստը հեռու է՝ Կատպիսում... Ինչպե՞ս պիտի նա կտրի-անցնի հսկայական տարածությունը՝ թեկուզև հիմա կծագի արևը և կլինի ցերեկ: Ի՞նչ է Սպիտակ Թագավորության արևը և ի՞նչ է ցերեկը: Սպիտակ Թագավորության մեջ ցուրտ է ամեն ժամանակ, և նույնիսկ ամառային ցերեկվա ցուրտը բավական է՝ այդքան երկար տարածության վրա մարդուն սառեցնելու համար...

Իլեն նոր միայն զգաց, թե ինչպիսի մեծ հիմարություն էր կատարել ինքը: Նա, որ կարող էր ծածկոցը Կատպիս տանելու դեպքում փրկվել, այժմ, իրոք որ, պետք է մեռնի... Իսկ չհանձնել ծածկոցը՝ չի կարելի, հարկավոր է ռումամ տանել Կատպիսի բնակիչներին, փրկել գոնե նրանց: Այսինքն՝ ոչ թե տանել,— մի՞թե նա կկարողանա տանել-հասցնել,— այլ խնդրել Տավա Նեմային՝ չբարկանալ այլևս կատպիսցիների վրա, որովհետև միակ մեղավորը նա ինքն է՝ Իլե Տրապնան…

Իլեն նորից սկսեց թակել ապակին, բայց հենց նույն վայրկյանին կարծես կրակով այրեցին նրա մեջքը: Ոչ թե այրեցին, այլ հրաշալի կերպով տաքացրին: Նա ապշած ետ նայեց և ոչ ոքի կամ ոչինչ չտեսավ: Բայց երբ նա ետ նայեց, նույնքան ուժեղ տաքացավ նաև նրա կուրծքը: Մի այնպիսի աննկարագրելի, հաճելի ջերմություն տարածվեց նրա ամբողջ մարմնով, ինչպիսին նա երբեք չէր զգացել ո՛չ ճրագ-վառարանի ամենաուժեղ բոցի տակ, ո՛չ մորթե տոպրակի մեջ, ո՛չ նույնիսկ իր և իր հոր բոլոր մորթի իրերն իր վրա գցած ժամանակ: Ո՞վ էր այդպես տաքացնում Իլե Տրապնային…

— Արևը,— ճչաց նա հանկարծ,— արևն է ուժեղացել…

Նա ուրախությունից տարածեց դեպի արևն իր ձեռքերը, որոնց մեջ բռնել էր ծածկոցի ծայրերը: Ծածկոցը բացվեց, բաց արեց նրա կուրծքը և սարսափելի ցուրտը մի վայրկյանում կաշկանդեց նրան: Իլեն, ավելի շուտ բնազդաբար, քան թե հասկանալով, վրա բերեց ծածկոցի ծայրերը: Ծածկոցի տակ նրա կուրծքը նորից և իսկույն տաքացավ ուժեղ ջերմությամբ:

Իլեն մոլորված հայացքով նայեց շուրջը՝ կարծես աղերսելով, որ մի ուրիշը բացատրի նրան այդ հրաշքը: Բայց ոչ ոք չկար և եթե այդտեղ լինեին նույնիսկ Սպիտակ Թագավորության բոլոր բնակիչները, հազիվ թե կարողանային հասկանալ ավելին, քան հասկանում էր ինքը՝ Իլեն:

Սև ծածկոցը, որն ամբողջ գիշերը սառցի շերտի նման ցուրտ կեղևով պատել էր Իլեի մերկ մարմինը և հազիվ էր մի կերպ փրկել նրան շրջապատի սառնամանիքից, արևի ծագելուց հետո դարձել էր սև կրակ, որն ամեն կողմից տաքացնում էր տղային: Ահա թե ինչ հրաշք էր պարունակում իր մեջ սև ծածկոցը:

— Արևը սիրում է սև ծածկոցը, արևը սիրում է սև գույնը,— հասկանալով, բացականչեց Իլեն:— Ահա թե ինչ…

Չհալչող Սառցե Տան գետնահարկի դռնակը տեղից շարժվեց: Ոչ, Իլեն այլևս ոչ ոքի չի տա սև ծածկոցը: Նա արագ վար առավ ծածկոցն իր վրայից և նետեց դեպի ճանապարհի կողքի ցածրիկ տարածությունը: Թող չտեսնի Տավա Նեման: Իլեն նախ կփորձի շարժել այդ դաժան մարդու գութն իր մերկությամբ, խնդրել այն ռումամը, որը նա երեկ չի տվել կատպիսցիներին: Իսկ եթե դա չհաջողվի՝ միայն այն ժամանակ նա ստիպված կլինի տալ ծած...

Նրա մտքերը մնացին կիսատ: Դռնակը բացվեց և գետնի տակից սկսեց բարձրանալ Տավա Նեմայի քնկոտ, չափազանց դժգոհ և կատաղած կերպարանքը: Իլեն ակամայից ետ շարժվեց իր տեղից:

Տեսնելով Իլեին, Չհալչող Սառցե Տան տերը ոչ միայն ավելի չբարկացավ, այլև ընդհակառակը, ժպտաց և վազ տվեց դեպի պատի անցքը: Բանալով այն, նա կռացավ, թեև մեծ դվարությամբ, որովհետև փորը խանգարում էր նրան, և իր ձայնին տալով մեղմ ու սիրալիր հնչյուններ, ասաց.

— Իլե Տրապնա... Իլե... Տրապնա...

Իլեն ապշեց նրա այդպիսի վերաբերմունքից, բայց իրեն չկորցրեց և պահանջեց.

— Ռումամ:

— Ռումա՞մ,— հարցրեց Տավա Նեման ինքնիրեն, ապա ժպտաց և ասաց հաստատակամորեն.— ռումամ, ռումամ…

Շուռ գալով դեպի գետնահարկի դռնակը, նա բղավեց.

— Ռումամ:

Համարյա իսկույն դուրս ցատկեց նրա ծառաներից մեկը և բերեց ութ փունջ ռումամ:

— Ռումամ,— բարկացավ Տավա Նեման նրա վրա և իր թևերը տարածելով, ցույց տվեց մի մեծ խուրձ:— Ռումամ…

Ծառաները բերեցին այնքան ռումամ, որքան որ կատպիսցիները չէին ստացել նույնիսկ մի տարում: Տավա Նեման վերցրեց այդ ամբողջը, դուրս տվեց պատի անցքով և ժպտաց Իլեին:

Իլեն հավաքեց փնջերը և պատրաստվեց հեռանալու:

— Իլե,— համարյա սարսափով ձայն տվեց նրա ետևից Տավա Նեման:

Իլեն ետ նայեց: Չհալչող Սառցե Տան տերը հասկացրեց՝ վերադարձրու սև ծածկոցը:

Առանց պատասխանելու, Իլեն քայլեց:

— Իլե Տրապնա,— ավելի հուսահատ բղավեց Տավա Նեման:

Իլեն նորից նայեց նրան: Ահա թե ինչու է այսքան բարի դարձել Տավա Նեման... Ուրեմն նրան շատ է հարկավոր սև ծածկոցը: Կամ հարկավոր չէ նրան, բայց հարկավոր է վերցնել դա Սպիտակ Թագավորության բնակիչներից…

Տավա Նեման ինչ-որ բան հրամայեց իր ծառաներին: Նրանք բերեցին մի մեծ պարկ: Տավա Նեման ժպիտով նայեց Իլեին և շուռ տվեց պարկը: Կարմիր գետնի վրա թափվեց վալտաշի մի ամբողջ հեղեղ, որը ծածկեց համարյա ողջ հատակը: Իլեի աչքերը բոցավառվեցին, նա կարկամեց, չկարողացավ արտասանել որևէ խոսք: Տավա Նեման, ըստ երևույթին նրա լռությունը բացատրելով

նրա դժգոհությամբ, որոշեց ավելացնել վճարը: Նրա ծառաներն այս անգամ գետնի տակից բերեցին այնպիսի սքանչելի խաղալիքներ ու զարդարանքներ, և այն էլ այնպիսի հսկայական քանակությամբ, որ Իլեի գլուխը պտտվեց հիացմունքից: Մի պահ նա նույնիսկ ուզեց վար ցատկել ճանապարհից, վերցնել փոսից ծածկոցը և վերադարձնել Չհալչող Սառցե Տան տիրոջը, իհարկե, նախապես վերցնելով նրանից բոլոր այդ հրաշալի նվերները: Բայց նա տեղից չշարժվեց: Նա սկսում էր հասկանալ, որ սև ծածկոցը, ինչ-որ պատճառով, Տավա Նեմայի համար ավելի թանկ արժեր, քան գետնի տակից դուրս բերած այդ ամբողջ հարստությունը:

Տավա Նեման դուրս բերեց էլի նոր և նոր առարկաներ՝ սքանչելի հագուստներ, ինչ-որ գործիքներ, որոնք նվագում էին, ինչ-որ գործիքներ, որոնք չքնաղ նկարներ էին ցույց տալիս, սքանչելի հոտ արձակող գունավոր ջրերով լի ամաններ, նույնիսկ տավտաշ... Եվ որքան շատ էր նա ցույց տալիս իր առատաձեռնությունը, այնքան ավելի էր համոզվում Իլե Տրապնան, որ հարկավոր չէ վերադարձնել սև ծածկոցը: Քանի դեռ դա Իլեի ձեռքումն է, նրա ձեռքումն է նաև Տավա Նեման: Տղան նրանից կարող է պահանջել՝ ինչ-որ ուզենա... Իսկ նա ուզում է միայն մի բան, որ ավելի լավ ապրեն Կատպիսի և ամբողջ Սպիտակ Թագավորության բնակիչները: Իսկ Չհալչող Սառցե Տանը դիզված այս հարստությունները... Ճիշտ է, Իլեն չի կարողանում աչքը կտրել դրանցից, ճիշտ է, յուրաքանչյուր նոր հրաշալիք տեսնելուց անմիջապես հետո նա պատրաստ է բղավել՝ համաձայն եմ, տուր այդ բոլորը և վերցրու սև ծածկոցը, բայց կամքի մի արտասովոր լարումով ամեն անգամ նա կարողանում է օրորել իր գլուխը՝ ոչ, Տավա Նեմա, ոչ…

Ըստ երևույթին Տավա Նեման արդեն հասկացել էր իր սխալը: Իր առատաձեռնությամբ նա մատնել էր, որ սև ծածկոցը չափազանց կարևոր նշանակություն ունի իր համար: Բայց քանի որ նա արդեն արել էր այդ սխալը և ետ դառնալու համար այլևս ուշ էր, նա ամեն րոպե ավելացնում էր վճարը նորանոր չքնաղ առարկաներով:

Վերջապես եկավ մի պահ, երբ հաստափոր մարդը կանգ առավ հուսահատ՝ չիմանալով, թե այլևս ինչ առաջարկի անդրդվելի տղային: Չհալչող Սառցե Տան տիրոջ դեմքի վրայով մի վայրկյան սահեց բուռն ատելության և թշնամանքի ամպը, բայց նա իսկույն նորից թաքցրեց այն և ձևացրեց իր նախկին կեղծ ժպիտը: Բայց հանկարծ այդ կեղծ ժպիտը փոխվեց իսկականի: Նա գտավ, թե ինչով կարող է ազդել տղայի վրա: Նայելով դեպի գետնահարկի դուռը, նա բղավեց.

— Տրիսնա…

Մի քիչ սպասելուց հետո Տավա Նեման ինքը գնաց և բերեց փոքրիկ աղջկան: Տրիսնան դուրս եկավ գետնահարկից՝ դեռ քնկոտ... Իլեի սիրտն սկսեց խփել, նա հուզված սպասում էր, թե խոսելո՞ւ է արդյոք աղջիկն իր հետ: Տավա Նեման կռացավ դեպի աղջկա ականջը և ինչ-որ բան փսփսաց, թեև առանց այդ էլ կարող էր ասել և դարձյալ չէր լսվի նրա ձայնը, Իլեն չէր հասկանա նրա լեզուն:

Տրիսնան մոտեցավ ապակե պատին, կանգնեց ուղղակի Իլեի դիմաց և նրա կապույտ աչքերը շողացին ուրախությունից. «Իլե Տրապնա»...— որոշակիորեն շշնջացին նրա շրթունքները:

— Տրիսնա...— բացականչեց Իլեն՝ նրանից էլ ավելի մեծ ուրախությամբ,— Տրիսնա…

Աղջիկը ձեռքով արեց տղային՝ մոտեցիր պատի անցքին: Իլեն, առանց աչքերը նրանից կտրելու, մոտեցավ և ծունկ չոքեց անցքի առջև: Նույնն արեց նաև աղջիկը: Ապա նրանք նորից, երկար, շատ երկար, նայեցին իրար, տղան՝ իր շեղ բացված սև աչքերով, իսկ աղջիկն իր կապույտ խոշոր աչքերով, որտեղ այնքա՛ն հստակություն կար և մեղմություն, կարծես դա երկինքը լիներ՝ գարնան

ցերեկով: Եվ այդ երկնքի վրա, վերևում, դիզվել էր արևի ոսկեգույն ճառագայթների առատ խուրձը՝ աղջկա ոսկե մազերը:

Տրիսնան ձեռքով արեց Իլեին՝ տուր ձեռքդ: Իլեն թեք պառկեց անցքի մոտ և ներս երկարեց իր ձեռքը: Աղջիկը բռնեց նրա ձեռքը, սկսեց շոյել: Ինչպիսի՜ սպիտակ և քնքուշ ձեռքեր ուներ նա: Կարծես դրանք պատրաստված էին հենց նոր եկած ձյունից, միայն թե այնքա՛ն ջերմ:

Դրանից հետո Տրիսնան վերցրեց տղայի ձեռքը և մոտեցրեց իր մազերին: Իլեի մատները հպվեցին ոսկեգույն ճառագայթներին, որոնք այնքան նուրբ էին, որ կարծես անհետանալու էին ամենափոքր շփումից: Իլեն զգուշությամբ շոյեց աղջկա մազերը և շշնջաց նորից և նորից՝ Տրիսնա... Տրիսնա…

Հանկարծ աղջկա կապույտ աչքերում հայտնվեց մի մեղմ թախիծ: Նա տխուր ու խեղճ նայեց Իլեի աչքերի մեջ և ասաց աղաչանքով.

— Վերադարձրու ինձ սև ծածկոցը…

Իլեն հասկացավ նրա ոչ թե խոսքերը, այլ խոսքերի իմաստը:

— Իսկույն, Տրիսնա,— բացականչեց տղան, և Տրիսնան նույնպես չիմանալով նրա լեզուն, հասկացավ նրան: «Իլե,— բացականչեց նա՝ ուրախությունից շողացող աչքերով,— սիրելի Իլե»…

Տավա Նեման, որ ամբողջ այդ ժամանակ հավանության ժպիտով հետևում էր անցուդարձին և կարծես ինքն էլ էր սրտաշարժվել պատանիների սիրալիր հանդիպումից, բարվոք համարեց այդ պահին իջնել գետնի տակ և դռնակի կիսաբաց ճեղքով հետևել դեպքերի շարունակությանը:

— Իսկույն,— կրկնեց Իլեն՝ ցատկելով ոտքի: Տավա Նեմայի խոստացած ոչ մի հարստություն չէր կարող գայթակղեցնել նրան՝ վերադարձնելու սև ծածկոցը, բայց Տրիսնայի մի ժպիտի համար նա կանի այդ:

Իլեն շուռ եկավ, որպեսզի իջնի ճանապարհով մի քիչ տեղ և մոտենա ցածրիկ տարածությանը՝ ծածկոցը վերցնելու համար: Բայց երբ նայեց, նրա աչքերը կլորացան զարմանքից: Ծածկոցն այժմ փռված էր ոչ թե ճանապարհի կողքի ցածրիկ վայրում, այլ դրանից շատ ավելի ցածր, մի ինչ-որ խոր փոսի մեջ: Բայց Իլեն հասկացավ համարյա իսկույն: Քանի որ արևը սիրում է սև գույնը, ուժեղ տաքացնում է ծածկոցը, ուրեմն ձյունը դրա տակ հալվել է և իջել ցած: Այս որքա՜ն է հալվել... Իլեն ստիպված է սողալ այդ փոսի մեջ և մի կերպ դուրս մագլցել այնտեղից՝ ծածկոցը վերցրած…

Իլեն շտապեց իջնել փոսը:

Ինչպե՜ս խաբեց Իլեին նրա աչքաչափը... Նա փոսի եզրից հանգիստ ցատկեց փոսի մեջ՝ տեսնելով, որ դա իր հասակից մոտավորապես երկու անգամ է խորը, իսկ դա՝ ոչինչ: Բայց սարսափի ճիչն ակամա դուրս թռավ նրա կրծքից, երբ նա զգաց, որ գահավիժում է դեպի ինչ-որ վիհ: Նա ուժեղ չմփոցով ընկավ ջրի մեջ և սառցային սառնությունը ցնցեց նրա ամբողջ մերկ մարմինը: Առանց ուշադրություն դարձնելու հարվածի պատճառած ցավին, նա վեր կացավ և բարձրացրեց ծածկոցը: Ջուրը, որի մեջ ընկել էր նա, իսկույն ծծվեց շրջապատի ձյան մեջ և այժմ նրա ոտքերի տակ ինչ-որ կոշտ հարթություն կար՝ միայն թե մի քիչ թրջված: Իլեն նայեց և ուրախության մի խելահեղ աղաղակ դուրս պրծավ նրա կոկորդից.

— Հո՛ղ…

Եվ իրոք, սև ծածկոցը, հալեցնելով դարավոր ձյան ամբողջ շերտը, հասել էր հողին...

Մոռացած ամեն ինչ, մոռացած նաև Տրիսնային, Իլեն պառկեց հողի վրա և ուրախությունից այտերը քսեց դրան: Ապա նորից վեր ցատկեց և նայեց վերև: Նա գտնվում էր մի խոր հորի մեջ: Հարկավոր էր դուրս գալ, հարկավոր էր, շատ էր հարկավոր, Իլեն գործեր ուներ անելու վերևում: Իսկ ինչպե՞ս դուրս գալ: Իհարկե, ձյունն ի վեր մագլցելով: Բայց դեպի ո՞ր կողմ: Իհարկե, դեպի այն կողմ, որտեղ դաշտն ավելի և ավելի էր ցածրանում…

Իլեն, որի մարմինն ամբողջովին դողում էր ձյան յուրաքանչյուր հպումից, մոտեցավ հորի պատին և փորձեց վեր մագլցել: Բայց հազիվ էր նա ձեռք տվել պատին, երբ դրա խարխլված ձյունը փուլ եկավ, նստեց և սկսեց հոսել իր տակ հավաքված ջրի հետ միասին, որն, անշուշտ, գոյացել էր սև ծածկոցի տակի ձյան հալչելուց: Եվ ահա, այնտեղ, որտեղ հողի այդ պատն էր, գոյացավ մի նեղ և խոր կիրճ, որի խորքում խշշալով հոսում էր ձնախառն ջուրը: Նա արագ կերպով, ուղղակի աչքի առաջ, մաշում էր իր պատերը, դատարկում դրանց տակը, և դրանք, փուլ գալով, ավելի և ավելի էին լայնացնում կիրճը: Իլեն թափ առավ և մագլցեց այդ կիրճի պատերից մեկի վրա: Ձյան սառնությունը ծակծկում և այրում էր նրա մարմինը, բայց նրան, վերջապես, հաջողվեց դուրս գալ դաշտ՝ Չհալչող Սառցե Տնից բավական հեռավորության վրա: Նա մզեց-քամեց ծածկոցը, վերցրեց, իր ուսերին: Այժմ դա չէր տաքացնում, որովհետև թրջված էր սառը ջրով: Բայց իսկույն ջուրն սկսեց գոլորշիանալ, ծածկոցը չորացավ, և Իլեի դեմքի վրա նորից փայլեց տաքանալուց առաջացած երջանիկ ժպիտը: Ահա թե ինչու էր Տավա Նեման աշխատում ամեն գնով ետ վերցնել նրանից սև ծածկոցը... Դա հրաշագործ ծածկոց է, դա կվերադարձնի Գույնզգույն Թագավորությունը…

Իլեն վազեց դեպի Չհալչող Սառցե Տունը: Մի՞թե, իրոք նա տեսավ հողը, մի՞թե, իրոք, հողը բացվել է... Իլեն շնչակտուր վեր վազեց ճանապարհով: Առաջին բանը, որ նա տեսավ, դա Տավա Նեմայի և նրա աղջկա հարցական հայացքներն էին՝ նրա վրա ուղղված:

Տեսնելով Իլե Տրապնայի վրեժխնդիր ժպիտը և մանավանդ նրա հողոտ դեմքը, Տավա Նեման հասկացավ կատարվածը և, երկու ձեռքերով բռնելով իր գլուխը, ոռնաց վիրավորված արջի մի սարսափելի ոռնոցով: Մի՞թե կարելի է ասել, թե Իլեն չլսեց նրա ձայնը: Այնքան արտահայտիչ էր բացվել նրա անճոռնի բերանը, այնքան խիստ էին ուռել նրա հաստ երակները կոկորդի վրա, որ քիչ մնաց Իլեն ծածկեր իր ականջները՝ չխլանալու համար:

Իսկ Տրիսնան, որը, ըստ երևույթին, դեռ չէր հասկացել, թե ինչ է կատարվել, բայց հոր գոռոցից եզրակացնելով, որ Իլե Տրապնան նորից մի վատ բան է արել իրենց նկատմամբ, նայեց տղային մի այնպիսի հայացքով, որի մեջ այլևս չկար ոչ մի ժպիտ կամ սիրալիրություն: Այնտեղ կար միայն հոգու խորքից բխող բուռն ատելություն, թշնամանք, զզվանք: Բայց որքա՛ն սքանչելի էր Տրիսնան՝ նույնիսկ իր այդ հայացքով…

Միայն մի վայրկյան նայեց Իլեն նրան, միայն մի վայրկյան հիացավ նրանով՝ տխուր հիացմունքով, ապա շուռ եկավ և, վար առնելով ծածկոցն իր ուսերի վրայից, տարածեց մի լայն շարժումով և նետեց դեպի ճանապարհի մյուս կողմի ցածրությունը: Նույն վայրկյանին՝ նա իր ետևում լսեց ինչ-որ թրխկոց և շուռ գալով, տեսավ: Դա Տավա Նեման էր հուսահատությունից և անզորությունից գլուխը պատեպատ տալիս: Տրիսնան այլևս չկար:

Մերկ, ցրտից ամբողջ ժամանակ ցնցվելով ու դողդողալով, Իլե Տրապնան մոտեցավ ապակուն, կանգնեց Չհալչող Սառցե Տան տիրոջ դիմաց և ծիծաղեց վրեժխնդիր, հաղթական: Ապա, միանգամայն հասկանալի շարժումներով, ասաց.

— Վերջացավ քո իշխանությունը, Տավա Նեմա: Ես ձյունը կհալեցնեմ Չհալչող Սառցե Տան բոլոր կողմերում, և կանհետանա Սպիտակ Թագավորությունը: Հողի վրա մենք կունենանք այնքան

ռումամ, որքան ուզենանք: Այնտեղ կբուսնեն բույսեր, կծնվեն բարի կենդանիներ: Եվ ոչ ոք չի բերի քեզ հանձնելու և ոչ մի ձկան պոչ…

ԿԱՏՊԻՍՈՒՄ

Իլեին վտարելու հետևյալ օրը կատպիսցիներն արթնացան ծանր ու ճնշված տրամադրությամբ: Ճիշտն ասած, նրանցից շատերը չէին քնել ամբողջ գիշերը: Բոլորի գլխում կանգնած էր մի հարց՝ ի՞նչ եղավ Իլեն: Եվ բոլորն էլ զգում էին հարցի ավելորդությունը: Ի՞նչ կարող է կատարվել մերկ մարդու հետ՝ ցուրտ գիշերով, բաց երկնքի տակ... Սովորականի պես բոլոր մեծերը հավաքվեցին ձկնորսության գնալու: Եվ սովորականի պես Ակիրսն սկսեց գոռգոռալ նրանց վրա, հայհոյել, շտապեցնել: Բայց այդտեղ արդեն, սկսեց անսովորը: Բնակավայրի ամենածեր մարդկանցից մեկն ընդհատեց Ակիրսին և ասաց.

— Իսկ դու, փոխանակ տիրոջ նման պահելու քեզ, պատրաստվիր այսօր երեկոյան կանգնել ժողովրդի դատարանի առաջ:

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ,— գոռաց Ակիրսը՝ քշելով նրա վրա, բայց Վինզայի հայրը կտրեց նրա ճանապարհը և ասաց.

— Հանգիստ թող ծերունուն: Եվ պատրաստվիր՝ եթե ասում են քեզ:

Կատպիսի ատելի բնակիչը նայեց իր շուրջը և տեսավ՝ այլևս փրկություն չկա նրա համար: Այս անգամ նա կարող է չսպասել ոչ մի ներողամտություն:

— Ես կասեմ Տավա Նեմային,— սպառնաց նա:

— Դա քո գործն է,— ձեռքը թափ տվեց Նուրիսի մայրը: Հիմա, երբ այն անպիտան Իլե Տրապնայի պատճառով մենք բոլորս դատապարտված ենք լնդախտից մահանալու, Տավա Նեման այլևս սարսափելի չէ մեզ համար:

— Դե ուրեմն ես էլ ձեզ հետ եմ մահանալու, էլ ինչո՞ւ եք պատժում,— հարցրեց Ակիրսը՝ մի քանի օր ավելի շատ ապրելու հույսով:

— Մենք միշտ ենք երազել այս օրը, Ակիրս,— ասաց Կիվերայի հայրը,— որպեսզի կարողանանք պատժել քեզ: Դու չպետք է մեռնես մեզ հետ, դու պետք է մեռնես մեզանից առաջ, և այն էլ այնպիսի սարսափելի մահով, ինչպես Իլեն, որին դու մերկացրիր:

— Ա՛յ,— խզված ձայնով ճչաց Ակիրսը,— ա՛յ...

Ոչ մի օր մարդիկ այնքան եռանդով չէին աշխատել և ոչ մի օր ձկան որսն այնքան առատ չէր եղել, որքան այդ օրը: Դրա պատճառն այն էր, որ նրանք աշխատում էին իրենց համար: Նրանք որոշել էին մեռնելուց առաջ գոնե մի քանի օր կուշտ ուտել և կուշտ հանգստանալ: Արդեն իսկ այդ օրվա որսած ձուկը լիուլի բավական էր տասը-տասնհինգ օր ապրելու համար:

Դեռ արև էր և կարելի էր որսը շարունակել, բայց կատպիսցիները որոշեցին շուտ վերադառնալ բնակավայր և հանգստանալ: Դեռ նոր էին նրանք շալակել ձկան մեծ պաշարները և քայլել, երբ զգացին, որ իրենց ոտքերը թրջվում են: Ծայր աստիճան զարմացած, նրանք քաշվեցին մի կողմ,

որտեղ ձյունն ավելի չոր էր, և շարունակեցին ճանապարհը: Բայց քիչ հետո նրանց ոտքերը թրջվեցին նաև այդտեղ:

— Սա ի՞նչ բան է,— գունատված, խոսքերը հազիվ արտասանելով, հարցրեց մի կին:

Ոչ ոք, իհարկե, չէր կարող պատասխանել դրան: Ճիշտն ասած, ժամանակ էլ չեղավ պատասխանելու: Հազիվ էր նա այդ հարցը տվել, երբ լսվեց մի ուրիշ կնոջ ճիչ և նա անհետացավ ձյան տակ: Տղամարդիկ վազեցին դեպի նա և հազիվ կարողացան փրկել, դուրս քաշել արդեն խորասուզվել սկսող դժբախտին:

— Այս ի՞նչ է կատարվում...— հարցրին մարդիկ իրար, իսկ Ակիրսը, որը չնայած իր վիթխարի ուժին ու հանդգնությանը, ամենավախկոտն էր Կատպիսում, պապանձվել էր վախից և միայն մզմզում էր՝ խնդրելով մարդկանց՝ փրկել նրան:

— Հեռու քաշվեցեք, դեպի աջ,— գոռաց հանկարծ Նուրիսի մայրը:

Առանց հասկանալու, թե ինչի համար է դա պետք, մարդիկ նետվեցին աջ՝ վազելով, ընկնել-բարձրանալով: Երբ իրենց ոտքի տակ նորից պինդ ձյուն զգալով նրանք կանգ առան և ետ նայեցին, նրանց աչքին պատկերացավ իրոք որ արտասովոր և սարսափելի մի տեսարան: Հսկայական տարածության վրա ձյունը խոշոր պատառներով փլչում էր և իջնում ինչ-որ տեղ, կարծես դրա տակ հանկարծակի գոյացել էր դատարկություն: Քիչ հետո, երբ այդպիսով փուլ եկավ բավական տարածություն, մարդիկ նկատեցին, որ տարածությունն ունի լայն և շատ խոր ձորի տեսք:

— Նոր գետ,— չգիտես ուրախանալով, թե սարսափելով, բացականչեց ինչ-որ մեկը:

Մարդիկ զգուշությամբ, մանրիկ քայլերով, առաջացան դեպի այդ նոր գետը և դիք ափից նայեցին ներքև: Այնտեղ, ձորի հատակին, ուժեղ խշշոցով, հոսում էր մի լայնատարած ու վարար հեղեղ, որն իր ալիքների վրա տանում էր դեռ չհալած սառույցի և ձյան հսկայական կոշտեր: Ձորի դիմացի լանջը շարունակվում էր փլչել ու թափվել ներքև՝ ջրի մեջ: Անշուշտ, ճիշտ այդպես էլ փլչում էր այն լանջը, որի բարձունքին կանգնած էին կատպիսցիները: Նրանք բարվոք համարեցին մի քիչ ետ քաշվել: Եվ հանկարծ, դիմացի լանջից պոկվեց ձյան ևս մի ահագին շերտ և դրա տակից հայտնվեց ինչ-որ ընդարձակ սև տարածություն:

— Սև ձյուն...— ճչաց Կիվերայի մայրը:

— Ի՞նչ ես դուրս տալիս,— բարկացավ Ակիրսը:

— Սև ձյուն, սև ձյուն,— խլացնող աղաղակներով ողջունեցին Սպիտակ Թագավորության բնակիչները Գույնզգույն Թագավորության վերադարձը:

— Մեր տները, մեր երեխաները,— աղեկտուր ձայնով բղավեց հանկարծ Ակիրսի կինը:

— Մեր երեխաները,— թնդացին միանգամից բոլոր կանայք և տղամարդիկ:

Կատպիսցիների խումբը սլացավ առաջ: Նրանք գնում էին ձորի պռունկով՝ լուռ, սրտատրոփ, հևոցով: Ոչնչի մասին չէին մտածում նրանք, որովհետև շատ բան կար մտածելու և ամեն մի միտքը սարսափելի էր: Իսկ եթե պարզվի, որ Կատպիսը ձորի մյուս ափին է, ինչպե՞ս պիտի անցնեն նրանք այն կողմ... Իսկ եթե պարզվի, որ Կատպիսը կառուցված է եղել հենց ձորի վրա և այժմ հալած ձյան հետ խորտակվել ներքևի հեղեղի մեջ... Իսկ եթե... իսկ եթե...

Երբ նրանք տեղ հասան՝ արևը դեռ մայր չէր մտել. Կատպիսի հետքն անգամ չտեսան նրանք: Եվ ընդհանրապես, այնքան էր փոխվել շրջապատը, որ նրանք չէին էլ ճանաչի, թե դա նրանց բնակավայրի տեղն է՝ եթե դեռ հեռվից չնկատեին իրենց հարազատներին…

Սպիտակ հարթավայրի հետքն անգամ չկար այնտեղ: Դարավոր ձյունը, որը հարթել, իրար էր հավասարեցրել ամեն ինչ, այժմ համարյա ամբողջովին հալվել էր՝ բաց անելով իր տակ թաքնված բլուրներ ու հովիտներ, գետեր ու դաշտավայրեր... Ամբողջ շրջապատը, որքան որ աչքդ կտրեր, բաղկացած էր հողի ձյան սև ու սպիտակ, խոշոր փոքր պատառներից: Յուրաքանչյուր ցածրադիր վայրով հոսում էին հեղեղներ, դեպի որոնք բարձր տեղերից վազում էին առուներ և առվակներ: Շուրջն ամեն ինչ թաց էր, ամեն տեղ լճացել էր ցեխը, ամեն կողմ ընկած էին ցեխոտված ձյան պատառներ…

Միայնակ կանգնած մի բլուրի գագաթին, վախից իրար վրա հավաքված, կուչ էին եկել Կատպիսի երեխաները՝ այն մի քանի տարիքոտ մարդկանց հովանավորությամբ, ովքեր հիվանդության պատճառով այդ օրը դուրս չէին եկել որսի: Բլուրի ստորոտով, համարյա բոլոր կողմերից շրջապատելով այն, հոսում էր այնպիսի մի կատաղի հեղեղ, որին նայելն անգամ զարհուրելի էր: Բայց, բարեբախտաբար, ձկնորսությունից վերադարձողների և բլուրի միջև կար ջրից ազատ մի փոքրիկ տարածություն, որով նրանք կարող էին բարձրանալ յուրայինների մոտ:

Տեսնելով ծնողներին՝ իրենցից ոչ հեռու, համարյա բլուրի բարձրությունն ունեցող հակադիր դիք ափի վրա, երեխաներն սկսեցին լաց լինել գոռալով:

— Բոլորը ողջ-առո՞ղջ են,— հարցրեց տղամարդկանցից մեկը՝ բարձր գոռալով, աշխատելով խլացնել հեղեղի խշշոցը և երեխաների աղաղակները:

— Այո,— գլխով արեց բլուրի վրայից պառավ Խարունան:

Ձկնորսությունից վերադարձածներն իջան ցածրադիր վայրը և սկսեցին բարձրանալ դիմացի բլուրը՝ սայթաքելով ցեխի մեջ ու ելնելով: Վերջապես նրանք հասան կատարին և գրկեցին իրենց երեխաներին: Վերջիններս, իրարից առաջ անցնելով, սկսեցին արտասվալի պատմել տեղի ունեցածի մասին: Սկզբում նրանք զգացել էին, որ ձյունը թրջվում է: Թողնելով ձնագնդի խաղալը, նրանք վազ էին տվել Խարունայի մոտ և հայտնել նրան այդ մասին:

— Շուտ,— կարգադրել էր Խարունան,— դուրս բերեք տներից բոլոր իրերը:

Իրերը դուրս հանելուց հետո սկսել էին ծռվել և փուլ գալ բոլոր տները՝ մեկը մյուսի ետևից: Սոսկալի խուճապը տիրել էր բոլորին: Ձյունը նրանց շուրջն իջել էր և իջել, իսկ նրանք շարունակ տեղափոխվել էին ավելի և ավելի բարձր: Վերջապես հալվել էր ամբողջ ձյունը, և նրանք հայտնվել էին ահա այդ բլրի վրա:

— Այս ի՞նչ է կատարվում, Խարունա,— հարցրեց Ակիրսը՝ վախից դողդողալով:— Չի կարող պատահել, որ դու չգիտենաս, թե ինչ է կատարվում: Դու ամեն ինչ գիտես:

— Կատարվում է այն, որ վերադառնում է Գույնզգույն Թագավորությունը: Վերջապես ես հասա այն օրը, որին չէի հավատում: Իսկ դու նզովյալ լինես, Ակիրս, ինչո՞ւ ես ապրում մինչև հիմա՝ երբ այլևս չի ապրում իմ սիրելի Իլե Տրապնան…

— Վերադառնում է... Գույնզգույն... Թագավորությո՞ւնը...— ապշահար կրկնեցին մարդիկ:— Դու այդ ճի՞շտ գիտես, պառավ...

— Դուք տեսնո՞ւմ եք հողը,— հարցրեց Խարունան։

— Այո, մենք տեսնում ենք ինչ-որ սև ձյուն, որը դուրս է գալիս սպիտակ ձյան տակից և չի հալչում, հաստատեցին մարդիկ։

— Վերադառնում է Գույնզգույն Թագավորությունը,— ուրախ կրկնեց Խարունան։

Տիրեց խոր լռություն։ Մարդիկ նայեցին իրենց շուրջը՝ մոտ և հեռուն, և չէր կարելի ասել, թե նրանք ուրախ էին։

— Ուրեմն սա՞ է այն Գույնզգույն Թագավորությունը, որն այնպես գովում էիր դու, քավթառ,— բարկացավ Ակիրսը։— Գովում էիր և պղտորում երեխաների մտքերը։ Կշտացիր այդ թագավորությամբ։ Դրա առաջին գործն այն եղավ, որ մեզ թողեց առանց բնակարանների։

— Մի շտապեք դատել դրա մասին, դեռ շուտ է,— ասաց Խարունան։

— Ձայնդ կտրելո՞ւ ես, թե ոչ,— հարձակվեց նրա վրա Ակիրսը՝ տեսնելով որ ոչ ոք հիացած չէ կատարված փոփոխությունով։— Եվ դո՛ւ դեռ ափսոսում ես այն լակոտի՝ Իլե Տրապնայի մահվան համար։

— Իլե Տրապնան չի մեռել, նա կենդանի է,— լսվեց մի ձայն։

— Ի՞նչ ես դուրս տալիս, Չինտամ,— գոռաց հայրը նրա վրա։— Դու ուզում ես ծե՞ծ ուտել։

— Իլեն կենդանի է,— կրկնեց Ակիրսի տղան՝ առանց ուշադրություն դարձնելու հոր սպառնալիքին։ Հենց նա է բերում մեզ Գույնզգույն Թագավորությունը…

— Իլեն կենդանի՛ է,— ուրախ բացականչեց Նուրիսը։

— Իլեն չի մեռել, կենդանի՛ է,— կրկնեց Խարունան ուրախ։

— Ասա, որ սուտ ես ասում,— հարձակվեց հայրը Չինտամի վրա,— թե չէ կպատժեմ քեզ չարաչար կերպով։

— Ոչ, ես ճիշտ եմ ասում։

— Որտեղի՞ց գիտես,— գոռաց հայրը։

— Տեսել եմ իմ աչքերով։ Չէ՞ որ դու, հայրիկ, միայն մի բան ես սովորեցրել ինձ՝ լրտեսել։ Այս առավոտ, երբ ես արթնացա, իսկույն մտածեցի այն մասին, թե տեսնես ինչպես է սառել Իլեն և որտեղ է սառել։ Երեկոյան ես տեսել էի որ նա վազ էր տվել դեպի Չհալչող Սառցե Տունը։ Դրա համար էլ, հենց որ արթնացա՝ իսկույն հագնվեցի ու վազ տվեցի այնտեղ։ Իլեն ինձ չտեսավ, բայց ես նրան տեսա։ Նա փռում էր սև ծածկոցը ձյան վրա և ձյունը հալչում էր մինչև վերջ։ Հետո Իլեն վերցնում էր ծածկոցը և փռում մի ուրիշ կողմում… Իսկ Տավա Նեման իր տանը կանգնած, գլուխն էր տալիս պատեպատ…

— Տեսա՞ք,— գոռաց Ակիրսը՝ դիմելով բոլորին։— Տեսա՞ք, որ ես իրավացի էի, այդ լակոտը փորձանք բերեց մեր գլխին։ Այլևս ոչ տուն, ոչ որս, ոչ ռումամ… Պետք է խլել նրանից սև ծածկոցը՝ քանի դեռ ուշ չէ.

— Ուշ է, նզովյալ, Գույնզգույն Թագավորությունն արդեն մեզ մոտ է,— ասաց Խարունան չարախինդ։— Վերջացավ քո իշխանությունը, Ակիրս, և Տավա Նեմայինը՝ նույնպես։

Բայց Ակիրսը, փոխանակ նրան պատասխանելու, նայեց դեպի հորիզոնի բոլոր կողմերը, բայց չկարողանալով որոշել ուղղությունները, հարցրեց որդուն.

— Ո՞ր կողմումն է Չհալչող Սառցե Տունը։

Չինտամը ցույց տվեց ուղղությունը։ Ու մինչդեռ որևէ մեկն ուշքի կգար և կձեռնարկեր որևէ բան, Ակիրսն արագ վերցրեց մի մեծ ու սուր ոսկոր և սլացավ բլուրն ի վար։

— Սպասիր,— գոռացին տղամարդիկ նրա ետևից,— մենք քեզ թույլ չենք տա ձեռք տալ Տրապնային։

Բայց Չինտամը կտրեց նրանց առաջը և շշնջաց.

— Մի անհանգստանաք, ես նրան ցույց տվեցի բոլորովին ուրիշ ուղղություն…

— Իսկ հիմա լսեցեք ինձ,— ասաց Խարունան։— Լսեցեք բոլորդ, և ոչ միայն երեխաները։ Մինչև հիմա, երբ դուք կարծում էիք, թե հեքիաթ են իմ պատմությունները, լսում էիք միայն փոքրերդ։ Իսկ հիմա, երբ տեսնում եք, որ իրականություն են դրանք, լսեցեք նաև դուք՝ մեծերդ։ Մեծ երջանկություն է վիճակվել ձեզ։ Եվ դուք մի վախենաք, որ այսպես է սկսվում Գույնզգույն Թագավորությունը։ Որպեսզի սկսվի նա, հարկավոր է, որ հալչի Սպիտակ Թագավորության ամբողջ ձյունը։ Եվ միայն դրանից հետո…

Խարունայի խոսքը մնաց կիսատ, որովհետև այդ րոպեին բոլորը ցնցվեցին մի ահարկու գոռոցից, որը գալիս էր բլրի ներքևից։ Մարդիկ նայեցին և տեսան՝ Ակիրսն ու մի ահագին սպիտակ արջ մենամարտ էին բռնել իրար հետ։

— Ակի՛րս,— հուսահատ ճչաց Չինտամի մայրը։

— Շուռ տուր երեսդ ուրիշ կողմ, մի նայիր,— ասաց նրա որդին՝ հոգատարությամբ։ Եվ նա այդ ասաց ճիշտ ժամանակին, որովհետև արջը նորից կծեց Ակիրսին, և Ակիրսը, մի պահ հրաշքով ազատվելով նրա ճանկերից, իրեն նետեց հեղեղի մեջ։ Բոլորը տեսան, թե ինչպես հորձանքները կուլ տվեցին նրան, ապա դուրս նետեցին իրենց ալեկոծ մակերեսի վրա՝ կարծես մերժելով ընդունել այդպիսի մի անպետք մարդու մարմին։ Ակիրսն էլի մի քանի րոպե մաքառեց հեղեղի դեմ, ապա անշարժացավ և գնաց դրա հոսանքն ի վար։ Վերջ Ակիրսին։

— Շարունակիր պատմությունդ,— ասաց Վինզայի հայրը Խարունային։

ԻԼԵ ՏՐԱՊՆԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Խարունայի պատմությունից հետո բոլորը հասկացան, թե ինչպիսի երջանկություն էր վիճակվել նրանց։ Երախտագիտությամբ նայելով դեպի այն կողմ, որտեղ Իլե Տրապնան էր գտնվում հիմա, նրանք անհամբեր սպասում էին տեսնել նրան, գրկել այդ հերոսին, ներողություն խնդրել նրան պատճառած այնքան տառապանքների համար, որոնց մեջ, ճիշտն ասած, ոչ ոք մեղավոր չէր՝ բացի Ակիրսից։

Բայց կատպիսցիներին այլևս վիճակված չէր տեսնել Իլե Տրապնային։ Երբեք…

Վերջալույսի վերջին շողերի տակ Իլեն քամեց-չորացրեց սև ծածկոցը և նորից առավ իր ուսերին՝ հաջորդ առավոտյան նորից շարունակելու համար իր գործը: Նրա մարմինը սրսփաց խոնավ կտորի հպումից, բայց մասամբ արևի վերջին ճառագայթներից, մասամբ նրա մարմնի ջերմությունից, ծածկոցը բոլորովին չորացավ: Մի պահ Իլեն զգաց, որ նրա ամբողջ մարմինը նորից ջերմացավ աննկարագրելիորեն հաճելի ջերմությամբ: Բայց նույն րոպեին արևը մայր մտավ և ծածկոցի ջերմությունն անհետացավ մի վայրկյանում: Այժմ Իլեի ուսերի վրա նորից գցված էր մի բարակ ծածկոց, որն ավելի վատ էր տաքացնում, քան ամենապատառոտված և բրդահան եղած մորթե հագուստը:

Նորից մի տանջալի գիշեր իջավ Իլեի համար: Նրան թվում էր, թե նա չի ապրելու մինչև լույս: Բայց երբ լսում էր, թե ինչպես գիշերվա մթության մեջ բոլոր կողմերում զվարթ խշշում են հալված ձյան հեղեղներն ու հոսանքները, նա նոր ուժ էր ստանում և դիմադրում ցրտին: Նա հիշում էր Կատպիսը, մտածում էր բոլորի մասին և առաջին հերթին՝ իր հասակակիցների: Գերությունից ազատված գարունը, Չհալչող Սառցե Տնից հափշտակված, անշուշտ հասել է արդեն նրանց, և նրանք մտածում են՝ ուրեմն ճիշտ էր ասել Խարունան, ուրեմն հեքիաթ չէր Գույնզգույն Թագավորությունը… Բայց գիտե՞ն արդյոք Կատպիսում, որ գարունը նրանց համար բերել է նա ինքը՝ կատպիսցի Իլե Տրապնան... Ախ, որքա՛ն լավ կլինի՝ եթե իմանան: Ճիշտ է, այդպիսի բան մտածելը հպարտություն է Իլեի կողմից, բայց մի՞թե չի կարելի մի փոքր, գոնե շատ փոքր հպարտանալ քո արած լավ գործով…

Երբ լույսն սկսեց բացվել, Իլեն նայեց շուրջը: Նրա աչքերին պատկերացավ մի սքանչելի, անսպասելի տեսարան: Ամբողջ գիշերվա ընթացքում խոխոջող ջրերը հալեցրել և քշել-տարել էին Սպիտակ Թագավորության համարյա ամբողջ ձյունը: Ամեն կողմ ընկած էին դաշտեր, հովիտներ, բլուրներ, ձորեր՝ դեռ թաց և տեղ-տեղ ձյան պատառներով սպիտակին տվող:

Չհալչող Սառցե Տունը կանգնած էր սառցի այնպիսի հաստ շրջանակով պատած, որ շրջապատի մեծ փոփոխությունը կարծես չէր վերաբերում դրան: Բայց Իլեն չէր նայում այն կողմ: Տան կողքին կանգնած, մեջքը դեպի արևելք դարձրած, նա անհամբեր սպասում էր արևի ծագելուն, որպեսզի մի քիչ տաքանար և ապա շարունակեր իր գործը: Այն ուղղությամբ, որտեղ Տրուցն էր գտնվում, գետինը Չհալչող Սառցե Տան մոտից սկսած դեռևս ծածկված էր ձյունով և հարկավոր էր սև ծածկոցի հրաշագործ ազդեցությունը՝ ձյունը հալեցնելու համար:

Եվ նորից, նախորդ օրվա նման, Իլեն արևի ծագելն զգաց իր ամբողջ մարմնով, որն առաջին իսկ ճառագայթների հետ անմիջապես տաքացավ աննկարագրելիորեն հաճելի և թարմ, գարնանային տաքությամբ: Պետք է սպասել մի քիչ՝ մինչև որ արևը բավական բարձրանա և ավելի տաքանա՝ մտածում էր Իլեն, բայց միաժամանակ նա ուզում էր երկարացնել սև ծածկոցի տաքությունը վայելելու հաճույքը: Նա նույնիսկ փակեց աչքերը բավականությունից և ինքն էլ չիմացավ, թե ինչպես, քնեց: Նա չէր քնել երկու գիշեր և մի ցերեկ: Տեսնո՞ւմ էր նա երազ, թե ոչ, բայց և այնպես ժպտում էր, «որովհետև քնի մեջ անգամ նա չէր մոռացել, որ աշխարհի ու մարդկանց վրա իջել է մեծ երջանկություն՝ վերադարձել է Գույնզգույն թագավորությունը…

Իլեն արթնացավ հանկարծ, և խլշկոտ նայելով շուրջը, իսկույն զգաստացավ: Պարտազանց մարդու նման նա շփոթվեց և շտապեց կատարել իր գործը, որից նա բավական ուշացել էր: Վար առավ ծածկոցը՝ ձյան վրա փռելու համար, բայց մեծ զարմանքով նկատեց, որ ձյուն այլևս չկար: Հողի ամեն մի կտոր, ձյանը սահմանակից, կատարել էր այն դերը, ինչ որ սև ծածկոցը: Հողն ինքը, տաքանալով, հալեցրել էր իր կողքի ձյունը: Սև ծածկոցի կարիքն այլևս չկար: Գարունը, սև ծածկոցի միջոցով ազատագրված, այժմ քայլում էր իր սեփական ոտքերով…

Իլեն իր կողքին լսեց ինչ-որ թխկթխկոց և նայեց: Չհալչող տան կենտրոնում կանգնել էր Տավա Նեման: Իհարկե, նա էր թխկթխկացրել ապակին, բայց երբ տղան նայեց, հաստափոր մարդը չնայեց նրան: Տավա Նեման իր հագուստի վրա հագել էր էլի մի հագուստ, գլխին դրել էր գլխարկ: Անշուշտ նա պատրաստվում էր գետնի տակով վերադառնալու իր հեռու երկիրը, որտեղից եկել էր:

Գետնի տակից դուրս ելավ Տրիսնան: Նա ևս հագնված էր հոր նման՝ ճանապարհ ընկնելու պատրաստ: Նա չնայեց դուրս, չտեսավ Իլեին, գուցե և դիտմամբ չնայեց, որ չտեսնի, և մոտեցավ հորը: Տավա Նեման մռայլ նայեց աղջկան, մտածեց մի պահ, ապա, առանց նայելու Իլեին, ձեռքով ցույց տվեց նրա կողմը և շարժումներով ասաց աղջկան.— եթե ուզում ես՝ հրաժեշտ տուր նրան:

Տրիսնան նայեց Իլեին, անմիջապես, առանց աչքերով փնտրելու, ըստ երևույթին շատ լավ գիտենալով, թե որտեղ էր նա կանգնած: Աղջկա աչքերում մի պահ նկատվեց ինչ-որ տատանում՝ օգտվե՞լ հոր տված թույլտվությունից, թե ոչ, ապա նա ձեռքով նշան արեց տղային՝ մոտեցիր պատի անցքին: Իլեն մոտեցավ՝ վերջին րոպեին նկատելով, որ Տավա Նեման մտավ գետնի տակ՝ մենակ թողնելով նրանց:

Տրիսնան նստեց անցքի մոտ, նստեց նաև Իլեն: Աղջիկը՝ լուրջ, առանց ժպիտի, սկսեց երկար նայել տղային՝ կարծես որոշելու համար՝ սիրո՞ւմ է նա այդ պատանուն, թե ատում: Իսկ Իլեն, նորից մոռացած ամեն վիրավորանք, հիացած նայում էր կապուտաչյա և ոսկեմազ Տրիսնա Նեմային…

Հանկարծ ետևից ինչ-որ մեկը մի կողմ քաշեց աղջկան և գրավեց նրա տեղը մուտքի մոտ: Դա Տավա Նեման էր՝ դեմքի սարսափելի արտահայտությամբ: Իլեն, վատ բան գուշակելով, դեռ չէր հասցրել ետ ցատկել անցքից, երբ Չհալչող Սառցե Տան տերը բարձրացրեց աջ ձեռքը, որի մեջ բռնել էր ինչ-որ մուգ, փայլուն առարկա: Այդ առարկայի փողն ուղղելով պատի անցքից դուրս, նա շարժեց իր կեռացրած ցուցամատը: Նույն պահին լսվեց ինչ-որ շրխկոց և Իլե Տրապնան բռնեց սիրտը, որտեղ նա զգաց մի սոսկալի ցավ: Լսվեց Տրիսնայի ճիչը: Ոչ մանկական ուժով նա մի կողմ հրեց հորը և նետվեց դեպի անցքը:

— Իլե՛,— ճչաց նա աղիողորմ,— Իլե Տրապնա…

Իլեն հասցրեց նայել նրան, տեսնել երկու կաթիլ արցունք աղջկա այտերի վրա և նույնիսկ ժպտալ: Տրիսնան լալիս էր Իլե Տրապնայի համար…

Իսկ դրանից հետո ամեն ինչ վերջացավ: Իլեի աչքերում մարեց Գույնզգույն Թագավորության ջերմ արևի վերջին շողը և նա անշնչացած ընկավ սառցապատ բլրի թեք լանջի վրա և գլորվեց մինչև դրա ստորոտը:

Իսկ շուրջը գարուն էր, սքանչելի գարուն, ինչպիսի՛ սքանչելի գարուն…Խոխոջում էին գարնանային ջրերը բոլոր կողմերում, գետնից բարձրանում էր գոլորշին, և այդ ամենի վրա փռված էր կապույտ, ջինջ-կապույտ երկինքը: Եվ փայլում ու ամեն ինչ ջերմացնում էր արևը:

Իլե Տրապնան չտեսավ, թե ինչպես հանկարծ երերաց Չհալչող Սառցե Տունը և սկսեց խորասուզվել բլրի մեջ: Դանդաղ կերպով կիսով չափ խորասուզվելուց հետո նա միանգամից ընկավ ներս և անհետացավ: Դրա ետևից, ահռելի դղրդոցով, ներս թափվեցին բլուրը ծածկող սառցի խոշոր կտորները: Բլուրն ինքը, կատարից սկսած, փուլ եկավ աստիճանաբար և թափվեց բացված անցքի մեջ: Բլրի շուրջը լճացած ջրերը, ազատ ելք գտնելով, վար հոսեցին այդ փոսով՝ տանելով իրենց հետ հողի կոշտեր ու ցեխ: Երկար ժամանակ հոսում էր ջուրը և հոսում՝ լցնելով, անշուշտ, Տավա Նեմայի ստորերկրյա ամբողջ բնակարանը, փախուստի ճանապարհը... Ապա, երբ ամեն ինչ ավարտվեց,

բլրի հետքն անգամ չկար և ոչ ոք չէր կարող ասել՝ երբևէ եղե՞լ էր այդտեղ բլուր, թե ոչ: Արևը գոլորշիացրեց լճացած ջուրը, գետինն աստիճանաբար չորացավ:

Իսկ քիչ հեռվում, սև ծածկոցի վրա երեսն ի վեր փռված, պառկել էր հավիտյան քնած Իլե Տրապնան: Եվ նրա շուրջն իշխում էր Գույնզգույն Թագավորության գարունը…

ՎԵՐՋԱԲԱՆ

Մի քանի օր հետո ամբողջ գետինը չորացավ և մնացին միայն այն գետերն ու գետակները, որոնց վիճակված էր հոսել ընդմիշտ: Եվ մի առավոտ Գույնզգույն Թագավորության բնակիչները մեծ զարմանքով և ավելի մեծ ուրախությամբ նկատեցին, որ գետինը ծածկվել է կանաչով: Հետագա օրերի ընթացքում կանաչն ավելի խտացավ ու բարձրացավ, իսկ այդ կանաչի մեջ, տեղ-տեղ, մի քանի սեզեր ուղղակի սլացան վեր և դարձան ծառեր: Ժամանակի ընթացքում դրանք ևս շատացան ու խտացան՝ գետերի ափերին կազմելով ամբողջ պուրակներ և անտառներ: Երկնքում հայտնվեցին բազմատեսակ թռչուններ, գետնի վրա՝ կենդանիներ:

Մարդիկ, բաց երկնքի տակ չգիշերելու համար, սովորեցին հողից ու ջրից աղյուսներ պատրաստել և դրանցից տներ կառուցել իրենց համար: Սկզբում այդ տներն ունեին սառցե տների կլոր ձևը, ապա մարդիկ սկսեցին կառուցել քառակողմ շենքեր: Որոշ ժամանակ անց նրանք ծանոթացան քարի հետ, սկսեցին կառուցել նաև քարե տներ:

Երբ եկավ առաջին աշունը և մոտեցավ առաջին ձմեռը, Գույնզգույն Թագավորության բնակիչները սրտատրոփ սպասում էին, թե որքան ձյուն է գալու, և այնուհետև, հետևյալ գարնանը, որքանն է հալչելու: Մի՞թե վերջանալու է Գույնզգույն Թագավորությունը մի տարում…

Ձյունը եկավ բավական առատ, բայց հաջորդ գարնան ամբողջը հալվեց: Մարդիկ, որ չէին մոռացել Վերջին Ձկնագլխի Օրը, անտառներում կտրեցին եղևնիներ և, զարդարելով դրանք, դիմավորեցին Նոր տարին: Ճիշտ է, դա ձմռանն էր, երբ ամեն ինչ ծածկված էր ձյունով և սպիտակ էր, բայց մշտադալար եղևնին նրանց հիշեցնում էր նախորդ գարունն ու հաջորդ գարունը, հիշեցնում էր, որ ձյունը մշտական չէ, այլ հալչելու է, և նրանք ուրախանում էին ամբողջ հոգով:

Ժամանակի ընթացքում մարդիկ սովորեցին բոլոր գիտությունները, սկսեցին կառուցել գյուղեր ու քաղաքներ, նավեր ու գնացքներ, արտադրել արջի մորթու նման հաստ ու տաք և մառախուղի պես բարակ ու նուրբ հագուստներ, մարդու աշխատանքը թեթևացնող գործիքներ և երեխաների կյանքը զարդարող խաղալիքներ: Սովորեցին իրենց տները լուսավորել ու տաքացնել մի ուժով, որն անվանեցին էլեկտրականություն:

Գույնզգույն Թագավորության կենտրոնում մարդիկ կառուցեցին մի մեծ քաղաք, որն անվանեցին գեղեցիկ անունով՝ Նավազարե-Նակարի: Քաղաքի կենտրոնում, մի մեծ հրապարակի վրա, կանգնեցրին Իլե Տրապնայի արձանը: Տղան այնտեղ կանգնած էր՝ սև ծածկոցն ուսերին գցած, և ձեռքերի մի շարժումով պատրաստվում էր վար առնել այն իր վրայից ու փռել ձյան վրա, հալեցնել ձյունը, վերադարձնել Գույնզգույն Թագավորությունը: Եվ իրոք, Նավազարե-Նակարի քաղաքի բնակիչները գիտեին, որ ամեն տարի, երբ բացվում էր գարունը, ձյունն ամենից առաջ հալչում էր Իլե Տրապնայի ուսերին գցած սև ծածկոցի վրա: Եվ այսպես ամեն տարի գարունն սկսվում էր Իլե Տրապնայի արձանի մոտից և այնտեղից էր տարածվում ամեն կողմ:

Խարունա տատն այլևս չկար, նա մահացել էր: Բայց նրա կյանքի վերջին տարիներն անցել էին երջանկության մեջ: Տովեսը, որը մեծանալուց հետո դարձել էր ակնաբույժ, հաջողեցրել էր վերադարձնել տեսողությունը պառավի մի աչքին: Բայց դա ոչինչ, մի աչքով էլ կարելի էր տեսնել այն, ինչ որ երկու աչքով: Դա ամենամեծ երջանկությունն էր Խարունայի համար: Եվ եթե կար նրա կյանքում մի վիշտ, որն այդպես էլ մնաց անբուժելի՝ դա Իլե Տրապնայի մահվան պատճառած վիշտն էր:

Վինզան, Կիվերան, Ժունան, Չիմտապը, բոլոր մյուս երեխաները, մեծացան և դարձան պիտանի մարդիկ: Իսկ ո՞վ էր Չիմտապը: Նա Չինտամն էր, որը հրաժարվելով իր վատ անցյալից, փոխել էր նաև իր անունը:

Նուրի՞սը… Նա երկար լաց եղավ Իլե Տրապնայի համար, նիհարեց, քիչ մնաց, որ մեռներ ինքն էլ: Բայց հետո առողջացավ և իր վերքի վրա դրեց մի հրաշագործ, բուժիչ դեղ, որը կոչվում է ժամանակ: Իհարկե, նա իր կյանքում երբեք չմոռացավ Իլե Տրապնային, բայց դադարեց սգալուց և ամեն անգամ նրա արձանի մոտով անցնելիս, մտածում էր՝ մի՞թե իրոք, մեռել է նա, մի՞թե ընդմիշտ կենդանի չէ նա: Չէ՞ որ ամեն մարդ կենդանի է իր գործով, մարդկությանը մատուցած իր ծառայություններով: Նա ոչ միայն դադարեց սգալուց, այլև ամեն անգամ Իլե Տրապնայի արձանի մոտով անցնելիս, զվարթ նայում էր նրան և շշնջում.

— Բարև քեզ, Իլե Տրապնա...

ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբան

Առաջին մաս

Վերջին Ձկնագլխի Օրը

Պառավ Խարունայի մոտ

Ակիրսի բնակարանում

Կատպիսի այն կողմում, որտեղ մայր է մտնում արևը

Դեպի Չհալչող Սառցե Տունը

Կորած հաշիվ

Վերականգնված հաշիվ

Գույնզգույն Թագավորությունը

Ծանր գիշեր

Երկրորդ մաս

Չարքաշ աշխատանք

Քաղցր երդում

Պատիժ

Ակիրս և Իլե

Պատիժ և փրկություն

Ձուկ

Երրորդ մաս

Գրոհ Չհալչող Սառցե Տան վրա

Տրիսնա

Սև ծածկոց

Սարսափելի գիշեր

Հող

Կատպիսում

Իլե Տրապնայի վախճանը

Վերջաբան